14353

3694

491.99-8
L-61

2010
20 02

зала Ст. 1
шкафъ
полка 4 №154

4/256

Арм.
4-821ә
491.99-8
Լ-61

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ, ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ եւ Լ. ՇԱՆԹ

ԼՈՒՍԱԲԵՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Инв. №16900

Մեր ինքնուրոյն եւ փոխադրած յօդուածների, ինչպէս եւ մեր նկարների արտատպութեան իրաւունքը վերապահուած է

14353

ԹԻՖԼԻՍ
Էլեքտրատպ. Ն. Աղանեանի, Պօլից. 7.
1914

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
92456-ԱՀ
(1516-63)
270-2002

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱԺԻՆ

1. Հայ ուխտաւոր

Գնաս բարո՜վ, հա՜յ ուխտաւոր,
երանի՜ քեզ, այ ուխտաւոր,
որ կարօտով ու սիրառատ
ուխտ ես գնում դէպ Այրարատ։
Զեփիւռներով, ծաղկանց բոյրով,
ինչպէս ծնող սիրագորով,
քեզ կ՚ողջունեն գմրուխտ հագած՝
Գեղամ սարերն ու Արագած։
Ու հարազատ աչքի նման՝
քեզ կը ժպտայ վճիտ Սեւան,
որ լեռների շուքերի հետ
խաղ է անում, խայտում վէտ-վէտ,
փայլփլում է ծփանքներով,
յօրինում է լոյսերի ծով,
և մերթ վշտով ու տխրութեամբ
սեւանում է, ինչպէս սեւ ամպ...
Իսկ Մասի՜սը, էն սար հսկան,
էն սարերի սարն ու արքան,
լազուր երկնի ծոցը մըտած,
ճերմակ գլուխն ամպեր փաթթած,

ահա կանգնեց վեհ ու տրտում
քու առաջին ու քու սրտում...
Գնաս բարով, հայ ուխտաւոր,
երանի՜ քեզ, այ ուխտաւոր։

Յովհ. Թումանեան

1. Գնացողը ինչո՞ւ է կոչւում ուխտաւոր։
2. Հեղինակը ինչո՞ւ է երանի տալիս նրան։

Այրարատ—*Արաքսի հովիտը Կաղզւանից մինչև Նախիջևան։*
գորով—*սէր և հոգատարութիւն։ Ի՞նչ ասել է՝* **սիրագորով, գորովագութ։**
զմրուխտ—*թանկագին կանաչ քար։*
վճիտ—*ջինջ, յստակ։*
շուք—*շւաք, ստւեր։*
վէտ-վէտ—*ծուփ-ծուփ, ալիք-ալիք։*
յօրինել—*առաջացնել, ստեղծել, հեղինակել։* **Գիրք յօրինել, եղանակ յօրինել։**
լաջուր—*բաց կապոյտ գոյնի քար։*
վեհ—*ազնիւ ու բարձր։*

---

1. **Զմրուխտ մարգագետին, լաջուր երկինք, յակինթ խաղող։**
Այս օրինակների մէջ գոյնը որոշող բառի փոխարէն ինչ բառ է դրւած։
Գոյների նրբութիւնները արտայայտելու համար ուրիշ ինչ առարկաների օգնութեան ենք դիմում։ **Մանուշակագոյն, նարնջագոյն, դարչնագոյն...**

---

2. Ծաղիկի հէքեաթը

ա.

Հին ժամանակները մեր աշխարհքում մի թագաւոր մի նախշուն, քնքուշ աղջիկ է ունենում՝ անունը Ծաղիկ։

Մի աշունքւայ առաւօտ էս թագաւորը վեր է կենում տեսնում՝ Սպիտակ դևն եկել է իր դիմացի սարի գլուխը բռնել ու ձէն է տալիս.

—Ո՞ւր է Ծաղիկը, ո՞ւր... ինձ տո՛ւր...

Թագաւորը ճանաչում էր Սպիտակ դևին, գիտէր ինչ անյաղթելի ուժ է նա։ Յուսահատութիւնից լաց է լինում։

—Բան չը կայ, հայրիկ,—ասում է Ծաղիկը,—դու լաց մի լինի, ես կերթամ Սպիտակ դևի հետ, ինչ կըլինի կըլինի։

Այն ինչ Սպիտակ դևը արդէն դուռը կտրել է ու մռընչում է.

—Ո՞ւր է Ծաղիկը, ո՞ւր... ինձ տո՛ւր...

Մռընչում է ու նրա սառը շնչից դողում են ծառերը, աշխարհքը գունատւում. ինչ պէտք է անէր խեղճ մարդը։ Զուգած, զարդարած, դուրս է բերում Ծաղիկին յանձնում Սպիտակ դևին։ Զարախինդ սուլոցով, ագահ ոռնոցով, սառով, սևով, հողմի թևով իսկոյն յափըշտակում է դևն ու տանում։ Տանում է Մասիսի մեծ վիհը։ Էնտեղ, Մասիսի մեծ վիհում, էն անմատչելի, միշտ մռայլ ու միշտ սառն աշխարհքում կանգնած էր իր բիւրեղէ ապարանքը։ Էն ապարանքից



իջնում էր նա, սառով ու սարսափով աշխարհքը պատում, յափշտակում տանում ամեն կեանք ու կենդանութիւն։ Ծաղիկին էլ տանում է փակում բիւրեղէ ապարանքում։

բ.

Ամիսներ են անց կենում։ Մի անգամ էլ, գարնան սկզբին, երբ Սպիտակ դևը տանից դուրս է գնում, աղջիկը վեր է կենում փախչում։ Ետ է գալի դևը՝ տեսնում է՝ Ծաղիկը չըկայ։ Կատաղում է, հաւաքում է իր բոլոր դիւական ուժն ու մրրկի նման սուրալով, օձի

նման սուլելով ընկնում է ետևից։ Աղջիկը արդեն Արագածի ստորոտն է լինում հասած։ Ետ է նայում տեսնում է՝ Սիպտակ դևը գալիս է։ Գալիս է, ո՜նց է գալիս, Աստուած ետ ու հեռու անի։ Սարսափից ճչում է, օգնութիւն է կանչում։ Կանչելու հետ, Աստծու հրամանով, առաջը մի դուռն է բացւում։ Էն դռնովը մտնում է սարի մէջն ու կրկին դուռը փակւում է դևի առաջին։

Աւելի է կատաղում Սիպտակ դևը. իր լէն թևերով բամփում է Արագածի գագաթին ու մռնչում.

—Ո՞ւր է Ծաղիկը, ո՜ւր… ինձ տո՜ւր…

Սա էստեղ թող մռնչայ, մենք գնանք Ծաղիկի ետևից, տեսնենք էն կախարդական դռնից որ մտաւ, ինչ եղաւ։

Ծաղիկը էն կախարդական դռնից ներս է մտնում թէ չէ, դուրս է գալի մի դրախտական այգի, որտեղ հազարաւոր ձայներ երգում են.

Զմրուխտ պալատում, ոսկի դագաղում
պառկած է չարի ուժով կախարդւած,
պառկած է Արին ոչ մեռած, ոչ քուն,
ու աշխարհքն ամեն սև սուգ է մտած։
Պառկած է մինչև օրը ցանկալի,
էն պայծառ օրը, երբոր նա կը գայ,
կը գայ նոր կեանքով ու նոր սիրով լի,
կարտասւի անուշ ու համբոյր կը տայ։

Առաջ է գնում Ծաղիկը, յանկարծ այգին լցւում է զւարթ աղմուկով ու տարածւում են ուրախ երգի ձայները.

Ահա եկաւ, հասաւ չքնաղ
իր թագուհին, իր սիրելին.
Հիմի կելնի պաղ դագաղից
մեր քաջ Արին-Արմանելին։
Հիմի կելնի թագաւորը,
հզօր Արին-Արմանելին,
ու կըժպտան վառ աչքերը
ողջ աշխարհքին, ծաղկին, ծլին։
Հիմի կընկնի կախարդանքը
չար թշնամու, Սիպտակ դևի,
հիմի կըգայ դալար կեանքը,
բոյրը ծաղկի, շողն արևի։

գ.

Եւ ճիշտ որ, Ծաղիկը գնում է, ինչ է տեսնում. այգու մէջ մի զմրուխտ պալատ, պալատի մէջ ոսկի դագաղ, դագաղի մէջ մի ջահել գեղեցիկ երիտասարդ, որ ոչ քնած է, ոչ մեռած, շունչը վրէն-հագիւ տրոփում է։ Տեսնում է թէ չէ՝ սիրտը փուլ է գալի, էլ չի դիմանում, լաց է լինում ու կռանում է համբուրում։ Արտասուքի կաթիլներն ընկնում են երիտասարդի երեսին. երիտասարդը յանկարծ բաց է անում աչքերը ու վեր է կենում կանգնում, ինչպէս էն դրախտում բուսած սօսիներից մինը։

Դու մի ասիլ հէնց ինքը Արին-Արմանելին է, որ կայ։

—Ո՞վ ես դու, սիրուն աղջիկ,—հարցնում է Արին-Արմանելին,—և ինչպէս ընկար էս աշխարհքը։

Ու Ծաղիկը կանգնում պատմում է իր գլխին եկածը, թէ ինչպէս ինքը գերի էր եղած Սիպտակ դևին, որ այժմ էլ ետևիցն ընկել ու հալածում է իրեն։

—Լսում եմ, լսում եմ նրա դաժան ձայնը,—պատասխանում է Արին-Արմանելին.—Ինձ էլ նա է կախարդել ամիսներ առաջ ու գցել մահանման քնի մէջ։ Էսպէս է անում ամեն տարի։ Այժմ ես դուրս կը գնամ նրա դէմ։

Ասելն ու անելը մին է լինում։ Առնում է կայծակի թուրը ու դուրս է գալի։ Երկու թշնամի ուժերը պատահում են իրար. բացւում է օրհասի կռիւը. զարկում են զարկւում, երկինք ու գետինք իրար են խառնւում։ Մութն ամպերում մռնչում է Սիպտակ դևը, Արին-Արմանելին ահաւոր որոտում ու շողացնում է կայծակի թուրը. երկիրը դողում, դղրդում է հիմքից։ Կռւի վերջում պարտւած զարկւած Սիպտակ դևը վշշալով ու թշշալով, լացով ու թացով քաշւում է նորից իր մռայլ թագաւորութիւնը, Մասիսի էն մեծ վիհը, դարձեալ փակւում է իր բիւրեղէ սառն ապարանքում։ Աշխարհքը ծնում է գեղեցիկ յաղթողին։

Ու աստուածային հանդէս է բացւում Արաքսի հովտում։ Արին-Արմանելին պսակւում է Ծաղիկի հետ։ Բնութիւնը առատօրէն փռում է իր փարթամ վարդերն ու զարդերը, սուսն անսուսն, մրջիւն ու թռչուն իրար են խառնում իրենց զւարթ աղմուկն ու աղաղակը, խաղն ու տաղը, ամենի վրա հոյակապ կամար է կապում կանաչ-կարմիր ծիածանը, իսկ նրանց վերև ճառագում ու աշխարհքովը մին ժպտում է գարնան կենսատու արևը։

Ու էսպէս կրկնւում է ամեն տարի, որովհետև ամեն տարի Սիպտակ դեը կախարդում է Արին-Արմանելին ու յափշտակում է սիրուն Ծաղիկին։

Յովհ. Թումանեան

---

1. Ո՞վ է Սիպտակ դևը և ո՞վ է Արին-Արմանելին, և ինչու է կոչւում Արի և Արմանելի։

2. Ինչո՞ւ է ժողովուրդը կարծում թէ Սիպտակ դևը ապրում է Մասիսի վրա, իսկ Արին-Արմանելին մնում է Արագածի մէջ։

3. Բացի այս հեքիաթից ուրիշ ի՞նչ հեքիաթներ գիտես։ Հեքիաթը ինչով է տարբերւում միւս պատմութիւններից։

Արմանալ—*զարմանալ։*
ծրփալ—*հազիւ շարժւել, հազիւ տրոփել (սիրտը)։*
դաժան—*խիստ ու չար, անողորմ։*
հոյակապ—*փառահեղ, մեծ ու շքեղ։*
վիհ—*մեծ փոս, խորխորատ, անդունդ։*
սուրալ—*սլանալ։*
սոսի—*բարդի։*
օրհաս—*մահւան օրը՝ վրա հասած, մահ։*
փարթամ—*հարուստ, առատ, ճոխ։*

---

1. Ոտ—ոտք, աշխարհ—աշխարհք, ատուն—ատունք։ *Էլ ի՞նչ այսպիսի բառեր գիտէք՝ ք-ով և առանց ք-ի։*

2. *Ժողովրդական ձևեր՝* լայն—լէն, այծ—էծ, գայլ—գէլ, այս—էս։ *Ասա՛ ուրիշ օրինակներ։*

3. *Գտի՛ր արմատները և բացատրի՛ր բառերը՝* դիւական, օրհաս, կենսատու, չարախինդ, անմաշելի։

4. *Ի՞նչպէս կարելի է ասել մէկ բառով՝* փուլ գալ, լաց լինել, բաց անել, պաչ անել, խույս տալ։ *Գտի՛ր ուրիշ նման օրինակներ։*

5. *Ինչո՞ւ է ասւում* դալար կեանք, կարմիր արեւ, սեւ հող, սեւ սուգ, մայր հող։

6. *Գործ ածի՛ր նախադասութիւնների մէջ և հանի՛ր իմաստները.*
սիրտը գնաց, սիրտը փուլ եկաւ, սիրտը իջաւ, սիրտը ցաւեց, սիրտը ճաքեց, սիրտը այրւեց, սիրտը կոտրւեց, սիրտը մաշւեց, սիրտը չի տալիս.
սիրտը խառնել, սիրտը վեր ածել։
սրտովը լինել։



3. Արագած

Մեր առջևն է Շիրակի ալեծածան հարթութիւնը, և լայնանիստ Արագածը, որ մի մօր պէս բազմել է շրջակայքի բլուրների մէջ։ Նա ոչ Մասիսի երկնասլաց ու խրոխտ վեհութիւնն ունի, և ոչ էլ նրա խիստ տեսքը։ Արարատեան աշխարհի երկու հսկաները ոչնչով նման չեն իրար. մինչդեռ մէկը վիրաւորւած, դաժան ծեր իշխանի է նման, որ սակայն չի ուզում գլուխ ծռել բախտի առաջ և իր զայրոյթի մէջ ատում է աշխարհը, ապրում է հոյակապ մենութեան մէջ ու ժլատ է բարիքով, միւսը՝ Արագածը մի անյիշաչար մայր է, բարի ու գթոտ, որի ձեռները բաց են բարիքի համար, որի ճակատի խորշոմները միշտ ժպիտ ունեն իր հովանու տակ ծւարած բլուրների, իր կրծքին թառած գիւղերի համար։

Անո՜ւշ Արագած...

Ամեն ինչ մեղմ է նրա արտաքինի մէջ. և՛ կատարները, որոնք շուրջանակի բոլորել են և թագ կազմել նրա գլխին, և՛ ձորերը, ուր իջւածքները կախւած են զգուշութեամբ, որ վերելքն անկարելի չը դառնայ, և՛ ժայռերը, որոնք պինդ նստել են նրա կրծքին, որպէսզի վայր չընկնեն. չէ՞ որ նրանց ստորոտներում չարքաշ մարդն է տնքում։ Եւ յետոյ նա հովիտներ ունի, ջրաշատ ու հարուստ, սի-

բուն դարաւանդներ, կանաչ պուրակներ, փապարներ, խոխոջուն ջրեր, որոնք քարերի տակից ծորում են կաթնի պէս և ցողում նրա գեղուն կուրծքը։ Ոչ ոք գժգոհ չէ նրանից, և՛ թափառական թաթարները իրենց հօտերով, և՛ աւազակ քիւրդերը, և՛ մանաւանդ շինարար, վաստակաւոր հայ գիւղացին, որ կպել է նրա կրծքին, վարում է և ցանում, նրա լայն հոգուն խառնել է իր հոգին և պաշտում է իր լեռը, այդ հինաւուրց մօրը։

Աւ. Ահարոնեան

Նկարագրի՛ր՝ ձեր գիւղին կամ քաղաքին մօտիկ ամենակարեւոր սարը, թէ նրա արտաքին տեսքը եւ թէ նրա նշանակութիւնը։

Ծուարել—*կծկւել, ամփոփւած, կուչ եկած նստել։*

դարաւանդ—*բարձրադիր, դէպի դուրս երկարած հարթութիւններ լեռան լանջին։*

պուրակ—*փոքր անտառ։*

փապար—*ճեղքւածք, խորշ։*

---

1. *Որոշի՛ր արմատները և բառերը բացատրի՛ր՝* ալեծածան, լայնանիստ, երկնասլաց, անյիշատակ, շինարար, ջրաշատ, չարքաշ, հինաւուրց։

2. Շուրջ, շրջակայ, շրջակայք—*իրարից ինչո՞վ են տարբերւում։ Նման կազմւած ուրիշ ի՞նչ բառեր գիտես։*

3. Գթոտ, քարոտ, ջրոտ... *կազմի՛ր նոյն ձեւով բառեր և հանի՛ր* ոտ *մասնիկի նշանակութիւնը։*

Ի՞նչպէս կը լինեն այս բառերի բացասականները՝ հակիմաստները։

---

4. Է՜յ ջան-հայրենիք

Է՜յ ջան-հայրենիք, ի՜նչքան սիրուն ես,
սարերըդ կորած երկնի մովի մէջ.
ջրերըդ անո՜ւշ, հովերըդ անո՜ւշ,
մենակ բալէքըդ արուն-ծովի մէջ։

Քու հողին մեռնեմ, անգի՛ն հայրենիք,
ա՜խ, քիչ է, թէ որ մի կեանքով մեռնեմ,
երնէ՜կ ունենամ հազար ու մի կեանք,
հազարն էլ սըրտանց քեզ մատաղ անեմ։

Ու հազար կեանքով քու դարդին մեռնեմ,
բալէքիդ մատա՜ղ, մատա՜ղ քու սիրուն.
մենակ մի կեանքը թո՛ղ ինձի պահեմ,—
էն էլ քու փառքի գովքը երգելուն,—

որ արտուտի պէս վե՜ր ու վե՜ր ճախրեմ
նոր օրւայ ծէգիդ, ազի՛զ հայրենիք,
ու անո՜ւշ երգեմ, բա՛րձր ու զի՛լ գովեմ
կանանչ արևըդ, ազա՜տ հայրենիք...

Աւ. Իսահակեան

Հեղինակի հայրենիքի ո՞ր մասումն են «բալէքը արուն-ծովի մէջ»։

Մով—*կապուտակ (երկնքի)։*

բալա *(թուրք.)*—*որդի, զաւակ։*

Արուն, օրւայ ծէգը, կանանչ, քու—*ժողովրդական ձեւերին ի՞նչ գրական ձեւեր են համապատասխանում։*

---

5. Արագր

ա.

Գարնան վերջն էր, արիւն-քրտինք թափելու օրեր։ Գիւղը տըքնում էր. փոքրիկ մանուկներին էլ չէին խնայում։

Դաշտերում, այգիներում, բոստաններում կեանքը եռում էր. ամեն կողմ ծուած մէջքեր, յոգնած քրտնաթոր ճակատներ, արևի առաջ ապըխտւած, տանջւած դէմքեր։

Գալօն էլ դադար չունէր։ Ընտանիքը մեծ չէր՝ ինքը, կինը և փոքրիկ աղջիկը՝ ինը տարեկան Շողիկը։ Էլի երեք բերան էր, պէտք էր կերակրել. իսկ գիւղում ձմեռը հանաք չի անում։

Գալօն ողջ օրը քաղհան էր անում, կնոջ և Շողիկի հետ. բամբակ էին քաղհանում։ Փոքր է բամբակի արտը, բայց որ ժամանակին քաղհանւի, մանաւանդ ջրից չը զրկւի, երկինքն էլ հաշտ նայի, կարկուտ ու հիւանդութիւն չըտայ, Գալօն էլի մի տարի գլուխ կը հանի ամօթը երեսին, առանց ուրիշի ձեռքին նայելու։ Եւ Գալօն յոյս ու-

նի. այդ յուսով է, որ այս առաւօտ վաղ իր փոքրիկ ընտանիքով գնաց քաղհանի։

Նա լաւ գիտի, որ քաղհանը կնոջ գործ է և ոչ տղամարդի. նա լաւ գիտի, որ տղամարդի մէջքը չը պէտք է ծռւի մինչև գետին, որ նրա ճակատը չը պէտք է ծածկըւի ուրագի հարւածներից բարձրացող փոշիով, որ նա կնոջ պէս չը պէտք է գունդ դառնայ, խոտերի մէջ պչպչայ այս ու այն վնասակար բոյսը քաղելու համար. այդ բոլորը լաւ գիտի Գալօն, բայց դէ ինչ արած, կարիքը մէջք էլ է ծռում, վիզ էլ, գլուխ էլ։

Քաղհանը տղամարդի գործ չէ, բայց հեշտ էլ գործ չէ. Գալօն ամբողջ օրը ցաւով էր տեսնում իր Շողիկին, որ կռացած փոքրիկ ուրագի վրայ, գլուխը թաղած խոտերի մէջ մանր-մանր հարւածներ էր տալիս և դժւարութեամբ էր առաջանում։ Քրտինքը ծորան ծորան հոսում էր փոքրիկ սիրուն այտերի վրայից, փոշին բարձրանում ու ծածկում էր նրա մազերն ու երկայն արտեւանունքները, բայց աղջիկը շարունակում էր քաղհանել, որովհետև հայրն ասել էր, թէ Վարդավառին նրա համար նոր, վարդագոյն շոր պիտի գնի, խշխշան ու սիրուն։ Բայց նա աշխատում էր ետ չը մնալ ծնողներից, որոնք նրա մանկական փոքրիկ ինքնասիրութիւնը խնայելու համար երկու կողմից օգնում էին, աննկատելի կերպով առաջի խոտերը քաղհանելով։ Արևը վերից անխնայ թափում էր իր կիզիչ ճառագայթները և տօթը գնալով աւելի խեղդող էր դառնում...

Երեկոյեան տուն վերադառնալիս, կինը լուռ քայլում էր Գալօի մի կողմից, իսկ Շողիկը միւս կողմից՝ բռնած հօր ձեռքը։ Փոքրիկը յոգնած էր. ճանապարհին ոտները խառնելով՝ հազիւ հազ հետևում էր հօրը, բայց էլի անդադար խօսում էր իր վարդագոյն շորի, կանաչ-կարմիր ժապաւէնի և կօշիկների մասին։

Գիւղը հեռու չէր. այնտեղից լսւում էր գզիր Վարթօի անհանգիստ կանչը, որ վերահաս վտանգ էր գուժում.

—Եգուց տունը մի մարդ Արագը գնայ, թումբերը քանդւել են համ։

Գալօն կանգ առաւ մի րոպէ և ուշադրութեամբ, բերանաբաց ականջ դրաւ, ապա մի վայրկեան սառած մնաց, յետոյ ձեռքի և գլխի մի անհանգիստ շարժումով բացականչեց.

—Արա՛գ, Արա՛գ, տունդ քանդւի Արագ, էլի՜...

—Հայրիկ, Արագն ի՞նչ է արել։

Հայրը պատասխան չը տւաւ, ու կտրուած ձայնով դարձաւ կնոջը.

—Կնիկ, Շողիկի հետ էգուց մենակ կերթաք քաղհանի, ճար չը կայ։ Ժամանակ է գտել թումբերը քանդելու։

Գիւղը աղմկւած էր. հրապարակում կանչ, հայհոյանք, անէծք, սպառնալիք իրար էին խառնւել. մարդիկ իրար չէին հասկանում, բոլորի ձայները միասին կազմում էին մի անհասկանալի ժխոր։ Գիւղը պատրաստւում էր դիմադրելու մի անակնկալ յարձակման։ Կռիւ էր, անողորմ կռիւ Արագի դէմ. թշնամին շատ էր հզօր և մարդիկ շատ էին խեղճ իրենց դիմադրութեան նախնական միջոցներով։

Կէս գիշերին պէտք էր ճանապարհ ընկնել առաւօտը վաղ Արագի ափին գտնւելու համար. բայց դեռ՝ անհրաժեշտ էին բազմաթիւ պատրաստութիւններ, բահեր, կացիններ, քլունգներ, ուրագներ, հաստ պարաններ և ամենից աւելի ծառերի մեծ-մեծ ճիւղեր, որ պիտի կապւէին և Արագի առաջը ձգւէին ջրի ընթացքը փոխելու համար։

Բ.

Արևելքը դեռ չէր շառագունել։

Մարդիկ քնաթաթախ ու յօրանջելով դուրս էին սողում այս ու այն պատի ետևից, այս ու այն անկիւնից և մոլար ստւերների պէս դիմում էին հրապարակը։ Լսւում էր եզների բառաչ, գոմէշների փնչոց, սայլերի ճռինչ, բահերի զրնգոց, հատուկտոր խօսակցութիւն, դժգոհ ձայներ, կիսաքուն մարդկանց կցկտուր պատասխաններ։ Գալօն էլ փողոցումն էր։

Գիւղը շարժւեց գնաց դէպի Արագը։ Ճիւղերով բեռնաւորուած սայլերը ճռնչում էին բեռների ծանրութիւնից, կարծես տնքալով ցաւից, իսկ գիւղացիները, մեծ ու փոքր խմբեր կազմած, հետևում էին նրանց դանդաղ ընթացքին։ Մի ամբողջ կարաւան էր։

Արևը ծագել էր արդէն, երբ այդ կարաւանը գետի ափը հասաւ։ Արագը ծոյլ ծոյլ արևկող արած, քնից նոր արթնացածի պէս ձըգձգւում էր ու գալարւում և մեղմով ետ էր ձգում իր վրայից գոլորշիների կաթնագոյն շամանդաղը։ Գալօն կանգնած նայում էր՝ մտածմունքի մէջ ընկղմած։

—Գա՛լօ, Գա՛լօ, գործի կաց։

Վարթօն էր, գզիր Վարթօ՛ն։

—Հա՛, գործի կենամ, Վարթօ, գործի կենամ, լաւ ես ասում, մե՛ր ցաւն է, հոգանք։

—Հապա, մեր ցաւն է, Գալօ ախպէր,—վրա բերեց Վարթօն.—Արազը որ կայ՝ մեր տէրն է, մեր էլ զուլումն է. ինչ անենք, ախպէր:

Եւ գործը եռում էր: Ռէսը, տանուտէրն ու ջրպետը որոտում, անիծում, հայհոյում էին. երբեմն-երբեմն լսւում էր մորակի շըրխկոցը, մի ուրիշ կողմ հաստ ճիպոտն էր գործ տեսնում, իսկ Վարթօն շարունակ ճաճւում էր: Սայլերը դատարկւեցին և ոտերից հաստ պարաններով մեծամեծ կապոցներ շինեցին, խուրջինների ծալքերում տապակ-տապակ քար ու հող ածելով, որ ծանր լինի, ջրին դիմանայ: Քար ու հողի և ճիւղերի այս ահագին զանգւածը պէտք էր գետը գցել: Մի քանի տասնեակ ձեռքեր կպան միանգամից առաջին կոյտին և բոլոր ուժով, հարայ-հրոցով դէպի ջուրը գլորել սկսեցին:

Գ.

Բլրաձև կոյտը ահագին շառաչով ջուրն ընկաւ. ալիքները լայն յորձանք տւին ու փախան այս ու այն կողմ, փրփրալով, ապա բոլոր ուժով զարկւեցին իրենց առաջ ցցւած այս նոր արգելքին: Թումբը դողաց, բայց նոյն վայրկեանին նրա վրա թռան մի խումբ մարդիկ, ոմանք պարաններից կախւեցին, ուրիշները՝ ճիւղերից, մինչդեռ ափի բազմութիւնը շտապ-շտապ քար ու ցեխ էր շպրտում վրան, որ ծանրանայ, ալիքներին դիմանայ: Տանուտէրն ու ջրպետը ափից էին հրամաններ արձակում, ռէսն ու գզիրը թումբի վրա էին. այստեղ էր և Գալօն:

—Քա՛ր, հարևաններ, քար ածեցէք,—ճչում էր Գալօն քրտինքի մէջ կորած. նա կարծես վիշապի դէմ պայքար էր մտել և իր ոգևորութեան մէջ ամէն ինչ մոռացել էր:

Բահերով ու ձեռներով ամբոխը գործում էր անընդհատ: Լաւ էր. Գալօն հրճւում էր՝ «Քար ու ցեխ»: Ուռած ալիքները սպառնալի էին և հզօր, բայց թումբը հաստատուն էր և ծանր. կարծես էլ վտանգ չը կար, նոյն իսկ ջուրը բարձրացաւ և շարժւեց դէպի առուները, էլի մի փոքր աշխատանք և ամէն ինչ վերջացած է: Բայց յանկարծ թումբը երերալ սկսեց, դողաց ինչպէս երկրաշարժի ցընցումից. ապա ալիքների միահամուռ թափի առաջ հազիւ հաստատւած ամբարտակը տեղահան եղաւ և սկսեց ցրիւ գալ:

—Պարանը կտրւեց, ափը թռէք,—ճչացին մի քանի ձայներ:

Թումբի վրայի բազմութիւնը շտապով ետ փախաւ ջուրը չը թափւելու համար:

—Թռի՛ր, Գալօ, թռիր տնաքանդ,—ճչաց բազմութիւնը:

Գալօն սարսափած նայեց իր ոտների տակ խուսափող թումբին և ուզեց թռչի դէպի ափը. բայց շրնփոցով ընկաւ ջուրը: Այս բոլորը կատարւեց համարեա մի վայրկեանում: Բազմութիւնը քար կտրեց, իսկ ռէսը գունատւած ու դողալով պոռում էր.

—Պարա՛ն, պարա՛ն ձգեցէք, խեղդւեց, շո՛ւտ:

Ափի բազմութիւնը գլուխը կորցրած՝ դժւարանում էր նայել գետի մէջ կատարւող տեսարանին: Յանկարծ ճիւղերի կոյտը գլորւեց, թաւալ թաւալ առաջ խաղաց հասաւ խեղդւողին և մի անգամից իր տակը թաղեց… Վերջացաւ…

—

—Մայրիկ, ինչ եղաւ իմ հայրիկը:

—Արազը տարաւ, Տողիկ ջան, Արազը տարաւ:

—Ախր ինչո՞ւ տարաւ:

—Գիւղի համար, մատա՛ղ, գիւղի համար տարաւ:

Աւ. Ահարոնեան

---

1. Գզիր Վարթօն ինչո՞ւ է ասում. «Արազը որ կայ՝ մեր տէրն է, մեր էլ զուլումն է»:

2. Տողիկի մայրիկը ինչո՞վ է մխիթարում, ինչո՞վ մեղմացնում իր ցաւը:

Նիւթ (բանաւոր կամ գրաւոր շարադրութեան համար),—Գալօի բնաւորութեան գլխաւոր գծերը:

—

Արազ—Արաքս-ի ժողովրդական ձևը:

ճգնել—ճիգ անելով աշխատել:

քորել—հատիկ-հատիկ թափել, **ծորել**—թելի պես հոսել:

ժխոր—մեծ ու խառն աղմուկ:

ճառագունել—դեմքի կարմրելը:

արեւկող անել, արեգունի անել—արևի տակ պառկել տաքանալու համար: Արեւկող արտեր, արեգունի այգի:

ծամանդաղ—թեթև մեգ, մշուշ, բարակ մառախուղ:

զուլում (թուրք.)—պատուհաս, մեծ տառապանք:

զանգւած—միացած կտորների մի կոյտ, մի ամբողջութիւն:

տապակ-տապակ—շերտ-շերտ, ծալ-ծալ:

քափ—ուժ: Քափով վազել, քափ առնել:

միահամուռ—միացած:

ամբարտակ—թումբ:

—

1. Ի՞նչ են նշանակում և համանօրէն ինչպէս են ծագել հետևեալ դարձուածները.

Գալօն էլի մի տարի գլուխ կը հանի։

Աղքատը ուրիշի ձեռքին է նայում։

Ծիտոտը իր գործը տեսաւ։

Գիւղացին քրտինքի մէջ կորել էր։

Բազմութիւնը գլուխը կորցրեց։

2. Գտիր հոմանիշներ՝ բեռնաւորել, խուսափել *բառերի համար։*

3. Գործածիր նախադասութիւնների մէջ և իմաստը բացատրիր.

Գլուխ հանել, բանը գլուխ բերել, գլուխ տալ, գլուխ գալ, գլուխ դնել, գլուխ պահել, գլուխ բարձրացնել.

գլուխը ուռչում է, գլուխը պտոյտ է գալիս, գլուխը տաքացաւ, գլուխը խառնուել է, գլուխը քոր է գալիս.

մէկի գլուխը տանել, գլուխը ուտել, գլուխը եղել, գլուխը պատռել, գլուխը վեր դնել (*մէկ գործի համար*), գլուխը քարին տալ (*խփել, զարկել*).

---

6. Ալին ու Արազը

Զորային էր։
Տարին երաշտ
աղանձել էր
սար, ձոր ու դաշտ։
Բարկացել էր
Վերին Տէրը
սպառել էր
մեծ գետերը։
Իր ծերացած
էշը հեծած
Արազն անցաւ ծերուկ Ալին.
«Այ, խան Արազ, վայ քո հալին,—
դարձաւ ասաւ.—
Ալու էշն էլ քեզնից անցաւ»։

Ալ. Ծնկոյեան

Ո՞ր դէպքում ենք գործ ածում վերջին տողի ասացուածքը։

Նիւթ. Պատմութիւն յօրինիր հետևեալ առածից՝ «Ծերացած առիւծին էշն էլ քացի կը տայ»։

Աղանձել—*բոհրել, բովել, (ցորեն, սիսեռ, սուրճ)*։ **Աղանձ**—*բոհրած ցորեն*։
հալ *(Թուրք.)*—*վիճակ*։
խան *(Թուրք.)*—*իշխան*։

Զորային—*հակառակը*... Երաշտ տարի—*հակառակը*... Տէր—*հակառակը*...

7. Արաքսի արտասուքը

Մայր—Արաքսի ափերով
քայլամոլոր գնում եմ,
հին-հին դարուց յիշատակ
ալեաց մէջը պրտրում եմ։

Բայց նրանք միշտ յեղյեղուկ
պղտոր ջրով եզերքին
դարիւ-դարիւ խփելով
փախչում էին լալագին։

—Արա՛քս, ինչո՞ւ փախչում ես
այդ հարազատ ափերից,
ինչո՞ւ արցունք ցայտում են
քու սէգ, հպարտ աչքերից։

Մէջքը ուռցրեց Արաքսը,
փրփուր հանեց իր տակից,
ամպի նման գոռալով
էսպէս խօսեց յատակից.

«Խիզա՛խ, անմի՛տ պատանի,
նիրհըս ինչո՞ւ դարևոր
վրդովում ես, նորոգում
իմ ցաւերը բիւրաւոր։

«Կար ժամանակ, որ ես էլ
շքեղազարդ հարսի պէս
հազար ու բիւր պչրանքով
փախչում էի ափերէս։

«Ի՞նչըս մնաց էն օրից,
ո՞ր ջրամօտ գեղերըս,
ո՞րը իմ շէն քաղաքից,
ո՞ր բերկրալի տեղերըս։

«Մինչ իմ որդիք, ո՛վ գիտէ,
ծարաւ, նօթի, անտէրունչ
օտար աշխարհ յածում են
Թոյլ ոտքերով, կիսաշունչ...

«Քանի որ իմ զաւակունք
այսպէս մնան դեռ պանդուխտ,
ինձ միշտ սգւոր կը տեսնէք,
այս է անխաբ իմ սուրբ ուխտ...»

Էլ չը խօսեց Արաքսը,
յորձանք տուեց ահագին,
օղակ-օղակ օձի պէս
առաջ սողաց մոլեգին։

Գամառ-Քաթիպա

1. *Ինչո՞ւ է կոչւում Արաքսը մայր եւ ո՞ւմ մայրն է։*
2. *Արաքսի «բիւրաւոր ցաւերի» մէջ ո՞րն է գլխաւորը։*

Յեղյեղուկ—*փոփոխական, յարափոփոխ*։
դար—*եզր*։
դարիւ-դարիւ—*մինչև եզրը լցւած, բերնէ բերան լցւած, վարար*։
ցայտ—*ցնցուղ, կաթիլ.* **ցայտել**—*Ջրի կամ լոյսի շիթերով կամ կաթիլներով արձակուելը*։
սէգ—*հպարտ ու վսեմ*։
խիզախ—*քաջ ու յանդուգն*։
բիւր—*տասը հազար. այժմ գործ է ածւում* շատի *իմաստով, ինչպէս և* հազար, հազար ու մէկ։

(15-16-67)
270-2002
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос Библиотека ՀԱՍՌ-Арм ССР Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ им. А. Мясникяна

պչրանք—*զարդարանք, զուքս:*

բերկրութիւն—*ուրախութիւն:* Բերկրանք, բերկրալի, բերկրել:

յածել—*թափառել:*

յորձանք—*ջրապտոյտ, ջրի բարձրանալով, ուռչելով վազելը:*

մոլեգին—*կատաղի:* Մոլի—*չափը անցկացրած, ուղիղ ճամփից դուրս եկած:* Մոլի ըմբերցասեր, մոլի արբեցող: *Արմատը* մոլ, *որից առաջացել են* մոլոր, մոլորել, գինեմոլ:

Ի՞նչով են տարբերւում՝ կրօնասէր—կրօնամոլ, ազգասէր—ազգամոլ: *Գտի՛ր* սէր *և* մոլ *արմատներով բարդւած ուրիշ բառեր:*

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

Ռափայէլ Պատկանեան ծնւել է 1830 թ. Նոր Նախիջևանում: Նրա հայրը բանաստեղծ Գաբրիէլ քահանան էր. պապն էլ բանաստեղծ էր. այսպիսով տաղանդը այդ ընտանիքի մէջ ժառանգական էր: Սկզբում նա սովորում էր հօր մօտ և այնուհետև Լազարեան ճեմարանում: Ստիպւած լինելով ուսումը ընդհատելու՝ մի առ ժամանակ մնաց հօր մօտ Թիֆլիսում և օգնում էր «Արարատ» հանդէսը հրատարակելու մէջ. այնուհետև նորից գնաց սովորելու Դորպատ, Մոսկւա և Պետերբուրգ, որտեղ և աւարտեց համալսարանը: Իր կեանքի երկրորդ կէսը անցկացրեց իր ծննդավայր Նոր Նախիջևանում, որտեղ սկզբում մասնաւոր դպրոց էր պահում, յետոյ դարձաւ թեմական դպրոցի ուսուցիչ և վերջը տեսուչ Արհեստաւորաց դպրոցի: Մեռաւ 1892 թւին և թաղւեց Ս. Խաչ վանքում Նոր Նախիջևանի:

Ռ. Պատկանեանը սկսեց գրել դեռ «Արարատ» հանդէսում, որ հրատարակւում էր աշխարհաբար: Նոր գրական լեզուն զարգացնելու համար Մոսկւայում երկու ուսանողների հետ մի ընկերութիւն կազմեց, որ ընկերների անունների և ազգանունների սկզբնատառերով կոչւում էր Գամառ-Քաթիպա. այս անունը վերջը շարունակեց գործածել Պատկանեանը որպէս իր կեղծ անուն: Ընկերութեան լոյս ընծայած երգերը շատ արագ տարածւեցին ժողովրդի մէջ: Այնուհետև Պատկանեանը աշխատակցում էր զանազան թերթերի չափաբերական և արձակ գրւածքներով և թարգմանութիւններով, գրում էր և գաւառաբարբառներով, մանաւանդ Նոր Նախիջևանի լեզւով. (օրինակ «Ջախու», որ վերածւած է նաև գրական լեզւի): Ահագին ազդեցութիւն ունեցան

հասարակութեան վրա նրա այն երգերը, որտեղ նկարագրում էր տաճկահայերի վիճակը և կոչ էր անում նրանց ազատագրելու: Իր ոտանաւորների համար նա ստացաւ «Ազգային երգիչ» անունը: Գրում էր և մանկական ոտանաւորներ ու երգեր, որոնցից յայտնի էին Կատուն եկաւ..., Արի գարուն, Բաղիկ, Արի՛ իմ սոխակ, Դեռ ուր է ծիծառ...

---

8. Քէֆ անողին քէֆ չի պակսիլ

ա.

Ժամանակով Բաղդադ քաղաքում նստում էր Հարուն Ալ Ռաշիդ թագաւորը: Հարուն Ալ Ռաշիդ թագաւորը սովորութիւն ունէր՝ շորերը փոխած ման էր գալիս իմանալու թէ ինչ է կատարւում իր մայրաքաղաքում: Մի գիշեր էլ էսպէս, դերւիշի շոր մտած, անցնելիս է լինում մի խուլ փողոցով: Մի աղքատ տնակից երգի ու նւագածութեան ձայներ է լսում: Կանգ է առնում, միտք է անում միտք, հետաքրքրւում է ու ներս է մտնում: Ներս է մտնում տեսնում՝ դատարկ ու մերկ մի տնակ, կրակի դէմը փռած կարպետի վրա նստոտած տան տէրն ու երաժիշտները: Աղքատ ընթրիքի շուրջը բոլորած նւագում են, երգում ու զւարճանում:

—Խաղաղութիւն ձեզ, ով ուրախ մարդիկ, ողջունում է դերւիշն ու խոնարհութիւն է անում տան տիրոջը:

—Բարով եկար, դերւիշ բաբա, համեցէք, միասին ուտենք Աստուծու տւած մի կտոր հացն ու միասին ուրախանանք, խնդրում է տան տէրը: Դերւիշին էլ նստեցնում են իրանց հետ ու շարունակում են քէֆը:

Գիշերւայ մի ժամին տան տէրը երաժիշտներին վճարում է իրենց հասանելիքն ու ճամփու դնում: Երբ երաժիշտները հեռանում են՝ դերւիշը տան տիրոջը հարցնում է.

—Անունդ ի՞նչ է, բարեկամ:

—Հասան:

—Ամօթ չը լինի հարցնելը, Հասան ախպէր, ի՞նչ արհեստի տէր ես դու, ի՞նչքան փող ես աշխատում, որ էսպէս քէֆով ես անցկացնում քո ժամանակը:

—Քէֆը շատ փողով չի լինում, դերւիշ բաբա,—պատասխանում է տանտէրը:—Ամենաչնչին ապրուստն էլ կարող է մարդ ուրախ վայելել: Ես մի փինաչի եմ, չուստեր եմ կարկատում, օրը մի չնչին բան եմ վաստակում: Երեկոները բերում եմ մի մասը ապրուստի եմ

տալիս, միւս մասն էլ էս երաժիշտներին, որ տեսար։ Նստում ենք, ուրախանում։ Թէ քեզ նման մի ազնիւ հիւր էլ Աստուած հասցնում է՝ աւելի լաւ։

—Անպակաս լինի քո ուրախութիւնը, ո՜վ Հասան, բայց եթէ յանկարծ աշխատանքիդ էդ բարակ աղբիւրն էլ կտրի՝ ի՞նչ պիտի անես։

—Ինչո՞ւ է կտրում, դերւիշ բաբա։

—Օրինակ, Թագաւոր է ու Թագաւորի քմահաճոյք. յանկարծ հրաման արաւ, որ էլ փինաչութիւնը չըպիտի լինի։

—Է՜հ, Թագաւորի դարդը կորե՜լ է՝ ընկնի փինաչիների ետևից... կամ ի՞նչ են արել նրան փինաչիները։ Երբ էդպէս բան կը պատահի, էն ժամանակ կը մտածենք. այժմ քնենք, դերւիշ բաբա։ Աստուած ողորմած է. քէֆ անողին քէֆ չի պակսիլ։ Աշխարհքի բան է, ինչպէս բռնես՝ էնպէս էլ կերթայ։

—Լա՛ւ, Աստուած տայ որ էտպէս լինի, բարեմաղթում է դերւիշն ու քնում են։

Բ.

Առաւօտը վաղ դերւիշը գնում է։ Նրա գնալուց յետոյ մունետիկները լցւում են Բաղդադի փողոցներն ու հրապարակները՝ գոռալով յայտարարում, թէ Թագաւորի հրաման է, փինաչիների խանութները փակ պիտի մնան. էս օրւանից էլ ոչ ոք իրաւունք չունի էտ արհեստով պարապելու։ Զանցառուների գլուխները կը թռչեն։

Խեղճ Հասանի ձեռքից էլ բիզը խլում են, վզակոթին տալով դուրս անում իր նեղլիկ խանութից ու դուռը փակում։

Միւս գիշերը, դարձեալ դերւիշի շոր մտած, Հարուն Ալ Ռաշիդ Թագաւորը գնում է քաղաքը շրջելու։ Դարձեալ անցնում է էն փողոցով, ուր ապրում էր ուրախ Հասանը։ Դարձեալ երգի ու երաժըշտութեան ձայներ է լսում նրա տանից։ Ներս է մտնում։

—Օ՜, բարով, բարով, դերւիշ բաբա. համեցէք, նստիր քո տեղը։

Նստում են, ուտում, խմում, ածում, երգում, ուրախանում մինչև կէս գիշեր։

Կէս գիշերին երաժիշտներն իրենց վարձն առնում են հեռանում։ Մնում են տանտէրն ու հիւրը։

—Գիտե՞ս ինչ պատահեց, դերւիշ բաբա։

—Ի՞նչ պատահեց։

—Հէնց էն, ինչ որ դու գուշակեցիր երէկ իրիկուն։ Էսօր Թագաւորը հրաման հանեց — մեր արհեստն արգելեց...

—Ի՞նչ ես ասում, զարմանում է հիւրը։ Հապա որտեղից փող գտար, որ էս գիշեր էլ քէֆ սարքեցիր։

—Մի կաւէ կուժ եմ գտել, հիմի էլ ջուր եմ ծախում։ Օրական ինչ աշխատում եմ՝ մի մասը տալիս եմ ապրուստի, միւսը երաժիշտներին ու դարձեալ քէֆ եմ անում։

—Իսկ եթէ Թագաւորը ջուր ծախելն էլ արգելի՝ էն ժամանակ ի՞նչ ես անելու։

—Ջուր ծախելով Թագաւորին ի՞նչ վնաս ենք տալի, որ արգելի։ Եւ ինչո՞ւ էս օրւանից դարդ անեմ դրա համար։ Երբ որ կարգելի, էն ժամանակ կը մտածեմ։ Մի՛ վախենար, բարեկամ, երբէք չի պակսիլ մի կտոր հաց ու մի անկիւն, որ ես էնտեղ ուրախանամ։

Անպակաս լինի ուրախութիւնը քո օջախից, ով Հասան, բարեմաղթում է դերւիշն ու հեռանում։

Գ․

Առաւօտը վաղ ամբողջ Բաղդադը թնդում է մունետիկների ձէնից, թէ Հարուն Ալ Ռաշիդ թագաւորն էսպէս է հրամայում․ Ջուրը Աստծունն է և էսօրւանից ոչ ոք իրաւունք չունի փողով ծախելու։ Պատռել բոլոր ջրկիրների տիկերն ու ջարդել նրանց կժերը։

Աղքատ Հասանի կուժն էլ ջարդում են ջրի ճամփին ու դատարկ ետ ղրկում։

Միւս գիշեր թագաւորը կրկին դերւիշի շոր է հագնում ու գնում քաղաքը շրջելու։ Կրկին մօտենում է ուրախ Հասանի տանը։ Դարձեալ ուրախութեան ու երգի ձայներ։ Ներս է մտնում։

—Ա՜, դերւիշ բաբա՜, համեցէք, համեցէք, նստիր քո տեղը, քէֆ անենք․ ցերեկը երկարացնենք, գիշերը կարճացնենք։ Ուրախանանք, դերւիշ բաբա, աւելի լաւ է ուրախանալ, քան տրտմել։

—Իհարկէ, ուրախութիւնը աւելի լաւ է։ Ամենքս էլ մեռնելու ենք, ով կարող է թող ուրախանայ, բացականչում է դերւիշն ու նստում Հասանի կողքին։

Գիշերւայ մի ժամին երգիչներն իրենց վարձն առնում են ու հեռանում։ Մնում են դերւիշն ու տան տէրը։

—Հասան ախպէր, էսօր ինչ լսեցի․ ասում են թագաւորը արգելել է ջուր ծախելը, ճշմարի՞տ է արդեօք։

—Ի՞նչպէս չէ, ի՜նչպէս չէ, ամենքիս ջրի ամաններն էլ ոչնչացրին։ Ա՛խպէր, դու կատարեալ մարգարէ ես եղել․ ինչ ասում ես՝ միւս օրը կատարւում է։

—Հապա ի՞նչպէս է, որ դու դարձեալ քէֆ ես անում։ Ո՞րտեղից ես գտել էս փողը։

—Երանի թէ մարդուն պակաս փողը լինի։ Փողի գտնելը հեշտ է, դերւիշ բաբա։ Գնացի մի գործատիրոջ մշակ մտայ․ օրական մի բան է տալիս․ բերում եմ մի մասը ապրուստիս եմ անում, միւսը երաժիշտաներին եմ տալիս ու շարունակում եմ իմ քէֆը։ Բանը մարդու սիրտն է, դերւիշ բաբա։

—Ես իմ հոգին, արժէ, որ էդ սրտով թագաւորի պալատականը լինէիր դու, բացականչեց դերւիշը։

—Վա՜հ, դերւիշ, քո ասածները կատարւում են ճշտութեամբ․ հիմի որ էս խօսքդ էլ կատարւի։

—Ինչո՞ւ չի կատարւիլ․ աշխարհքում անկարելի բան չկայ,— պատասխանեց դերւիշն ու բաժանւեցին։

Դ․

Առաւօտը վաղ տէրութեան պաշտօնեաները կտրեցին Հասանի աղքատ տնակի դուռը։

—Էստե՞ղ է կենում քէֆ սիրող Հասանը։

—Ես եմ,—պատասխանեց զարմացած Հասանը։

—Թագաւորի հրամանով հետևիր մեզ։

Ուղիղ պալատը տարան Հասանին։ Յայտնեցին, որ թագաւորը իրեն պալատականի պաշտօն է տւել։ Պալատականի զգեստ հագցրին, մի թուր էլ կապեցին մէջքը ու կանգնեցրին պալատի մուտքերից մէկի առջև։ Ամբողջ օրը էն մուտքի առջև պարապ կանգնեց Հասանը։ Իրիկունը որ մթնեց, դատարկ ճամբու դրին տուն թէ՝ գնա, առաւօտը ետ կըգաս քո տեղը կանգնելու։

Գիշերը դարձեալ դերվիշի շոր մտաւ Հարուն Ալ Ռաշիդ թագաւորն ու գնաց քաղաքը շրջելու։

Գնաց մօտեցաւ Հասանի տանը։ Ականջ դրեց։ Զարմանքով լսեց, որ դարձեալ հնչում են երգն ու երաժշտութիւնը։ Հասանը քէֆ է անում դարձեալ։ Ներս մտաւ։

—Դերւի՜շ, դերւի՜շ, քո տունը չըքանդւի, արի է․ էրէկւայ խօսքդ էլ կատարւեց, թագաւորն ինձ պալատում պաշտօն է տւել։

—Ի՞նչ ես ասում։

—Աստուած վկայ։

—Եւ երևի շատ փող է տւել...

—Չէ՛, ինչ փող․ մի գռօշ չըտւեցին։ Դատարկ տուն ղրկեցին։

—Հապա ո՞րտեղից ես փող գտել, որ դարձեալ քէֆ ես անում։

—Նստիր, ասեմ որտեղից։ Մի թուր են կապել մէջքս։ Իրիկունը տուն գալիս մտածեցի թէ՝

հօ ես մարդ չեմ սպանելու։ Տարայ պողպատի շեղբը ծախեցի, պողպատի փոխարէն փայտէ շինել տւի, մէջը դրի՝ եկայ տուն։ Եկայ պողպատի փողով քէֆ սարքեցի։ Լաւ եմ արել չէ՞, դերւիշ. աւելի լաւ է ուրախութիւն ունենալ քան մարդ սպանելու սուր։

—Հա՛, հա՛, հա՛,—ծիծաղեց դերւիշը։—Լաւ անելը լաւ ես արել, Հասան, բայց եթէ էգուց քեզ թագաւորը հրամայի՝ թէ կտրի էս յանցաւորի գլուխը՝ ինչ ես անելու։

—Բերանդ բարի բաց արա, ա՛յ չարագուշակ դերւիշ,—բարկացաւ Հասանը։—Հակառակի նման ինչ էլ ասում ես, կատարւում է. չե՞ս կարող մի լաւ բան ասել...

Ու շատ վշտացաւ Հասանը. Սիրտը երկիւղ ընկաւ, ամբողջ գիշերը չը կարողացաւ քնի։

ե.

Իրաւ որ, միւս օրը թագաւորը կանչեց Հասանին ու ամբողջ արքունիքի առջև հանդիսաւոր հրամայեց, որ մի յանցաւորի գլուխը կտրի։

—Հանիր թուրըդ ու կտրի էս յանցաւորի գլուխը։

—Ապրած կենաս, մեծ թագաւոր,—պատասխանեց սարսափած Հասանը,—ես իմ օրում մարդու գլուխ չեմ կտրել, չեմ կարող։ Փորձւած մարդիկ շատ կան քո պալատում. հրամայի մի ուրիշը կտրի...

—Ես քեզ եմ հրամայում,—սաստեց թագաւորը՝ եթէ մի վայրկեան էլ ուշացրիր, գլուխդ կը թռչի։ Հանի՛ր թուրըդ...

Էս խօսքի հետ թշւառ Հասանը մօտեցաւ յանցաւորին, ձեռքերը տարածեց ու աղաղակեց դէպի երկինք.

—Տէր Աստւած, արդարն ու մեղաւորը դու գիտես։ Եթէ էս մարդը մեղաւոր է, ինձ ուժ տուր, որ մի զարկով թռցնեմ սրա գլուխը, իսկ եթէ արդար է, թող փայտ դառնայ իմ թուրը...

Ասաւ, դուրս քաշեց թուրը... փա՜յտ։ Հրաշքի վրա պալատականները մնացին ապշած։ Էստեղ Հարուն Ալ Ռաշիդ թագաւորը փառփառ ծիծաղեց ու ամեն բան բաց արաւ, պատմեց իր պալատականների առջև։ Շատ ծիծաղեցին պալատականները ու շատ գովեցին թէ ուրախութիւն սիրող Հասանին, թէ թագաւորին։ Ծիծաղեց մինչև անգամ էն դժբախտ յանցաւորը, որ չոքած վիզը մեկնած սպասում էր

թրի զարկին։ Թագաւորը բաշխեց յանցաւորին իր կեանքը, իսկ Հասանին դառնալով՝ հաչակեց նրան իր սիրելի մարդը ամբողջ տէրութեան մէջ ու լաւ պաշտօն տւաւ, որ միշտ աշխատի ու անպակաս ուրախ ապրի, ուրիշներին էլ սովորցնի ուրախ ապրել աշխարհքում։

Թեան մէջ ու լաւ պաշտօն տւաւ, որ միշտ աշխատի ու անպակաս ուրախ ապրի, ուրիշներին էլ սովորցնի ուրախ ապրել աշխարհքում։

Յովհ. Թումանեան

1. Որո՞նք են Հասանի բնաւորութեան գլխաւոր գծերը։

2. Արդեօ՞ք այդ գծերը առաջ են գալիս նրա կենսուրախութիւնից թէ ընդհակառակը։

Նիւթ. Շարադրեցէք մի պատմութիւն հետևեալ վերնագրով. «Դարդ անողին դարդ չի պակսիլ»։

Փինաչի—*հին կօշիկներ կարկատող։*

քմահաճոյք—*գլխին փչած, անհիմն ցանկութիւն։ Որո՞նք են արմատները։*

մունետիկ—*կառավարութեան հրամանները փողոցներում պոռացող պաշտօնեայ։ Գիւղերում ո՞վ է կատարում այդ պաշտօնը։*

սայրը—*դանակի կամ թուրի կտրող երկաթը։*

արքունիք—*թագաւորի պալատը։ Ո՞րն է արմատը։*

սաստել—*երկիւղ տալով հրամայել։*

---

1. Ի՞նչ ասել է զանցառու*։ Որո՞նք են արմատները։*

2. Ի՞նչ իմաստներ ունեն խուլ, բարակ *և* ածել *բառերը յաջորդ օրինակների մէջ.*

խուլ փողոց, խուլ տրտունջ, խուլ ձայն, խուլ պղինձ.

բարակ աղբիւր, բարակ սիրտ, բարակ ձայն, բարակ ցաւ.

ջուր ածել, ձու ածել, բառ ածել, մաճ ածել, գործ ածել, պար ածել, պէտք ածել, վէր ածել։

3. Ի՞նչ տարբերութիւն կայ գուշակ *և* մարգարէ *բառերի մէջ։ Կազմիր բարդ բառեր* գուշակ *բառից։*

4. Ասա հետեւեալ բառերի հոմանիշները—մերկ, վզակոթ, տէրութիւն, զգեստ։

5. Բացատրիր հետեւեալ ասոյթները.—

Թագաւորը դերւիշի շոր էր մտել։

Մարդը փող էր աշխատում։

Թագաւորը քէֆ անողի ետեւից էր ընկել։

Բաղդադը թնդում էր։

Մշակ մտնել, զինուոր մտնել, աշակերտ մտնել։

---

9. Ա՜խ, տուէք ինձ

Ա՜խ, տուէք ինձ քաղցր մի քուն,
կեանքից հեռու սլանամ
այն աշխարհը, ուր խնդութիւն,
ուր սէրն է միշտ անթառամ։

Ծնքուշ վարդերն ինձ բարձ լինին,
վառ կանաչից իմ վերմակ,
նրանց բոյրը գլարթագին
ծծեմ անվերջ ես անյագ։

Եւ խայտալով իմ առաջին
վտակն անուշ խոխոջէ,
մի թարմութիւն եդեմային
չորս բոլորքս տարածէ։

Եւ ինձ ժպտի արշալուսին
գարնան մատաղ արեգակ,
և գիշերով իմ ճակատին
խաղայ գողտրիկ վառ լուսնակ։

Եւ յաւիտեան վայելչութիւն
գրկի հոգիս, չը յագենամ...
Ա՜խ, տուէք ինձ քաղցրը մի քուն,
հեռո՜ւ, հեռո՜ւ սլանամ։

Յովհ. Յովհաննիսեան

Եդեմ—*դրախտ։*

գողտրիկ—*կոկիկ, նազելի։*

---

1. Ի՞նչ տարբերութիւն կայ մուգ կանաչ, բաց կանաչ, կանաչաւուն *գոյների մէջ։ Կազմիր նոյն ձեւով ուրիշ գոյների աստիճանները։*

2. Վտակը խոխոջում է, կարկաչում է. *էլ ուրիշ ի՞նչ ձայներ է հանում։*

3. Գտիր վայելչութիւն, յագենալ, խնդութիւն *բառերի հոմանիշները։*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



Յ. Յովհաննիսեանը ծնել է Վաղարշապատում 1864 թւին։ Աւարտելով Լազարեան ճեմարանը, և ապա Մոսկւայի համալսարանը, ուսուցչութիւն էր անում Էջմիածնի Գէորգեան ճեմարանում, յետոյ և ուրիշ տեղերում. մի ժամանակ պաշտօնավարում էր Էջմիածնի սինոդում. այժմ Բագու քաղաքի դպրոցների տեսուչ է։

Գրել սկսեց դեռ աշակերտ ժամանակ՝ իր ուսուցիչ Սմբատ Շահազիզի ազդեցութեան տակ։ Թէ ինքնուրոյն, թէ թարգմանական ոտանաւորների լեզուն կոկ է և գողտրիկ. երգում է հայրենիքը և հայ գեղջուկին (Հատիկ, Գիւղի ժամը), երազում է լոյսի, ճշմարտութեան և արդարութեան մասին։ Առաջինն էր, որ սկսեց հետեւել աշուղական երգի արւեստին. դրա համար է որ նրա ոտանաւորներից շատերը ժողովրդական երգեր են դարձել («Ալագեազ բարձր սարին», «Արագ եկաւ»)։

10. Ուսումի

ա.

Աշտարակցի դերձակ Ստեփանը հոգեվարքի մէջ էր։ Գունատ պառկած էր անկողնում, անշարժ ու անձայն. երբեմն միայն խուփ աչքերը լայն բաց էր անում, երբ մահճի մօտ կանգնած կնոջ լացը շատ էր լսելի դառնում։ Այդ ժամանակ նրա կրծքից դուրս էր թռչում մի խոր հառաչ, իսկ ոսկորոտ մատները ջղաձգօրէն շարժւում էին որդու մազերի մէջ, որը գետնին փռւած՝ գլուխը դրել էր հօր վերմակի վրա և հեծկլտում էր։ Տղան հազիւ տասներկու տարեկան կը լինէր։

Մեռնողը յանկարծ երեսը դարձրեց կնոջ կողմը ու շշնջաց.

—Մարտիրոս հայր-սուրբը չի՞ եկել։

Երբ մի քիչ յետոյ վարդապետը ներս մտաւ, կանայք քաշւեցին խրճթի մութ անկիւնը։ Հայր Մարտիրոսը կռացաւ մեռնողի վրա և մեղմ հարցրեց.

—Ի՞նչպէս ես, եղբա՛յր Ստեփան։

Այդ մտերմական ձայնից ժպիտի նման մի բան սահեց դերձակի ճմշկած դէմքով։ Իր պղտոր հայեացքը չը հեռացնելով հայր սուրբի աչքերից, դողդոջուն ձեռքով բռնեց նրա աջը և փորձում էր մօտեցնել շրթունքին, բայց վարդապետը ինքը կռացաւ և համբուրեց նրա խորշոմած դէմքը։

Դերձակ Ստեփանը երկար ոչ մի խօսք չէր արտասանում, ապա բռնեց որդու ձեռքից և տւաւ հայր սուրբին.

—Հայր-սուրբ,—ասաւ հազիւ լսելի ձայնով.—Յովհաննէսին քեզ եմ յանձնում, քեզ էլ Աստծուն։ Կուզես՝ մարդ շինիր, կուզես՝ ջուրը ձգիր։

—Հանգիստ կաց, եղբայր Ստեփան, այսուհետև իմ հոգևոր զաւակս կը լինի։

Վարդապետը զգաց, ինչպէս մեռնողը սեղմեց իր ձեռքը։

բ.

Առանց այն էլ հայր Մարտիրոսը իր աշակերտների մէջ ամենից աւելի սիրում էր Յովհաննէսին։ Բայց այժմ, դերձակ Ստեփանի մահից յետոյ, իր քնքշութիւնը կրկնապատկեց։ Հայր սուրբը Տաճկաստանից նոր էր անցել Ռուսաստան և միաբան էր կարգւած Մողնու

սուրբ Գէորգի վանքում, Աշտարակի մօտ։ Այնտեղ հաւաքել էր շրջակայ գիւղի մանուկներին ու դպրոց բաց արել։ Ո՛չ ծեծ կար այդ դպրոցում, ո՛չ հայհոյանք. առաւօտը հայր սուրբը ուրախ դիմաւորում էր իր աշակերտներին և ամբողջ օրը նրանց հետ էր։ Նա ոգեւորւած գրում կարդացնում էր երեխաներին, ժամերգութիւն էր սովորեցնում, պատմում սուրբերի վարքից, հայոց պատմութիւնից։ Բայց աւելի սիրում էին երեխաները, երբ հայր սուրբը պատմում էր հեռաւոր երկիրների մասին, ուր և՛ բոյսերն են այլ տեսակ, և՛ կենդանիները, և՛ մարդիկ։ Աշխուժ հանաքները յանկարծ դադարում էին, տղաները նստոտում էին հայր սուրբի շուրջը գերեզմանաքարերի վրա ու աչք չէին հեռացնում նրա շրթունքներից։

Յովհաննէսը այդ զբօսանքներից տուն վերադառնալիս՝ բարձրանում էր Աշտարակի ամենաբարձր բլուրը ու այնտեղից նայում հեռու, դէպի հորիզոնը, կարծես սպասելիս լինէր թէ ահա՛ այն վերջալոյսի կարմրատակած ամպերի տակից, այն լեռների մուգ-մուգ շարքերի ետևից կը տեսնի այդ անծանօթ, երանաւէտ աշխարհները։

գ.

Դերձակ Ստեփանի մահից մի երկու շաբաթ անց՝ մեծ եղբայր Խուբովը մի առաւօտ ձայն տւաւ Յովհաննէսին.

—Էյ, տիրացու,—այսպէս էր նա միշտ կանչում իր փոքր եղբօրը, ծաղրելով նրա սէրը դէպի գրքերը,—էտոցը առ, այգին պիտի գնանք։

Յովհաննէսը ուզում էր հակառակի ու փախչի Մողնու վանքը դասի, բայց ծլկւել չկարողացաւ և գլուխը կախ գնաց այգի։

Բայց շնորհքով չէր բանում, և եղբայրը շարունակ կանչում էր.

—Էտ ո՞նց ես կտրում, տօ, կարճ կտրի... նոր ճիւղերն էլ ինչո՞ւ ես կտրում։

Վերջապէս չը համբերեց ու տղայի գլխին բամբեց։

Հէնց այդ էր պակաս։ Յովհաննէսը էտոցը ձեռքից վայր գցեց ու արտասւալից աչքերով, խռոված, հեռացաւ այգու մի անկիւնը ու էլ ո՛չ մօր յորդորները և ո՛չ եղբօր սպառնալիքները չազդեցին. մինչև երեկոյ դուրս չեկաւ այնտեղից։

Միւս առաւօտ, երբ եղբայրը ուզում էր նորից կանչել, նա արդէն չկար. փախել էր դպրոց։ Երեկոյեան, երբ Յովհաննէսը տուն

վերադարձաւ, Խուբովը բարկացած յարձակւեց նրա վրա.

—Տօ, ծոյլ անպիտան, գլխներիս գիտնական ես դառել, էլ մատը մատին խփել չե՞ս ուզում, հա՞... բանից փախչում ես, հա՞... Լպստած...

Ու տղայի գլխից մորթու փափախը մի կողմ շպրտելով՝ այն է ուզում էր մի ապտակ հասցնել, մայրը ձեռքից բռնեց։

—Ա՛յ որդի, Խուբով. թող արա, էս մէկ անգամը բախշի, էլ չի անի։ Լուսահոգի հէրդ է մեղաւոր, երես էր տալիս, մի բաժակ ջուր լցնել չէր թողնում, ինքն էր ծառայում, միայն թէ տղան կարդար ու կարդար։ Բան չը կայ, կամաց-կամաց կը սովորի։

Բայց յաջորդ օրը կրկին Յովհաննիսին ոչ մի տեղ չը գտան. նորից փախել էր վանքը։

Կիրակի օրը պատարագից յետոյ հայր Մարտիրոսը յայտնւեց դերձակենց տանը ու երկար խօսակցութիւն ունեցաւ որբևայրու ու նրա աւագ որդու հետ։ Յովհաննէսը չը լսեց նրանց խօսածը, միայն թէ յաջորդ օրը, երբ լուսաբացից առաջ կրկին կամացուկ դուրս սողաց տեղից, հագնւեց ու գրքերը կռնատակին՝ ուզում էր տանից դուրս պրծնել, մայրը բարձի վրայից գլուխը վեր քաշեց ու հարցրեց.

—Օհաննէս, դո՞ւ ես։ Գնո՞ւմ ես վանքը։ Է՛հ, Աստուած քեզ հետ։ Էնտեղ հաց ու պանիր եմ պահել քեզ համար, հետդ առ։

Դ.

Հայր սուրբը վերջերս փոխւած էր երևում, աւելի տխուր, աւելի քնքուշ էր խօսում ամեն մի աշակերտի հետ, աւելի երկար ու եռանդուն էր պարապում, կարծես շտապելիս լինէր։

Մի օր էլ, պարապմունքներից յետոյ, հայր սուրբը Յովհաննէսին տարաւ իր խուցը և յուզւած ձայնով ասաւ.

—Զաւակս, մի քանի օրից բաժանւելու ենք։ Ես պիտի հեռանամ այստեղից։ Առանց ինձ ի՞նչ պիտի դառնաս, իմ խեղճ տղայ։

Նրա ձայնը դողում էր, Յովհաննէսը անխօս կանգնած էր։

—Ինձ հետ կը գա՞ս,—շարունակեց հայր սուրբը։— Գնալու եմ Պօլիս. այնտեղ իմ ծանօթ ամիրաներից մէկին կը խնդրեմ, որ քեզ իր հաշւով ուղարկի Փարիզ ուսումի։

Տղան վաղուց էր լսել, որ Փարիզում հիմնւել է մի մեծ հայկական դպրոց, որտեղ աւելի շատ բան են սովորեցնում, քան թէ նոյն իսկ Վենետիկում։ Յովհաննէսը չը կարողացաւ ուրախութիւնը զսպել ու բացականչեց.

—Կը գամ. հայր-սուրբ, կը գամ։

—Լա՛ւ, խօսեմ մօրդ հետ։

Տղան արագ բռնեց հայր սուրբի աջը և ջերմ համբուրեց։

—Բայց, զաւակս,—շարունակեց վարդապետը,—պէտք է գիտենաս, որ ես չեմ կարող այստեղից գնալ օրը ցերեկով. ես Էջմիածնում մի վարդապետ ուսուցիչ ունիմ, որին չեն սիրում այնտեղ. նա ստիպւած է արտասահման փախչելու, ես էլ պէտք է նրան ընկերանամ։ Մեզ հետամուտ կը լինեն։ Ծածուկ պէտք է գնանք։

—Եթէ մայրիկս յօժար կը լինի՝ ծածուկ էլ կը գամ ձեզ հետ,— վերջապէս պատասխանեց նա։

—Մի երկու օրից հայր Մարտիրոսը խօսեց Յովհաննէսի մօր հետ։ Կինարմատը ո՛չ մի կերպ չէր ուզում համաձայնւել, չը նայելով ո՛չ հայր-սուրբի ճարտար համոզանքներին, ո՛չ էլ որդու յամառ աղերսանքներին։

—Չէ՛, հայր-սո՛ւրբ, կարգդ վկայ, տղայիս իմ աչքի առջևից բաց չեմ թողնելու,—դէմ կացաւ նա կտրուկ կերպով հէնց սկզբից ու մինչև վերջն էլ հաստատ կանգնեց իր ասածի վրա։

—Որ այդպէս է,—ասաւ հայր-սուրբը,—քո որդին քեզ. ես ազատ եմ ամուսնուդ տւած խոստումից։ Միայն թէ գաղտնիք պահիր, ինչ որ քեզ ասացի. ոչ ոքի բան չասես։

Բայց Փարիզ գնալու երազանքը մէկ փայլատակել էր Յովհաննէսի հոգու մէջ ու այնտեղ բարձրացած փոթորիկը էլ չէր խաղաղւում։ Վարդապետի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ՝ տղան արդէն մտքումը մնաս բարև էր ասում իրենց տան բոլոր քունջ ու պուճախին, բակին, տանեցիներին, տան անասուններին, Աշտարակի շրջակայ դաշտերին ու այգիներին, իր ընկերներին ու երևակայութեամբ սլանում էր հեռո՛ւ, հրաշալի երկիրներ, դէպի կախարդական մեծ քաղաքը...

Այժմ այդ ամենը չքանում էր։

Յովհաննէսը յաճախ առանձնանում էր, գիշերները չէր քնում, լալիս էր և գրեթէ բան չէր ուտում։

—Չէ՛, չէ՛,—կրկնում էր նա ինքն իրեն,—պիտի գնամ, չեմ մնայ։

Ու մի օր ընկաւ հայր-սուրբի ոտները։

—Հայր-սուրբ, էլի դու ինձ հայրութիւն արա, հետդ տար։ Իմ հօր հոգին հանգիստ չի մնայ էն աշխարհում, եթէ ինձ ուսումի չը տաս։ Չեմ մնայ, չեմ ուզում բռի գիւղացի դառնամ։

—Ջաւակս, բայց ի՞նչպէս...

—Ես էլ քեզ հետ կը փախչեմ։

Հայր Մարտիրոսը մտածեց, մտածեց ու խոստացաւ, որ սահմանագլուխը հասնելուն պէս մի մարդ կուղարկի նրան էլ իր մօտ բերելու։

Թէ վարժապետի և թէ աշակերտի փախչելուն օգնել յանձն առաւ Սաղմոսավանքի տէր-Մանուէլ քահանան, որի որդուն էլ հայր-սուրբը խոստացել էր Յովհաննէսի հետ մի կերպ Փարիզ ուղարկել։ Յովհաննէսը ուրախանում էր, որ մենակ չի լինելու օտարութեան մէջ։

ե.

Աշունք էր։ Այգեկութը վերջացել էր։ Գիւղացիք շտապում էին այգիներից տները։ Դերձակ Ստեփանի կինը աշնան լացքն էր արել և Յովհաննէսի հագին թողել էր մի քանի հին-մին ցնցոտիներ։

Երեկոյեան ժամից յետոյ Յովհաննէսը խաղում էր իր ընկերների հետ գիւղի ծայրի կալերից մէկում։ Մէկ էլ տեսնում է՝ տէր-Մանուէլի որդի Սարգիսը վերև կանգնած է։ Աննկատելի կերպով երկուսն էլ մի կողմ քաշուեցին. Սարգիսը յայտնեց, որ տիրացու Ղեւոնդը եկել է իրենց տանելու և սպասում է ձորում։

Յովհաննէսը իսկոյն փախաւ տուն։

—Մայրի՛կ, մայրի՛կ, շորերս չորացել են, տուր հագնեմ, ընկերներիս հետ պիտի խաղամ։

—Ա՛յ տղայ, ի՞նչ ժամանակ է, շուտով կը մթնի. մինչև առաւօտ սպասիր։

Բայց ո՞վ էր լսողը. Յովհաննէսը մաքուր շորերը հագաւ ու գնաց։

Մթնեց ու նա չը կար. անցաւ էլի մի ժամ, չէր երևում։ Մայրը սաստիկ անհանգստանում էր։

Իսկ այդ ժամանակ Յովհաննէսն ու Սարգիսը տիրացու Ղևոնդի հետ արագ-արագ, ուղղակի դաշտերը կտրելով, բարձրանում էին դէպի Սաղմոսավանք։ Լուսնեակ գիշեր էր, ճամփան պարզ երևում էր։ Յովհաննէսը ետ նայեց, հարաւում, սպիտակ սաւանով փաթթուած լրիւ լուսնի արծաթ շողերին ուսերը դէմ արած, բազմել էր Մասիսը։

—Մնաս-բարո՛վ, հայո՛ց նահապետ,—կանչեց Յովհաննէսը.—արդեօք էլի ե՞րբ քեզ կը տեսնեմ...

Արդէն բաւականին ուշ էր։ Յանկարծ փախստականները իրենց

ետևից ոտնաձայն լսեցին. կարծեցին թէ իրենց քայլերի արձագանքն է գիշերուայ խաղաղութեան մէջ։ Բայց չէ, մի քանի րոպէից պարզ որոշւում էին սմբակների ձայները և տաքացած ձիերի ծանր փռնչոցը։ Իսկոյն պառկեցին մի փոսի մէջ, սսկուեցին։

—Ախպէր, զուր ենք էս կողմը գնում։ Փախած կը լինեն դէպի Երևան։ Ամենից լաւն է, էն կողմը քշենք։



Յովհաննէսը ճանաչեց իրենց հարևան գիւղացիներից մէկի ձայնը։

—Էն կապկտրածին մտիկ, է. իր պստիկ տեղով ողջ գիւղը ոտքի է կանգնեցրել։ Մայրը իրեն սպանում է, վրայի մսերն է պոկոտում...

Այս խօսքերից Յովհաննէսի սիրտը ճմլեց. քիչ մնաց կանչէր թէ՝ ինքը այստեղ է, բայց զսպեց իրեն։

Գիւղացիք թեքուեցին դէպի Աշտարակ, իսկ տղաները, հէնց որ սմբակների ձայները կտրուեցին, ելան ոտքի, բարձրացան Արագածի

թումբը ու կէս գիշերի մօտ հասան Սաղմոսավանք, տէր Մանուէլի գոմը։

Առաւօտեան լուսաբացից առաջ ինքը տէր Մանուէլը իջեցրեց նրանց Սաղմոսավանքի ձորը և թաքցրեց վանքի տակի քարայրում։

Գ.

Քարայրում փախստականները նոր էին վերջացրել ճաշը, որ բերել էր տէրտէրի աւագ որդին, ու մտածկոտ խօսում էին, յանկարծ Յովհաննէսի ականջին պարզ կերպով դիպաւ Խուբովի ձայնը.

—Իմ եղբօր հոտն եմ առնում,—աղաղակում էր նա։

Իսկ տէր Մանուէլը երդւում էր, թէ ոչինչ չը գիտի, ինքը ոչ մի բանից տեղեկութիւն չունի։

Յովհաննէսը սրտատրոփ ականջ էր դնում այդ վէճին։ Ձայները մօտենում էին. լսւում էր նրանց ոտների տակից ներքև գլորւող քարերի ձայնը։ Մէկ էլ քարայրի բաց մուտքի մէջ ուրւագծւեց եղբօր յաղթանդամ կերպարանքը։

—Ա՛յ երէց.—գոչեց նա,—քեզ չասի՞, որ եղբօրս հոտն եմ առնում։

Ու ներս մտաւ այրը և տնկւեց Յովհաննէսի առջև։

—Այստեղ ի՞նչ ես անում, փո՛չ կենդանի,—որոտաց նա գայրացած։ Յովհաննէսը լուռ էր, իսկ տիրացու Ղևոնդը շտապով քաշւեց այրի խորքը։ Խուբովը նրան տեսնելուն պէս՝ եղբօրը թողած նրա վրա յարձակւեց ու սկսեց ձեռքի մտրակով անողորմ հարւածներ իջեցնել խեղճ մարդու նիհար կողերին, ուսերին, մէջքին ու գլխին։ Տիրացուն մի գունդ էր կտրւել, կպել էր լերկ ժայռին ու չը գիտէր՝ ինչպէս պաշտպանւի։

—Կը սպանեմ, հոգիդ կը հանեմ, անիծածի ծնունդ։ Համարձակւե՞ս իմ եղբօրը փախցնել,—սպառնում էր Խուբովը և զարկում հա զարկում։

Տէրտէրը աշխատում էր մտրակը ձեռից խլել, բայց իզուր։ Այն ժամանակ Յովհաննէսը ընկաւ եղբօր ու տիրացւի մէջտեղը ու աղաղակեց.

—Ի՞նչ ես անմեղ մարդուն նահատակում։ Ի՞նչով է մեղաւոր. ես իմ յօժար կամքովս եմ գնում։ Ո՛չ քո գերին եմ, ո՛չ էլ քո որդին. մի եղբայր դու ես, մի եղբայր ես։ Էլ չեմ կամենում քեզ հետ ապրել։ Ուզո՞ւմ ես, որ խոտհնձւոր շինես...

Խուբովը մէկ անգամից զինաթափ եղաւ։ Կատաղութիւնը իջաւ և հարցրեց.

—Լա՛ւ, լաւ. ապա ինչո՞ւ էիր փախչում։

—Գնում էի Պոլիս, որ ուսում առնեմ, մարդ դառնամ։

—Էլ ինչո՞ւ էիր մեզանից ծածուկ գնում. ձեռքդ բռնողը ո՞վ էր։ Յովհաննէսը չէր պատասխանում։

—Էտպէս որ սիրտդ ուսում է ուզում, իմ ձեռքով կը տանեմ, կը յանձնեմ քեզ Մարտիրոս հայրսուրբին։ Հիմի վեր կաց, երթանք, մայրդ միամտի։

Տէրտէրն ու Խուբովը սուս ու փուս նստեցրին տղաներին իրենց ձիերի գաւակը ու ուղղւեցին դէպի Աշտարակ։

Ճամփին Յովհաննէսը երկար մտածում էր ու չէր կարողանում հասկանալ, թէ ով պիտի եղբօրը հաղորդած լինէր իր տեղը։ Գուցէ գլխի ընկնէր, եթէ յիշէր, որ գրպանից վայր էր գցել ու կորցրել հայր-սուրբի առաջին նամակը։

Մայրը լուռ, առանց մի խօսքի, առանց յանդիմանելու, դիմաւորեց իր որդուն. նա այնպէս կարօտով գրկեց տղային, կարծես մեռած էր և յարութիւն առաւ։

Է.

Յովհաննէսը շատ ուրախ էր, որ հիմա արդէն կը հասնի իր նպատակին մօր ու եղբօր համաձայնութեամբ, բայց օրերը անցնում էին օրերի ետևից և Խուբովի խոստումը հէնց այնպէս էլ մնաց խոստում։

Նա սկսեց բոլորովին փոխւել։ Աչքերը գետնին, տխուր ու անժպիտ ման էր գալիս Յովհաննէսը տան մէջ. խոյս էր տալիս փողոց և բակ դուրս գալուց, ընկերների հետ խօսելուց. նոյնիսկ իր գրքե-

րին ձեռք չէր տալիս։ Օրէց օր հալւում էր, կմախք էր դառնում։ Մայրը տունն աւլելիս կամ հաց թխելիս էլ զննող աչքը նրանից չէր հեռացնում։

—Տղան հիւանդ է,—ասում էր նա երբեմն շշուկով Խուբովին՝ գլուխը թափ տալով։

—Որդի, Օհաննէս, ի՛նչդ է ցաւում, քեզ մատաղ, ասա.—դիմում էր տղային։

—Ոչի՛նչ,––լինում էր կարճ պատասխանը։

Տանեցիք շատ մտահոգութեան մէջ էին ու վերջապէս ուղարկեցին նրան Երևան արքունի դպրոցում սովորելու։

Մի օր մի թւանքչի եկաւ և Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսի հրամանով ձիու վրա դրաւ Յովհաննէսին ու Երևանից տարաւ Էջմիածին։ Մի քանի ժամ յետոյ նա կանգնած էր ծերունի հայրապետի առջև, որը ուզում էր քննել թէ՝ ինչու էին փախել երկու վարդապետները միաժամանակ, մէկը՝ Մուղնուց, մի ուրիշն էլ՝ Էջմիածնից։

—Օհօ՜, բարո՜վ, հազար բարի, ինչ լաւ տղայ ես եղել,—դիմեց կաթողիկոսը և աջը մեկնելով նրան՝ միւսով գրկեց ու քաշեց ծնկների մէջ։—Դո՞ւ ես իմ սիրելի Ստեփանի որդին. հայրդ իմ լաւ բարեկամն էր, դու էլ իմ զաւակն ես, ապրիս։

Ու սկսեց հարց ու փորձը։

Տղայի սուր, հակիրճ ու համարձակ պատասխանները դուր էին գալիս ծերունուն։ Նա ուշադրութեամբ հետևում էր նրա անկեղծ պատմութեանը։

—Ուրեմն դու փախչում էիր, որ գնաս ուսո՞ւմ առնես։ Կուզե՞ս քեզ ուղարկեմ ուսումի։

—Ոտքդ էլ չեմ պաչի՜։

—Որ այդպէս է, գնա, պատրաստւիր. մէկ ամսից ես գնում եմ Թիֆլիս. քեզ էլ հետս կը տանեմ իմ ուսումնարանը։

1852 թւի յունւարին Յովհաննէսը մտաւ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը, որպէս որդեգիր։

Անցան տարիներ։ Մարտիրոս վարդապետը և Յովհաննէսը նորից իրար հանդիպեցին։ Հայր սուրբը արդէն 70 տարեկան ծերունի էր, Հառիճի վանքի միաբան. առաջւայ պէս եռանդով ու ոգևորութեամբ

դաս էր տալիս վանքի դպրոցի սաներին, իսկ Յովհաննէսը դարձել էր արդէն յայտնի վիպասան, Պերճ Պռօշեանը։

Ստ. Լիսիցեան

---

1. Որտեղի՞ց էր առաջ եկել ուսման սէրը Յովհաննէսի հոգու մէջ։
2. Ինչո՞ւ Խուբովը հակառակ էր Յովհաննէսի ուսում ստանալուն։
3. Արդեօք Յովհաննէսը լաւ արաւ, որ ուզում էր փախչել մօրից ծածուկ։
4. Ի՞նչպէս է քեզ թւում տէր-Մանուէլի վարմունքը։

ՆԻՒԹԵՐ. 1. Ի՞նչ էին խօսում և ի՞նչ էին զգում փախստականները այրի մէջ նստած։

2. Ի՞նչ անցաւ դարձաւ դերձակ Սարգսի տանը Յովհաննէսի փախուստի իրիկունը մինչև նրա ետ բերելը։

Սնար—անկողնի գլխի կողմը։
երանաւէտ—երանելի, երջանիկ։
էտոց—հատոց, այգեպանի դանակ։
յորդորել—համոզել ու դրդել։ **Յորդոր**—խրատ։
երազանք—մի բանի մասին երազելը։
թոի—կոպիտ ու անկիրթ։
նահատակել—չարչարել ու սպանել։
գաւակ—ձիու մէջքի ետևի մասը, թամբի ետևը։
հաղորդել—յայտնել, տեղեկացնել։
թւանքչի (թուրք.)—հրացանաւոր. այսպէս են կոչւում կաթողիկոսի բնակարանի՝ Վեհարանի պահապանները։
հակիրճ—կարճ, համառօտ։
ջղաձգօրէն—անհանգիստ, անկանոն շարժումներով։
ամիրայ (արաբ.)—իշխան, մեծատուն։
ուրուագծել—գլխաւոր գծերով նկարել։

---

1. Ի՞նչ են արտայայտում հետևեալ զոյգ հականիշ բառերը միասին առած.՝ փոխանակի՛ր որտեղ կարելի է մի բառով—մեծ ու պստիկ, տղայ ու աղջիկ, գիշեր-ցերեկ, երկինք-երկիր, ծով ու ցամաք, սար ու ձոր, մարդ ու կին, գիւղ ու քաղաք, շատ ու քիչ։

2. Այլ կերպ ի՛նչպէս կասես՝ իր պստիկ տեղով, իր աշակերտ տեղով։

3. Տո՛ւր նոյնանիշները Հայրապետ, քահանայ, յօժար, ծածուկ, չմշկած (դէմք), կռանալ, բանել բառերի։

4. Ի՞նչ տարբերութիւններ ունեն՝

Մտերիմ, բարեկամ, ընկեր.
խորշոմ, կնճիռ, ծալք.
վարք, բարք, վարմունք.
բռի, վայրի, կոպիտ.
աւագ, երեց, անդրանիկ։

5. Հանիր կտրել բառի իմաստը—դասերը կտրելով անցայ, երկու ժամուայ ճամփայ կտրեցի, ճամփաս կտրեց, քար կտրեցի, կաթը կտրուեց, ճարը կտրուեց, սիրտը այս գործից կտրուեց։



11. Տէր Թոդիկի դպրոցը

ա.

Մայրս իմ փոքր հասակից հոգս էր տանում, որ գիր-կարդալ սովորեմ և «մարդ» դառնամ։ Տասը տարեկան էի, երբ ինձ մեր թաղի քահանայի մօտ տարաւ։ Այն օրը Հոգեգալստեան տօնն էր։ «Հոգեգալուստը լաւ օր է,—ասում էր մայրս.—եթէ երեխան այդ օրը վարժատուն մտնի, շատ բան կը սովորի, նրա համար որ Հոգին Սուրբ այսօր առաքեալներին լեզու տուաւ»։

Մայրս ինձ վարժապետին յանձնելու ժամանակ ասաւ.—«Տէր հայր, ծառայ լինեմ սուրբ աջիդ, որդիս քեզ համար ծառայ եմ բերել, միսը քեզ, ոսկորն ինձ, ինչ ուզում ես, արա, միայն թէ՝ երեխաս մի բան սովորի»...

Տէր Թօդիկ էր վարժապետիս անունը։ Նա մեծ համարում ունէր, ոչ միայն մեր քաղաքի մէջ, այլ մեր ամբողջ գաւառում։ Ով մի երազ էր տեսնում, նրա մօտն էր վազում և մեկնութիւն խնդրում։ Ում երեխան հիւանդանում էր, նրան Նարեկ կամ Աւետարան էր կարդացնել տալիս, որ առողջանայ։ Ով մի գործ էր կամենում սկսել, նրա «Տէր-Ողորմեայ»ի վրա էր փորձում իր բախտը։ Մի խօսքով, նա մեր գաւառի մարգարէն էր. ամեն մարդ նրա խորհրդին էր դիմում, ամեն մարդ նրանից խրատ էր ընդունում...

Աստուած իմ, ինչեր չէին պատմում նրա մասին։ Ասում էին՝

տէր հայրը իր եղունգի վրա մի բան է գրում, կամ մի աղօթք է կարդում, և գարու հատիկները մրջիւնի նման բարձրանում են տան սիւնի վրայով, և ընդհակառակը, նրա խօսքով արագաշարժ կարիճը քարացած կանգնում է և բնաւ չէ շարժւում։ Ասում էին՝ ծտերի բերանը աղօթքով կապում է և նրանք չեն կարողանում արտերի ցորենը ուտել։ Ասում էին՝ դևերին, սատանաներին բռնում է, լցնում է ապակէ սրւակների մէջ և այնպէս պահում է, որ մարդկանց վնաս չը տան։

բ.

Մեր դպրոցը տէր Թօդիկի աւելորդ սենեակներից մէկն էր, անասունների ախոռին շատ մօտ, համարեա կպած։ Այն նեղ և խեղդւած խուցի մէջ լցւած էր թւով մինչև քառասուն աշակերտ.—բացի աշակերտներից այնտեղ կապած էին լինում տէր հօր նորածին հորթերը։ Ձմեռը շատ լաւ էր. թէև վառելիք չունէինք, բայց ախոռը դասարանի հետ միացնող պատուհանները բաց էինք անում և անասունների գոլորշին մառախուղի պէս ներս էր թափւում և մեր դասատունը տաքանում էր բաղնիսի պէս։

Ամբողջ դպրոցը բաղկացած էր մէկ դասատնից. նրա մէջ էին աւանդւում թէ բարձր և թէ տարրական գիտութիւնները, սկսած այբբենարանից մինչև այն ահագին գիրքը, որ ես հազիւ էի կարողանում բարձրացնել և որը «Ցայսմաւուրք» էր կոչւում։

Մեր դասատունը, բոլորովին մերկ էր. նստարան, աթոռ, սեղան կոչւած բաները այնտեղ չը կային։ Աշակերտները ծալապատիկ նստում էին խոնաւ յատակի վրա, առանց տախտակամածի, որը ծածկւած էր խսիրներով։ Վարժապետը իր տակին փռած ունէր այծի մորթի. մի քանի հարուստների որդիները նոյնպէս ունէին փոքրիկ օթոցներ, որ բերել էին իրանց տներից։

Միակ առարկաները, որոնք յիշեցնում էին, թէ այդ մթին ու խոնաւ սենեակը դպրոց էր, ֆալախկան էր և մի խուրձ դալար ճիպոտներ։

Աշակերտների մերկ ոտները դնում էին այդ պատժական մեքենայի մէջ, պտտացնելով վեր բարձրացնում, յետոյ դալար ճիպոտներով այնքան հարւածում, մինչև ողորմելի զոհը բոլորովին թուլանում, և ուշաթափ էր լինում։ Պատժւող աշակերտին ծեծել էին տալիս նրա բարեկամի կամ ամենասիրելի ընկերի ձեռքով։ Եթէ սա հարւածները թուլացնում էր կամ հրաժարւում ծեծելուց, սրան ևս ենթարկում էին միևնոյն գանահարութեանը։

Առաւօտեան վաղ սկսւում էր դասատւութիւնը։ Վարժապետը իր անկիւնում նստած էր լինում. նրա առջև դրած էր մի փոքրիկ գրակալ։ Աշակերտները հերթով մօտենում էին, վարժապետի աջը համբուրում, չոքում էին նրա առջև և դասագրքերը դնելով գրակալի վրա՝ սկսում էին «համար տալ»։ Սովորաբար ամեն մի սխալի համար աշակերտը ընդունում էր «խրատի» մի-մի սաստիկ զարկ իր ափին։ Իսկ եթէ դասը բոլորովին սերտած չէր, նրա համար պատրաստ էր անիծւած ֆալախկան...

Այդ «խրատ» կոչւածը Աստծու մի առանձին պատիժ էր. շինւած էր ամենաամուր փայտից և փոքրիկ թիակի ձև ունէր։ Հին գրքերի մէջ գտնւած բոլոր ասացւածքները, որոնք վերաբերում էին ծեծելու, գանահարութեան, փորագրւած էին նրա վրա։

Պատիժների մէջ մինչև այսօր չեմ մոռացել մէկը, որը որքան ծիծաղելի, այնքան էլ սարսափելի էր։ Աշակերտին կանգնեցնում էին ոտքի վրա և երկու ձեռքով բռնել էին տալիս մի աղիւս կամ ահագին Յայսմաւուրքը։ Տղան ժամերով այդ ծանր գիրքը պէտք է պահէր գլխից բարձր, երկու ձեռքով։ Թևերը յոգնում էին, ջղերը թուլանում, բայց ոչինչ։ Գլխաւոր տանջանքը նրանումն էր, որ յանցաւորը պէտք է կանգնէր մէկ ոտքի վրա. սովորաբար ընտրում էին ձախ ոտքը։ Մի աշակերտ էլ մտրակը ձեռքին, կանգնած նրա մօտ, հսկում էր այդ անտանելի մարմնամարզութեան. երբ յանցաւորը ոտքը գետին էր դնում, ընկերը իսկոյն մտրակով զարկում էր ոտին։ Այդ սատանայական պատժին ես այն աստիճան սովորած էի, որ երկար կարողանում էի սագի նման մէկ ոտքի վրա կանգնած մնալ։

Մեր դպրոցը ունէր նաև իր ուրիշ խստութիւնները։

Առաւօտները պէտք է դպրոց գայինք բոլորովին անօթի։ Թէյի կամ սուրճի գործածութիւնը այն ժամանակ դեռ մեր երկրում մտած էլ չէր։ Իսկ եթէ թանից կամ մածունից նախաճաշիկ անէինք, սաստիկ պատժւում էինք։ Վարժապետը ասում էր. «կուշտ փորով չի կարելի դաս սովորել. երբ մարդ մի բան ուտում է, խելքը պակսում է»։ Եւ նա օրինակ էր

բերում ճգնաւորներին, վարդապետներին, որոնք ոչինչ չէին ուտում, բայց իրանցից գրքեր էին շարադրում։

Յիշեալ պատւէրի դէմ զեղծումներ անել անկարելի էր. վարժապետը իսկոյն իմանում էր, երբ աշակերտը մի բան կերած էր լինում։ Նախ քան ուսման սկսելը՝ որ աշակերտի վրա կասկած ունէր, սկսում էր նրա լեզուն քննել, որ տեսնի, արդեօք ծոմը լուծել է թէ ոչ։ Յայտնի բան է, անսւաղ մարդու լեզուն աւելի սպիտակ է լինում, նրա մակերևոյթի վրա ճերմակ փառ է նստած լինում. իսկ երբ մի բան ուտում և խմում է, լեզուն մաքրւում է և աւելի կարմիր գոյն է ստանում։ Այդ պատճառով մենք ամեն առաւօտ ոչ միայն ոչինչ չէինք ուտում, այլ մինչև անգամ վախենում էինք երեսներս լւանալու ժամանակ բերաններս մաքրել, որ չը լինի թէ մեր լեզւի ճերմակութիւնը սրբւի, և վարժապետը ասի, թէ ծոմը լուծել ենք։ Եւ այսպէս, մինչև կէսօր մենք պարապում էինք բոլորովին սոված փորով, գլուխներս պտտւում էր, աչքներիս առջևը սևանում էր քաղցածութիւնից, դարձեալ ոչինչ չէինք կարողանում սովորել։

գ.

Մեր ժամացոյցը պատի ստւերն էր. երբ գետնի վրա նշանակւած խաչին էր հասնում, գիտէինք որ կէսօր է։ Այն ժամանակ միայն թոյլտւութիւն էինք ստանում ճաշելու։ Բայց ինչ անհամբերութեամբ սպասում էինք, որ ստւերը հասնի խաչին։ Կարծես արևն էլ մեր վարժապետի նման սիրտ չունէր։

Ճաշը ուտում էինք դասատան մէջ։ Աշակերտները իրանց հետ էին բերում բոլոր պաշարը և անուշ պատառներից բաժին էին հանում տէր հօրը, այնպէս որ, նրա մասը աւելի ճոխ էր լինում և բազմատեսակ. մինչև անգամ երեցկինն ու նրա որդիքն էլ կերակրւում էին տէր հօր սեղանից։

Ճաշից յետոյ թէև մենք հանգստի մի քանի ժամեր ունէինք, բայց խաղերը սաստիկ արգելւած էին։ Խաղը համարւում էր մի տեսակ չարութիւն, որ ընդդէմ էր համեստութեան կանոններին։ Աշակերտը պէտք է լինէր լուռ, անշարժ, ամօթխած և խոնարհ։ Այդ պատճառով սաստիկ պատժւում էր աշակերտը, երբ նրան նկատում էին խաղալիս, աւելի վատ, երբ նրա մօտ գտնում էին խաղալիքներ։ Երբեմն դպրոցում անակնկալ խուզարկութիւններ էին լինում, աշակերտների գրպանները որոնում էին։

Ես աղքատ էի. մայրս դժւարութեամբ էր կարողանում վճարել

իմ ամսականը, դրա փոխարէն կատարում էի վարժապետիս տնային գործերը։ Առաւօտից մինչև երեկոյ հանգստութիւն չունէի. աղբիւրից խմելու ջուր էի բերում, կովերի համար խոտ էի քաղում դաշտից, հորթերը բռնում էի, մինչև երէց կինը կովերը կթում էր, և եթէ ուրիշ գործ չէր լինում, ճաշից յետոյ նստում էի վարժապետիս կողքին, ճանճեր էի քշում, որ նա անուշ քնի…

Երբ մեր թաղում մկրտութիւն էր լինում կամ թաղում, այն օրը վարժապետիս համար հարսանիք էր, իսկ մեզ համար մահ։ Աշակերտներից մի քանիսը, որոնք մեծ էին հասակով և տիրացութիւն անել գիտէին, վեր էին առնում տէր հօր փիլոնը, մաշտոցը, բուրվառը, քահանայական այլ սպասները և գնում էին խորհրդի տեղը։ Իսկ մեզ նստացնում էր միմեանցից հեռու, մեր հագուստի լայն փէշերը տարածում էր գետնին, նրանց վրա ածում էր մանր աւազ, յետոյ աւազը դրոշմում էր փայտէ կնիքով, որ յատկապէս դրա համար պատրաստուած էր։ Երեւակայեցէք մեր դրութիւնը. ամբողջ ժամերով պէտք է մեխած մնաս գետնին, մի շարժում անել կարող չես, որովհետև իսկոյն աւազը կը խառնուի, կնիքը կը լուծուի, և վարժապետը հոգիդ կ'առնի…

Այսպիսի պատիժների խիստ յաճախ ենթարկւում էի ես։ Ես մեռել չէի, որ անշարժ մնայի։ Վարժապետը դառնում էր տուն մի փոքր տաքացած գլխով, գտնում էր կնիքը լուծւած, այն ժամանակ պատրաստ էր կամ անիծւած ֆալախկան, կամ մերկ ծնկներով չոքելը աղիւսի մանրած կտորների և կամ սիմինդրի հատիկների վրա։ Դարձեալ պէտք է անշարժ մնայի։

Լինում էին օրեր, որ պատիժը ընդհանուր էր դառնում. աշակերտները բոլորը միասին պատժւում էին։ Տարուայ մէջ մի քանի անգամ մենք արձակուրդ էինք ունենում։ Մեծ արձակուրդները լինում էին Զատկի և Ծննդեան տօներին, մի-մի շաբաթ։ Երբ տօներից յետոյ աշակերտները նորից հաւաքւում էին դպրոց, մեր վարժապետը առանց խտրութեան աշակերտների ոտները դնում էր ֆալախկայի մէջ և բոլորին հաւասարապէս ծեծում։ Ինչո՞ւ համար. այդ նրա համար էր, որ գուցէ աշակերտները արձակուրդներին իրենց տներում, կամ դրսում որևէ անկարգութիւն արած լինէին. այդ կարծեցեալ անկարգութիւնը ստուգել անհնարին էր, ուրեմն պէտք էր թէ մեղաւորին և թէ անմեղին հաւասարապէս պատժել։ Այս բարբարոսութեան մէջ մի ուրիշ միտք էլ կար։ Ինչպէս լաւ ձիաւորը, ձին

նստածին պէս, տալիս է մի քանի մտրակի զարկ, որ թմրած անասունը զգաստանայ, զրգուի, այնպէս էլ մեր վարժապետը հանգստի օրերից յետոյ լարում էր մեր մտաւոր ուժերը ճիպոտներով, որ սթափւենք, որ վայրենացած կեանքից կրկին ընտելանանք դպրոցական կեանքին…

Մեր վարժապետը չարասիրտ մարդ չէր, ընդհակառակը, նա շատ բարի էր։ Այս բոլոր խստութիւնները, այս բոլոր անգթութիւնները առաջ էին գալիս նրա հասկացողութիւնից։ Նա համոզւած էր, որ առանց ծեծի, առանց տանջանքի աշակերտը ոչինչ չի սովորի։ Նա այնքան հաւատում էր իր ֆալախկային, որքան հաւատում էր իր թալիսմաններին և կախարդական արարողութիւններին, որոնցով հրաշքներ էր գործում…

Դ.

Առաջին անգամ վարժապետը ձեռս տուաւ այբբենարանը։ Կարծես այս րոպէիս էլ աչքիս առջևն է այն խոշոր տառերով տպւած փոքրիկ տետրակը։ Ճակատին նկարած էր մի մեծ խաչ, խաչի տակը գրած. «Խաչ, օգնեա ինձ»։ Մի քանի ամիս, երեսս խաչակնքելով կրկնում էի այդ երեք բառը։ Վարժապետս ասում էր։ «Եթէ ամեն դասի սկզբում խաչից օգնութիւն չը խնդրես, ոչինչ չես կարող սովորել»։ Բայց երևում էր, որ խաչն էլ խռովել էր իմ գլխից։

Ես մինչև այսօր չեմ կարող ազատել այն ծանր և անախորժ տպաւորութիւնից, որ թողել է վրաս այբուբենը։ Նրա ամեն մի տառը կարծես թէ ուզում էր վիշապի նման ինձ կուլ տալ։ Գիշերներն անգամ հանգիստ քուն չունէի. երազների մէջ նոյնքան տանջւում էի, որքան դպրոցում։ Ինձ թւում էր թէ նուն, կապիկի նման առջևս պպզած, իր ռեխը ծամռելով, ուզում էր վախեցնել. ռան մի մեծ մողէս դարձած, վազում էր, որ ծոցս մտնի։ Ամենից աւելի ես ատում էի ճէն. նա միշտ երևում էր ինձ վիզը ծռած ուղտի պէս, իսկ ես շատ էի վախենում ուղտից։

Այս դպրոցի մէջ ես անցկացրի ամբողջ եօթը տարի։ Այս եօթը տարուայ ընթացքում ես անցայ գիտութեան բոլոր աստիճանները, այսինքն սովորեցի այնքան, որքան կարող էր սովորել այն ժամանակ մի բարձր ուսում ստացող աշակերտ։ Կարդացել էի բոլոր գրքերը, որ յայտնի էին մեր երկրում, Սաղմոս, Ժամագիրք, Աւետարան, Հին-Կտակարան, Նարեկ և մինչև անգամ այն ահագին գիրքը, որ ես փոքր

հասակումս դժւարութեամբ կարողանում էի վերցնել: Ես կարողանում էի գրել և գրածս կարդալ, ես գիտէի նաև մի քանի կանոններ գրաբար լեզւի քերականութիւնից: Բայց մի բան, որ ես չը կարողացայ ձեռք բերել, դա վարժապետիս ունեցած խորին գիտութիւնն էր ոգիների և կախարդութիւնների մասին: Այդ գիտութիւնը վարժապետս պահում էր որպէս մի գաղտնիք, որի մասնակից լինելու համար պէտք էր տասը-քսան տարի ծառայել նրան:

Րաֆֆի

1. Ի՞նչ տարբերութիւն կայ ձեր եւ տէր Թոդիկի դպրոցի մէջ:

ՆԻՒԹ. Պատմի՛ր, թէ ինչպէս մի օր այցելեցիր տէր Թոդիկի դպրոցը և այնտեղ ի՞նչ տեսար:

Համարում ունենալ — *յարգ ու պատիւ վայելել:*

գան — *ծեծ,* **գանահարութիւն** — *ծեծ:*

օրոց — *մինդար, փոքրիկ ու բարակ ներքնակ:*

զեղծում — *օրինազանցութիւն, կանոնից կամ օրէնքից շեղում:*

ծոմ — *առանց ոչինչ ուտելու կենալ:* **Ծոմ պահել** — *ոչինչ չուտել:* **Ծոմը լուծել** — *ծոմը քանդել, բան ուտել:*

անուաղ — *բերանը ոչինչ չը դրած:*

խազ — *գիծ:*

Աւետարան, Նարեկ, Մաշտոց, Յայսմաւուրք, Սաղմոս — *եկեղեցական գրքեր են:*

փիլոն — *քահանայի սև վերնոցը:*

բուրվառ — *խնկարկելու աման:*

սպաս — *ամանեղէն:*

խորհուրդ (եկեղեցական) — *եկեղեցու գլխաւոր արարողութիւն:*

խտրութիւն, խտիր — *զանազանութիւն, տարբերութիւն:*

բարբարոս — *վայրենի, անքաղաքակիրթ:*

զգաստանալ — *սթափւել, ուշքի գալ:*

թալիսման — *կախարդական ուժ պարունակող իր:*

---

1. Լրագրի համար, հաշիւ ու համար, անհամար, համար տալ, մօրս համար — *ի՞նչ իմաստներ ունի* համար *բառը:*

2. Ծալապատիկ նստել. *էլ ի՞նչպէս կարելի է նստել:*

3. *Ի՞նչ ասել է՝* եզնաւոր, խուզարկութիւն, ստուգել, ճոխ, մակերեւոյթ:

4. *Որո՞նք են* ամոքված *և* անակնկալ *բառերի արմատները և այս բառերը ի՞նչ իմաստ ունեն:*

5. *Ի՞նչպէս ես հասկանում՝* խաչը խռովել էր գլխին, *ասոյթը:*

12. Ափսո՜ս իմ մանուկ օրերին

ա.

Երբ խելքս գլուխս եկաւ, աչքս բաց արի, ինչ որ տեսայ, հէնց իմանում էի՝ թէ Աստուած ինձ համար է ստեղծել: Մէկ կողմս իմ օրօրոցն էր, մէկ կողմս իմ խաղալու բաները. էնպէս էի իմանում՝ թէ աշխարհքի թագաւորը հէնց ես եմ: Ով ասես՝ ինձ էր սիրում, գրկում և ձեռն առնում: Իմ մէկ դարտակ խօսքն էլ ամենին դուր էր գալիս, իմ մէկ յիմար ծիծաղն էլ ամենի սիրտը շահում և մխիթարում էր:

Իմն էր իմ ծնողներիս գիրկը. հէրս էր նեղանում՝ մօրս էր տալիս. մէրս էր նեղանում՝ հօրս էր տալիս. վարդի պէս հոտ էին առնում, խնձորի պէս խաղացնում: Մէկ տեղս ցաւելիս՝ հազար անգամ խռոում և համբուրում էին ինձ, որ սիրտս առնեն: Մեր տան իշխանը ես էի. ասածս՝ ասած էր, ուզածս՝ ուզած, արածս՝ արած: Առաւօտը լուսանում էր թէ իրիկունը մթնում, իմը խաղալն էր, կուելը, դէս ու դէն վազելը, շորերս պատռելը: Փէտէ ձիս իմ հոգին էր. ամբողջ օրը նրա վրա փողոցները չափում էի ու էլ ո՛չ հաց, ո՛չ ջուր բնաւ միտքս չէին գալիս:

Էնպէս էի իմանում, թէ էն երկնքի գեղեցիկ աստղերը, էն արեգակն ու լուսինը, էն դաշտերի ալւան-ալւան ծաղիկները հէնց ինձ վրա են էնպէս խնդում և ծիծաղում, հէնց ինձանով են էնպէս մխիթարւում:

Ա՜խ, անիրաւ աշխարհք, որ էսպէս փոխւեց: Հէնց մի փոքր մեծացայ թէ չէ՝ հիմի ամենն էլ իրենց ուժը ինձ վրա են փորձում, ամենն էլ իրենց կուժն ու կուլէն հէնց ինձ վրա են կոտրում: Մէկ բան անելիս՝ իսկոյն մէրը գլխիս է խփում, որը քամակիս: Կատուն տեղիցը շարժւում է՝ ես եմ մեղաւոր: Ով մէկ բան է անում՝ ինձ են մեղ դնում: Վա՜յ, վա՜յ... ափսո՜ս իմ օրերին, ափսո՜ս իմ անց կացրած ժամանակին:

բ.

Հիմիկ էլ զոռ են անում՝ թէ պիտի կարդաս: Հարամ լինի էն հացն էլ, էն ապրուստն էլ, որ ինձ տալիս են: Էլ ո՛չ աչքս է քուն գալիս, ո՛չ սիրտս է հանգստանում. գիրքս տեսնելիս հէնց իմանում

եմ՝ հոգեառս է։ Դպրոցի անունը լսելիս միսս մարմնումս հալչում է։ Ի՞նչ անեմ. մէկ հիւանդութիւն էլ է չի պատահում, սատանի աչքը կուրանայ, որ մէկ քանի օր պառկեմ ու իմ գրքի երեսը չըտեսնեմ...

Այբ, բեն—գլխիդ դմփեմ. գիմ, դա—փէտը պատրաստ ա. եչ, զա—լաց ու հազա՛. է, եթ—խաղս մնաց ետ. թօ, ժէ—մէկ բան էլ չաժէ. ինի, լիւն—իծանս եկան տուն. խէ, ծա—կարդացողն էծ ա. կեն, հօ—գերի չեմ հօ՞. ձա, ղատ—մտնի աչքդ մէկ մախաթ. ճէ, մէն—ամէն, կուրանայ՝ ով ձեռք չի վերցնիլ մեզմէն. յի, նու, շա, ո, չա, պէ, ջէ, ռա—սոված մեռայ. սէ, վև, տիւն, րէ—սովրիլը ծանր է. ցո, ւիւն, փիւր, քէ—իշի քուրք է. օ, ֆէ—օվէհ, գլուխս տրաքեց։ Էնքան ասել եմ էս... էս... էս կորած, մոլորած անունները, որ ատամներս թուլացել են, գլուխս էլ ուղեղ չի մնացել։

Էս պրծար, հիմիկ ասում են՝ ա՛յ տղայ, ասա՛ այբ, ժէ, ճէ, ռա. ախպէր, զոռ ա, մեռայ։ Ձեր գլխովը դիպչի ձեր այբենն էլ, ձեր այբ, ժէ, ճէ, ռան էլ, մեր հոգին հօ՛ չէք հանիլ։ Ի՞նչ էք ուել՝ որ մեզանից էլ ետ չէք կարում ուզել։ Չեմ կարդում, չեմ կարդում, հօ զոռի բան չի։ «Կարդա՛, կարդա՛», ի՞նչ է, տօ՛, ձեր տունը չքանդւի, ախր էս յիմար կարդալումը ի՞նչ կայ, որ էսպէս մեր հոգին հանում են։ Շատ մարդ, որ մէկ այբի կտոր էլ է փորումը չունի, պակա՞ս պատիւ ունի, պակա՞ս փառքի տէր է։

Էտ անտէրն էլ շոր չի՝ որ մէկ օր կարես, տուն չի՝ որ շուտով շինես, հաց չի՝ որ աչքդ խփես ու դեվէր տաս։ Չի՛ էլ կարելի, որ ինչքան գրեր կան մէկ անգամ ծամես, կուլ տաս, կամ ջուր անես, խմես, կամ թէ չէ քերես, ջնջես, որ կուրանան և էլ աչքիդ չերևան։ Հա՛ կաց ու ոտիդ գլխիդ արա. երկինք էլ թռչես, էլի քեզ վէր են բերում, գիրքդ կռնատակդ տալիս ու ճամփի գցում։

Մէկ գիրքս կորցնում եմ, միւսն են ձեռս տալիս։ Մէկ գրիչս կորցնում եմ, ծեծում, թակում, սպանում են, թէ գնա՛, միւսը բեր։ Փոքր յետի եմ գալիս՝ վա՛յ իմ օրին, դասս չըգիտեմ՝ փէտը պատրաստ է։ Ձեռս չեմ դէմ անում՝ քամակիս են խփում, քամակս եմ քաշում՝ ոտիս է դիպչում։ Ի՞նչ անեմ, ո՞ր ջուրը ընկնեմ, ո՞ւր կորչեմ. որ էս դժոխքիցը ազատւեմ։ Սատանի բաժին լինի, աչքը դուրս գայ՝ ով որ էս կարդալը սահմանել է։

Խաչատուր Աբովեան

1. Ինչո՞ւ Ցովհաննէսը («Ուսումի») այնպէս սիրում էր ուսումը, իսկ սա այսպէս չի սիրում։

Ալւան-ալւան *(թուրք.)—պայծառ գոյներ ունեցող, գոյնզգոյն։*
մախաթ *(թուրք.)—հաստ, մեծ ասեղ։*
հաք *(թուրք.)—դեղահատ։*
յեթի *—ուշ (գալ)։*

---

1. *Բացատրի՛ր հետևեալ ասոյթները.* մէկի սիրտը հանել. փողոցներն է չափում. ինձ մեղ են դնում. զոռ են անում. հարամ լինի էն հացը. աչքս քուն չի գալիս. սատանի աչքը կուրանայ. իծանս տուն եկան. մէկ այբի կտոր էլ փորումը չունի. ոտին գլխին է անում. կուժն ու կուլեն ինձ վրա է կոտրում։

2. *Տո՛ւր* դմփել, սահմանել, ստեղծել *բառերի հոմանիշները։*

3. Սարի գլուխ, քաղաքագլուխ, սոխի գլուխ... *ուրիշ ի՞նչի* գլուխ. *ի՞նչ իմաստներ ունի* գլուխը *այդ դէպքերում։*

4. *Գործածի՛ր նախադասութիւնների մէջ և բացատրի՛ր.*

Գլուխը կորցնել, մի բանի համար գլուխը տալ, մէկի գլուխը լուանալ, գլուխը մտաւ, գլուխը նստեց.

Գլխի ճարը տեսնել, գլխի ընկնել, գլխին տալ, գլխին փչել, գլխին ոտին տալ, գլխին սառը ջուր ածել, գլխին պոպոք կոտրել, գլխին կրակ թափել. գլխին խաղ խաղալ, գլխին կանգնել, մէկի գլխին նստել, գլխին փաթաթել։

Գլխից ցանել, գլխից անել, գլխից հանել, գլխից դուրս տալ. գլխից ձեռք վեր առնել։

Գլխով անել, իրար գլխով տալ, գլխովը պտոյտ գալ *(ման գալ)*։

Քո գլուխը չունեմ, քեզ հետ գլուխ չունեմ, գլուխս իմս չէ։

Մի գլուխ կանչում է, էն գլխից յայտնի է, գլուխդ ապրի, գլուխը քարը. գլուխը հողը, գլխիս վրա, գլուխը հաստ, գլուխ ապրանք։

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ

Խաչատուր Աբովեանը ծնւել է Քանաքեռ գիւղում Երևանի մօտ 1804—1805 թւին ունևոր գիւղական ընտանիքում, երբ Երևան նահանգը դեռ գտնւում էր պարսից իշխանութեան տակ։ Սկզբում նա սովորում էր իրենց գիւղում, ապա Էջմիածնում, յետոյ ուղևորւեց Թիֆլիս, որտեղ աւարտեց Ներսիսեան դպրոցը։ Վերադառնալով Քանաքեռ, որը արդէն անցել էր 1827 թւից ռուսների ձեռքը, նա գնաց Էջմիածնի վանքը, ուր ընդունւեց իբրև կիսասարկաւագ, նշանակւեց որպէս թարգման և առաջնորդ պրոֆ. Պառոտին և նրա հետ բարձրացաւ առաջին անգամ Մասիսի գագաթը. յետոյ այդ գերմանացի գիտնականի միջնորդութեամբ ընդունւեց Դորպատի համալսարանը։ Բարձրագոյն ուսումը աւարտելուց յետոյ պարապում էր ուսուցչութեամբ նախ Թիֆլիսի և ապա Երևանի պետական դպրոցներում։ Ունէր և իր մասնաւոր դպրոցը։

Նա գրեց «Վէրք Հայաստանի» ընդարձակ վէպը, որտեղ նկարագրում է Քանաքեռցոց վիճակը պարսից լծի տակ և Երևանեան նահանգի անցնելը ռուսների ձեռքը. այդ վէպը նա գրեց իր հայրենի գիւղի բարբառով, կամենալով

գրաբարի տեղ ստեղծել նոր գրական լեզու՝ ժողովրդին աւելի հասկանալի և կենդանի։ Այս գիրքը լոյս տեսաւ միայն տասը տարի անց նրա անհետանալուց յետոյ. 1848 թւին նա իր տանից դուրս եկաւ և այլ ևս ետ չը դարձաւ։ Նրա անհետանալու հանգամանքները յայտնի չեն։

---

13. Փողոցի տղան

Տեսնում եմ յաճախ, ինչպէս մարդաշատ լայն փողոցներով
թրև է գալիս փողոցի տղան ամբողջ օրերով,
սոված, կիսամերկ, արհամարհելով իր սև վիճակը,
չէ խորշում կեղտից, ոչ գողութիւնից մանուկ հասակը։

Ո՛վ գիտի, գուցէ նրա ծնողներն ընկած են բանտում,
կամ գործարանում քրտինք թափելով հաց են աշխատում.
միակ պարապը ինքն է որ կայ—ապրում է ազատ
փողոցի տղան, որպէս ամբոխի որդին հարազատ։

Բարեր է նետում անցուդարձ անող անասուններին,
նրանց տանջանքով հրճւում է սրտանց մանուկ վայրենին.
ու մի վայրկեանում սոսկաց իմ հոգին, երբ միտս բերի
սրա պէս անխնամ մանկանց վիճակը—անթիւ որբերի։

Աղա Նեզրի Թարգմ. Յով. Յակոբեան

1. Ինչու է նա «փողոցի տղայ» դարձել։

2. Ինչ է սպասում «Փողոցի տղային» ապագայում, լաւ ու վատ դէպքում։

ՆԻՒԹԵՐ. 1. Պատմիր, մի փողոցի տղայի կեանքը փողոցում և տանը։
2. Պատմիր թէ մի փողոցի տղայ հետզհետէ ինչ դարձաւ։

Ամբոխ—մարդկանց բազմութիւն։
Հրճւանք—եռուն ուրախութիւն։
Խորշել—զզւել և երես դարձնել։

1. Տուր **սոված**, **տանջանք** բառերի հոմանիշները և նրանց տարբերութիւնները։
2. **Թրեւ գալ** ասոյթը ուրիշ ինչ կերպով կարելի է արտայայտել։
3. Ինչու է ասւած **սեւ վիճակ**։ Բեր ուրիշ օրինակներ, ուր **սեւ** մակդիրը նոյն իմաստով գործ ածւած լինի։

14. Մանուկների բարեկամը

ա.

1798 թւին էր այդ. ֆրանսիացիք, որ պատերազմում էին աւստրիացիների հետ, կրակի էին մատնել Շւէյցարիայի Ստանց քաղաքը։ Հազարաւոր բնակիչներ մնացել էին յետին թշւառութեան մէջ. քաղաքի աւերակների մէջ անտուն թափառում էին բազմաթիւ մանուկներ։ Շւէյցարական կառավարութիւնը առաջարկեց Հենրիխ Պեստալոցցուն յանձն առնել այդ մանուկների խնամատարութիւնը։ Դա այն մարդն էր, որը տասնեակ տարիներ անդադրում քարոզում էր թէ քաղաքակիրթ ժողովրդի մէջ չը պէտք է լինեն սոված և անտէր մանուկներ, թէ կառավարութիւնը ուսում և կրթութիւն պիտի տայ և՛ աղքատ, և՛ հարուստ երեխաներին. բնութիւնից բոլոր մարդիկ իրար հաւասար են և մէկ ճամփայ ունեն իրենց կոչումին հասնելու համար. բոլորի բնատուր ընդունակութիւնները պիտի հաւասարապէս զարգացնել, մինչև որ այնքան իմաստուն դառնան, որքան մարդս կարող է իմաստուն լինել։ Չը նայած իր աւելի քան յիսուն տարեկան հասակին, Պեստալոցցին ոգևորւած ընդունեց կառավարութեան առաջարկը ու շտապեց Ստանց։

Այնտեղ նրան տւին մի հին, վաղուց մոռացւած կուսանոց, որի ընդարձակ, խոնաւ և ցուրտ սենեակներում նա պիտի տեղաւորէր

իր մանուկներին. Նորոգութեան ոչ ժամանակ կար, ոչ միջոց, մանաւանդ որ կառավարութիւնը շատ չնչին դրամ էր յատկացրել։ Պեստալոցին յափշտակւած ձեռնարկեց իր գործին։ Շուտով այդ կիսաքանդ շինութեան մէջ հաւաքւեցին հարիւրից աւելի մանուկներ, մէկը միւսից աւելի դժբախտ արարածներ, գզգզւած, կեղտոտ, ոջլոտ, խոցոտ, փողոցներում և գիւղերում ողորմութիւն ուզելուց փչացած։ Մեծ մասամբ որբեր էին, իսկ եթէ ունէին էլ ծնողներ, սրանք իրենց որդիներից վատթար ողորմելիներ էին։ Որևէ կարգ ու կանոնի անսովոր այս բազմութեան մէջ կարելի էր գտնել սոսկալի արատներ, ստախօսութիւնից սկսած մինչև գողութիւն։ Հասակաւորներից շատերը ծաղրում էին Պեստալոցուն և ասում.

«Ոչ մի բանի պէտք չէ եկել այս մարդը, հիմա ուղարկել են երեխաներին դայեակ»։

Ծնողներից մի քանիսը բերում էին զաւակներին, ստանում զգեստ և իսկոյն ետ տանում նրանց. ուրիշներն էլ անամօթաբար փող էլ էին պահանջում, պնդելով որ եթէ իրենց մանուկները գիւղէ գիւղ մուրացկանութիւն անեն, բաւականին փող կը վաստակեն։ Եւ այդ բոլոր դժւարութիւնների դէմ պէտք է մաքառէր Պեստալոցին մենմենակ. Նա պիտի լինէր և՛ տեսուչ, և՛ ուսուցիչ, և՛ խոհարար, և՛ ծառայ։

բ.

Բայց նա չէր վհատւում. նա մի հզօր միջոց ունէր բոլոր արգելքներին յաղթելու համար։ Ահա թէ ինչ էր գրում նա մի նամակի մէջ.

«Ես մենակ էի նրանց հետ, և դա իմ նպատակիս համար օգտաւէտ էր։ Առաւօտից մինչև երեկոյ երեխաները միայն ինձ էին տեսնում իրենց շրջանում։ Ամեն բարիք և՛ նրանց հոգու, և՛ նրանց մարմնի համար՝ բղխում էր ինձանից։ Ես էի սովորեցնում, ես էի խօսում նրանց հետ. նրանց աչքերը իմ աչքերի մէջ էին նայում, նրանց ձեռները իմ ձեռներն էին բռնում, երբ որևէ օգնութեան պէտք էին ունենում։ Իմ արտասուքները խառնւում էին նրանց արտասուքների հետ, երբ լալիս էին. իմ ժպիտը պատասխանում էր նրանց ծիծաղին, երբ ուրախանում էին։ Նրանք ամբողջ աշխարհից կտրւած էին և միայն ինձ հետ էին, ես էլ միայն նրանց հետ էի։ Ինչ որ նրանք էին ուտում, ուտում էի և ես. ինչ որ նրանք էին խմում, խմում էի և ես։ Ես ոչինչ չունէի, ոչ տնտեսութիւն, ոչ ծառայ, ոչ բարեկամ,—միայն նրանց ունէի։ Երբ առողջ էին՝ նրանց մէջն էի. եթէ մէկը հիւանդանում էր՝ նրա անկողնի մօտ էի։ Քնում էի

նոյնպէս նրանց հետ. պառկում էի, երբ վերջինը նրանցից քուն էր մտնում, և վեր էի կենում, երբ դեռ ոչ ոք արթնացած չէր լինում։ Մենք միասին էինք աղօթք անում, և երբ պառկում էին, իմ պատմութիւնները և՛ զւարճացնում, և՛ սովորեցնում էին նրանց. իրենք էին այդ ցանկացել։ Ես միայն մի հնար ունէի նրանց վրա ազդելու—դա նրանց սէրն էր դէպի ինձ, և ուրիշ ոչ մի հնար չէի ուզում գիտենալ։ Ես հաւատում էի, որ այն համոզմունքը, թէ ես սրտանց և անկեղծ սիրում եմ իրենց, կը փոխի, դէպի բարին կը դարձնի նրանց նոյնչափ արագ, որչափ արագ գարնանային արևը փոխում է՝ ցուրտ, անհամբոյր ձմեռւայ կապանքներով կաշկանդւած գետնի երեսը»։

Երեխաները նրա հետ կատարում էին այն բոլոր աշխատանքները, ինչ որ հարկաւոր էր իրենց գոյութիւնը պահպանելու համար. կերակուր էին պատրաստում, շորեր էին կարկատում, փայտ էին ճղում, վառարան վառում, ջուր կրում. տունը մաքրում, սենեակները նորոգում, և այս աշխատանքները անում էին ուրախ ու համերաշխ։ Այդ զբաղմունքների միջոցին Պեստալոցին նրանց զանազան տեղեկութիւններ էր հաղորդում, գրել, կարդալ, հաշւել էր սովորեցնում, և ո՜րքան պարզ, ո՜րքան հասկանալի։ Մեծերը օգնում էին փոքրերին, առաջադէմները թոյլերին։

Մի կէս տարի չանցած ապաստարանի մանուկներին անկարելի էր ճանաչել. մաքրասէր, համեստ, քաղաքավարի, ջանասէր երեխաներ էին, և այն ծնողները, որոնք առաջ գալիս էին տեսչի դէմ նրանց գրգռելու, այժմ մօտենում էին այդ մեծ և անձնազոհ մարդուն՝ նրա ձեռքը պատկառանքով համբուրելու համար։ Երեխաները պաշտում էին իրենց «հայրիկին» և երբ բուռն ու աղմկայոյզ կերպով յայտնում էին իրենց անսահման սէրն ու երախտագիտութիւնը, Պեստալոցին չը կարողանալով արտասուքը զսպել՝ ասում էր.

—Ձեր երախտագիտութիւնը այն կը լինի, եթէ ժամանակով, երբ կը մեծանաք, նւիրւէք թշւառ, անտուն անտէրունչ, անխնամ թողած մանուկներին, ապրէք նրանց մէջ, կրթէք և սովորեցնէք նրանց։

Ստ. Լիսիցեան

1. Համեմատիր Տէր Թոդիկին Պեստալոցու հետ։

ՆԻՒԹ. Մի օր Պեստալոցու ապաստարանում։ Նկարագրիր իբր թէ այցելութեան ես գնացել Ստանցի ապաստարանը։

Ձեռնարկել — *սկսել:*
կոչում — *ինչի համար որ մարդ ստեղծւած, կոչւած է աշխարհ:*
մաքառել — *կռւել:*
կաշկանդել — *կապկպել:*
գոյութիւն — *կեանք:*

---

1. **Արատ** — *հակառակը.* **քաղաքակիրթ** — *հակառակը.* **քաղաքավարի** — ......, **երախտագէտ** — ...., **բնատուր** — .....

2. Ասա՛ հոմանիշներ **ողորմելի, յետին, մուրացկան, աղմկայոյզ** *բառերի:*

3. **Գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք.** *բեր նման օրինակներ: Այլ կերպ ի՞նչպէս կարելի է ասել:*

15. Գեղջուկի մտորմունքը

Նստել եմ շւար
ու միտք եմ անում,
թէ ինչպէս մենակ
ապրեմ աշխարհում:
Ոչ ջահել կնիկ
ունեմ իմ կողքին,
ոչ թև ու թիկունք
մտերիմ ընկեր,
ոչ մի տաք անկիւն,
ոչ արծաթ ոսկի,
ոչ սարքած գութան,
ոչ նժոյգ մի ձի...

Պակաս օրի հետ
միմիայն մի գանձ
քարի նման ուժ
տըւաւ ինձ հէրըս.
բայց, ա՜խ, հէնց էն էլ
օտար դըռներում
կերան, մաշեցին
դարդ ու ցաւերըս...
Նստել եմ շւար
ու միտք եմ անում,
թէ ինչպէս մենակ
ապրեմ աշխարհում...

Կոլցով. — *Թարգմ. Յովհ. Թումանեան*

---

1. Ե՞րբ չէր զգայ գեղջուկը իր մենակութիւնն ու պակաս օրը:

Մտորել — *մտմտալ, մտածել:*
շւար — *շւարած, մոլորւած:*

---

1. Բացատրի՛ր **թև ու թիկունք** *դարձւածքը: Գործածի՛ր նախադասութիւնների մէջ:*

2. **Պակաս օր** *այլ կերպ ի՞նչպէս կասւի: Հակառակը ի՞նչպէս:*

16. Ձեռնածու Աբէլը

ա.

Ո՞վ չի յիշում ձեռնածու Աբէլին, որ քսան-երեսուն տարի առաջ մեծ հռչակ էր վայելում ամբողջ Անդրկովկասում: Հասարակ ժողովուրդը դեռ մինչև այսօր էլ հազար տեսակ առասպելներ է պատմում նրա մասին:

Եւ իսկապէս Աբէլը շատ ընդունակ մարդ էր: Իբրև ձեռնածու՝ վերին աստիճանի ճարպիկ, իբրև զւարճախօս՝ աննման և իբրև ամբոխ ուրախացնող ու ծիծաղեցնող՝ հազւագիւտ: Ոչ մի հարսանիք կամ հիւրասիրութիւն կատարեալ չէր համարւում, եթէ Աբէլը բացակայ էր: Ամենքը նրան սիրում էին, թէև վախենում էին նրանից, մանաւանդ կանայք ու երեխաները:

Ո՞վ կը համարձակւէր նրան վիրաւորել, չէ՞ որ Աբէլը կարող էր իսկոյն «աղօթել» և յանդուգն մարդուն անասուն դարձնել: Շատ շատերը պատմում էին, թէ այս-ինչ մարդուն այս ու այս թւականին Աբէլը էշ է դարձրել: Ո՛չ մի մսավաճառ կամ գինեվաճառ փող չէր ընդունում նրա ձեռքից, մինչև երդւել չըտար, որ փողը սատանայական չէ, կախարդական չէ: Ուր որ կանգ առնէր, լինէր փողոց, հրապարակ թէ եկեղեցու գաւիթ, ամբոխը րոպէապէս շրջապատում էր և անհամբեր սպասում, թէ Աբէլը իրան հիմա ինչ ծիծաղելի բան պիտի ասի:

Նա հայ էր, բայց կովկասեան բոլոր ազգերը հաւասար սիրում էին նրան: Ինքը այդ շատ լաւ գիտէր և իրեն բախտաւոր էր համարում:

Նրա արհեստը ձեռնածութիւնն էր, որին նուիրուած էր հոգով ու սրտով։ Նա ներկարար էլ էր, բայց այդ գործն էլ կապում էր ձեռնածութեան հետ։ Բարձրանում էր եկեղեցիների գմբէթները, կարկատում, ներկում, ուղղում էր ծռած կամ ջնասուած խաչը։ Հազիւ թէ լինի Անդրկովկասում մի բարձր եկեղեցի, որի գմբէթի վրայից Աբէլը փչած չը լինի իր փողը։ Թիֆլիսում մէկ էլ լսում էր ինչ-որ տարօրինակ եղանակ. իսկոյն բոլոր տներից դուրս էին թափւում մեծ ու փոքր և աչքները ուղղում էին այս ու այն եկեղեցու կողմը, որոնցից մէկի գմբէթի ծայրին տեսնում էին Աբէլին գլխի վրա տնկւած և ոտները օդի մէջ պար ածելիս։ Կանայք գունատւում էին, աչքերը ծածկում, իսկ պառաւները երեսները խաչ էին հանում ու աղօթում։ Ամենքը զարմանում էին նրա անվախութեան վրա. շատերը նրա մէջ տեսնում էին գերբնական ուժ, շնորհուած եթէ ոչ Աստուծուց, գոնէ սատանայից։

Բ.

Աշնան հանդարտ օրերից մէկն էր։ Ամբողջ շաբաթը շարունակ անձրևելուց յետոյ, արևը, մառախուղի ծալքերը պատառելով, երևան էր հանել իր պայծառ դէմքը։

Քաղաքի հրապարակի մի ծայրին, ուր գետինը արդէն ցամաքել էր, հաւաքուել էր մեծ բազմութիւն։ Ամեն կողմից շտապով գալիս էին մարդիկ ու ստուարացնում ամբոխը։ Երեխաները վազում էին՝ ո՛րը գլխաբաց, ո՛րը բոբիկ և ճղում էին բազմութիւնը ու մէջ էին խցկւում։ Զուռնան փչում էր մի ուրախ եղանակ և դհոլ ածողը՝ խորամանկ ժպիտը երեսին, իր մի հատիկ աչքովը հանաքներ էր անում ու դհոլին զօռ տալիս։

Բազմութիւնը մի փոքր ետ քաշուեց։ Մէջտեղ բարձրացրին փայտէ մի երկար սանդուխտ ու ծայրը դէմ տուին տան կտուրին։ Սանդուխտի վրա բարձրացաւ մի մարդ և նստեց կտուրի ծայրին։ Դա Աբէլն էր։

Ոտներին կապեց մի քանի սաժէն երկարութեամբ փայտէ ձողեր, վրայից հագաւ սպիտակ գոյնի երկար վարտիք։ Տիրում էր խորհրդաւոր լռութիւն։ Բոլորը աչքերը նրան էին յառել և անհամբեր սպասում էին խաղին։ Աբէլը՝ մեծ զգուշութեամբ շարժուեց

տեղից ու կանգնեց տարօրինակ ոտների վրա։ Նրա դէմքին ժպիտ չը կար։ Ամբոխը յանկարծ մի խլացուցիչ գոռում-գոչում բարձրացրեց, իսկ նա երեսը դարձրեց սուրբ Կարապետ եկեղեցու կողմը ու երեք անգամ երեսը խաչակնքեց։ Յանկարծ շուռ եկաւ, մի հսկայական քայլ արաւ, պտուեց մի ոտի վրա, օրօրուեց և «օգնեցէք» աղաղակելով՝ սկսեց ձեռքերով օդի մէջ կարծես բան որոնել։

Ամբոխը լեղապատառ եղաւ։ Ամենքը հեռու փախան, երեխաները լաց եղան։ Աբէլը ծիծաղում էր նրանց միամտութեան վրա, թևերը լայն բաց արաւ ու սկսեց պարել։ Պարում էր համարձակ, ճարպիկ ու կանոնաւոր։ Երբեմն մի քանի քայլ էր անում հանգստանալու համար և նորից պարում։ Ամեն մի քայլը հինգ-վեց արշին էր, գուցէ և աւելի։ Երբ նկատեց, որ ամբոխի հիացումը մի աստիճան պակսել է, ափերը իրար շփեց, արտասանեց մի քանի անհասկանալի բառեր, և նրա ձեռքերի մէջ երևացին մի քանի հատ զանազան մեծութեան գնդակներ, որ սկսեց խաղացնել օդի մէջ։

Բազմութիւնը ապշած նայում էր և սպասում, թէ հրէս բոլոր գնդակները ձեռքերից վայր կը թափուին. բայց որքան մեծ եղաւ նրանց զարմանքը, երբ տեսան թէ ինչպէս մէկ-մէկ անհետացան, չըքացան գնդակները։ Մարդիկ աղաղակում էին, հրճւում էին, իրար բոթում, հարցնում, թէ արդեօք լա՞ւ տեսան հրաշքը։ Ծերունիները երեսներն էին խաչակնքում, կամ մի կողմ թքում, փնթփնթալով «Փո՛ւ, անիծի՛ քեզ երկնային թագաւորը»։

Աբէլը իրար ետևից բազմաթիւ «հրաշքներ» ցոյց տալուց յետոյ բացականչեց.

—Ո՞վ է ձեր մէջ քաջ տղամարդը, թո՛ղ ձեռքը բարձրացնի և ես իսկոյն նրան էշ դարձնեմ։

Ամբոխի մէջ իրարանցում ընկաւ. որը կուչ եկաւ, որը երեսը հակառակ կողմ դարձրեց և ձեռքերը թագցրեց գրպանը։ Ձեռնածուն, գոհ իր արած տպաւորութիւնից, վրա բերաւ.

— Հարկաւոր չէ, հարկաւոր չէ, վախկոտներ, ինչի՞ց էք վախենում, ես էլ ձեզ նման մարդ եմ... Եթէ մէկն ու մէկդ ուշաթափուի, ուշքի կը բերեմ, եթէ մեռնի՝ կը կենդանացնեմ։

Վերջին խօսքերն արտասանելիս ծիծաղեց, յետոյ նայեց եկեղեցու կողմը և մրմնջաց՝ «Մեղա՜յ Աստծու, մեղա՜յ Աստծու»։

Աբէլը հանեց գլխից իր տարօրինակ մոխրագոյն գլխարկը և մի ճարպիկ շարժումով ձևը փոխեց, յետոյ դարձեալ նոր ձև տուաւ և

այսպէս իրար ետևից համարեա երեսուն տեսակ գլխարկ շինեց։ Միաժամանակ պատմում էր, թէ ինչ երկիրներ է եղել և ինչ մարդկանց է հանդիպել այդ տեսակ գլխարկներով։ Պատմում էր այնքան սրամիտ, այնքան գրաւիչ, որ ամբոխը սրտանց ծիծաղում էր և զմայլւում։

Գ.

Մութ գիշեր էր։ Փչում էր հիւսիսային քամին։ Աբէլը իր փոքրիկ սենեակի մէջ պատրաստւում էր քնելու։ Ճամփորդական թեթև անկողինը ուղղեց՝ քթի տակ երգելով սիրական մի եղանակ։ Վերմակը, որ կարւած էր գոյն-գոյն չթերի եռանկիւնի կտորներից, թափ տւաւ, բարձի տակ դրեց իր սև արխալուղը, որի գրպանի մէջ էր նոյն օրւայ աշխատանքը, և յօրանջելով նստեց իր անկողնու վրա։ Դրսից յանկարծ մի փսփսոց հասաւ ականջին։

—Ո՞վ էք,—բարկացած ձայնով կանչեց նա։

Պատասխան չեղաւ։

—Ո՞վ էք, հարցնում եմ,—կրկնեց ձեռնածուն։

—Մենք ենք,—լսւեց մի անհամարձակ պատասխան։

—Դուք ո՞վ էք։

—Կարօն ու Կոստօն։

—Ի՞նչ Կարօ և Կոստօ։

—Վարդանի տղերքը։

—Ի՞նչ Վարդան, ի՞նչ էք ասում։

—Խարազ Վարդանի, որ մի ժամանակ մեռաւ... մեռաւ և թաղեցին։

Աբէլը զայրացած էր, որ իրեն չը թողին հանգիստ անկողին մտնելու։ Սակայն ձայներից նկատելով, որ երեխաների հետ գործ ունի, հետաքրքրւեց և դուռը բաց արաւ։

—Հա՛, ի՞նչ էք ուզում։

Երեխաները կպան իրար ու լուռ մնացին։

—Կարելի է քաղցած էք, հաց էք ուզում։

—Արի՛ գնանք մեր տուն,—աղերսանքով արտասանեց մեծը, որ տասը տարեկան կը լինէր։

—Ի՞նչ կայ ձեր տանը։

—Գնանք մի բոպէ, բի՛ձա ջան,—կրկնեց երեխան։

Խօսող երեխան սկսեց հեկեկալ. փոքրիկը հետևեց նրան, բայց

աւելի բարձրաձայն։ Աբէլը մի վայրկեան մնաց դռան մէջտեղը արձանացած։ Չը գիտէր ինչ անէր։

Իսկոյն հագաւ իր դեղնագոյն չուխան և իր անբաժան ծանր ձեռնափայտն առնելով՝ շտապով դուրս եկաւ սենեակից ու հետևեց մանուկներին։

—Ինչո՞ւ էք լալիս, Կարօ, Կոստօ... Լաց մի՛ լինէք, լաց մի՛ լինէք,—խօսեց Աբէլը մեղմ ձայնով։

Երեխաները վայրկենապէս լռեցին ու քայլերն արագացրին։

—Ի՞նչ արհեստի է ձեր հայրը,—հարցրեց ձեռնածուն։

—Մենք հայր չունենք,—պատասխանեց մեծը։

—Ունէինք, բայց մեռաւ, մեռաւ ու թաղեցին,—աւելացրեց փոքրը։

—Հա՛, հա՛, արդէն ասացիք, մոռացայ։

Հասան տուն։ Երեխաները վազեցին առաջ, շտապով դուռը բաց արին։ Աբէլը ներս մտաւ։ Դա մի գետնափոր տնակ էր, մի սենեակից բաղկացած, խիստ ցածլիկ առաստաղով և սևացած պատերով։ Աջակողմեան պատի տակ դրւած էր մի կարճ տախտ, որի վրա պառկած էր մի մարդ, ցնցոտիների մէջ փաթաթւած։ Աբէլը զգաց մի ծանր հոտ։ Կեղտոտ ու միանգամայն գզգզւած անկողինը նրա մէջ առաջացրեց խղճահարութիւն ու զզւանք։ Անկողնի մօտ նստած էին երկու կին, որոնք դուռը բացւելիս գլուխները բարձրացրին ու նորից քաշ գցեցին։

Մեծ երեխան վազեց անկողնու մօտ, վերմակը բարձրացրեց և դարձաւ Աբէլին.

—Բի՛ձա ջան, արի՛ կենդանացրու։

—Կենդանացրո՛ւ մայրիկիս, բի՛ձա ջան,—կրկնեց փոքրը միւս կողմից։

Նրանց անմեղ աչքերի մէջ երևում էր յոյս և աղաչանք։

Աբէլի մարմնով սարսուռ անցաւ։ Պապանձւել էր. շփոթւել էր։

—Կենդանացրո՛ւ, բի՛ձա ջան, քեզ մատաղ,—աղաչում էր մեծը։

Փոքրը՝ ձեռքին մի մաղ ընկոյզ՝ մօտեցաւ Աբէլին.

—Ահա այս բոլորը քեզ, կենդանացրո՛ւ մայրիկիս։

Աբէլը շրթունքները հուպ էր տւել պինդ ու քարացել։

Փոքրիկը հանեց իր գրպանից երեք վէգ, մէկը կարմիր ներկւած, միւսը արճիճով, և վէգերը դնելով ընկոյզների վրա՝ կրկնեց.

—Կենդանացրո՛ւ։

Ջեռնածուն յանկարծ սկսաւ բարձրաձայն հեկեկալ, և առանց մի խօսք ասելու դուրս նետուեց խրճիթից։ Այդպիսի կսկիծ ամբողջ յիսունըհինգ տարուայ ընթացքում առաջին անգամն էր զգում։ Կանգ առաւ փողոցի մէջտեղը և աշխատեց ուշքը հաւաքել։ Յանկարծ զգաց, որ փէշերից ու ոտքերից քաշքշում են։ Զարհուրելով նկատեց, որ երեխաներն են, որոնք այլևս չէին աղերսում. յուսահատ լացը խեղդում էր նրանց։ Ջեռնածուն նստեց գետնին, գրկեց մանուկներին ու համբուրելով ճակատներից՝ ուզեց մխիթարել ու սիրտ տալ։ Հաւատացնում էր, որ ինքը անկարող է մեռածին կենդանացնել. Աստուած միայն կարող է, եթէ կամենայ։

—Ոչ, ոչ, դու կարող ես, դու այսօր ասացիր, որ կարող ես,— պնդում էին երեխաները։

—Կենդանացրու, կենդանացրու,—նորից աղերսեց փոքրիկը,— թէ չէ նրան էլ հողի տակ կըթաղեն ու մենք էլ մայրիկ չենք ունենայ։

Աբէլը համարեա անգիտակցաբար հանեց իր գրպանից ունեցած բոլոր փողերը և ածելով երեխաների գրպանները՝ դուրս պրծաւ մանուկների ձեռքից ու վազեց, որքան ուժը ներում էր։ Ականջին դեռ հասնում էր յուսակտուր լացի ձայնը, բայց ականջները խցեց ու շարունակեց վազ տալ։

Նա չը մտաւ իր բնակարանը, մինչև անգամ չը նայեց այն կողմը։ Արագ-արագ դուրս եկաւ այդ փոքրիկ քաղաքից դէպի ընդարձակ դաշտը, որտեղով անցնում էր Թիֆլիս տանող ճանապարհը։

Գէորգ Բաշինջաղեան

1. Աբէլը ինչով էր ձեռք բերել հրաշագործի հռչակը։
2. Ժողովուրդը ընդհանրապէս ի՞նչ բաներ հրաշք է համարում եւ ինչո՞ւ։
3. Ի՞նչպէս է ինքը Աբէլը՝ վերաբերւում ժողովրդին։

Նիւթ. Աբէլը (բնաւորութեան գլխաւոր գծերը)։

Ջեռնածու—ճարպիկ խաղեր անող մարդ, աչքակապ։
հռչակ—մեծ անուն, համբաւ։
առասպել—ժողովրդի ստեղծած պատմութիւնը դիւցազունների մասին։

գերբնական—բնականից վեր եղող։
ստւար—հաստ, խոշոր։ **Ստւարանալ**—խոշորանալ, մեծանալ, շատանալ։
խորհուրդ—միտք, իմաստ, մտածում, նաև դեռ լաւ չըմբռնուած իմաստ։
միամիտ—պարզամիտ, դիւրահաւատ։
հրէս—ահա, էս է, որտեղ որ է։
բօթել—բրդել, հրել, մշտել։
խարազ—չուստ կարող։
միանգամայն—միևնոյն ժամանակ, բոլորովին (օրինակ՝ միանգամայն տգէտ)։
սարսուռ—դող։
գիտակցել—խոր հասկանալ։

---

1. Ինչ տարբերութիւն կայ ճարպիկ արհեստաւորի և վարժ արհեստաւորի մէջ։
2. Տուր հոմանիշները մառախուղ, յանդուգն, աղերսել, հեկեկալ բառերի։
3. Դասաւորիր ըստ իմաստի ուժեղութեան.—
   զմայլել, հիանալ, հաւանել, յափշտակուել, սքանչանալ, տարուել.
   զայրանալ, բարկանալ, նեղանալ, չարանալ.
   պաղատել, խնդրել, աղերսել, աղաչել.
   քուն, նինջ, նիրհ, մրափ,
   զարհուրանք, վախ, ահ, երկիւղ, սարսափ, սոսկում.
   ծիծաղ, ժպիտ, քմծիծաղ, քրքիջ, հռհռոց։
4. Ի՞նչով է տարբերւում պապանձուել-ը լռել-ուց։
5. Ի՞նչ իմաստներ ունի եղանակ բառը. տուր օրինակներ։
6. Ի՞նչ ասել է «խորհրդաւոր լռութիւն»։

17. Զով գիշեր

Ո՜հ, ինչ զով է այս գիշեր,
ինչ զեփիւռ է մեղմ փըչում.
սօսափում են բարդիները
և օրօր են ինձ ասում։

Ես ուրախ եմ, հոգիս բարձր,
և սուլում եմ ու երգում,
կեանքը՝ թեթև, կեանքը՝ քաղցր.
ես ապրել եմ կամենում։

Ղևոն Մանուէլեան

---

1. Զով (հով), սառը (պաղ), ցուրտ, սառնամանիք, գոլ,... շարունակիր մինչև եռման։
2. Զեփիւռ, հովիկ—... շարունակիր մինչև փոթորիկ։
3. Ուրախ-զուարթ, տխուր-տրտում, ոլոր-մոլոր, բուք ու բորան. այս հոմանիշ բառերի զոյգ գործածութիւնը իմաստին ինչ է աւելացնում։

19. Կծանը

ա.

Նա ոչ ոքի չէր պատկանում. նա իր յատուկ անունը չունէր, և ոչ ոք չէր կարող ասել թէ որտեղ էր մնում ամբողջ ցուրտ ձմեռւայ միջոցին և ինչով էր կերակրւում։ Տաք խրճիթների մօտից նրան հալածում էին տանու շները, որոնք քաղցած էին նոյնպէս, բայց հպարտ ու ինքնավստահ, քանի որ տուն ու տեղի տէր էին։ Երբ սովից ճնշւած կամ բնազդաբար ընկերութիւն որոնելով, նա երևում էր փողոցում, տղաները յարձակւում էին փայտերով ու քարերով, հասակաւորները ուրախ հարայ էին տալիս և սուր ձայնով շւացնում ետևից։ Սարսափից գլուխը կորցրած, մի կողմից միւսն ընկնելով, ցանկերին ու մարդկանց դիպչելով, նա վազում էր դէպի գիւղի ծայրը և թաք էր կենում այնտեղ մի մեծ այգու խորքում, իրեն միայն ծանօթ տեղում։ Այնտեղ նա լիզում էր վէրքերն ու ցաւ տւած տեղերը։

Միայն մէկ անգամ նրան խղճացին ու գգւեցին։ Մի հարբած գիւղացի էր դա, որ վերադառնում էր գինետնից։ Նա այդ միջոցին ամենքին սիրում էր, ամենքին խղճում, ինչ որ փնթփընթում քթի տակ, թէ մարդիկ բարի են և թէ ինքը դեռ մեծ յոյսեր ունի բարի մարդկանցից։ Նա խղճաց և կեղտոտ ու տգեղ շանը, որի վրա ընկել էր պատահաբար իր հարբած հայեացքը։

—Ա՛ շուն,—կանչեց նա,—ա շուն, մօտեցի՛ր, մի՛ վախիլ։

Շունը ուզեց մօտենայ, պոչը շարժում էր, բայց չէր վստահանում։ Գիւղացին խփեց իր ծնկանը և համոզիչ ձայնով կրկնեց.

—Դէհ, մօտեցի՛ր, յիմար. Աստւած վկայ, ձեռք չեմ տայ։

Մինչդեռ շունը վարանում էր և հետզհետէ պոչը աւելի և աւելի արագ շարժելով՝ առաջ էր գալիս, հարբած մարդու տրամադրութիւնը փոխւեց։ Նա յիշեց այն բոլոր վիրաւորանքները, որ կրել էր «բարի մարդկանցից», զգաց սրտմտութիւն ու մի անզօր չարութիւն և երբ շունը իր առջև մէջքի վրա փռւեց, հարբածը մի ուժգին հարւած տւաւ անասունին իր ծանր կօշիկովը։

—Ո՜ւհ, սատկա՛ծ. խցկւում էլ է...

Շունը կռնձկռնձաց, աւելի շուտ անսպասելի վիրաւորանքից, քան թէ ցաւից, իսկ գիւղացին օրօրւելով քաշ եկաւ դէպի տուն։

Այդ օրից շունը այլևս չէր հաւատում մարդկանց. երբ կանչում էին՝ պոչը սեղմում փախչում էր, իսկ երբեմն էլ կատաղած յարձակւում էր նրանց վրա և փորձում էր կծել, մինչև որ քարերով, փայտերով աջողէին ետ քշել։

բ.

Մի ձմեռ անցկացրեց մի դատարկ ամարանոցի պատշգամբի տակ. այդտեղ պահապան չը կար, և նա բարեխիղճ կերպով տունը պահում էր. գիշերները հեռու դուրս էր վազում փողոցը և հաչում էր մինչև խսպառելը։ Նոյնիսկ իր պառկած տեղից դեռ երկար ժամանակ կատաղօրէն մռմռում էր, բայց չարութեան միջից լսւում էր ինքնագոհութիւն և նոյնիսկ մի տեսակ հպարտութիւն։

Գարունը եկաւ, և մի օր խաղաղ ամարանոցը լցւեց խառն աղաղակներով, անիւների ճռռոցով և բեռները կրող մարդկանց ոտնաձայնով։ Քաղաքից եկան կեցողներ՝ հասակաւորների, պատանիների և մանուկների մի ամբողջ ուրախ երամ, որոնք կարծես հարբել էին մաքուր օդից. մէկը կանչում էր, միւսը երգում, ծիծաղում զիլ կանացի ձայնով։

Առաջին արարածը, որի հետ ծանօթացաւ շունը, մի գեղեցիկ աղջիկ էր դպրոցական զգեստով։ Նա դուրս էր վազել պարտէզը և ագահութեամբ ու անհամբերութեամբ, կարծես փափագելով իր գրկի մէջ ամփոփել և սեղմել ամբողջ տեսանելի աշխարհը, նայում էր կապուտակ երկնքին, կեռասենիների կարմրաւուն ճիւղերին և յանկարծ պառկեց խոտերի մէջ, երեսը դէպի կիզող արևը դարձրած։ Յետոյ նոյնպէս արագ վեր թռաւ և գարնանային թարմ օդը ներս ծըծելով՝ բացականչեց.

—Այ թէ ուրա՜խ եմ։

Ասաւ և արագ պտտւեց։ Եւ հէնց այդ վայրկեանին էր, որ անձայն մօտեցաւ շունը, կատաղութեամբ բռնեց օդի մէջ ծածանւող շորի փէշը, քաշեց և անձա՛յն էլ փախաւ թաք կացաւ խիտ թփերի ետևը։

—Ահ, չար շունը,—փախչելով աղաղակեց աղջիկը, և դեռ երկար ժամանակ լսւում էր նրա յուզւած ձայնը։—Մայրի՛կ, երեխանե՛ր, մի՛ք գնալ պարտէզ. այնտեղ մի շուն կայ։ Մի ահագի՛ն, մի չա՛ր շուն։

Գիշերը շունը գողէգող մօտեցաւ քնած ամարանոցին և անաղմուկ պառկեց պատշգամբի տակ իր սովորական տեղը։ Մարդու հոտ

էր գալիս, և բաց պատուհաններից լսւում էին խաղաղ շնչառութեան մեղմիկ ձայները։ Մարդիկ քնած էին, անօգնական և անուժ, և շունը եռանդով պահպանում էր նրանց։

Ամարանոց եկածները շատ բարի մարդիկ էին, իսկ այժմ քաղաքից հեռու մաքուր օդ էին շնչում, շուրջը տեսնում էին ամեն ինչ կանաչ, կապոյտ և մեղմ, և այս բոլորը աւելի բարի էր դարձնում նրանց։ Արևը տաքութիւն էր բերում նրանց սրտերին և ծնեցնում էր նրանց մէջ ծիծաղ և սէր դէպի ամեն մի կենդանի էակ։ Սկզբում նրանք ուզում էին դուրս անեն իրենց վախեցնող շանը և նոյն իսկ սպանեն, եթէ չը հեռանայ, բայց յետոյ ընտելացան նրա գիշերային հաչոցին, թողին և երբեմն նոյն իսկ առաւօտները մտաբերում էին թէ՝

—Ո՞ւր է մեր Կծանը։

Եւ այդ՝ Կծան նոր անունը այնպէս էլ կպաւ նրան։ Շուտով ամենքն ընտելացան Կծանին, համարում էին «իրենց» շունը և ծիծաղում էին նրա վայրենութեան և անհիմն երկչոտութեան վրա։

գ.

Ամեն օր Կծանը մի քայլ փոքրացնում էր այն տարածութիւնը, որ իրեն բաժանում էր մարդկանցից. սկսեց ճանաչել նրանց դէմքերն ու սովորութիւնները. ճաշից մի կէս ժամ առաջ արդէն կանգնած էր լինում թփերի ետև և աչքերը քաղցր ճպճպացնում։

Հէնց նոյն աղջիկն էր, որ մոռանալով շան հասցրած վիրաւորանքը, ամեն կերպ աշխատում էր նրան իրենց մօտեցնելու։

—Կծան, արի ինձ մօտ,—կանչում էր նա։—Դէհ, լաւ, դէհ, սիրուն, արի։ Շաքար ուզո՞ւմ ես.. Շաքար տամ, ուզո՞ւմ ես։ Դէհ, արի էլի…

Եւ զգուշութեամբ, իր ծնկանը խփելով և քնքշաբար, որքան որ կարող էր՝ Լիլիկը հետզհետէ մօտենում էր շանը և ինքը վախենում, չը լինի թէ յանկարծ կծի։

—Ես քեզ սիրում եմ, Կծան, ես քեզ շա՜տ եմ սիրում։ Այնպէս սիրուն քիթ ունես, այնպէս խելօք աչքեր։ Չե՞ս հաւատում ինձ, Կծան։

Եւ Կծանը իր կեանքում երկրորդ անգամ փռւեց մէջքի վրա և աչքերը փակեց, երևի չը գիտենալով կը խփեն իրեն թէ՞ կը գգուեն։ Գգուեցին։ Փոքրիկ, տաք ձեռքը անհամարձակ դիպաւ նրա մազոտ գլխին և ապա ազատ ու համարձակ սահեց նրա բրդոտ մարմնի վրայով, փաղաքշելով և խտուտ անելով։

—Մայրի՛կ, երեխանե՛ր, տեսէ՛ք, տեսէ՛ք, ես շոյում եմ Կծանին,—կանչեց Լիլիկը։

Եւ մօտ վազեցին երեխաները, բոլորն էլ ժիր, աշխոյժ, աղմկող և ձայնեղ։ Կծանի սիրտը ահից ու անօգնական սպասումից մեռածի պէս էր. նա գիտէր որ եթէ այժմ մէկը իրեն զարնի, ինքը արդէն չի կարողանայ վիրաւորողից իր վրէժը հանել. նա զրկւել էր իր անհաշտ չարութիւնից։

Եւ երբ բոլորն էլ իրար ետևից սկսեցին փաղաքշել նրան, նա դեռ երկար ցնցւում էր գգւող ձեռքի ամեն մի հպումից. և ցաւ էր զգում անսովոր զգւանքից, կարծես մի մի հարւածից։

դ.

Շրջիկ, քաղցած կեանքից ձեռք բերած իր սովորական չափաւորութեամբ նա շատ քիչ էր ուտում, բայց քիչն էլ կերպարանափոխեց նրան այնպէս, որ դժւար էր ճանաչել։ Երկար բուրդը, որ առաջ կախ էր ընկած չէկ-չէկ ծւէններով և կրծքի տակ շարունակ ծածկւած էր լինում կոշտացած ցեխով, մաքրւեց և ատլասի պէս սկսեց փայլել։ Եւ երբ նա պարապութիւնից դուրս էր վազում, կանգնում շեմքին և ծանր հայեացքով լուրջ դիտում էր փողոցի այս և այն ծայրը, էլ ոչ ոքի մտքով չէր անցնում զրգռել նրան կամ քարնետել։

Բայց այդպէս հպարտ և անկախ լինում էր միայն այն ժամանակ, երբ մենակ էր մնում։ Երկիւղը դեռ բոլորովին չէր վերացել նրա սրտից, և ամեն անգամ, երբ նրան մարդ էր մօտենում, գլուխը կորցնում էր և ծեծի էր սպասում. Ամեն մի գգւանք թւում էր նրան մի անսպասելի բան, մի հրաշք, որ նա հասկանալ չէր կարողանում և որին պատասխանել չէր կարողանում։

Նա քծնել չը գիտէր։ Միա՛կ բանը, որ կարող էր անել Կծանը, մէջքի վրա ձգւելն էր, աչքերը փակելը ու կամացուկ ծմրալը։

Հետզհետէ Կծանը ընտելանում էր այն բանին, որ պէտք չունի ուտելու մասին մտածելու, որովհետև որոշ ժամին խոհարարը կը տայ ճաշի մնացորդներ, ոսկորներ և միս. նա անդորր և վստահ պառկում էր իր տեղում պատշգամբի տակ և արդէն պահանջ էր զգում որ իրեն փաղաքշեն և սիրեն։

ե.

Աշունը եկաւ. լաց էր լինում երկինքը, ամարանոցները սկսում էին արագ դատարկւել և լռել, կարծես անընդհատ անձրևն ու քամին հանգցնում էին նրանց մոմերի պէս, մէկը միւսի ետևից։

Նորից եկան անծանոթ մարդիկ, նորից ճռռացին սայլերը, միայն խոսակցությունը ավելի քիչ էր լսում, իսկ ծիծաղը բոլորովին կորել էր։ Օտար մարդկանց տեսքից վախեցած, անորոշ կերպով նախազգալով մի դժբախտություն, Կծանը փախավ պարտեզի ծայրը և վերադարձավ, երբ մի երկու ժամ յետոյ աղմուկը դադարեց։ Ամեն կողմ լուռ էր և ոչ ոք չը կար։

Կծանը երկար վազում էր, հոտոտում էր հեռացած մարդկանց հետքերը. նա իր կեանքում առաջին անգամ բարձրացավ պատշգամբը և՝ կանգնելով ետևի թաթերի վրա, ձգվեց ու նայեց ներս դռան ապակիներից և նոյն իսկ եղունգներով չանգռեց։ Բայց ներսը դատարկ էր, և ոչ ոք չը պատասխանեց Կծանին։

Սկսեց մանր անձրև մաղել, և աշնանային գիշերվայ խավարը ամեն կողմից գալիս թանձրանում էր։

Եւ երբ արդէն այլ ևս կասկած չը կար, որ գիշերը հասել էր, որ ինքը լքված էր և բոլորովին միայնակ, շունը նստեց և աղեկտուր բարձր ձայնով ոռնաց։ Այդ յուսահատ տխուր ոռնոցը ճեղքեց խավարի թանձրությունը, փռվեց մութ ու մերկ դաշտերի վրա։

Այդ մութի, մենութեան ու թացութեան մէջ նրա ճնշված հոգին տենչում էր ջերմութեան, պայծառ կրակի, սիրող սրտի։

Եւ ոռնում էր շունը յուսահատ ու միալար...

Լէոնիդ Անդրէև

1. Շունը ինչո՞ւ էր այդպէս չար. ի՞նչը նրան փոխեց։

ՆԻՒԹԵՐ. 1. Պատմիր Լիլիկի բերանով թէ ինչպէս նա առաջին անգամ պատահեց Կծանին, ինչպէս նրա հետ մտերմացավ և ինչ էր զգում, երբ հեռանում էր ամարանոցից։

2. Պատմիր որևէ իրական դէպք քեզ ծանօթ մի շան կեանքից։

Բնազդ—*կենդանիների ի ծնէ ունեցած զգացումը։ Որո՞նք են արմատները։*
վարանել—*երկմտել, տատանվել, ինչ անելը չը գիտենալ։*
ճպճպացնել—*արագ և յաճախ թարթել աչքերը։*
ատլաս—*մետաքսէ փայլուն ու ողորկ կտոր։*
տենչալ—*սաստիկ ցանկալ, սաստիկ փափագել։*
ծմռալ—*մեղմ ու կամաց վնգստալ։*
անդորր—*հանգիստ, հանդարտ, խաղաղ։*
էակ—*կենդանի արարած։ Արմատը։*
հպել—*կպչել, դիպչել (ձեռքով, ոտով)։*
միալար—*միակերպ, միօրինակ։*
կիզել—*այրել։ Արմատը։*

1. *Հակիմաստ բառեր՝* գիտակցաբար—բնազդորեն, խորամանկ—...., ձախորդ—...., տենչալ—...., դիտմամբ—...., վայրենի—....

2. *Տուր հոմանիշները՝* ոռնել, զգվել, ժիր, վստահել, անընդհատ *բառերի։*

3. *Որոշիր նրբությունները՝*
փակել, ծածկել, ցոցել, կողպել, խփել, վրա դնել,
անձրևը մաղում է, թափում է, տեղում է, գալիս է։ Անձրևում է։

4. Շունը հաչում է, կլանչում է.—*ուրի՞շ։*

5. Թռչունների երամը, ձիերի (*ի՞նչը*), շների...., տավարի...., այծերի...., մարդկանց....

6. *Ի՞նչ տարբերություն կայ* պահապան-ի *և* պաշտպան-ի *մէջ։*

19. Ուռի

Գիժ քամին դաշտում
սուլում է, խաղում.
Նորատունկ ուռին
արմատից դողում։

Ծռւում է, ծալւում,
չունի նա նեցուկ,
արցունք է թափում,
լալիս է ծածուկ։

Աշնան անձրևը
մաղում է վերից,
քամին տալիս է
զրկում տերևից։

Դաշտը լայն ծով է,
կանաչն աբրեշում.
դողում է ուռին,
տխուր վշվշում։

«Ինչո՞ւ տնկեցին
ինձ ճամփի վրան,
ինչո՞ւ ինձ տվին
գիժ քամու բերան»։

Ոչինչ չի ասում
դաշտը անսահման.
լալիս է ուռին
խեղճ որբի նման։

Աթաբէկ Խնկոյեան

Ինչով է նման այս ուռին Կծանին։

ՆԻՒԹ. Գրիր նոյն ուռու գանգատը ամառվայ կիզիչ արևի տակ։

Նեցուկ—յենարան, յենվելու փայտ։
տրեկոում (Թուրք.)—միտաքս.

1. Բացատրիր հետևեալ ասոյթները՝

Ոտանաւորը բերան անել, լուրը աշխարհի բերանը ընկաւ։
Աստուած չանի, մարդ քո բերանը ընկնի։
Ո՞րծ է որ գնաս, սրան նրան բերան ծռես։
Բերանս բաց անել մի տայ։
Զրպարտիչ մարդու բերանը ո՞վ կարող է բռնել (ծեփել)։
Գնա՛, այգետիրոջ բերանը չափիր, տեսնենք՝ ի՞նչ է ուզում։
Բերանը պատռած մարդ է. ինչ ասես՝ կասի։
Նամակը ո՞ւմ բերնից գրեմ։
Ինձ էլ են հրաւիրել կեսբերան։
Նանը մեկ բերան հենց իր ցաւն էր լալիս։
Բազմութիւնը մեկ բերան կեցցե՛ էր պոռում։
Դանակի բերանը կոտրել է։
Տերեւները ընկել են քամու բերանը։

20. Ընկերը

ա.

Հաց աշխատելու համար ինձ գցեցի Բագու. յոյսս մի ծանօթի վրա էր, որ նա պաշտօն կը գտնի ինձ համար։ Նա հարուստ էր, նաւթային աշխարհում լաւ դիրք ունէր։ Պատահմամբ էի ծանօթացել այդ պարոնի հետ, Դիլիջանում, ուր նա ամարանոց էր եկել։ Մի խմբով Հաղարծինի վանքն էինք գնացել, նա էլ հետներս էր. մի խօսքով՝ մօտիկ ծանօթացել էինք։

Բագւում սկզբի օրերը զբօսնում էի քաղաքին ծանօթանալու համար և միևնոյն ժամանակ աչքս փնտռում էր նրան, և երբ այդպիսով չը գտայ, մի օր էլ գնացի նրա բնակարանը։ Ինձ ասացին, որ պարոնը Թիֆլիս է գնացել, շուտով կը գայ։ Մի քանի օր յետոյ իմացայ, որ արդէն Բագւումն է, բայց իմ կոյր բախտից չէի կարողանում նրան մի տեղ հանդիպել։ Գնում էի բնակարանը՝ ասում էին գրասենեակ է գնացել։ Գնում էի գրասենեակը՝ ասում էին Բալախանի է գնացել կամ բանկը։

Քանի որ գրպանումս դեռ մի քանի կոպէկ կար, ես օրօրւում էի նրան գտնելու յոյսով։ Բայց երբ մի օր էլ փողս հատաւ և հիւրանոցի տէրը դուռը փակեց իմ առջև, ես որոշեցի, այդ օրը ինչ էլ որ լինի՝

գտնեմ ծանօթիս, պաշտօն խնդրեմ, իսկ մինչև պաշտօն գտնելը մի քիչ փող պարտք վերցնեմ։

Գնացի նրա բնակարանը, բնակարանից գրասենեակ, գրասենեակից բանկ։ Եւ այսպէս ամբողջ օրը։ Արդէն երեկոյանում էր, ես դեռ ոչինչ չէի կերել, միայն անընդհատ ծխում էի։ Երբ վերջին անգամ գնացի գրասենեակ, ինձ ասացին, որ տուն է գնացել և այնտեղից էլ պիտի երթայ ժողովարան։ Իսկոյն շտապեցի ժողովարան, կանգնեցի փողոցում, դռան առջև։ Քաղաքի հարուստները, ինժեներները, ինտելիգենտները կառքերով գալիս էին, իրար ետևից, գոհ և ուրախ։

Մէկ էլ յանկարծ տեսայ նրան՝ ծանօթիս, որին տասնևհինգ օր էր երազել էի. ուղղակի աչքերիս չէի հաւատում։

Վաղածանօթի ժպիտով իսկոյն դէմը ելայ և գլխարկս վերցնելով ձեռք մեկնեցի։

—Բարև ձեզ, պարոն այսինչ։

Նա դժկամութեամբ ձեռք տուաւ և ասաւ.

—Ես ձեզ չեմ ճանաչում, ներողութիւն։

—Միթէ չէք յիշում,—զարմացած հարցրի ես.—անցեալ ամառ Դիլիջանում ծանօթացանք. ուսուցիչ այսինչը։ Ձեզ շատ որոնեցի...

Պարոն ծանօթս իբրև թէ սկսեց փորփրել իր յիշողութիւնը և ապա սառնօրէն պատասխանեց.

—Ոչ, չեմ յիշում, չեմ կարողանում մտաբերել։

—Միևնոյն է,—ասացի ես.—գլխաւորն այդ չէ, այլ այն, որ ես տասնևհինգ օր է այստեղ եմ, պաշտօն գտնելու եմ եկել, միակ յոյսս դուք էք, խնդրում եմ ձեզ...

—Ներողութիւն, սիրելիս,—խօսքս կտրեց պարոնը՝ ձեռքը թափահարելով.—Ե՛ս, ես... Ժամանակ չունեմ, գիտէք, ժամանակ չունեմ պաշտօն գտնելու. դուք գտէք, ես կը միջնորդեմ։ Ցտեսութիւն...

Եւ առանց իմ պատասխանը լսելու թռաւ ներս։

բ.

Մնացի քար կտրած. յոյսերս բոլորը խորտակւեցին ձեռքի մի հարւածով։ Ի՞նչ արած, տեղիցս շարժւեցի և մտամոլոր քայլերով անցայ ծովափը։

Արդէն գիշեր էր. վախի պէս մի զգացմունք բռնեց սիրտս։ Ո՞ւր անցընեմ գիշերս, ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ...

Ծովից փչող քամին փողոցների աւազոտ փոշին բռներով լցնում էր քիթս ու բերանս. երբեմն կանգնում էի մի անկիւնում, մի դռան

առաջ և նորից քայլում, որովհետև համբերանքս չէր տանում կանգնած մնալ։

Բաղցած, ամբողջ օրը ոտքի, ընկած մի մեծ քաղաք, որ ասես թէ թշնամու բանակ լինէր։ Ոչ մի լուսամուտից բարեկամական մի լոյս չէր շողում ինձ համար։ Ես չը կայի, ես ոչինչ էի այդ շէն ու հասարակ տների մէջ ապրողների համար։ Չէ, ես յուսահատուած չէի. գիտէի, որ չեմ մեռնի, այսպէս կամ այնպէս լոյսը կը բացուի, և վաղը ուղղակի մշակ, բեռնակիր կը դառնամ և հաց կը գտնեմ. բայց բանն այն էր, որ հիմա ես շատ անօթի էի և շատ յոգնած—հազիւ էի կարողանում քայլել. եթէ մի տաք անկիւն գտնէի՝ մեռածի պէս խոկոյն կը քնէի՝ մոռանալով քաղց և ամեն բան։

Վերջապէս մի քիչ թափառելուց յետոյ՝ գտայ մի բաց դարպաս։ Ներս մտայ պատսպարուելու. լաւ տեղ էր, քամի էլ չը կար։ Փողոցի լապտերի դժգոյն լոյսն աղօտ լուսաւորում էր այդ վայրը։ Դիտեցի չորս կողմս և տեսայ, որ մի անկիւնում խոտերի վրա պառկած էր մի մեծ շուն։ Զը վախեցայ, որովհետև նա հանգիստ նայում էր ինձ, և երևում էր, որ վրաս յարձակուելու ոչ մի միտք չունէր։ Զգոյշ քայլերով մօտեցայ նրան և մի քիչ հեռու նստեցի խոտերի վրա. նայեց ինձ և աչքերը խփեց. ես շոյեցի նրա գլուխը և բոլորովին հանգստացայ, որ ապահով տեղ եմ։ Լաւ տեղաւորուեցի, ոտներս մեկնեցի և սկսեցի ծխել. սակայն անօթի լինելուս պատճառով ծուխը սիրտս խառնեց. դէն ձգեցի ծխախոտը։

Այդ միջոցին խոտի վրա աչքիս ընկան հացի կտորներ. լուցկի վառեցի և սկսեցի ջոկել, իմ կարծիքով այն մաքուր կտորները, որոնց դեռ չէր դիպել շան բերանը։ Գտայ մի քանի կտոր և կերայ։ Իմ հարևանը այդ րոպէին աչքերը մեղմով գցեց վրաս. ես մի փոքր վախեցայ. ով գիտի, մէկ էլ չը յարձակուի։ Բայց նա իմ սպասածից շատ աւելի բարի էր. նայեց, նայեց, վեր կացաւ, կանգնեց և թաթերով ետ տարաւ այն խոտը, որի վրա ինքը պառկած էր, նրա տակից հանեց հացի աւելի մեծ կտորներ ու ոսկորներ և բոլորը դարսեց խոտի վրա այնտեղ, ուր ես հացի կտորներ էի գտել, յետոյ նստեց իր պաշարի առաջ և նայեց երեսիս. ապա վեր առաւ մի ոսկոր և սկսեց կրծել, երևի ինձ օրինակ տալու համար…

Ես հիացած էի, բայց աւելի շատ զգացուած սրտիս խորքից. այդ ժամին ես զգում էի ինձ և՛ բախտաւոր, և՛ աշխարհի մէջ ոչ-մենակ. բռնեցի բարի շան գլուխը և բուռն զգացմունքով համբուրեցի։

Ես մոռացել էի թէ շան հետ եմ սեղան նստել, ինձ թւում էր, որ ես մի ազնիւ բարեկամի, ընկերի հետ եմ ընթրում. այն ատիճան իմ աչքում այդ րոպէին շունը մարդ էր դառել և մարդը շուն։

Աւետիք Իսահակեան

---

1. Ի՞նչ տեսակ մարդ էր Բազու եկողը եւ ինչ տեսակ մարդ էր նրա լաւ ծանօթը։

Բանկ—(եւրոպ.) դրամատուն, փողը շահեցնող հաստատութիւն.

ինժեներ (եւրոպ.)—ճամփաներ, շէնքեր, մեքենաներ շինող, ինչպէս և հանքեր բանեցող մասնագէտ։

ինտելիգենտ (եւրոպ.)—ուսում առած մարդ, մտաւորական։

խորտակել—կործանել։

պատսպարել—պաշտպանել (ցրտից, անձրևից, թշնամուց…), ապաստան տալ։

գրասենեակ—առևտրական, արդիւնաբերական և նման հաստատութիւնների մէջ հաշւապահութեան և գրաւոր գործավարութեան բաժանմունքը։

դժկամակութիւն—չըկամութիւն, դժգոհութիւն, տհաճութիւն։

---

1. Փոռել-փռփռել, գոռալ-գոռգոռալ, փայլել-փայլփլել.—Ի՞նչ տարբերութիւն կայ պարզ ձևի և իր կրկնարմատ ձևի մէջ։ Կազմիր նման ձևի ութիշ զոյգ բառեր.

2. Դարսել, շարել, դիզել, կուտակել, խմբել.—*ի՞նչ տարբերութիւն կայ այս մերձիմաստ բառերի մէջ։*

3. Պարտք վերցնել—*այլ ձևերով ինչպէս կասես։*

Պարտք առնողին *ի՞նչ ենք ասում,* պարտք տվողին *ի՞նչ։*

Ի՞նչ ենք առնում փոխ, *ի՞նչ ենք առնում* պարտք:

4. *Ի՞նչ ասել է* բուռն*։ Կազմիր բառեր այդ արմատից։ Ի՞նչ ասել է* բուռն զգացմունք*։*

5. *Գտի՛ր հոմանիշներ հետևեալ բառերի համար,*—հարևան, դարպաս, մեկնել *(*ոտքը*)*, մտաբերել, քար կտրել։

6. *Ի՞նչու ենք ասում* կոյր բախտ։

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Ծնւել է Ալէքսանդրապոլում 1875 թւին և մի ժամանակ աշակերտել է Գէորգեան ճեմարանում. ապա ընդհատումներով ապրել է արտասահմանում, գլխաւորապէս Գերմանիայում, որտեղ յաճախել է համալսարանի դասախօսութիւններին։ Միշտ նւիրւած է եղել միայն իր բանաստեղծութեանը։ Նա գրում է տասն և վեց տարեկան հասակից սկսած։ Շատ է մօտեցել ժողովրդական երգի լեզւին և ոգուն. Նրա Դարդըս լացէք, Որսկան ախպէր, Մանկալ եա, Կռունկները շարան-շարան և ուրիշ ոտանաւորները երգւում են ամեն հայի տանը։ Երբ Տաճկաստանում սկսւեցին կոտորածները, նա էլ ողբում էր հայ նահատակներին։ Շատ զգացւած են այն բանաստեղծութիւնները, որոնք նւիրւած են մօրը կամ հայրենի բնութեանը։ Նրա ոտանաւորների ժողովածուն կրում է «Երգեր և վէրքեր» վերնագիրը։

---

21. *Մուրացկանը*

Անցնում էի փողոցով. ինձ կանգնեցրեց մի մուրացկան, մի զառամեալ ծերունի։

Բորբոքւած, արտասւաթոր աչքեր. կապտած շրթունքներ. քրքրւած ցնցոտիներ ու անմաքուր վէրքեր։

Ո՜հ, ինչպէս այլանդակ կերպով մաշել էր աղքատութիւնը այդ անբախտ արարածին։

Նա մեկնել էր ինձ իր կարմիր, ուռած, կեղտոտ ձեռքը... Նա տնքում էր, օգնութիւն էր բառաչում.

Տակն ու վրա արի բոլոր գրպաններս... Ո՛չ դրամ, ո՛չ ժամացոյց, ո՛չ նոյնիսկ մի թաշկինակ... Հետս ոչինչ չէի վերցրել։

Իսկ մուրացկանը սպասում էր շարունակ... և նրա մեկնած ձեռքը թոյլ երերւում էր ու դողդողում։

Շւար ու շփոթ, ես ամուր սեղմեցի այդ կեղտոտ դողդոջուն ձեռքը... «Ներիր, եղբայր, մօտս ոչինչ չըկայ, եղբայր։

Մուրացկանը յառեց ինձ վրա իր բորբոքւած աչքերը, նրա կապոյտ շրթունքների վրայից ժպիտի պէս մի բան անցաւ, և նա իր հերթին սեղմեց իմ սառած մատներս.

—Ի՞նչ արած, եղբայր,—շշնջաց նա,—սրա համար էլ շնորհակալ եմ։ Էս էլ ողորմութիւն է, եղբայր։

Հասկացայ որ ինքս էլ ողորմութիւն ստացայ եղբօրից։

Ց. Ս. Տուրգենև

---

1. *Ի՞նչ ողորմութիւն էր որ ստացաւ նա մուրացկանից։*

ՆԻԻԹ. Համեմատի՛ր այս պատմութիւնը նախորդի հետ. հանի՛ր նմանութիւններն և տարբերութիւնները։

Ցառել—*սևեռել (աչքը), բևեռել (հայեացք)։*
մուրացկան—*մուրացիկ։*
այլանդակ—*անճոռնի, չափազանց տգեղ։*

---

1. *Ի՞նչ տարբերութիւն կայ՝* աղքատի *և* մուրացկանի *մէջ։*

2. Ձեռքը մեկնեց, հոգեւարը մեկնեց, ուսուցիչը ասույթի իմաստը մեկնեց.—*ի՞նչ տարբեր նշանակութիւններ ունի* մեկնել *բառը։*

3. *Որո՞նք են* դրամ *բառի հոմանիշները։*

4. *Դասաւորի՛ր ըստ կարողութեան.*

հարուստ, բարեկեցիկ, մեծատուն, ունեւոր,
աղքատ, տնանկ, չքաւոր, չունեւոր։

---

22. *Երկու սեւ ամպ*

Վաղուց թողած բարձր ու կանաչ
գահը իրենց հանգստութեան,
երկու սև ամպ հողմի առաջ
գընում էին հալածական։

Հողմը սակայն չար հոսանքով
բաժանել չէր կարողանում,
որքան նըրանց լայն երկընքով
դէս ու դէն էր քըշում, տանում։

Եւ անդադար գընում էին
քըշւած հողմի կատաղութեամբ,
իրար կըպած ու միասին
երկու սև ամպ, երկու սև ամպ...

Յովհ. Թումանեան

Ի՞նչ է ուզում ասել այս ոտանավորը և ինչո՞ւ է ասած երկու «Սև» ամպ։

Ի՞նչ ասել է «կանաչ գահր իրենց հանգստութեան»։



23. Ուշացած ճամփորդը

ա.

Նոյեմբերը սկսւում էր։

Նստել էի ձիս, եափընջիս ամուր փաթաթւել, ճամփայ էի գնում։ Ուշացել էի, շտապում էի, որ գոնէ գնամ, մի տեղ, մի գիւղ հասնեմ։

Նոր մթնելով էր, օրը ամպ, երկինքը կախւած, թթւած... հազարաւոր մշուշը եկել՝ վիշապի պէս չոքել էր սարերի վրա։ Խոնաւ արտերում ողորմելի կերպով ցցւել էին գարու և ցորենի մնացորդները։

Ցուրտ էր, թոռ ու թաց...

Հեռու լեռան փեշերքին սևին էր տալիս մի աղքատիկ գիւղ, որի խրճիթները ասես փորփրած, քերծած տեղեր լինէին։ Նրա շուրջը կեանք չէր շարժւում։

Առաջ բարակ անձրևում էր, հիմա էլ փչեց ձիւնախառն քամին։ Գորշ խաւարը քանի գնաց խտացաւ, գիւղը կորաւ աչքից, սարերը թաղւեցին նոյնպէս խաւարի մէջ։

Մնաց միայն ցեխոտ ճամփան, որի վրա անձրևաջրի լճակներ էին գոյացել ու ողորմելի ձայնով շրփում էին ձիուս եռանդուն քայլերից։

Ես ոտ վերցրի։ Շրջակայքի տխուր տեսքը վատ երազի պէս ճնշում էր ինձ։ Կարծես շուրջս ամբողջ աշխարհը մեռել էր, ու ես էի միայն արշաւում այդ անապատի վրայով։

Յանկարծ ականջիս մի հաստ ու խռպոտ ձայն հասաւ։

Ո՛վ պէտք է լինէր, բացի պառաւ շնից, որ յայտնում է իր խռպոտ զարմանքը անակընկալ հիւրի պատճառով։ Թող զարմանայ ինչքան կուզի. Նրա խռպոտ ձայնը մի հաճելի երաժշտութիւն է ուշացած ճամփորդի համար.

բ.

Գիւղի ծայրից հիւրընկալ լոյսի փայլուն շողը արդէն բարևեց ինձ։ Ահա և գետնափոր խրճիթները։ Շները վրա տւին և ինձ մէջ առնելով՝ սկսեցին իրենց անտանելի հարց ու փորձը։ Ես էլ իհարկէ նրանց մտրակով պատասխանում էի, որ հետները գործ չունիմ։

Քշեցի ձիս խրճիթներից մէկի առաջ։

Ամառւայ աշխատանքներից մաշւած ու յոգնած սայլը գլուխը դրել գետնին՝ հանգստանում էր։ Դռնից լոյս չէր երևում։ Երևի օդան ներսէներս էր։

Շների հաչոցը տանեցիներից մէկին դուրս կանչեց։ Դա մի մըռայլ տղամարդ էր՝ ճրագը ձեռին։

—Էհէյ, ո՞վ է,—կանչեց նա։

—Ճամփորդ եմ,—ասի ես,—ուշացել եմ. հիւր չէ՞ք ընդունի։

Նա ինչոր փնթփնթաց քթի տակ, որ ես չլսեցի։ Շները հօ գըլուխ էին տանում։ «Դէ ռադ եղէք, է», ասաւ ու մի քար շպրտեց նրանց կողմը։ Ջեռաց ձայները կտրեցին ու մռմռալով հեռացան խեղճերը՝ առանց իմանալու իմ ով լինելը, որ երևի նրանց համար շատ էր հետաքրքիր։

—Դէ ցած արի, է,—մօտենալով ինձ դարձաւ գիւղացին։

Մի րոպէից յետոյ ձիս քաշեցին ախոռը, իսկ ես խարխափում էի մի խաւար բաւիղում։ Եւ իսկապէս ո՞րտեղ էի։ Դիպայ մի պատի. առաջիցս մի այծ էր կարծեմ որ փախաւ և քնած հաւը տհաճութեամբ ճչաց։

—Էս կողմը, տիրացու, էտ ո՞ւր ես գնում,—ետևից հասնելով՝ ասաւ հիւրընկալս և լոյս արաւ, որ դուռը տեսնեմ։

Վերջապէս օդայի դուռը նազ անելու ձայնով երկար ծորեց, և մենք մտանք ներս։ Օխա՜յ, օջախի կրակը ուրախ թրվռում էր անհագին կարմիր թիթեռի նման, հաճելի լոյսը սփռելով սևացած պատերին։ Կրակը ձմեռւայ վարդն է, ինչ սիրուն գրաւիչ վարդ, որ աշունքին է սկսւում բացւել։

Տան «ջօջը» նստել էր օջախի գլխին։ Նրա կողքին ու դէմուդէմը հինգ-վեց հոգի շարւած մտմտում էին։

Աղքատիկ խրճիթ, պատառոտած շորեր, արևակէզ, մաշւած դէմքեր, այդ էր միայն աչքովս ընկնում՝ ուր նայում էի։

—Բարի աջողում։

—Այ, Աստըծու բարին. հրամմէ, տիրացու,—հիւրասիրեց ջօջը։

Ու ես նստեցի։

Դերենիկ Դեմիրճեան

Ո՞ւր կիջևանէր ճամփորդը, եթէ իր հասած տեղը մի քաղաք լինէր։ Ինչո՞ւ։

Նիւթ. Պատմիր թէ ինչպէս տուն է հասնում ուշացած տանեցի ճամփորդը։

Քերծւել—քերթւել, չանգռւել։
խարխափել—մութի մէջ շօշափելով առաջ գնալ։
բաւիղ—խառնակ ճանապարհ։

---

1. Հանիր արմատները և բառերը բացատրիր. **հազարասուս, հիւրասէր, հիւրընկալ, անակնկալ։**

2. **Ներսէ ներս** (տուն), **պռունգէ պռունգ** (լիքը), **մէջէ մէջ** (երգել), **օրէօր** (լաւանալ), **տունէ տուն** (ման գալ), **ձեռքէ ձեռք** (խլել)—շարունակիր այս շարքը։ Գործածիր նախադասութիւնների մէջ։ Ե՞րբ ենք բացառականում **է** աւելացնում ից-ի փոխարէն։

3. Գործածիր նախադասութիւնների մէջ և բացատրիր.
մի ձեռք (շոր), **ձեռաց.**
ձեռքը բաց, փակ, թեթեւ, ծանր, երկար, կարճ, պակաս, ծուռ.
ձեռք առնել, ձեռք բարձրացնել, ձեռք ձգել (գցել), **ձեռք բերել, ձեռք քաշել, ձեռք վերցնել, ձեռք տալ.**

24. Ջուրը

Լայնածաւալ այն դաշտերում,
մութ կիրճերում, շաւիղներում
լուռ, հրնազանդ, համր, թեթև
ձիւնն է մաղում։

Զարաճճին խաղ ու պարով
կամարի տակ պտոյտ գալով,
իջնում է ցած փափուկ ու ձոյլ,
ինչպէս փետուր։

Հազիւ մի ձև է ընդունում
կտուրներին ու ցանկերին,
և ծառերին ու սարերին
հանգստանում։

Աղա Նեզրի, թարգմ. Յակ. Յակոբեան

---

25. Մայրն ու որդին

ա.

Խեղճ կին. իր ամուսնու մահւան վրա ազատօրէն լալու տխուր սփոփանքն էլ չունեցաւ։ Մի փոքրիկ սուգ միայն կարողացաւ պահել, աղքատի սուգ։ Իր եօթը տարեկան զաւակի հետ մեն-մենակ մնացած աշխարհիս վրա՝ ստիպւած էր մի կողմից ժպտել նրա երեսին, խաղալ նրա հետ, իսկ միւս կողմից ձեռք առնել այն բոլոր միջոցները, որով կարելի լինէր պէտք եղած կրթութիւնը տալ նրան և պատւաւոր կերպով պահել իրենց տունն ու տեղը։ Մարդու չը դիմեց, սիրտը մէկին բաց չարաւ. բոլոր ուժը հաւաքեց ու կար-կարող եղաւ։

Կար էր կարում, նուրբ կարեր։ Առաւօտից մինչև իրիկուն, գիշերն էլ աշխատելով հազիւ էր շահում օրական ութը ղուրուշ։ Պոլսի կենդրոնից հեռու մի խեղճ թաղի մէջ էին բնակւում։ Տղան ընդունւած էր ձրի կենդրոնական վարժարանը. ամսական ութսուն ղուրուշի չափ տալիս էր մայրը տղին, իբրև շոգենաւի և ցերեկւան ուտելիքի ծախք, մնացած գումարով հոգում էր իրենց ուտեստի ու հագուստի բոլոր պէտքերը։ Երբեմն էլ շաբաթներով կար չէր ճարում.

այն ժամանակ տղամարդկանց շապիկներ էր արդուկում, և այսպէս խեղճ ու կրակ ապրում էին եօթը տարուց ի վեր։

Իրենց չքաւորութեան և զրկանքների գաղտնիքը մէկը չը գիտէր սակայն. դպրոցում կոկիկ հագնուած մի մաքուր տղայ էր Վահրամը, միշտ փայլուն կօշիկներով, նոր գուլպաներով։ Աղքատ տղաների վաղահաս արթնութեամբ զգալով՝ թէ ինչ էին արժում դրանք իր մօրը, նա դողում էր, որ թանաքի մի արատ կամ ցեխի մի բիծ չը կպչի վրան։ Փոխադարձաբար մայրն էլ տեսնելով տղայի իր գլխի համար ունեցած խնամքը՝ մաշւում էր, որ չէր կարողանում մի ձեռք սիրուն զգեստ շինել տալ նրա համար։

Խեղճ կնոջ հաստատ մտադրութիւնն էր աւելի դրամ շահել։ Ի՜նչ փափագներ ունէր Վահրամի համար։ Բայց որչափ էլ աշխատում էր, բան չէր կարողանում աւելացնել. ի՞նչ անէր...

—Ա՜խ, եթէ մի մեքենայ ունենայի...—բացականչեց յանկարծ մի անգամ ինքը իր հարցման պատասխանելով։

Վահրամն աչքը բարձրացրեց, նայեց մօրը, յետոյ նորից գլուխը կախեց անխօսուկ։ Եթէ մայրը մի մեքենայ ունենար, անշուշտ այնքան չէր յոգնի, աչքերը այնքան չէին տկարանայ ու մատները չէին ծակծկւի։ Իհարկէ, եթէ մայրը մի մեքենայ ունենար։

բ.

Բաւական ժամանակից ի վեր բոլորովին փոխուել էր Վահրամը. էլ առաջւայ մաքրասէր, խնամոտ տղան չէր։ Առաւօտները ծէգին փողոց էր ընկնում և իրիկունները մութը կոխելուց առաջ դռնից ներս չէր մտնում։ Ամառը փոշիների մէջ թաթախուած, յոգնած ու քրտնած, ձմեռը մինչև կէս մէջքը ցեխերի մէջ, ձեռքերը, ոտքերը ցրտից սառած, կօշիկները ջրերի մէջ։ Կերակուրի ժամանակ քունը աչքից թափում էր։ Շատ անգամ գալուն պէս ընկնում էր իր անկողնի վրա առանց մի պատառ բան բերանը դնելու։ Խեղճ մօր սիրտը մաշւում էր. ո՞ւր էր գնում տղան այսչափ կանուխ և ինչո՞ւ էր ուշ գալիս։ Իզուր էր ճգնում տղին հարց ու փորձ անելու, միշտ անորոշ պատասխաններ էր ստացածը.

—Դպրոցի ժամանակացոյցը փոխեց. ի՞նչ անեմ, մայրի՛կ, շոգենաւին չեմ հասնում...

Մայրը հասկանում էր, որ մի տխուր բան մտել էր տղի կեանքի մէջ, որ նա յամառաբար ծածկում էր։ Սկզբում յոյս ունէր, որ տղայական քմահաճոյք է, անց կը կենայ, բայց վեց ամսից ի վեր

շարունակւում էր այս անկանոն կեանքը, և իր զաւակի զգալապէս տկարանալը նշմարելով՝ սրտի կսկծից յաճախ դառն յանդիմանութիւններ էր ուղղում նրան։ Տղան գլուխը կախում էր ու լռում։

Սակայն եթէ մի օր նրա ետևից գնալու լինէր մայրը, պիտի տեսնէր, որ փոխանակ շոգենաւը մտնելու՝ ցամաքի ճամփան էր բռնում Վահրամը և ոտքով էր գնում այդ ահագին տարածութիւնը մինչև կենդրոնական վարժարան, շոգենաւի աւելորդ ծախքը խնայելու համար։ Ձիւնին, բուքին գնում էր նա, գնում էր ձեռքերը վերարկուի գրպանների խորքը, դէմքը կիսովին օձիքի մէջը պահած։ Երբեմն բուքը այնքան սաստիկ էր լինում, որ կոխած տեղը չէր տեսնում. այդ միջոցին փորձում էր մօտովը անցնող տրամւայի մէջ նետւելու, բայց ուժեղ մի բան զսպում էր նրան։ Ի՞նչ էր այդ բանը. գերազանց մի բան պիտի լինէր, քանի որ նրա ներշնչած ուժով այդ պստիկ տղան մաքառում էր մեծ բնութեան հետ։

Միևնոյն բանն էր նաև ցերեկւան ճաշի ժամանակ. էլ ո՛չ մրգավաճառի, ո՛չ նպարավաճառի խանութից ներս չէր մտնում իր տասը փարանոց հացին մի քիչ ընկոյզ կամ պանիր գնելու։ Մենակ հեռանում էր մի անկիւն ու կրծում իր ցամաք հացի կտորը։

դ.

Կաղանդի առաւօտը կանուխ, երբ մայրը անկողնից ելաւ, Վահրամը դեռ պառկած էր։ Գորովալից մայրը ոտքի մատների վրա կոխելով՝ կամաց-կամաց կից սենեակը անցաւ ժողովելու, ուր կանաչ ծածկոցով սեղանի վրա ընկած էին նախորդ երեկոյից մնացած պտուղների աւելցուկները փոքր-փոքր ափսէների մէջ։ Յանկարծ մի բան ընկաւ աչքին. սեղանի մէջտեղը դրուած մի կարի մեքենայ էր, նոր-նոր փայլուն ընկուզենի կափարիչով. վրան էլ մի թուղթ էր կպցրած։ Նայեց մօտից, իր տղայի գիրն էր ու կարդաց՝

«Կաղանդի նւէր մայրիկիս»։

Միևնոյն վայրկեանին կամացուկ բացւեց կից սենեակի դուռը ու եկաւ՝ նրա թևերի մէջ ընկաւ Վահրամը.

—Մի՛ բարկանայ, մայրի՛կ, շոգենաւի համա՛ր տուած դրամովդ առայ. դրա համար էր, որ իրիկունները ուշանում էի...

Ու համբոյրներով ծածկում էր իր մօր այտերը, որոնց վրայից արցունք էր վազում...

Զապէլ Ասատուր

ՆԻՒԹ. Նկարագրէ՛ր այն տեսարանը թէ ինչպէս մայրը առաջին անգամ փորձում է կարել այդ մեքենայով։

Սփոփանք—մխիթարանք, սիրտը թեթևացնելու հնար:
ղուրուշ—տաճկական դրամ, ուղը կոպէկից մի քիչ աւելի:
փափագ.—մեծ ցանկութիւն:
կարևորութիւն (տալ)—նշանակութիւն (տալ):
ժամանակացոյց—դասերի համեմատ ժամանակի բաժանումը:
զգալապէս—զգալի, աչքերև կերպով, ափաշկարա:
տրամւայ (եւրոպ.)—ելեկտրաքարշ կամ ձիաքարշ երկաթուղի քաղաքում:
փարա—տաճկական դրամ. հինգ փարան մէկ կոպէկ է:
Կաղանդ—Նոր Տարի:
փորձել—վարժւել, զայթակղւել, փորձութեան ենթարկւել:

---

1. Ի՞նչպէս կարելի է այլ կերպ ասել—դրամ շահել, սենեակը ժողովել, մութը կոխեց, կար կարող եղաւ, քունը աչքիցը թափւում է:
2. Լւացքը արդկում են. էլի ինչ են անում:
3. Գտիր արմատները ու բառերը բացատրիր.—վաղահաս, գերազանց:
4. Անխօս—անխօսուկ,կամաց—.....,սուս ու փուս—....,լուռ ու մունջ—.....
5. Գործածիր նախադասութիւնների մէջ և իմաստը բացատրիր.

մէկի ձեռքը ընկնել, մէկի ձեռքը անցնել, ձեռքը լւանալ, ձեռքը ծալած նստել, ձեռքերը ծոցը մնալ.

մէկի ձեռքին մտիկ անել, ձեռքով անել.

ձեռքից գալ, ձեռքից բռնել, ձեռքից գնալ, ձեռքից ազատւել, մէկի ձեռքից լաց լինել.

---

26. Մայրիկիս

Հայրենիքէս հեռացել եմ,
խեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ,
ազիզ մօրէս բաժանւել եմ,
տխուր-տրտում, քուն չունիմ:

Սարէն կու գաք, նըխշուն հաւքեր,
ա՜խ, իմ մօրըս տեսել չէ՞ք.
ծովէն կու գաք, մարմանդ հովե՛ր,
ախը՞ր բարև բերել չէ՞ք:

Հաւք ու հովեր եկան կըշտիս,
անձէն դիպան ու անցան.
պապակ-սըրտիս, փափաք-սըրտիս
անխօս դիպան ու անցա՜ն:

Ա՜խ, քու տեսքին, անուշ լեզւին
կարօտել եմ, մայրի՛կ ջան.
երնէ՜կ, երնէ՜կ երազ լինեմ,
թըռնեմ մօտըդ, մայրի՛կ ջան:

Երբ քունըդ գայ, լուռ գիշերով,
հոգիդ գըրկեմ, համբոյր տամ.
սըրտիդ կըպնեմ վառ կարօտով
լամ ու խընդամ, մայրի՛կ ջան...

Աւետիք Իսահակեան

Մարմանդ—մեղմ, հանդարտ:
հաւք—թռչուն:
կուշտ—կողք, մօտ:

---

1. Ո՞ւմն են ասում պանդուխտ:
2. Պապակ սիրտ և փափագ սիրտ՝ ինչ ասել է:

---

27. Կարի մեքենայի գիւտը

ա.

Էլիաս Հոուն աշկերտ էր Բոստոնում յայտնի մեքենագէտի մօտ: Հազիւ տասը տարեկան կը լինէր, բայց խելացի տղայ էր, դիտող ու մտածող ու տոկուն բնաւորութեան տէր: Շատ խելօք մարդ էր նաև իր վարպետը, հնարած էր արդէն մի քանի գործիքներ, և իր արհեստանոցը որոշ անուն ունէր քաղաքում:

Մի օր նրա մօտ եկան երկու հոգի, որոնք հիւսելու մի մեքենայ էին հնարել, որը սակայն չէր բանում: Եկել էին վարպետի խորհրդին դիմելու:

Վարպետը հակառակ իր ճարպիկութեանն ու խելացիութեանը միտք յոգնեցնել շատ չէր սիրում. մի քիչ այս ու այն կողմ դարձրեց մեքենան՝ դրաւ ցած ու հրաժարուեց։

—Է՜, բան չունիք,—ասաւ,—ինչ է դուրս գալու հիւսելու մեքենայից։ Եթէ շնորհք ունիք, ա՛յ, մի կարի մեքենայ հնարեցէք, միլիոնատէր կը դառնաք։

Երկու հնարիչները դժգոհ ու դժկամ վերցրին իրենց գործիքն ու դուրս ելան։ Վարպետն էլ իր անփոյթ քայլուածքով գնաց ներս իր բանին։

Արհեստանոցի մէջ մնաց աշկերտը, որ ներկայ էր եղած ամբողջ խօսակցութեանը։ Կանգնել էր նա մենակ, լուռ և անշարժ, ամբողջովին թաղուած մտածումների մէջ։ Վարպետի վերջին խօսքերը խորը մխուել էին նրա գլխում։ Եւ այդ վայրկեանից Էլիաս Հուուն միտքը դրաւ, որ անպատճառ հնարէ մի կարի մեքենայ։

Օրերով սկսեց թափառել դերձակների խանութները և ուշադրութեամբ դիտում էր նրանց շարժումները կարելու միջոցին։ Եւ ախ էր քաշում, երբ տեսնում էր ձևած և իրար վրա դարսած կտորների կոյտերը, որոնք բոլորը միակերպ կարուելու էին ձեռքով. ինչքա՜ն պարզ աշխատանք և ինչքա՜ն աւելորդ մարդկային աշխատանք։ Նա այն աստիճան տարուած էր իր մտքերով ու այնպէս ցրուած, որ շատերը սկսեցին կասկածել՝ թէ նրա գլխում մի բան խախտուած պէտք է լինի։

Այսպէս անցան տարիներ։ Ուրիշ ինչ գործի որ ձեռք էր տալիս, ոչինչ չէր աջողւում։ Հագսերի ու պարտքերի մէջ խրուած յաճախ առանձնանում էր տանիքի տակը եղող իր խեղճ ու կրակ սենեակը ու չէր իմանում՝ ինչպէս հաց ճարի իր սոված ընտանիքը պահելու համար։ Բայց և այնպէս շարունակ մտածում էր կարի մեքենայի մասին. ծանօթներից շատերը, նոյնիսկ իր կինը մեղադրում էին, յանդիմանում, որ հանի գլխից այդ յիմար միտքը, որից միևնոյն է ոչինչ դուրս գալու չէ, ու մարդավարի մի գործի կպչի։

բ.

Էլիաս Հուուից առաջ, ԺԸ-րդ դարուց ի վեր տարբեր-տարբեր երկիրներում ուրիշները մտածել ու փորձել էին կարող ձեռքը կարող մեքենայով փոխարինելու, բայց այդ բոլոր ճիգերը եղել էին ապարդիւն, որովհետև բոլորն էլ փորձում էին մի մեքենայ հնարեն, որ մարդկային ձեռքի նման աշխատի, նմանուի ձեռքի կարին. մի բան, որը պարզապէս անկարելի է։

1844 թւին էր, որ Հուուն երկար-երկար փորձերից յետոյ եկաւ վերջապէս առաջին անգամ այն եզրակացութեան, թէ ինչո՞ւ մեքենան էլ ճիշտ այնպէս պէտք է կարի, ինչպէս ձեռքը, միթէ անկարելի՞ էր մի ուրիշ ձևի կար։ Նա վերցրեց մէկի տեղ երկու թել, մինը անցկացրեց ասեղի ծայրը. այդ ասեղով ծակեց կտորը ու տակից տուաւ միւս թելը մաքոքի օգնութեամբ։ Եւ իսկոյն ըմբռնեց, որ հասել է վերջապէս իր նպատակին, որ իրագործուած է արդէն այնքան երկար տարիների իր երազանքը։

Իսկոյն փայտից ու երկաթէ թելերից շինեց մի կոպիտ մեքենայ և համոզուեց, որ դա իրաւ որ կարում է։ Բայց ինքը փող չունէր, ուստի դիմեց իր երբեմնի դպրոցական ընկերոջը, որ հիմա ունևոր մարդ էր. համոզեց նրան, ոգևորեց իր գիւտովը ու փող առաւ։ Այդ փողով ամբողջ ձմեռը աշխատեց ու իր մեքենան շինել տուաւ երկաթից։ 1845-ի յուլիսին էր, որ այդ մեքենայով կարեց երկու ձեռք հագուստի բոլոր կարերը։

Այդ առաջին կարի մեքենան պահուած է մինչև հիմա Նիւ-Եօրքի մէջ։ Եւ բոլոր գործից հասկացող մարդիկ վկայում են, որ երբէք ոչ մէկ հնարիչ առաջին անգամից իր մտածած գիւտը այդպէս գործնական կերպով ու այդպէս լրիւ իրականացրած չէ, ինչպէս Հուուն է կարողացել։ Մի փոքրիկ բան է այդ առաջին կարի մեքենան։ Կարի մեքենաները նրանից յետոյ բազմաթիւ փոփոխութիւնների ու կատարելագործութիւնների են ենթարկուել, բայց բոլոր գործարանատէրերի վկայութեամբ մինչև օրս հնարուած մօտ 700 տեսակ զանազան սիստեմի մեքենաների մէջ չը կայ ոչ մէկը, որ իր կազմուածքի էական մասերովը տարբեր լինի Հուուի այդ փոքրիկ մեքենայից։

Մեքենան վերջապէս գտնուած էր, բայց Հուուի չարչարանքը դրանով չը վերջացաւ։ Նա թափառում էր մէկ դերձակից միւսի մօտ, բայց նրանցից ոչ մէկը չէր ուզում մեքենան փորձի ու պիտանի լինելուն համոզուի. բոլորն էլ վախում էին իրենց վաստակի փչանալուց։

Հուուն դրաւ իր մեքենան մի մեծ հագուստեղէնի խանութում ու յանձն առաւ կարել ինչ կար էլ որ տալու լինեն։ Այսպէս կարում էր նա ամբողջ երկու շաբաթ վաղ առաւօտից մինչև ուշ գիշեր ամենքի համար։ Վերջապէս մրցումի հրաւիրեց խանութի ամենավարժ ու ա-

մնալաւ կարուհիներից հինգին։ Վերցրին հաւասար երկարութեան ու նոյն տեսակ կարի տասը կտոր, որից հինգը պիտի կարէր մեքենան, իսկ միւս հինգը կարուհիները։ Գործի տէրը իբրև դատաւոր հաստատեց, որ աղջիկները թէև աւելի արագ էին աշխատում քան սովորաբար, բայց և այնպէս Հոուն իր մեքենայով աւելի շուտ էր աւարտել, քան աղջիկները, և իր կարը աւելի մաքուր էր ու աւելի դիմացկուն։



Բայց մրցումն էլ չօգնեց. ոչ ոք չէր գնում Հոուի պատրաստած մեքենաներից։ Այնպէս որ նրա ընկերը, որ արդէն անհագին փող էր ծախսել մեքենաների ու Հոուի վրա, յոյսը կորցրեց, թէ երբ և իցէ այդ գործից մի բան շահել կարելի կը լինի, թողեց ու ետ քաշուեց։ Որպէսզի ընտանիքը փողոցում չը մնայ, Հոուն ստիպուած եղաւ փոխադրուելու հօր տունը, աւելի աղքատ ու աւելի դժբախտ, քան երբ և իցէ առաջ։

Ամերիկայից յոյսը կտրած՝ 1847 թւին հօր օժանդակութեամբ անցաւ Անգլիա իր մեքենայի համար այնտեղ ճամփայ բանալու։ Նրան հրապուրել էր մի անգլիացի գործարանատէր։ Բայց չարաչար խաբեց. և Հոուն այնտեղ այն աստիճան նեղն ընկաւ, որ ստիպուած եղաւ իր ձեռքի միակ նմուշ մեքենան գրաւ դնելու Ամերիկա վերադառնալու համար։

Դ.

Իր այդ մէկ-մէկուկէս տարուայ բացակայութեան միջոցին Ամերիկայի մէջ կարի մեքենան դարձել էր արդէն յայտնի, մինչդեռ հնարողը կարծես մոռացուել էր։ Ճարպիկ մեքենագէտներից շատերը, որ տեսել էին նրա գործիքը, սկսել էին իրենք էլ նմանը շինել։ Թէ Նիւ-Եորքում և թէ Միացեալ-Նահանգների ուրիշ քաղաքներում կարի մեքենաներ սկսեցին ցուցադրուել, իսկ Բոստոնում նոյնիսկ մի քանի արհեստանոցների մէջ արդէն գործածւում էին։ Հոուն վերադարձաւ թէ չէ, դատ բացաւ իսկոյն իր գիւտը շահագործողների դէմ, շահեց դատը և ճանաչուեց իբր առաջին հնարիչը կարի մեքենայի։

Իր ամենագլխաւոր մրցակիցներից մէկը եղաւ մի նախկին դերասան Իսահակ Զինկգեր, որը նոյնպէս մի կարի մեքենայ էր շինել

յամառ եռանդով իր գիւտը հասարակութեան մէջ տարածել էր աշխատում։ Հոուն դատ բացաւ և դրա դէմ, շահեց այդ դատն էլ և նրանից յետոյ բոլոր գործարանատէրերը իւրաքանչիւր ծախուած կարի մեքենայի համար Հոուին պէտք է վճարէին հինգ ռուբլի։ Այսպիսով Հոուն վայելեց վերջապէս իր աշխատանքի պտուղը և կարճ ժամանակում դարձաւ միլիոնների տէր։ Մեռաւ 80 տարեկան հասակում 1867 թւին։

Կարի մեքենան իր արդի կատարելագործուած ձևով կատարում է գրեթէ այն բոլոր աշխատանքները, ինչ որ կատարում է ասեղը։ Եւ դարձել է ամեն մէկ տան անհրաժեշտ պէտքը՝ մեծ թեթևութիւն ու յարմարութիւն ամեն տանտիկնոջ, այլ և անփոխարինելի մի աշխատակից նրանց համար, որոնք կարով են հայթայթում իրենց ապրուստը։

Եւ դրանով է, որ Հոուն իր պատուաւոր տեղը ունի մարդկութեան մեծ բարերարների շարքում։

1. Ինչի՞ շնորհիւ Հօուն կարողացաւ հասնել իր նպատակին։

Նիւթ. Նկարագրի՛ր թէ ինչպէս Հոուն իր ընտանիքի մէջ առաջին անգամ կարում է իր նոր հնարած մեքենայով։

Սիստեմ—եղանակ, տեսակ։
արդի—այժմեան, հիմիկուայ։
հայթայթել—ճարել, ձեռք բերել։

---

1. Ի՞նչով են տարբերւում՝ դժգոհ և դժկամ, երբեմնի և վաղեմի։
2. Հանի՛ր արմատներն և բացատրի՛ր. մեղադրել, ցուցադրել, մարդավարի, բացակայ։
3. Բացակայ—հակառակը, մեղադրել—...., դատը տանել—...., մարդավարի—...., եակաճ—....։
4. Ի՞նչ ասել է.—միտքը դնել, միտքը փոխել, միտքը գալ, միտք ունենալ։
5. Տոկուն բառի հոմանիշներն ասա և որոշի՛ր տարբերութիւնները։ Նոյնպէս և ճիգ բառի։
6. Իրագործել, շահագործել, կատարելագործել—ուրի՞շ։
7. Բացատրի՛ր—փոխել, փոփոխել, փոխարինել, փոխանակել, փոխադրել։

28. Կույրերի կարծիքը

Օրը ցերեկով
երեք չորս հոգով
կույրերը եկան
փղի՜ն դեմ ընկան։
Մինը, որ մարմինին դիպավ հաստ, անեղ՝
—Հե՜յ, զգո՛ւշ, կանչեց, մի պատ կա յ էստեղ։
Միւսը, որ ոտն էր շոշափել իր դեմ՝
—Ի՞նչ պատ, ծիծաղեց, էս կոճղն է կարծեմ։
Երրորդի ձեռը կընճիթն էր ընկել.
—Օձ է, օձ, գոռաց, էլ ի՞նչ էք կանգնել։
Մինչդեռ չորրորդը պոչիցը բռնած
քահ-քահ խնդալով ծաղրում էր նրանց.
—Վա՜հ, ճիշտ որ կույր էք. չիմացաւ ոչ ոք.
ոչ էս է, ոչ էն, այլ կախած մի թոկ։
—Չէ՜—պատ է, չէ՜—կոճղը, չէ՜—օձ է, չէ՜—թոկ...
Ու աղմըկելով ամեն մինը ջոկ,
ինչպէս որ եկել
դեմ էին ընկել,
էնպէս էլ կույր-կույր ետ դարձան կրկին,—
սարի պէս փիղը պարզ լուսի տակին։

Յովհ. Թումանեան

---

1. *Ի՞նչ է այս առակի միտքը։*

---

1. *Ե՞րբ է կատարել, կատարում կամ կատարելու գործողութիւնը.*

հայցական հոլով—*ամառը, ամբողջ կեանքը, ձմեռը, Ծննդեան օրը, գիշերը, անցած տարին, գալ ամիս, նախորդ շաբաթ։*

տրական հոլով—*երեկոյեան, առաւօտեան, կէս օրին, ժամը հինգին, Զատկի շաբթին, այս ինչ թւին։*

գործիական հոլով—*գիշերով, ցերեկով, անձրեւով, շոգով, լուսով, մութով։*

Ի՞նչ տարբերութիւն կայ այս երեք շարքերի մէջ։

2. *Ի՞նչ տարբերութիւն կամ* դեմ ընկնել-*ի և* սայթաքել-*ի մէջ։*

30. Երկու կույր

ա.

Նրանցից մէկը կոչւում էր Մուրօ և միւսը Մարգար. երկուսն էլ կույր, թէև նրանցից մէկն իր թաւ յօնքերից մէկի տակ աչքի պէս մի բան ունէր, մինչդեռ միւսը՝ միայն երկու խոռոչ, երկու սև բացւածք։

Երկու հոգի էին, մի աչք ունէին, մի հատիկ ողորմելի աչք, որ վաղուց, շատ վաղուց ծեփւել էր, կոպերն իրար հետ միացել էին բիբի վրա, միայն նրանց արանքից, ինչպէս մի մութ այրի բարակ ճեղքւածքից, լոյսի պէս մի բան էր թափանցում, մի խղճուկ դեղին փայլ, ճիշդ այնքան, որքան հարկաւոր էր ջոկելու գիշերը ցերեկից, խաւարը լոյսից, առանց կարողանալու ճշդիւ որոշել առարկաները։

Այդ աչքի ճեղքից ներս թափանցողը սովորական աշխարհը չէր, այլ միշտ փոփոխական, իրար վրա թափւած պատկերների մի ժխոր։ Այդ մի հատիկ աչքը Մուրօի դէմքի վրա էր, բայց նա նոյնքան պատկանում էր և Մարգարին. թէ երկսին արցունք էր պէտք՝ այդ մի հատիկ աչքից էր հոսում, թէ ժպիտ էր պէտք՝ էլի նոյն աչքն էր

գործում, թէ լոյս էր հարկաւոր՝ նա պիտի արևի շող գողանար երկսի համար էլ, թէ ճանապարհ էր պէտք՝ նա պիտի ցոյց տար, առաջնորդէր:

Երկու հոգի էին՝ մի աչք ունէին, մի ողորմելի անզօր աչք, այնքան անզօր, որ նրանք համարեա բոլորովին կոյր էին:

Մարգարն ու Մուրօն երկու աշուղ էին և մի սազ ունէին, նոյնպէս խղճալի, նոյնպէս անփայլ, ինչպէս իրենց միակ աչքը: Եւ այդ սազը միայն երեք լար ունէր, ազաւոր ու լալկան, որոնց թրթիռները հնչում էին միշտ, ինչպէս հեռու տեղից քամու բերած բարակ, ընդհատուող հեծկլտանք:

Եթէ մի հատիկ աչքը միշտ Մուրօի վրա էր, նա էր ման ածում այդ գունատ, անփայլ լապտերը, լուսաւորում կոյրերի միշտ խաւար ուղին. սազն էլ միշտ Մարգարի ուսին էր կախած կամ ձեռքին էր, նա էր թրթռացնում երեք լարերը, նա գիտէր հնչիւնների քաղցր լեզուն, երգի գաղտնիքը, հազար ու մի ձայների խորհրդաւոր մրմունջները: Եղբօր պէս բաժանել էին իրենց ամենաթանկ, ամենանուիրական հարստութիւնը, աչքը՝ մէկին, սազը՝ մէկին, երկուսն էլ՝ երկսին:

բ.

Մաշուած, փոքրիկ դէմքեր էին, անմշակ ու երկայն մօրուք, թաւ յօնքեր, որոնք հովանի էին անում կոյր աչքերի խոռոչների վրա, ինչպէս անդունդի վրա բուսած խիտ մացառներ: Փոքրիկ մարմիններ ունէին. վտիտ ու խղճուկ. հագնում էին, ինչ որ կարողացել էին ճարել դռներից, ինչ որ բարի մարդիկ տուել էին, և յաճախ անխտիր կերպով մէկի հագածը՝ միւսն էր հագնում: Առաւօտները արթնանալիս ամէն մէկի ձեռքի տակ, ինչ որ ընկնում էր, նա այն էր հագնում, մնացածը թողնելով իր ընկերոջը: Այսպիսով նրանց արտաքինը յաճախ էր փոփոխւում և հեռուից դժւար էր նրանց որոշել իրարից:

Մուրօն սովորաբար նայում էր ուղիղ, միշտ հեռուն, առանց գլուխն այս ու այն կողմը դարձնելու, փայտով անընդհատ շօշափելով փոշոտ, ցեխոտ ճանապարհները: Մարգարը քայլում էր նրա յետևից աջ ձեռքը ընկերոջ ուսին, աչքերի մութ խոռոչները ուղղած դէպի վեր, դէպի երկինքն ու արևը, որի ոչ մի շողը չէր կարողանում լուսաւորել նրանց սև յատակը: Արտաքին աշխարհի և ոչ մի պատկեր չէր գալիս յուզելու Մարգարի բանտարկուած երևակայութիւնը, ուր իշխում էր յաւիտենական խաւարը և ուր ապրում էին

միայն ձայներ, իրանց հազար ու մի ելևէջներով, կենդանի, խօսուն մի ամբողջ աշխարհ, լցուած միմիայն հնչիւններով, սիրտ պատառող յուզիչ հնչիւններով, որոնց մի մասը, շատ չնչին մասը միայն հասկանալի էր իր ունկնդիրներին:

Աւետիս Ահարոնեան

1. Ինչու կոյրերը այդպէս բուռն սիրում են երաժշտութիւնը:

Նիւթ. Նկարագրիր թէ ինչպէս այդ երկու կոյրերը մտան ձեր բակը և նուագեցին:

Թաւ—սաստ և խիտ (մազ):
Ծիրական—սուրբ, սրբազան:
վտիտ—նիհար, նուազ:
մրմունջ—հազիւ լսելի, մեղմաձայն խօսուածք:
խոռոչ—փոս, փորուածք, օրինակ՝ ժայռի, ծառի վրա:

---

1. Գրիր հականիշ բառեր՝ վտիտ,—նոր—..., միասին—..., յաճախ—..., մօտ—..., մուտք—..., ելք..., անհոտ—..., գեղեցիկ—...

1. Լրացրու՝ անզօր—զօրեղ, անձայն—...., անհամ—...., անուժ—..., անշուք—..., անգոյն—...,

Համեմատիր՝ զօրեղ—զօրաւոր, ձայնեղ—ձայնաւոր, գունեղ—գունաւոր, ահեղ—ահաւոր: Ի՞նչ տարբերութիւն կայ եղ և աւոր մասնիկների մէջ:

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Աւ. Ահարոնեանը ծնուել է 1866 թւին Երևանեան նահանգի Իգդիր գիւղում և իր ուսումը ստացել է Գէորգեան ճեմարանում: Մի քանի տարի ուսուցչութիւն անելուց յետոյ՝ գնաց Եւրոպա ուսումը շարունակելու: Վերադառնալով Կովկաս՝ մի ժամանակ վարում էր Ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօնը: Այժմ ապրում է Եւրոպայում:

Իգդիրում ուսուցիչ եղած ժամանակ՝ Ահարոնեանը ականատես էր այն սոսկալի վիճակին, որի մէջ էին տաճիկների կոտորածներից փախչող հայ գաղթականները: Նա սկսեց պատկերացնել այդ փախստականների կեանքը և այնպիսի անկեղծ զգացմունքով և պատկերաւոր ու ճոխ լեզուով, որ շուտով առաջնակարգ տեղ դրաւեց երի-

տասարդ գրողների մէջ։ Յետոյ նա նկարագրում էր հայերի թշւառութիւնները Հայաստանում և ազատագրութեան հերոսներին։ Վերջին տարիները ուրիշ բազմազան նիւթեր է մշակում։ Նրա պատկերներից ու վէպիկներից կազմւած են հաւաքածուներ—Պատկերներ, Ազատութեան ճամփին, Խենթերը, Արազը։ Առանձնապէս գեղեցիկ են նրա ճամփորդական տպաւորութիւնները՝ Իտալիայում և Դէպի Անի։

---

30. Աշուղ

Ասի՛ աշո՛ւղ ա՜ռ չունգուրըդ, մեզ բան ասա
սրտալի.
կարօտ ենք քու անուշ ձէնին, մի բան ասա
սրտալի.
սրտի խօսք ենք ուզում քեզնից, որ վեր
հանի մեր հոգին,
ա՜ռ չունգուրըդ, պարդա՛ա աշուղ, մեզ բան
ասա սրտալի։

Տեսնում ես, որ մենք թմրած ենք, քունն անուշ է մեզ թըւում.
Ճը՛ր ես դու էլ մեզ բոլորիս մաշող քնիցն յաղթւում.
ա՜ռ չունգուրըդ, տո՛ւր լարերին, կըրակ վառի՛ր մեր սրտում,
մեզ ամենիս նոր շունչ տուող մի բան ասա՜ սրտալի։

Յովհ. Յովհաննիսեան

Այս ոտանաւորի մէջ աշուղից ի՞նչ է պահանջւում։

Չունգուր —թառի նման լարաւոր երաժշտական գործիք։

---

31. Շոպէնի նւագը

ա.

Հռչակաւոր երաժիշտ և կոմպոզիտոր Ֆրիդրիխ Շոպէնի հայրը, որ ֆրանսիացի էր և ամուսնացած էր լեհուհու հետ, գիշերօթիկ դպրոց ունէր Վարշաւայում։ Մի երեկոյ նա քաղաք պիտի գնար և աշակերտների հսկողութիւնը յանձնեց աւագագոյն աշակերտներից

մէկին։ Տեսչի հեռանալուն պէս դպրոցում անասելի աղմուկ բարձրացաւ։ Տղաները վազվզում էին, աղաղակում, խօսում, երգում, ծիծաղում։ «Վերակացուն» նախ նկատողութիւն էր անում, աղաչում, պաղատում էր, ապա սկսեց գոռալ, ճչալ, սպառնալ, վերջը կատաղութիւնից գրեթէ լաց եղաւ. այդ ժխորի մէջ նրան լսող չը կար։ Գլուխը կորցրած նա վազեց տեսչի բնակարանը։

—Ֆրիդրիխ,—ասաւ նա տեսչի պատանի որդուն,—Ֆրիդրիխ, տղաները ինձ ականջ չեն դնում։ Եկէք, սաստեցէք նրանց. լսո՞ւմ էք ինչ աղմուկ է։

Դպրոցի սենեակներից ծիծաղի և աղաղակների հետ լսւում էին ինչ որ խմբական երգի խառն ու անկարգ ձայներ։

Ֆրիդրիխը շտապեց աշակերտների մօտ։ Նա ընդհանուրի սիրելին էր. իսկոյն նրան ամեն կողմից շրջապատեցին։

—Տղանե՛ր,—դիմեց պատանի Շոպէնը,—ես մի պատմութիւն եմ հնարել։ Ուզո՞ւմ էք՝ պատմեմ։

—Ուզո՛ւմ ենք, ուզո՛ւմ ենք։

—Որ այդպէս է, գնանք դահլիճ։

Այդ նշանակում էր թէ նա պիտի պատմէր և միաժամանակ նւագէր. տղաները շատ էին սիրում նրա նւագը։

Երբ աշակերտները դահլիճում տեղաւորւել էին աթոռների վրա, Ֆրիդրիխը նստելով դաշնամուրի մօտ՝ հրամայեց.

—Մոմերը հանգցրէք։

Պատանի երաժիշտը սիրում էր նւագել մթութեան մէջ, կարծես խաւարը լցնում էր նրա երևակայութիւնը ներդաշնակ հնչիւններով և նա աւելի ազատ ու համարձակ էր ստեղծում իր դիւթիչ եղանակները։

Տիրեց մի սպասողական լռութիւն։

բ.

Յանկարծ դաշնամուրի լարերից հնչեց հովւական սրինգի ձայնը, իսկ Ֆրիդրիխը պատմում էր.

—Օրը մարում է... Հովիւը տուն է դառնում։ Անտառում ճիւղերի միջից դեռ հատ հատ ձայն են տալիս թռչնակները։ Լեռներից փչում է մի մեղմ քամի. տերևները դողդողում, թրթռում են. քաղցր մի մրմունջ և շշուկ է անցնում գագաթից գագաթ. Թփերի տակից որսի է դուրս գալիս գազանը...

Դաշնամուրի միջից լսւում էր և՛ ծառերի հպարտ կատարների

դանդաղ ճօճւելը, և՛ տերևների այդ կամացուկ սօսափիւնը, և՛ չորացած ճիւղերի ճռճռոցը զարթնող գազանի ոտների տակին։

—Մո՛ւթն է. խորհրդաւոր լռութիւն։ Ահա դարևոր ծառից պոկւեց մի ահագին չորացած ճիւղ, ընկաւ, և նրա ճռթոցը հեռու արձագանք է տալիս հաստ բների միջին։ Եւ կրկին ամեն ինչ լուռ է. միայն բուն է կանչում։

—Զը՛նգ, զը՛նգ, զը՛նգ... հնչում են յանկարծ սայլակի զանգակները լուռ անտառում։ Զը՛նգ, զը՛նգ, զը՛նգ... ղօղանջում է պատասխանը ամեն թփի տակից։ Դա ուշացած վաճառականն է, որ տօնավաճառից տուն է շտապում։

Եւ ունկնդիրները լսում են մէկիկ մէկիկ այդ զանգակների զրնգզրնգոցը, սայլակի անիւների աղմուկը, ձիերի ծանր շնչառութիւնը, կառապանի խրոխտ գոչերը և մտրակի շաչիւնը։

—Յանկարծ հեռւից ձիերի տրոփիւն։ Ո՞վքեր են. բարի թէ՞ չար մարդիկ... Շնչակտուր ականջ են դնում վաճառականն ու կառապանը։ Սմբակների ձայները արագ մօտենում են։ Շո՛ւտ, կառապան, շո՛ւտ։ Մտրակը վզզում է ու վզզում օդի մէջ, ուժգին զարկերը աւելի յաճախ են իջնում ձիերի մէջքերին, սայլակը աւելի է դղրդում կոշտերին և արմատներին... Ձիաւորները ուր որ է կը հասնեն... Աւազակներ են։ Մի հրացան պայթեց. սայլակի մի ձին ընկաւ։ Կրկին պայթիւն ու նորից պայթիւն։ Սարսափ, աղաղակ, անէծք, խենթ ծիծաղ, ձիու խրխինջ, հառաչանք... Սպանւած են կառապանն էլ, տէրն էլ։

Դաշնամուրը պատմում էր այդ բոլորը իր խօսուն լարերով։ Տղաները շատ պարզ լսում էին թէ ինչպէս աւազակները շտապ կողոպտում էին սպանւածներին. ահա՛ քսակը, ահա՛ և ապրանքները։ Բարձում են ձիերի վրա։ Անտառը մի ակնթարթում զարթնել է. թռչունները շփոթւած վեր են թռել ճիւղերից և ճըւում ճըւճըւում են, գազանները փախչում են հեռու՝ կոտրատելով թուփերն ու մանր ծառերը...

Աւազակները ճամփայ են ընկնում. ձիերի տրոփիւնը հետզհետէ հեռանում է, խլանում ու մեռնում։ Վիրաւոր ձին վերջին անգամ խրխնջում է. նրա շարժումից կամարի տակին զանգակը վերջին անգամ զրնգում է ու լռում. Թռչունները նորից տեղաւորւեցին ճիւղերի վրա և անշարժացան։ Էլ ոչ մի ձայն, ոչ մի ծպտուն, ոչ մի տերև չի շարժւում. ամբողջ անտառը սոսկումից պապանձւել է։ Եւ շուրջը նորից ամեն ինչ նիրհում է, թաղւում խո՛ր... խո՛ր քնի մէջ։

Դաշնամուրը նւագում էր աւելի ու աւելի մեղմ։ Օրօրող, շոյող, խոնջած հնչիւնները կարծես յօրանջում, ձգձգւում, պառկում էին և նիրհում, մինչև որ աննկատելի կերպով բոլորովին կորւեցին...

գ.

Պատանի Շոպէնը մի րոպէ սպասեց, ապա բարձրացրեց գլուխը. նայեց չորս բոլոր։ Ոչ մի ձայն. տղաների համաչափ շնչառութիւնից հասկացաւ որ նրանք էլ քնել են։

Զգոյշ վեր կացաւ ու անցաւ իրենց բնակարանը։

—Մայրիկ, քոյրիկներ, եկէք դահլիճ, ես ձեզ շատ հետաքրքիր բան ցոյց տամ։ Մոմ վերցրէք։

Երբ նրանք մտան դահլիճ, տեսան՝ աշակերտները հանգիստ քնած են աթոռների վրա։ Քոյրերից մէկը զարմանքից քիչ մնաց բացականչի. եղբայրը զսպեց նրան, ապա մօտեցաւ դաշնամուրին և ուժգին հարւածով հնչեցրեց.

—Փոթորի՛կ, փայլա՛կ, որո՛տ, դղրդիւն... կայծա՛կ, ճայթիւն և զա՛րկ...

Սարսափահար վեր ցատկեցին տղաները աթոռներից, շփոթւած և չը հասկանալով թէ շուրջը ինչ է կատարւում։ Իսկ Շոպէնը կանգնած էր՝ մէջքով բաց դաշնամուրին կրթնած և լիակուրծ ծիծաղում էր իր մօր և քոյրերի հետ միասին։

Ստ. Լիսիցեան

1. Երաժշտութիւնը ինչպէս է ազդում մարդու վրա. տւէք մի քանի օրինակներ։
2. Երաժշտութեամբ ինչ կարելի է արտայայտել։

ՆԻՒԹ. Այս յօդւածից առանձնացրէք աւազակների յարձակումը, լրացնելով։

կոմպոզիտոր (եւրոպ.)—ստեղծագործող երաժիշտ։
ժխոր—խառն աղմուկ։

ներդաշնակ — *իրար հետ համաձայնեցրած և յարմարեցրած:*
դիւթել — *կախարդել, հիացնել:*
ծպուտ — *չնչին ձայն:*
խոնջել — *յոգնել:*

---

1. *Յօդուածից հանե՛ք ձայներ ցոյց տւող բառերը:*
2. *Գտե՛ք արմատները և բառերը բացատրե՛ք.*— ճնչակտուր, լիակուրծ, ունկընդիր, սոխավաճառ, սարսափահար:
3. Սպասողական լռութիւն. *էլի ի՞նչպիսի լռութիւն:*
4. *Ի՞նչ տարբերութիւն կայ* տեսչի հեռանալուն պես *և* տեսչի հեռանալուց յետոյ *ձևերի մէջ: Բե՛ր նման օրինակներ:*
5. *Մտնել* անտառ, *կանգնել* անտառի մէջ *(անտառում), շտապել* անտառով, *անցնել* անտառից:

գնալ քաղաք, *մնալ* քաղաքի մէջ *(քաղաքում), վերադառնալ* քաղաքով, *անցնել* քաղաքից:

Ձին քշել դաշտը, *ձին քշել* դաշտի մէջ *(դաշտում), ձին քշել* դաշտով, *անցնել* դաշտից:

Տեղ *ցոյց տալու համար ի՞նչ հոլովներ են այստեղ գործածւած և ի՞նչ տարբեր նշանակութիւն ունեն:*

6. Տերեւների *և* ջրի *ձայները արտայայտող ի՞նչ բառեր գիտես:*

---

32. Երգի հրաշքը

ա.

Մեզնից հազա՜ր-հազար տարի առաջ, մեզնից շա՜տ ու շատ հեռու, կապոյտ ծովերի միւս ափում կար մի աշխարհ:

Այնտեղ ծաղիկներ կային, նախշուն ու սիրո՜ւն ծաղիկներ: Տերևների պէս՝ փռւած ժայռերի ու դաշտերի վրա, և նրանց անուշ հոտով լցւել էին այդ աշխարհի սարերն ու ձորերը:

Այնտեղ աղբիւրներ կային, պայծառ ու քչքչան աղբիւրներ՝ մանուկների պէս, որոնք ուրախ ու զւարթ թռչկոտում էին քարից քար, ծաղիկները համբուրելով:

Բայց այնտեղ մարդիկ չար էին և անգութ:

Մի խեղճ, մի որբ ու աղքատ մանուկ էր ապրում այդ մարդկանց մէջ. նա գիշերը տեղ չունէր գլուխը դնելու, հաց չունէր ուտելու և շոր չունէր հագնելու:

Նա մենակ էր, ինչպէս մի թռչուն ամայի ժայռերի մէջ:

Եւ աճում էր բոլորի աչքի առաջ՝ անտէր ու անյայտ. կերակրւում էր դաշտի բոյսերով և պատսպարւում էր անտառների ու այրերի մէջ:

Երբ մի քիչ մեծացաւ, թողեց այդ քարասիրտ աշխարհը և ճամփայ ընկաւ մի ուրիշ լաւ աշխարհ գտնելու:

Շատ գնաց թէ քիչ, հասաւ ծովափին, և երբ ափի աւազների վրա շրջում էր, տեսաւ այնտեղ ընկած մի շատ սիրուն, մի շատ գեղեցիկ, շողշողուն ձուկ:

Ձուկը դարձաւ՝ մարդու լեզւով ասաւ.

— Բարի՛ տղայ, ծովի ալիքները ինձ ձգեցին աւազի վրա, չեմ կարողանում ետ դառնալ քոյրերիս մօտ, խղճա՛ ինձ, վերցրո՛ւ, ծովը ձգի՛ր:

Մանուկը, որ բարի սիրտ ունէր, առանց վախենալու գրկեց ձուկը և քնքշութեամբ տարաւ՝ բաց թողեց ծովի մէջ:

Եւ երբ ձուկը փաթաթւեց առաջին ալիքին, դարձաւ՝ ասաւ մանուկին.

— Ինչ որ սիրտդ կուզի, ասա, ես կը կատարեմ քո արած լաւութեան փոխարէն:

Մանուկը մի փոքր մտածեց և ասաւ.

— Ինձ այնպիսի մի հնար տուր, որ մարդկանց կրծքի տակ եղած քարը սիրտ դարձնեմ:

— Դու սէր ես ուզում, հրաշալի՛ տղայ... Շա՜տ լաւ: Կտրի՛ր ծովափի եղէգներից մէկը և նրանից մի սրինգ շինի՛ր. գնա մարդկանց մէջ նւագի՛ր և երգի՛ր: Եւ երբ կը տեսնես, որ նրանց աչքերը արցունքով լցւեցին, այն ժամանակ կիմանաս, որ քարը հալւեց, սիրտ դառաւ...

Այսպէս խրատեց ձուկը մանուկին, իսկ ինքը փաթաթւելով ալիքների հետ՝ սուզւեց ծովի խորքը:

բ.

Մանուկն իսկոյն կտրեց եղէգը, սրինգ շինեց և փչեց: Այնպէս քաղցր, այնպէ՜ս հոգեգրաւ ու անուշ դուրս հոսեցին հնչիւնները սրնգի միջից, որ բոլոր թռչունները կանգ առած՝ լսեցին ու ականջ դրին:

Եւ մանուկը շտապեց մարդկանց մօտ, մտաւ մարդաշատ քաղաքը, կանգնեց հրապարակում և սրինգը նւագեց:

Քնքուշ ու գեղեցիկ, ուղղակի մանուկի սրտի խորքերից դուրս ցայտեցին երկնային, շքեղ երգերը:

Նա երգում էր արցունքով թրջած հացը աղքատների, ցուրտ, անտուն գիշերները աշնան. նա երգում էր փակ դռներն ու քար սրտերը մարդկանց, անտէր անտէրունջ մենակութիւնը որբերի:

Եւ փռեցին նրա երգերը հրապարակի վրա, մտան ամեն մի խրճիթ ու տուն, փշրեցին բոլոր սրտերի քարերը և ծորեցին հոգիների խորքերում:

Եւ ամեն մի մարդ ուզում էր դուրս թռչել, վազել, սիրով ու կարօտով գրկել մի ուրիշ, անծանօթ մարդու, գրկել, համբուրել և մեռնել նրա համար:

Եւ ահա մարդիկ դուրս թռան տներից, վազեցին հրապարակ, շրջապատեցին մանուկին, առաջին անգամ նկատեցին, որ աղքատ է ու մենակ. գրկեցին ու համբուրեցին նրան, և իրանց կեանքում առաջին անգամ արտասուեցին ու վշտահար հեկեկացին:

Իսկ մանուկը նուագում էր աւելի քաղցր, աւելի զգայուն և սրտառուչ, իսկ մարդիկ ամենքը, ամենքը լսում էին հոգեսլաց և լալիս էին ու լալիս:

Ահա այդ օրւանից աշխարհ եկաւ երգը, երգի միջոցով հալեցին քար սրտերը, և այդ օրւանից սէրը վշտի հետ անբաժան բուն դրաւ մարդկանց սրտերի մէջ:

Աւետիք Իսահակեան

1. Ի՞նչն էր խօսում մանկան երգի մէջ, որ այդպէս ազդում էր:

2. Միայն երաժշտութիւ՞նն է որ այդպէս փափկացնում է մարդկանց սրտերը:

3. Քո լսած երգերից ո՞րն է որ ամենից աւելի ազդել է քեզ վրայ:

---

1. Հանիր հետևեալ բառերի արմատները և բառերը բացատրիր.—սրտառուչ, հոգեսլաց, հոգեգրաւ, վշտահար, մարդաշատ:

2. Հետևեալ ասոյթները գործածիր լրիւ նախադասութիւնների մէջ և հանիր նրանց իմաստը:

անսիրտ, քարսիրտ, մեծասիրտ, նեղ սիրտ, լեն սիրտ, սրտոտ:
սիրտ ունենալ, սիրտ անել, սիրտ առնել, սիրտ տալ.
մեկի սիրտը առնել, սիրտը պնդացնել, սիրտը բաց անել.
սրտին դիպաւ, սրտին առաւ.
սրտից արիւն է կաթում, մեկի սրտիցը խօսել:
Սիրտ բառը ինչ գլխաւոր իմաստներ ունի այս դէպքերում:

33. Արծիւն ու արտուտը

Արծիւը կանգնած սև ժայռի գլխին՝
հանդիստ ու հպարտ նայում է չորսդին.
ցածն ամպեր ճերմակ լողում են ձորում,
վերևում վճիտ եթերն է ծորում:
Եւ ձիւնագագաթ լեռների արքան
չորս դին է նայում ասում ինքն իրան.
«Ինձնից բարձր էլ ո՞վ կարող է սլանալ,
այս վեհ բարձունքին ինձ պէս տիրանալ»:
Յանկարծ երկնքի անհուն կապոյտից
անուշ ճռուղիւն հնչեց բերկրալից:
Արծիւն ահաւոր նայեց դէպի վեր,—
արտուտը փոքրիկ մինչ երկինք հասած,
արևի ոսկի փայլով ողողուած,
գովքն էր գեղգեղում գարնան կենսաբեր:

Յովհ. Յովհաննիսեան

1. Ի՞նչ է այս առակի միտքը:

Դի—կողմ: **Չորս դին**—չորս կողմը:
Անհուն—անծայր, անվերջ:
Եթեր—վերևի շերտերի նուրբ օդը:
Բերկրանք—մեծ ուրախութիւն, մեծ ցնծութիւն:

---

1. Ի՞նչ բառեր է գործածում հեղինակը արտուտի երգի համար:
2. Կենսաբեր—հակառակը, յաղթել—..., գովել—...:
3. Ի՞նչ տարբերութիւն կայ թրջել, լուանալ, ողողել բառերի մէջ:

---

34. Արտիստը

Ա.

Օդեսայի նաւահանգիստը քաղաքի հետ միացրած է մի հսկայական քարէ սանդուխքով, որի բարձրութեան վրա, բուլվարի մէջտեղում կանգնած է քաղաքի հիմնադիր Ռիշելիէի արձանը, իսկ ստոր-

տում կառուցւած է մի փոքրիկ եկեղեցի՝ նաւահանգստի բնակչութեան համար։ Մենք իջանք այդ սանդուղքով, մտանք մի աղեղնաձև լայն փողոց։ Դա վերջին փողոցն է դէպի ծովափ, այնուհետև ամբողջ նաւահանգստի երկայնութեամբ բարձրանում է «Էսթակադան», երկաթուղու բեռնակիր գնացքների համար կառուցւած կամուրջը։ Գիշեր ցերեկ այս հսկայական կամրջի վրայով սուլելով անցնում են շոգեկառքերը, քարշ տալով վագոնների երկար շարքերը. իսկ ներքև, բազմաթիւ կամարների տակով անց ու դարձ են անում բեռնակիր սայլեր, նաւաստիներ, բանւորներ։ Դա մի աղմկալի վայր է, մի բարդ հանգոյց ծովային և ցամաքային կեանքերի միջև։ Շոգենաւերի թանձր ծուխը, նաւաստիների կոշտ ձայները, Էսթակադայի խուլ թնդիւնները գնացքների ծանրութիւնից, կայարաններում կուտակւած քարածխի փոշին՝ այս բոլորը անսովոր մարդու վրա ճնշող տպաւորութիւն են գործում։

Իցկօ Մարգուլիսը առաջնորդեց ինձ ու Զաուշենկօին քարածխի փոշով ծածկւած փողոցի խորքը։ Երբ եկեղեցուց հեռացանք երկու հարիւր քայլ դէպի աջ, մեր առջև բացւեց օղետների, ստորին տեսակի թէյատների ու պանդոկների ամբողջ աւան։ Այստեղ էր վխտում նաւահանգստի բնակչութեան մեծ մասը։ Պանդոկներից լսւում էին հարմոնիայի և ռուսական «բալալայկա»ի հնչիւնները՝ ամբոխի աղաղակների, երգերի, գոռում-գոչիւնների, յիշոցների ու անէծքների հետ։ Նրանք, որոնք ժամանակ ու միջոց ունէին, ուտում, խմում ու հարբում էին պանդոկներում։ Իսկ նրանք, որոնք միմիայն խմելու համար փող ունէին, մտնում էին օղիի «մոնոպոլի» կրպակները։ Այստեղ վերցնելով կնքւած շիշերը՝ դուրս էին գալիս փողոց, շիշը դնում բերաններն ու խմում։ Օղին արգելւում է խմել «մոնոպոլի» կրպակներում, ուստի հարբեցողութիւնը թագաւորում է փողոցում ամենայն համարձակութեամբ։ Եւ ահա նրա թշւառ զոհերը թաւալւած էին կրպակների առջև, մայթերի վրա, փողոցի մէջտեղում, սայլերի ու կառքերի տակ ջարդւելու վտանգին ենթակայ։

Իցկօն կանգ առաւ մի մեծ պանդոկի առջև, որի դռների ճակատին գրւած էր.— «Արքայական զբօսանաւ»։

—Ահա այստեղ է Լևոնը,—ասաւ նա.— անցեալ շաբաթ «Ոսկէ խարիսխ»-ումն էր նւագում։

—Հը՛մ,—պատասխանեց Զաուշենկօն, դառնալով ինձ,—տատանւում էք։ Վախենո՞ւմ էք մտնել։ Քաջ եղէք, ձեզ չեն ուտի. մեզ նման մարդիկ են։

Բ.

Նա գաւազանը բարձրացրեց և յաղթական քայլերով մտաւ Իցկօի հետ պանդոկ։ Ես մի քիչ նրանից լաւ էի հագնւած։ «Աղա» չը համարւելու համար վերարկւիս օձիքը բարձրացրի, գլխարկիս եզրը քաշեցի աչքերիս, յուսալով որ ամենաշատը՝ յոյն որմնադրի տեղ կը դնեն ինձ։

Պանդոկը լի էր յաճախորդներով։ Առաջին պահ ոչինչ չը կարողացայ որոշել, այնքան մթնոլորտը տոգորւած էր ծխով, փոշիով ու կերակուրների գոլորշիներով։ Դժւար էր ընդհանուր աղմուկի, գոռում-գոչիւնների ու հայհոյանքների մէջ մի բան հասկանալ։ Այցելուների մի մասը խմբւել էր բուֆետի առջև, որ գտնւում էր ուղիղ մուտքի դիմաց։ Մեզ հրում էին այս ու այն կողմ։ Զաուշենկօի նիհար մարմինը պնդակազմ նաւաստիների ուսերի հարւածներից տաշեղի պէս տարուբերւում էր։ Երբեմն նա իրեն դիմող մէջքերին դէմ էր տալիս գաւազանի կոթը, ինքը յետ կանգնում։ Իցկօն, իր փոքրութեան շնորհիւ, կատուի ճարպկութեամբ մղւում էր առաջ՝ մարդկանց արանքով։ Ես հազիւ էի կարողանում քիթ ու պռունգս ազատ պահել օդի մէջ անիմաստ շարժւող ձեռների ու գլուխների պատահական հարւածներից։

Մենք անցանք երկու շարք կեղտոտ ու մերկ սեղանների միջով, որոնց շուրջը նստած էին նաւաստիներ և երկաթուղու ծառայողներ։

Վերջապէս հասանք ընդարձակ պանդոկի համեմատաբար մի ապահով անկիւնը, ուր մեր կողերը ջարդւելու վտանգից ազատւեցին։ Այստեղ մի երկայն սեղանի մօտ նստած էին տասնի չափ նաւաստիներ։ Սեղանը ծածկւած էր կեղտոտ ամաններով, հացի կտորներով, ուտելիքների ու ծխախոտի մնացորդներով, գարեջրի և օղու շիշերով ու բաժակներով։

—Ահա՛ ձեր արտիստը,—ասաւ Իցկօն, ցոյց տալով սեղանի ծայրը։

Այնտեղ նստած էր Լևոնը։ Նա կիթառ էր նւագում և զւարճացնում սեղանակիցներին։ Զընայելով իր չքաւորութեանը, ես մինչև այդ օրը նրան կեղտոտ չէի տեսել։ Գոնէ շապիկը միշտ անարատ էր, ձեռներն ու երեսը մաքուր, կօշիկները վաքսած, փայլուն։ Իսկ այժմ նա նմանւում էր մի գործարանական բանւորի։

Իմ երևալը նրան զարմացրեց։ Նա չընդհատեց նւագելը, բայց

չափազանց շփոթւեց, կարմրեց։ Նաւաստիները նրան լսում էին ուշադիր, թէև արդէն բոլորն էլ հարբած էին։ Իրանց հիացմունքը արտայայտում էին գոռում-գոչիւններով։ Երբեմն մէկը կամ միւսը վեր էր կենում, գրկում ու համբուրում նրան կամ մէջքին զարկելով արտասանում.

—Կեցցէ, Լեօւա, կեցցէ։

Զաուշենկօն մեզ հրաւիրեց նստել մի դատարկ սեղանի մօտ, ասելով թէ Լևոնին չի կարելի խանգարել, նաւաստիները կը կատաղեն։ Մի շիշ գարեջրի պատրւակով կարելի էր նստել, և մենք նստեցինք։ Լևոնը շարունակ մեզ էր նայում ու ժպտում։ Այդ տասն օրւայ ընթացքում նա աւելի նիհարել էր ու թորշոմել։ Առաջին անգամ այդ օրը նրա բերանի անկիւններում նկատեցի թեթև խորշեր։

գ.

Սեղանի մօտից վերկացաւ լայն թիկունքով ու մեծ միրուքով մի նաւաստի և օրօրւելով մօտեցաւ Լևոնին։ Ձեռը դնելով պատանու նիհարիկ ուսի վրա, գոչեց.

—Էյ, ճպուռ, նւագելո՞ւ ես ինձ համար՝ «Ո՜հ, իմ վիշտ», թէ չէ. ես ուզում եմ՝ «Ո՜հ իմ վիշտ»-ը լսել։

—Տեղդ նստիր, էյ, Սիբիրի ռեխ,—գոչեցին ընկերները,— մի՛ խանգարիր Լեօւային։

—Չեմ նստի, մինչև որ չը լսեմ՝ «Ո՜հ, իմ վիշտ»ը։ «Ո՜հ, իմ վիշտ»։ Լեօւա, «Ո՜հ, իմ վիշտ»։

—Ցիմարի գլուխ,—նկատեց մէկը,—Լեօւան հէնց «Ո՜հ, իմ վիշտ»ն է նւագում։ Չե՞ս լսում, անո՜ւս…

—Լեօւա, սուտ չի՞ ասում։

Լևոնը գլխով հաստատեց, թէ նւագածը հէնց «Ո՜հ, իմ վիշտ»ն է։

—Սատանան տանի,—գոռաց Սիբիրի ռեխը,—ի՜նչ լաւ էիր նւագում։ Լսեցինք, լսեցինք, հիմա նւագիր «Դունայի գեղեցկուհին»։ Լեօւա, Լեօւա, «Դունայի գեղեցկուհի»։

—Ա՛յ քեզ «Դունայի գեղեցկուհի»,—ասաւ մի յաղթանդամ նաւաստի, և ետևից ձեռները գցելով Սիբիրի ռեխի կռների միջով, փորը դէմ տւեց մէջքին, բարձրացրեց ու բերեց, նստեցրեց իր տեղը։

—Է՛յ դու, Կալուգայի արջ, ի՞նչպէս ես համարձակւում,—ասաւ Սիբիրի ռեխը,—թաթերդ կը փշրեմ…

Եւ բռունցքն այնպիսի ուժով զարկեց սեղանին, որ շիշերն ու բաժակները միմեանց դիպչելով փշրւեցին։

Բարձրացաւ աղմուկ, վէճ, իրարանցում։ Օդի մէջ երևացին մի քանի սպառնալի բռունցքներ։ Գուցէ Սիբիրի ռեխը և Կալուգայի արջը միմեանց քիթ ու պռունգ ջարդէին, եթէ չը լինէր մի ալևոր նաւաստի, որին ընկերները «Քեռի» էին անւանում։ Նա մէջ մտաւ նրանց բաժանելու։ Օգնութեան հասաւ Լևոնը։ Նւագելը ընդհատեց և տեղից վեր կենալով, ասաւ.

—Պարոններ, թո՛յլ տւէք որ գնամ «Խերսոնցիների» մօտ։

«Խերսոնը» նաւի անունն էր. նաւաստիները կրում էին իրենց նաւի անունը։

Վէճն իսկոյն դադարեց. բոլորը շրջապատեցին երաժշտին։

—Լեօւա, աղաւնեակ, մի՛ անի. Լեօւա, հոգեակ, նւագի՛ր. ի՜նչպէս կարելի է,—խնդրեցին բոլորը։

—Նւագի՞մ… Ի՞նչպէս նւագեմ, պարոններ, քանի որ չէք լսում, կռւում էք անկիրթ բոսեակների պէս։ Մի՞թէ վայել է «Ռուսաց ընկերութեան» նաւաստիներին։

—Վայել չէ, ի հարկէ, վայել չէ,—գոչեց «Քեռին»։

—Դուք ինձ բերիք այստեղ, որ ձեր կռիւը տեսնեմ։ Դուք լաւ չէք գնահատում երաժշտութիւնը…

—Կը գնահատենք, կը գնահատենք, Լեօւա, յիմար չենք…

—Ի՞նչ է, փո՞ղ է ուզում այդ ճպուռը,—գոչեց Սիբիրի ռեխը և վարտիքի գրպանից հանելով արծաթէ դրամներով լի քսակը՝ գցեց Լևոնի գիրկը,—ա՛ռ, վերցրո՛ւ, խեղդւի՛ր…

—Մենք էլ կը տանք, մենք էլ կը տանք,—աղաղակեցին ամենքը, ձեռները տանելով իրենց գրպանները։

Լևոնը հանգիստ վերցրեց գիրկն ընկած քսակները և դնելով սեղանի վրա ասաւ.

—Ես իմ գնից մի կոպէկ էլ աւելի չեմ վերցնի։ Համարը 10 կոպէկ, ո՛չ աւելի, ո՛չ պակաս։ Դրէք ձեր գրպանները, նստեցէք. նւագում եմ…

—Բրա՛ւօ, Լեօւա, բրա՛ւօ,—գոչեց Զաուշենկօն ոգևորւած։

Երբ նւագը վերջացել էր, Սիբիրի ռեխը մի մեծ բաժակ օղի ձեռքում մօտեցաւ Լևոնին։

—Խմի՛ր, դու մինչև այսօր չես հաղորդւել… Թէ քրիստոնեայ ես, պիտի խմես…

—Լեօւա, Լեօւա, մի բաժակ մեր խաթրու,—խնդրեցին միւսները։

Լևոնը հրաժարւեց, ասելով թէ խմելուց յետոյ չի կարող նւագել։ «Քեռին» նրան պաշտպանեց։

Օրն արդէն մթնել էր: «Բեռլին» յայտնեց, թէ շոգենաւը վերադառնալու ժամանակ է: Խումբը վճարելով կերած-խմածի գինը, նաև Լևոնի վարձը, դուրս եկաւ աղմուկով, գոռում-գոչիւններով, միմեանց բոթելով ու հարուածելով:

Դ.

Երբ միւսները բաժանուեցին, ես մօտեցայ Լևոնին և հետաքրքրուեցի իմանալու՝ ինչո՞ւ Լևոնը փոխել էր իր արհեստը: Նա առաջ պրոգրամներ էր ծախում թատրոնի դռան առաջ, տոմսակ գնելու համար կասսայի առջև սպասում էր ժամերով սրա նրա փոխարէն. մի խօսքով ամբողջ ժամանակը թատրոնի շուրջն էր:

—Կարիքն է ստիպում, պարոն,—պատասխանեց նա հանդարտ:

—Բայց չէ՞ որ դու առաջ էլ կարիք ունէիր:

—Ես ուզում եմ մօրս ապահովել:

Նայեցի նրա աչքերի մէջ և հասկացայ, որ կեղծում է: Փողոցի լապտերի լոյսը մատնեց նրա այլայլուելը: Նա քայլերն արագացրեց:

—Ո՞ւր ես շտապում,—հարցրի ես:

—Թատրոն:

—Է՞լի թատրոն:

—Այո, պարոն:

Եւ երևի իմ հարց ու փորձից ազատուելու համար՝ շտապով հեռացաւ:

Մի քանի անգամ այցելեցի «Արքայական զբօսանաւը»: Լևոնին այնտեղ սիրում էին: Նաւաստիները խլում էին նրան միմեանց ձեռքից: Նա գիտէր նուագել մալառուսական եղանակներ ու պարեր: Անցնում էր մի խմբից միւսը, բոլորին զուարճացնում, հաւաքելով իր տասնական կոպէկները:

Ցաւալի էր ինձ համար, որ նա այցելում է այդ ստորին վայրերը: Բայց իրաւունք չէի համարում համոզելու նրան, որ թողնի: Ուրիշ ի՞նչ միջոց ունէր նա ապրելու, բացի այդ ողորմելի պարապմունքից:

Մի օր նա ասաց.

—Պարոն, երկու ամիս չը կայ, արդէն երեսուն ռուբլի եմ յետաձգել: Բայց մօրս չ'ասէք:

—Ինչո՞ւ:

—Որովհետև այդ փողերն ինձ հարկաւոր են...

—Իտալիա գնալու համար,—լրացրի ես նրա խօսքը,—երաժիշտ դառնալու:

—Այո, պարոն, իրաւ է, ես ուզում եմ գնալ Իտալիա,—պատասխանեց նա ու գլուխը կախեց:

Շիրվանզադէ

1. Ինչո՞ւ պատմողը չէր ուզում որ Լեւոնը այցելի «այդ ստորին վայրերը» եւ ինչո՞ւ է այդ վայրերը համարում «ստորին»:

ՆԻՒԹԵՐ. 1. Ո՞վ էր Լևոնը, ի՞նչով էր պարապում և ի՞նչի էր ձգտում:

2. Համեմատի՛ր Լևոնին Յովհաննէսի հետ («Ուսումի»):

3. Պատմի՛ր՝ թէ ինչպէս մի օր եկար նաւահանգիստ և նաւ նստեցիր. կամ ինչպէս եկար երկաթուղու կայարանը ու գնացք նստեցիր: Պատմածդ պիտի լինի իրական:

Արտիստ (եւրոպ.)—գեղարուեստական ճաշակ ու շնորհք ունեցող մարդ:

բուլվար (եւրոպ.)—քաղաքի մէջ ծառազարդ փողոց, ուր հասարակութիւնը յաճախ զբօսնում է:

հարմոնիկա (եւրոպ.)—ձեռքի նուագարան, փուքսաւոր:

բալալայկա (ռուս.)—ռուսական նուագարան, լայն սազի նման:

բուֆետ (եւրոպ.)—ճաշարաններում այն սեղանը կամ պահարանը, ուր դրուած են ուտելիքներն ու խմիչքները:

կիթառ (եւրոպ.)—լարաւոր նուագարան, որ նուագում են մատներով:

վաքսել—կօշիկները փայլեցնել վաքսով (**վախս** գերմ.—կօշկի ներկ):

բոսեակ (ռուս.)—բառացի՝ «ոտաբոբիկ ման եկող», առհասարակ՝ որոշ գործ չունեցող թափառաշրջիկ:

կասսա (եւրոպ.)—դրամարկղ, տոմսակ ծախելու տեղը:

պանդոկ—հիւրանոց, նաև՝ գինետուն (դուքան, տրակտիր):

աւան—մեծ գիւղ:

վխտալ—խռնուած շարժուելը:

թաւալուել—փռուել և գլորուել:

պահ—ժամանակի որոշ չափ, ինչպէս օրինակ **ժամն** է: **Առաջին պահ**—սկզբում:

մթնոլորտ—մի բանի ամեն կողմից շրջապատող օդը:

սուզուել—թաթախուել, իր մէջը ծծել:

պատրուակ—դիտմամբ հնարած առիթ, մահանա:

խոռոչ—փոս, փոսիկ:

մայթ—փողոցի եզրերին նեղ սալայատակ՝ ոտով անց ու դարձի համար:

բոռոմել—*թառամել։*

այլայլել—*յուզումից դեմքի փոփոխելը։*

---

1. *Տուր* պռունգ, հարբած, բոռոմել, այցելու, համար, այլայլել *բառերի հոմանիշները։*

2. *Որոշիր հետևյալ բառերի արմատները և բառերը բացատրիր.*—չափազանց, ուշադիր, սեղանակից, զբոսանք, գնահատել։

3. *Ի՞նչ ասել է՝* տոմսակ, ալեւոր, բռունցք, արատ *և* անարատ։

4. *Լրացրու հետևյալ զույգ բառերը և գործածիր նախադասությունների մեջ*—խեղճ ու կրակ, տուն ու...., գոռում..., խաղ ու...., ցան ու..., բան ու..., կրակ ու....։

---

59. ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

Այս կեղծանունով գրում է վիպասան Ալէքսանդր Մովսիսեանը, որ ծնուել է 1858 թուին Նախկին Շիրուան գաւառի Շամախի քաղաքում։ Հայրը, որ առաջ դերձակ էր, իսկ յետոյ վաճառական, իր տղային տուաւ բողոքականների ուսումնարանը, ապա մի երկու տարի թեմական դպրոցը և վերջը գաւառական դպրոցը, ուր և նա աւարտեց իր ուսումը։ 1872 թուի երկրաշարժից յետոյ ընտանիքի գործերը վատ գնացին, և հայրը ստիպուեց զբաղուել կրկին դերձակութեամբ։ Որդին պիտի գնար Բագու իրեն և իր ընտանիքը պահելու համար։ Նա գրագիր մտաւ նահանգական դատարանը, յետոյ հաշուապահ եղաւ նաւթարդիւնաբերական մի հիմնարկութեան մէջ և ապա գրապահ Մարդասիրական ընկերութեան գրադարանում։ Այդ ծանր հանգամանքների մէջ նա չէր դադարում իր ուսման պակասները լրացնելուց և շատ էր կարդում։ Սուր դիտողութիւն ունենալով՝ նա վաղ սկսեց նկարագրել իրեն շրջապատող կեանքը։ Առաջին վէպիկը՝ «Հրդեհ նավթագործարանում»-էր, որից յետոյ լոյս տեսաւ «Գործակատարի յիշատակարանը»։ Տեղափոխուելով Թիֆլիս և հայոց գրական շրջանների հետ աւելի շփուելով՝ Շիրվանզադէն սկսեց գրեթէ միմիայն գրականութեամբ պարապել։ Ունի բազմաթիւ փոքր ու մեծ վէպեր (Նամուս, Ցաւագարը, Արտիստը, Քաոս) և թատերական գրուածքներ (Պատւի համար), ուր պատկերացնում է խորին հարազատութեամբ քաղաքի, գլխաւորապէս գրամատէր մարդկանց կեանքը։

---

35. Գարուն

Ժպտուն են նորից անտառ ու ձորակ
և հեղեղները խօսուն, սառնորակ
ողջունում են ինձ զուարթ ծիծաղով։

Զուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ,
գարո՛ւն, ամեն տեղ նոր կեանք ես վառել,
իմ սրտում էլ ես թևերդ փռել։

Եւ ահա՛ տխուր իմ մենակ տնից
դուրս ելայ կրկին զուարթ ու ջահել,
և ես չեմ կարող իմ ճիչը պահել։

Ծաղկել ես սարում, անտառում, արտում,
բացել ես իմ դէմ ոսկեղէն հեռուն...
ողջո՛յն քեզ, արև՛, ողջոյն քեզ, գարո՛ւն։

Վահան Տէրեան

---

1. *Ինչո՞ւ գարնանը թվում է թե ամեն ինչ ժպտում է ու ծիծաղում։*

2. *Ի՞նչ է թվում ամառը, աշնանը, ձմեռը եւ ինչո՞ւ։*

---

36. Բարդու կատարին

Գիւղի եկեղեցու զանգերը հաւար էին հնչում։ Այրւում էր գեղամիջին մի ահագին դէզ։

Կժերն ու դոյլերը վերցրած՝ գիւղացիք վազում էին դէպի առուն։ Իսկ բոցերը արդէն բարձրանում ձգւում էին վեր, արդէն կըպչում էին դէզի մօտ կանգնած հաստաբուն բարդու ճիւղերին։

Բարդու կատարին, բնի միջից, շւարած երկարացրել էին իրենց բարակ վզերը փոքրիկ արագիլները ու եկեղեցու զանգերի ամեն մի զարկին ճչով էին պատասխանում։

Բոցը արագ մագլցում էր ճիւղից ճիւղ. ծխի ու կայծերի թանձր

շղարշը փաթաթւում էր վիթխարի ծառին և ծածկում բունը գիւղացիների աչքից. գոռում գոչումը խլացնում էր զանգերի ձայնը։

Յանկարծ հեռուից, բրնձի արտերի վրայից, լսւեցին սուր կռինչներ,—ու օդի մէջ սպիտակին տւին երկու թաշկինակներ, որ հետըզհետէ մեծացան։ Հայր ու մայր արագիլներն էին, որ թևերի ուժգին և լայն հարւածներով շտապ մօտ էին սաւառնում։

Արդէն բարդու մօտ էին։ Բայց ծխի մէջ բունը էլ չէր երևում։ Գլխակորոյս թռչում էին նրանք ծառի չորս կողմը յուսահատ աղաղակներով, և յանկարծ ուղիղ վեր ճախրեցին։ Հէնց այդ րոպէին քամին մի կողմ մղեց ծուխը բարդու կատարից և բունը բացւեց։

Արդէն այրւում էին տակի ճիւղերը։ Ձագերը կուչ էին եկել բնի խորքում. միայն մէկը երկար ոտների վրա մէջտեղը կանգնած, կտուցը վեր տնկած, թևերը թափահարում էր ու կանչում։ Այդ կանչին բարձրունքից պատասխանեց ականջ ծակող մի կռինչ, և երկու արագիլները գրեթէ միաժամանակ քարի պէս նետւեցին վայր ու թևերի հարւածներով սկսեցին ծուխն ու բոցը ցրւել։

Նորից ծուխը պատեց և՛ ծառը, և՛ բունը։ Կատարը խարոյկի պէս բոցավառւեց. ճիւղերի ճարճատիւնի հետ միախառնւեց փետուրների ճարճատիւնը։

Ե՛ւ դէզը, և՛ բարդին վառւում էին իբրև մի ամբողջական հսկայական մոմ։ Այդ մոմի բոցի ծայրին մի հրեղէն գունդի պէս փայլում էր արագիլների բունը։

Եկեղեցու զանգի պարանը յանկարծ կտրւեց... ղօղանջը լռեց։ Ածխացած բարդին փշրւեց ընկաւ վայր՝ հազարաւոր կայծեր արձակելով օդի մէջ։

Ստ. Լիսիցեան

Հաւար—օգնութիւն, օգնութեան աղաղակ։
շղարշ—բարակ և նուրբ քօղ։

---

1. Շւարել, շփոթւել... էլ ի՞նչ մերձիմաստ բառեր գիտես։
2. Ի՞նչ տարբերութիւն կայ թռչել, ճախրել, սաւառնել բառերի մէջ։
3. Գործածի՛ր նախադասութիւնների մէջ և իմաստը բացատրի՛ր։

ասեղի աչք, պահարանի աչք, գուլպայի աչք, խանութի աչք.

աչքդ լոյս, աչքը ծակ, աչքը կուշտ, աչքը բաց, աչքը դուրս, աչքիս վրա, աչքի փուշ, աչքի լոյս.

աչք ածել, աչք տալ, աչք ցնկել, աչք ունենալ, աչք գցել։

37. Կաքաւի ողբը

Կտուցը լիքը արին
կաքաւ նստել էն քարին,
ձէն է տալի, կըղկըղում,
գանգատ անում հաւքերին.
 ա՜յ, քուրիկնե՜ր,
 ա՜յ հաւքեր։

Բուն շինեցի էս սարում,
ձագ հանեցի աննըման.
իջաւ՝ խաղայ մարգերում,
եկան կալան ու տարան,
 ա՜յ քուրիկներ
 ա՜յ հաւքեր։

Էն կարկաչուն վըգիկը
սուր դանակով զարկեցին
էն կարմըրիկ կըտուցը
հուր կրակին ձըգեցին,
 ա՜յ քուրիկնե՜ր
 ա՜յ հաւքե՜ր։

Էն մանրաքայլ տոտերը
կըտրատեցին ծունկնիվար,
էն խատուտիկ փետուրը
որն արին ձոր, որը սար,
 ա՜յ քուրիկնե՜ր,
 այ հաւքե՜ր։

Էն, որ սարերն էր հասել,
քամին եկաւ գում արաւ,
էն, որ ձորերն էր անցել
հեղեղն եկաւ ու տարաւ,
 ա՜յ քուրիկնե՜ր,
 ա՜յ հաւքե՜ր։

Էլ ո՞նց անեմ, էլ ի՞նչ անեմ էս բընում։
հանգիստ չունեմ, դադար չունեմ էս բընում
Ձօրը մենակ՝ չեմ դիմանում էս բընում.
գիշերն անտակ՝ չի լուսանում էս բընում.
անցած օրերն եկել նորից էս բընում,
գէլ են դառել, ուտում են ինձ էս բընում։
Էլ չի մընում իմ սըրտիկը էս բընում,
ցաւով լիքը, լացով լիքը էս բընում։

Յովհ. Թումանեան

1. Համեմատի՛ր այս կաքաւի վարմունքը նախորդ յօդւածի արագիլների վարմունքի հետ։

Ձօրը—ամբողջ օրը։
գում անել—կորցնել, անհետ անել։

---

1. Ի՞նչու է ասւած՝ հուր կրակ, անտակ գիշեր։
2. Մանրաքայլ, յամրաքայլ—ուրիշ ի՞նչաքայլ։
3. Փաղաքշական ձևեր՝ արիւն—արուն, արին. ալիւր—...., աղբիւր—...., սիւն—...., ձիւն—...., մրջիւն—...., ճիւղ—...., գիւղ—...., իւղ...

38. Թարթար

ա.

Մռայլ է։ Առջևից օձի նման ոլորւում է մի հազիւ նշմարւող շաւիղ, որ տանում է անտառապատ լեռների կողքերով, իսկ վերևից՝ տարածւում է հսկայական ծառերի կանաչազարդ կամարը։ Արեգակի ճառագայթները չեն անցնում այդ կամարի սաղարթախիտ հիւսւածքից։ Ճիւղերը, ոստերը, տերևները սիրալիր կերպով գրկել են միմեանց։

Շաւիղը նեղ է։ Նա անթիւ ելևէջներ ունի։ Երբեմն բարձրանում է գագաթների վրա, երբեմն իջնում է մթին ձորերի և նեղ փապարների մէջ։ Սայլակի անիւները աշխարհի սկզբից մուտք չեն գործել այդ կուսական անտառների մէջ։ Մարդը միշտ սարսափել է իր համար ճանապարհ հարթելու այնտեղ։ Լեռնային գահավէժները սոսկալի են։ Ուղևորի ձին անգամ չէ յանդգնում ոտք կոխել նրանց վրա. մի սխալ քայլ, մի թեթև սայթաքում, և ահա նա գլորւեց դէպի անդունդը․․։ Ստիպւած ես գնալ ոտով։

Տիրում է լռութիւն։ Անտառի մէջ մի տերև անգամ չի շարժւում։ Միջօրէի տօթը բոլոր արարածներին հալածել է դէպի ծմակների խորքը, դէպի քարանձաւների մթութիւնը։ Թռչուններ անգամ չեն երևում։ Ամեն ինչ նիրհում է, ամեն ինչ հանգստանում է խորին ու խաղաղ բերկրութեան մէջ։

Ինչ որ մի բան խշխշում է։ Աչք ես ածում քո շուրջը։ Եւ ահա բեղմնաւոր շլորենու ճիւղերից քարշ է ընկած մի էակ։ Ծառերի խտութիւնը թոյլ չի տալիս պարզ նշմարել նրան։ Երևում է մի կարմիր շապիկ միայն, որ իջել էր մինչև մերկ սրունքները։ Նայում ես, այժմ նկատւում են կնոջ ծամերի երկայն հիւսեր, որ ծածանւում են ճիւղերի հետ։ Այդ ի՞նչ է, ո՞րտեղից յայտնւեց այդ անտառային փերին։ Ի՞նչ գործ ունի նա այդ վայրենի ամայութեան մէջ։

Դա մի շինական հայ աղջիկ է, որ հեռաւոր գիւղից եկել է անտառային պտուղներ քաղելու։ Նա քաղում է հասունացած կարմիր շլորները և խնամքով լցնում է զամբիւղի մէջ, որ քարշ է ընկած նրա թևից։ Նա մենակ չէ։ Փոքր ինչ հեռու, գլուխը առջևի թաթերի վրա դրած, պառկել է նրա մտերիմ ընկերը, մի ահագին շուն։ Փորձիր մօտենալ մենաւոր աղջկան, այդ գազանը կը պատառոտէ քեզ։

Աղջիկը ետ նայեց։ Զարմանալի արագութեամբ ցատկեց շլորենուց և մի ակնթարթում անյայտացաւ անտառի մթութեան մէջ։ Այլևս ինքը սատանան չի կարող գտնել նրան։ Նա չի վախենայ. նա երկիւղ չունի. նա ամեն տեղ կը գնայ։ Նա ծնւել է և սնւել այդ մամռապատ ծառերի հետ. նրա օրօրոցը եղել է այդ վայրենի ապառաժները։

բ.

Գնում ես, գնում ես, միևնոյն լռութեան, միևնոյն անշարժութեան միջով։ Յանկարծ նիրհող անտառի խորհրդաւոր հանգստութիւնը աղմկւում է և կարծես լսում ես մի խուլ, ստորերկրեայ որոտի ծանր դղրդոցը։ Որքան առաջ ես գնում, շրջապատող լեռները սկսում են այնքան աւելի որոտալ։

Նայում ես դէպի երկինքը. տեսնում ես նոյն մանիշակագոյն կապուտակութիւնը իր նուրբ ժպիտով, նոյն լուսաւոր արեգակը իր պայծառ ճառագայթներով։ Ամպի մի փոքրիկ պատառ անգամ չի երևում։

Բայց ո՞րտեղից է լսւում այդ խուլ, սարսափեցնող որոտի ձայնը։ Մտածում ես՝ անդունդի մէջ կատարւում է մի սոսկալի խռովութիւն. կատաղի տարրերը մարտնչում են միմեանց հետ։ Ժայռերը, ապառաժները մռնչում են։ Խաղաղ մթնոլորտը սկսում է երկիւղածութեամբ դողդողալ։ Եւ ուղևորին տիրում է մի սարսուռ։

—Դա Թարթար գետի ձայնն է լսւում,—հանգստացնում է քեզ առաջնորդը։

—Շո՞ւտ կը հասնենք։

—Այդ սարի միւս կողմն է։

Անցնում ես սարը, անցնում ես սարի միւս կողմը։ Քո առջև բացւում է մթին անդունդ։ Նայում ես, նայում ես անդունդի խորութեան մէջ, աչքերդ սևանում են, գլուխդ պտոյտ է գալիս, ոչինչ չես տեսնում։ Յետոյ երևում են ծառերի հաւասար կատարներ, որոնք կարծես մկրատով հարթւած լինեն։ Այդ ծառերը աստիճանաբար ցած են իջնում և լցնում են կանաչապատ ձորի ամբողջ խորութիւնը։ Ուրիշ ոչինչ չի երևում։

—Ահա Թարթարը,—ցոյց է տալիս առաջնորդը, ձեռքը մեկնելով դէպի ձորի խորքը։

Բայց Թարթարը չի երևում։ Նա կորել, անցել է ժայռերի ամրութիւնը. նա տաշել է միապաղաղ ապառաժների զանգւածը. նա

հազարաւոր քայլերով ցած է իջել դէպի երկրի սիրտը. Նա դարերով գործել է այստեղ, մինչև քարերի միջով բաց է արել իր համար մի նեղ և անձուկ ճանապարհ: Այդ ճանապարհի մէջ խեղդւած, ճնշւած, մի հսկայ վիշապի նման գալարւում է նա, պտոյտներ է գործում, որոտում է, մռնչում է, և կատաղի կերպով աղմուկ է հանում, զայրանում է, թէ ինչու չէ կարողանում աւելի լայնացնել իր ուղին: Իսկ վիթխարի լեռները երկու կողմից աւելի և աւելի սեղմում են նրան, և նա բարկացած՝ աւելի աղաղակ է բարձրացնում:

Այդ ճնշւած, նեղւած դրութեան մէջ էլ Թարթարը վեհ է: Բնութեան խստութիւնը չի կարողացել յուսահատեցնել նրան. Նա միշտ կռւել էր և շարունակում է կռւել իր հոսանքին արգելք դնող խոչընդոտների դէմ:

Երբեմն լեռնային գագաթից պոկւում է, ցած է գլորւում մի ահագին քարաժայռ: Նա կտրում է գետի ճանապարհը: Ջրերի ընթացքը կանգ է առնում: Այդ միջոցին կատաղած Թարթարը ուռչում է և հետզհետէ աճելով՝ հաւաքում է իր ուժերը: Մի գո՛րկ, գո՛րկ ևս... և ահա ահագին քարաժայռը, որ կտրել էր նրա հոսանքի առաջը, ետ մղւեց, կատաղի ալիքները մի թեթև տաշեղի նման տանում են նրան, տանում են, և զարկելով ափերի ապառաժներին՝ խորտակում են, փշրում են:

Եւ գետը դարձեալ ընդունում է իր բնական հոսանքը:

Րաֆֆի.

Նկարագրի՛ր ձեր գետն ու ձեր ձորը.

Թեղմնաւոր—*տռատ պտուղ բերող:*
մաշեմջել—*մաքառել, կռւել:*
միապաղաղ—*միատեսակ, միակտուր:*
գալարւել—*օղակ օղակ ոլորւել:*
խոչընդոտ—*արգելք:*

---

1. *Նաւիդ. էլ ի՞նչ տեսակ ճանապարհներ գիտես:*
2. *Ասա* ապառաժ *բառի հոմանիշները:*
3. *Հանի՛ր արմատները*—անտառապատ, սաղարթախիտ, զահավէժ, միջօրէ, քարանձաւ, յուսահատ:
4. *Ո՞րն է* ծմակ *բառի հականիշը:*

5. *Գործածի՛ր նախադասութիւնների մէջ և իմաստը բացատրի՛ր.*
աչքը մնալ, աչքը ճամփին լինել, աչքը ջուր կտրել, աչքը մի բանի վրա մնալ, աչքը վախենալ, աչքը կպչել, աչքը սեւանալ, աչքը խաղալ.
աչքը հանել, աչքը կոխել, աչքը մտնել, աչքը կապել, աչքը չորս պահել:
աչքի ընկնել, աչքին գալ, աչքին երեւալ.
աչքով աչք չունենալ, լաւ *(վատ)* աչքով նայել, աչքով անել, աչքով ընկնել, մէկ աչքով մտիկ տալ *(անել)*.
աչքից ընկնել, աչքից թողնել.

Ր Ա Ֆ Ֆ Ի

Րաֆֆին (Յակոբ Մելիք Յակոբեան) ծնւել է 1835 թ. Սալմաստի Փայաջուկ գիւղում (Պարսկաստան): Հայրը հարուստ վաճառական էր և բերաւ որդուն Թիֆլիս գիմնազիոն տալու: Հօր գործերի վատանալու պատճառով Յակոբը դուրս եկաւ գիմնազիոնի 5-րդ դասարանից և վերադարձաւ Պարսկաստան առևտրով զբաղւելու համար: Առևտրական գործերով ճանապարհորդեց Վան և Մուշ և իր տպաւորութիւնները գրեց Հիւսիսափայլ ամսագրում, որը Մոսկւայում էր հրատարակւում (խմբագիր էր Ստ. Նազարեանը, գլխաւոր աշխատակիցները՝ Սմբատ Շահազիզն ու Միքայէլ Նալբանդեանը): Այստեղ լոյս տեսաւ նրա Ձայն տուր, ով ծովա՛կ հայրենասէր ոտանաւորը:

Սնանկանալով՝ նա նորից եկաւ Թիֆլիս և գործակատար մտաւ մի գզրտավաճառի մօտ. սակայն հետզհետէ աւելի ու աւելի յափշտակւում էր գրական աշխատանքով, մօտեցաւ այն ժամանակւայ առաջադէմ շրջաններին, մանաւանդ Արծրունու Մշակի խմբագրութեանը և ինքնակրթութեամբ լրացնում էր իր ուսման պակասը: Նա առաջին վէպերը գլխաւորապէս Պարսկաստանի և Թիֆլիսի կեանքն էին նկարագրում (Փունջ երկհատոր ժողովածու), ապա նա սկսեց պատկերացնել տաճկահայերի թշւառութիւնները և ինքնապաշտպանութեան ու ազատագրութեան հրաւիրել: Այդ ազատասէր ոգով գրուած են նրա Խենթ, Ջալալէդդին, Դաւիթ բէգ, Կայծեր և Սամվէլ մեծ վէպերը, որ կարդացւում էին չը տեսնուած յափշտակութեամբ: Նրա այլ գրուածքներից նշանաւոր են՝ Ոսկի աքաղաղը, Խամսայի Մելիքութիւնները և Խաչագողի յիշատակարանը:

Վախճանւեց 1888 և մեծ շուքով թաղւեց Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը:

---

39. Ծաղիկների երգը

Մեծ գոլն ընկավ, ձընհալն ընկավ,
հողը շնչեց, զեփյուռն եկավ,
արևն ելավ վառ ճառագած,
հարցմունք արավ հողին հակված․

Արեւը․ —Սիրուն աղջիկ, ինչ ղրկեմ քեզ։
Աղջիկը․—Ես ծաղիկներ կուզեմ պէս-պէս։
Արեւը․ —Ա՛յ աղբյուրներ, ա՛յ գետակներ,
սառցի ներքև քընած էք դեռ․
դուրս եկէք, դո՛ւրս,
շուտ, դէպի լույս․
նոր աշխուժով
ու նոր ուժով
կարկաչեցէք
ու կանչեցէք
հողում քընած սիրուններին՝
ծաղիկներին ու ծիլերին։
Ջրերը․—Վո՛ւշ-վո՛ւշ, վո՛ւշ-վո՛ւշ,
էս ինչքան ուշ…
Աղջի՛, աղջի՛, ծիլ-ծաղիկներ,
քանի՞ քընէք, վեր կացէք, վե՛ր,
խնկածաղիկ,
ծընկածաղիկ,
յասմիկ, յափրուկ,
ամանկոտրուկ,
կոճղէզ, ճանդուկ,
քուրդ, ճարճատուկ,
խաշխաշ, ծըծուկ,
վարդ, երիցուկ,
ապրեմ-չապրեմ,
բուրեմ-մարեմ…։
Քանի՞ քընէք հողի միջին,
եկէք էստեղ, սարի լանջին,

տաւի ափին, հով ըստւերում,
ժայռի տակին, հովիտներում,
կանաչ խոտով,
անուշ հոտով,
ծիծաղեցէք
ու ծաղկեցէք։
Ծաղիկներ—Բարև, բարև, կարմիր արև,
ախ, ինչ լավ է դէպի վերև,
ազա՜տ, լո՜յս, տա՜ք,
կապո՜յտ, յըստակ…
Արեւը․ —Սիրո՞ւմ էք ինձ…
Ծաղիկներ․—Ա՜խ, էնպէս եմ սիրում, էնպէս,
էլ առանց քեզ չեմ ապրիլ ես…
—Ես քեզ հետ եմ ուր որ գընաս…
—Ես կը տըխրեմ՝ որ հեռանաս…
Արեւը․ —Ապա եթէ ձեզ համբուրե՞մ…
Ծաղիկներ․—Ես հաճոյքից կը կարմրեմ…
—Ես կը բուրեմ…
—Ես կը մարեմ…
Արեւը․—Ա՛յ անուշներ,
ա՛յ քընքուշներ,
ապրեմ-չապրեմ, բուրեմ-մարեմ․
բաժակներդ բացէք իմ դէմ,
հազար գունի, հազար ձևի,
պայծառ, ծաւի ու ծարաւի,
լըցնեմ շողով,
գոհար ցօղով,
ջերմ եթերով,
նուրբ թըրթիռով,
կեանքի հիւթով,
խունկի հոտով,
ա՛յ անուշներ,
ա՛յ քնքուշներ…
Աղջիկը․—Էս ինչ անթիւ ծաղիկներ կան․
ոսկի դեղին, կարմիր, դեղձան,

մոռ, ծիրանի, ճերմակ, պուտ-պուտ,
ալ, նարընջի, մաւի, կապուտ։
բացուել, լըցուել, ծաղկել են վառ,
ողջ ինձ համա՛ր, ողջ ինձ համար...

Յովհ. Թումանեան

ՆԻՒԹ. Պատմիր ամփոփ և հակիրճ բովանդակութիւնը առանց խօսակցական ձևի։

Գոլ—*ոչ տաք ոչ սառն, մեղմ տաքութիւն։*
Մեծ գոլ—*ձմեռուայ մէջ երկու գոլ է ընկնում. մինը յունուարին, որ կոչւում է* փոքր *գոլ, միւսը մարտին, որ կոչւում է* մեծ գոլ։
ծաւի—*բաց կապոյտ, մաւի։*
եթեր—*ամենանօսր օդ։*
դեղձան—*բաց դեղին։*
մոռ—*(թուրք.) կապուտակ։*
պուտ—*կակաչ. պուտ-պուտ—բծաւոր։*
ալ—*մուգ կարմիր։*
գոհար—*ազնիւ քար։*

---

1. *Ժողովրդական ձևեր.* լոյս—լուս, լիս. կապոյտ—..., գոյն—..., բոյն—..., ճկոյթ—...։
2. *Ի՞նչ ասել է՝* ճառագել, ճակւել, պես-պես, ծրճհալ։

---

39. Ուրւականները

ա.

Ես և ընկերուհիս կանգնած էինք սարի գագաթին։ Լաւ եղանակին մենք միշտ այցելում էինք այդ գագաթը. դա մեր օրուայ զբօսանքների վերջաբանն էր, որ կատարում էինք իրիկնադէմին։ Այնտեղ գնալիս մենք ամեն անգամ վերցնում էինք գիրք և ձեռագործ, բայց և ոչ մէկը մեզ երկար չէր զբաղեցնում։ Լեռան գագաթից վայրբացւում էր մեր առաջ բնութեան մի հմայիչ տեսարան, որ կենաբար կլանում էր մեզ և մենք ոչ միայն մոռանում էինք գիրքն ու ձեռագործը, այլև իրար։

Երկար լուռ նստած խորասուզւում էինք տեսարանի գեղեցկութեան և վեհութեան մէջ և անձնատուր լինում մեր մտածմունքներին։ Գեղեցիկ, սքանչելի պատկեր էր ներկայացնում ծովը, որ հորիզոնի մօտ կարծես ուռչելով միանում էր երկնքի հետ. անտառապատ լեռների մի քանի զուգահեռական շղթաներ իջնում էին դէպի ծովը՝ զանազան ձևի ու բարձրութեան հրւանդաններ կազմելով. մի ուրիշ բարձրաբերձ կապոյտ լեռնաշղթայ ձիւնապատ գեղեցիկ գագաթները ցցում էր երկինք. արևը հազարաւոր ստւերներ էր գցում ամեն մի սարին, ամեն մի ձորին և անտառների կանաչը դարձնում բազմատեսակ գոյների. վերջապէս ձգւում էր մի խոր ձոր, իր փոքրիկ գետակով, որ գնում էր պղտորելու կապոյտ ծովի ջինջ ջրերը։ Ծով, լեռներ, անտառներ, ձոր, երկինք, բայց ամեն օր մի նոր պատկեր, մի նոր տեսարան։

Խաղաղ է եղանակը, ամպամած չէ. քամի չը կայ, ծովը ներկայացնում է մի անսահման կապուտակ և կարծես մրցում է երկնակամարի հետ իր ընդարձակութեամբ և կապոյտ գոյնով։ Բարձրացաւ թեթև քամի, ծովը սկսեց յուզուել. ահա նրա երեսին լողում են անհամար ալիքներ, սպիտակ փրփրադէզ զագաթներով, որ մերթ երևում են, մերթ անհետանում։ Երկինքը ամպեց, ծովը, որ չի դադարում երկնքին նայելուց, և ուրախ է, երբ նա ժպտում է, և տըխուր, երբ նա լալիս է, ինքն էլ վայրկենաբար փոխում է իր գոյնը և երբեմն այնպէս է սևանում, որ կարծես ուզում է ասել՝ իմ վիշտը աւելի մեծ է, քան թէ քոնը, երկինք։

բ.

Բայց մեր սիրելի բլուրի գագաթին ես և ընկերուհիս մի անգամ տեսանք մի բան, որ մեզ շատ վախեցրեց և զարմանք պատճառեց։

Արևը մօտ էր մայր մտնելուն։ Մենք վեր էինք կացել և մեր քայլերը ուղղել էինք դէպի տուն։ Յանկարծ տեսնում ենք երկու ուրւական, հսկայական քայլերով անցնում են լեռների միջով։ Նրանց գլուխը երկնքումն էր, իսկ ոտները անտառի խորքում։ Մենք շտապեցինք, հսկաները աւելի ևս. նրանց շարժումները ահռելի էին։ Մենք կանգ առանք, նրանք նոյնպէս։

Նայում ենք՝ թէ հիմի ինչ է լինելու։ Յանկարծ հսկաները կամաց կամաց փոքրացան, ընկան մեր դէմը մի ամպի վրա և շուրջը կապեց մի կլոր ծիածան։ Այդ ժամանակ միայն մենք նկա-

տեցինք, որ ամպի վրայինը մեր սեփական ստուերներն էին։ Համոզուելու համար մի քանի շարժումներ արինք, և ամպի վրայի ստուերներն էլ նոյնը կրկնեցին։ Մենք բարձրացնում էինք մեր ձեռքը, նրանք էլ էին բարձրացնում. շարժում էինք մեր գլուխները, նրանք էլ իրանցն էին շարժում։

Այս բոլորը տևեց շատ կարճ. մառախուղը և այն մի կտոր ամպը, որ գտնւում էր արևի հակառակ կողմը, սկսեցին փոքր առ փոքր ցրուել, արևն էլ աւելի իջաւ, և խանգարուեց ճառագայթների, մեր և ամպի այն փոխադարձ դրութիւնը, որից յառաջացել էր այդ երևոյթը։



Ես և ընկերուհիս հիացել էինք այդ հազւագիւտ օդերևոյթից, որի մասին գաղափար անգամ չունէինք, շտապ վերադարձանք տուն ու պատմեցինք մեր տեսածը։ Բայց մեզ ոչ ոք չը հաւատաց, մինչև անգամ ծաղրեցին էլ։ Սակայն շուտով ես իմացայ, որ այդ օդերևոյթը վաղուց յայտնի է և կոչւում է «Բրոկենեան ուրւականներ», և կարդացի նրա մանրամասն նկարագրութիւնը։

Եւրոպայում այդ օդերևոյթը տեսնելու համար ճանապարհորդները յատկապէս բարձրանում են Հարց լեռնաշղթայի Բրոկեն գագաթը, որտեղ աւելի յաճախ է կրկնւում այդ երևոյթը, քան ուրիշ լեռնային տեղերում։

Բրոկենեան սարը իր այդ ուրւականների շնորհիւ հնում, քանի որ դեռ երևոյթը չէր բացատրուած, շատ վատ համբաւ ունէր. կարծում էին, որ այդտեղ է կախարդների, դևերի, ոգիների բնակատեղին։ Սակայն այժմ, իհարկէ, Բրոկենեան սարը այլևս խորհրդաւոր մի տեղ չէ և բազմաթիւ հետաքրքիր ճանապարհորդներ հանգստանում են հոյակապ և հրաշալի կահաւորուած հիւրանոցում, որ գտնւում է Բրոկենի վրա, ուր կայ նաև պոստ, հեռագիր և օդաբանական դիտարան։

Շուշանիկ Տէր-Նիկողոսեան

1. Ինչո՞ւ աղջիկները վախեցան. Ո՞րը վախը փոխեց հիացումի։

2. Ինչո՞ւ հնումը Բրոկենեան սարը երևակայում էին դևերի և ոգիների բնակատեղի։

ՆԻՒԹ. Ի՞նչպէս կը պատմէր այդ ուրւականների մասին մի տգէտ ականատես։

օդաբանութիւն—օդի երևոյթները ուսումնասիրող գիտութիւն։
բարձրաբերձ—շատ բարձր։

1. Ի՞նչին ենք ասում վերջաբան և առաջաբան (նախաբան), իրիկնադեմ և լուսադեմ։
2. Հազւագիւտ—հակառակը. հնում—հակառակը. պղտորել—հակառակը, կատակ—հակառակը.
3. Դիտարան—ո՞րն է արմատը. կազմիր ուրիշ բառեր նոյն արմատից։
4. Գտիր արմատները և բացատրիր—բնակատեղի, օդերևույթ, անձնատուր։

41. Այս գիշեր

Ինչքան ծիլ, կոկոն վարդ ծնուեցին այս գիշեր,
ինչքան վառ ծաղիկներ զարթնեցին այս գիշեր,
ինչքան թարմ կոճակներ բացուեցին այս գիշեր,
դուրս եկան շուշաններ, անուշներ, մեղուշներ...

Դ. Դեմիրճեան



42. Սևանայ լիճը

ա.

Սևանայ լիճը փռւած է առջևս։ Մութը նոր է ընկել։ Արևմտեան կողմը, հորիզոնի մօտ՝ երկնքի վրա դեռ ևս երևում են վերջալոյսի թոյլ, կարմրագոյն հետքերը։ Շուրջս մռայլ է և անշարժ. լիճը նըն-ջում է։ Ծովակը այս րոպէին ներկայացնում է մի ահագին անձևռա-գործ հայելի, որի մէջ անդրադարձել են մուգ կապոյտ երկինքն իր մի քանի հատիկ խոշոր աստղերով և բուսականութիւնից զուրկ մերկ բլուրներն ու ապառաժները։ Կղզին, հայ հոգևորականութեան այս հինաւուրց աքսորատեղին, իր խորհրդաւոր կերպարանքով դուրս է ցցւել ծովի յատակից և պառկել ջրի երեսին՝ իր ուսերի վրա պա-հելով հոյակապ վանքերը։ Ցամաքաբերդ հայ գիւղը՝ իր գետնափոր տնակներով և բրգաձև աթարների կոյտերով բազմած է ծովակի ա-փին և դիտում է կղզին։ Ամեն տեղ տիրում է անդորրութիւն. մի-այն երբեմն լսւում է գիւղի կողմից պառաւ շան անախորժ հաչոցը և երբեմն էլ հասնում է ականջիս զանգակների աններդաշնակ բութ ձայնը—երևի ուղտի կարաւան է գալիս։

Կանգնած եմ ծովափեայ բարձրաւանդակի վրա և անհամբերու-թեամբ սպասում եմ լուսնի ծագելուն...

բ.

Վերջալոյսի նշոյլն անգամ այլևս չը կայ։ Երկինքն ու երկիրն հետզհետէ խաւարում են, իսկ աստղերը բազմանում են ու պայծա-ռանում։ Նրանցից շատերը ժպտում են, շարժւում և փայլփլում, իսկ միւսները անշարժ համբերութեամբ աչքերը յառել են դէպի ցած, ժեղքերով լի երկրի վրա։

Զանգակների միալար, մելամաղձոտ ձայնը փոքր առ փոքր մօ-տենում է. լսւում նաև ուղտապանի երգի արևելեան զգայուն եղա-նակը—բայաթին։ Գիւղի տնակների մէջ, մէկը միւսի ետևից յայտ-նըւում են գիւղական անպաճոյճ ճրագները փոքրիկ պատուհաննե-րից։ Անա կղզու վրա էլ երևաց մի ճրագ. նա տատանւում է, հանգ-չում, նորից վառւում, պսպղում, նւաղում և վերջապէս բոլորովին չքանում։ Մի քիչ էլ՝ և ահա բլուրներից մէկի տափարակ գագաթի ետևը երկինքը փոքր ինչ շառագունում է։

Աչքս չեմ հեռացնում երկնքի այդ կողմից. ցոլքը փոքր առ փոքր ընդարձակւում է երկնակամարի վրա։

Բլուրի գագաթը այս միջոցին հրաբուղխ է թւում ինձ, նրա վրա կրակ է բոցավառւում, որ մեծանում է, աճում, և կրակի միջից սա-հում է լրիւ լուսինը։ Նա դէմքը ամբողջապէս դարձնում է դէպի երկիր և գիշերային ողջոյն ուղարկում աշխարհին։ Նայում է վեր՝ իր առջև լայն և արձակ ճանապարհ է տեսնում, նայում է ցած՝ հա-յելու մէջ իր պայծառ պատկերն է տեսնում։ Շարունակ բարձրանում է, սակայն նկատելով որ աշխարհիս չնչաւոր թէ անշունչ բոլոր էակ-ները իր կողմն են ուղղել իրենց հայեացքները, մօտենում է երկ-նային քօղին և պարկեշտ կոյսի նման ծածկում իր երեսը նրա տակ, բայց մի րոպէ անց, հետաքրքրութիւնից դրդւած, ետ է քաշում քօղի մի անկիւնը, նայում է ցած, դարձեալ տեսնում է հայելու մէջ իր երեսը և շտապով նորից մտնում քօղի տակ։

Գէորգ Բաշինջաղեան

Նկարագրի՛ր լուսնի ծագումը ձեր բնակած քաղաքում կամ գիւղում։

Անպաճոյճ—անզարդ, պարզ։
Նւաղ—թոյլ (լոյս), տկար. **Նւազել**—թուլանալ, պակասել, մարել գնալ։
Պարկեշտ—համեստ ու ամօթխած։

---

1. Մութը ընկաւ, մութը կոխեց։ Իսկ լո՞յսը։
2. Կրակը բորբոքւում է, բոցավառւում է. էլի ի՞նչ է լինում։
3. Ախոռատեղի. էլի ի՞նչ տեղի։
4. Ուղտապան, պարտիզպան։ Գտէք ուրիշ բառեր նոյն պան մասնիկով վերջացող։

43. Սևանայ ծովի ձկները

Թևին, պոչին անելով՝ դժվժում են միլիոնաւոր ձկներ Սևանայ ծովի խորքում։

Ամբողջ Երևանի և Գանձակ գաւառները լիանում են այդ լճակի համեղաճաշակ ձկներով, որոնց անուններից ես և դու, պատահական այցելու, մի քանիսը միայն գիտենք. օրինակ՝ իշխան, բախտակ, ջաղնջան, գեղարքունի, կողակ, բոջակ, իսկ տեղացի մանուկը մի շնչի տասներկուսը կը համարի։ Ժողովրդի ասելով՝ իւրաքանչիւր ամիս ծովափը հնումը մատակարարում էր մի տեսակ ձուկը։

Մէկ էլ տեսնում էիր, որ բիւր բիւրերով ու հազար հազարով միատեսակ ձուկը չու բռնեց ծովի խորքից և եկաւ մտաւ լիճը լցւող գետակները, վտակներն ու գետերը՝ ձկնկիթ ածելու, իրենց սերունդն աճեցնելու։ Գետի լայնութիւնը բաւական չէր լինում ձկների հրոսակները պարփակելու, շատերն ափերից ցամաքն էին ընկնում և անշնչանում։

Վճարս որն է, հրամմէ, դուրս տուր թիակով, ընտրի մէջերից լաւերն ու խոշորները, բեռներդ կապիր, մի քանի կոպէկը տուր այդտեղի գիւղացուն և բարձիր, ճանապարհ ընկիր, տա՛ր՝ ընտանիքիդ տարեկան պատրաստութիւնը տես, աղաջուր շինիր, ձկներդ աղիր։

Քո կամքն էր՝ ինչ ձուկն էիր ուզում աղել, որ ամսին գայիր, նոյն ամսի որսից կը տանէիր։ Կողակն ու իշխանը ամենից գործածական ձկներ են, առաջինն յատկապէս աղելու, երկրորդը և՛ աղելու և՛ թարմ ուտելու։

Ներկայումս խանգարուել է բնական կարգը. այժմ խեղճ ձկներին չեն թողնում գետի ջրին արժանանալու, գետումը ձկնկիթ ածելու։ Հիմա ձկնորսութիւնը կատարւում է գլխաւորապէս ուռականներով ծովի խորքերումը։ Այդ պատճառով Սևանայ ծովի ձուկը տասնապատիկ, հարիւրապատիկ թանգացած՝ հետզհետէ դժւարամատչելի է դառնում ժողովրդի չքաւոր դասակարգին։

Խեղճ ձկներ, տես՝ որքան թշնամիներ ունեն, տես՝ ինչպէս վախում են նրանք ծովափի երեսին խաղացող ու ջրի հետ ծածանւող երկարակտուց, թևաւոր լողնորդներից։

Ահա ոտքերն ու պոչը վեր բարձրացրեց ջրային մի թռչուն և սուզւեց ծովի տակը, ընկաւ մի ձկան ետևից, բռնեց, սեղմեց կտուցի մէջ, ելաւ ջրի երեսը, և թևերը թափ տալով՝ սլացաւ դէպի վեր, երկինք, թեքւեց դէպի ափ, կամ ծովից գլուխը սունկի նման հանած մի ժայռ և անողորմաբար ուժեղ կտուցով ջախջախեց խեղճ ջրաբնակի գլուխը և կերակուր արեց իր անկուշտ որկորին։ Անբախտ իշխանաձուկը շատ թափէ թափ եկաւ, գալար-մալար ոլորւեց, աշխատեց դուրս պրծնել իր ոխերիմ թշնամու ճանկից, բայց իզուր. Նրա օրերը հաշւած էին, նրա կեանքի թելը յաւիտեան կտրւեց, նա կար և չը կայ։

Պերճ Պռօշեան

Նիւթ. Նկարագրի՛ր թէ ինչպէս էիր դու ձուկ բռնում, գետակում կամ լճի մէջ։

Մատակարարել—հայթայթել, տալ։
ձկնկիթ—ձկան ձու, խաւիար։
հրոսակ—արշաւող խումբ։
պարփակել—բովանդակել, ամփոփել, մէջը տեղաւորել։
որկոր—բերանի մէջ կուլ տալու տեղը։
ոխերիմ—անհաշտ (թշնամի). ոխ—ջիգր։

Գործածի՛ր նախադասութիւնների մէջ և որոշի՛ր թէ ինչ ասել է.

երես ջրի, գրքի, վերմակի.
երես ջուր, երես պճակ.
մէկի երեսից. երես երեսի.
երեսը բաց, երեսը ճերմակ, երեսը սև, երեսը պատռած.
երեսի ջուր. երեսանց.
երես առնել, երես դարձնել, երես տալ, երես ունենալ, երես պահել։
երեսը վեր անել, երեսը վեր (վայր) առնել, երեսը պնդացնել, երեսը թթւացնել, երեսը կախել, երեսը պարզ անել.
երեսի վրա թողնել, մէկի երեսին նայել, երեսովը տալ, երեսից ընկնել։

44. Ալիքներ

Հէյ ջան ալիքներ, ես ձեզ մեռնեմ,
որ էտպէս շարքով ընկել էք ճամփայ,
ձեր էտ միաբան մրմունջին մեռնեմ,
որ հոգուս խորունկ ու գիլ ձէն կուտայ...

Հէյ ջան, հալալ է, որ դուք կուլ կուտաք
ձեր դէմ ցցուողին ու կը պարտըկէք.
կտրիճի նման միշտ կուրծք դէմ կու տաք
Թշնամու զարկին ու կը փշրտէք։

Արի՛ք մենք էսպէս՝ ալիքների պէս,
մեր ճամփան երթանք, իրար ձեռք բռնած.
արի՛ք մենք էսպէս՝ ալիքների պէս,
միշտ կտրիճ մնանք թշնամու դիմաց...

Շուշանիկ Կուրղինեան

Ալիքների ի՞նչն է սիրում երգչուհին եւ ինչո՞ւ։

Միաբան—միասին, համերաշխ, համաձայն։
հալալ—արժանի, արդար։
պարտկել—ծածկել, սղմեցնել, սքօղել. բովանդակել, պարունակել։

45. Ծովի վրա

ա.

Դէպի Աղթամար էինք գնում աշնանային մի զով գիշեր։

Վերջալոյսն էի դիտում Վանայ ծովի վրա։ Ջուրը լերդ կանաչ էր կտրել, կոհակները միմեանց հրելով հեռանում էին դէպի խորքերը և փրփուրի գծեր կազմում. հեռւում երևում էին եզերքների գիւղերը, ծառաստանները. մի այլ կողմ Աղթամար կղզու կէսն էր. հորիզոնի մի կողմի վրա Կտուց անապատը, իսկ միւսի՝ Առտէր կղզին, որ մի մեծ սև թռչունի նման երբեմն կարծես ընկղմում էր ջրի մէջ և երբեմն դուրս ցցում իր լերկ գագաթը։

Նաւավար Թորոսն այդ միջոցին նաւակի քիթը ցցել էր աւազի մէջ և մի քանի գիւղացիների օգնութեամբ նաւակն էր մտցնում ոչխարները։

Մինչ այդ արեգակը հետզհետէ ընկղմւում էր. ամպերը մեղմացնում էին իրենց բոցը, լոյսի շառաւիղը աղօտանում, ծովը թանաքի գոյն էր ստանում, կոհակները մեծանում էին ու միմեանց մղելով գալիս շառաչիւնով փւում էին ոտներիս տակ։ Եւ Առտէրը թաքնըւում էր խաւարի մէջ, Կտուցը անորոշ կերպարանք ստանում, եզերային ծառերն ու գիւղերը նմանում էին մռայլ ստւերների։



Մի ձայն սթափեցրեց ինձ։ Քահանան էր. ձեռին բռնել էր մի մեծ կապոց և գինու հողէ սափոր։

—Գնա՛նք, որդի,—ասաւ նա,—նաւ մտնենք։

Ու մտանք։ Պատրաստ էր։ Քահանան քղանցքը ծալելով՝ ոլորեց, գօտին խրեց ու գինին ցած դրաւ ոտների մօտ. յետոյ, երբ ես կայմին կռթնած նայում էի սև ջրերին, դարձաւ դէպի արևելք և կարդաց.

—Տէ՛ր, ուղղեա՛ մեզ զգնացս մեր...

Եւ այդ խուլ աղօթքը, խառնուելով կոհակների շառաչիւնին, նաւակի ծփումին ու Թորոսի՝ պարբերաբար նաւակից շերեփով ջուր դուրս թափելուն, մի խորհրդաւորութիւն էր սփռում շուրջը...

Բարձրում, գիւղի մէջ, տեղ-տեղ պլպլում էին ճրագներ. հեռուն անտառի ծայրերում՝ երեւում էին նախրորդների և ածխագործների կրակներ, իսկ անտառի ստորոտները ընկղմուել էին խաւարի մէջ։

Բ.

Վերջապէս շարժուեցինք։ Թորոսը դադարեց ջուր դուրս թափելուց, հրամայեց առագաստ պարզել և թռաւ ափը, որ նաւակը ջուրը մղէ։

Ծովի տարածութեան վրա հորիզոնից սկսում էր երեւալ լուսնի կէսը՝ արծաթազօծ կողերով հայելու նման, և աղօտ լոյսի մէջ ողողել դողդոջուն ջուրը։

—Սիրուն է, չէ՞, մեր ծովը,—ասաւ քահանան.—մարդ նայելուց չի կշտանում։ Բայց շատ էլ կատաղի է անիծածը։ Աստուած չանի, որ փոթորիկ բարձրանայ։

Յետոյ դարձաւ նաւավարին և գոչեց.

—Թորոս, փոթորիկ կունենա՞նք։

—Չէ, տէր-հայր։

Մէջքը դէմ էր տուել նաւակին։ Ուժ տուաւ, սահեցրեց դէպի ջուրը, ապա ցատկեց նրա մէջ և դարձաւ նաւաստիներին։

—Առագա՛ստը...—աղաղակեց նա։

Ու նաւակը շրջան գործեց, պատռեց ջուրը, արագութեամբ բարձրացրած առագաստը ուռաւ, նաւը ծուեց մի կողմի վրա ու առաջ սլացանք։

—Եմ Նարեկայ սուրբ ճգնարան.—ասաւ Թորոսը, քոլոզը հանեց, երեսը խաչակնքեց. յետոյ քոլոզը նորից դրեց և, որպէս թէ խօսքը կիսատ էր թողել, ասաւ քահանային.

—Չէ, տէր-հայր, Աստծու ողորմութիւնով փոթորիկ չենք ունենայ. իսկ ալեկոծութիւն՝ խօսք չունեմ, քիչ-միչ...

Նաւակը սլանում էր և ետևից պայծառ գիծ թողնում. երբեմն կողը այնքան ծռում էր, որ ձեռքս կոխում էի ջրի մէջ և թողնում էի, որ մատներիս ծայրերից կաթկթեն շողշողուն շիթեր։

Կղզիները անհետացել էին։ Խաւար խորքում ափն էր, Նեբրովդ ու Գրգուռ լեռների կոյտը. և հեռուում՝ Սիփանը իր ձիւնափայլ կատարով։ Փչում էր ծովային զով, գրեթէ ցուրտ քամի։

Քահանան ցրտից սկսել էր դողալ։ Մէկ-մէկու վրա գինու բաժակ էր դատարկում։

Ես նայելով հայրենի ծովակին՝ յիշեցի հայ բանաստեղծի երգը.

—Զա՛յն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես։

Ու երգեցի։ Ձայնս տարածւում էր ջրերի վրա դէպի հեռուները և կարծես դողդողում էր թարմ օդի բարձրերում։

Ծովի ալիքները մեծանում էին, նաւակը սկսում էր սաստիկ շարժուել։ Քիչ յետոյ քահանան պառկեց, իսկ ես մի տեսակ անշարժութեան մէջ, աչքս լուսնի շողերի տակ սրսրթացող կապոյտ ջրերին՝ խորասուզուեցի երազների մէջ...

Թորոսի ձայնը սթափեցրեց ինձ։

—Կը մրսես, վարժապե՛տ,—ասում էր նա.—քնիր, հիմա մեծ ալեկոծութիւն կը սկսի։

—Քունս չի տանում և ալեկոծութիւնը սիրում եմ։

—Ուրեմն այստեղ ինձ մօտ արի, որ ալեկոծութիւն տեսնես։ Նստելու տեղ կայ։ Ծածկոցդ վերցրու, որ մէջը փաթաթուես։

Վերցրի ծածկոցս ու Թորոսի կողքին տեղաւորուեցի։

Գ.

—Կատաղի ծով ունենք,—խօսեց Թորոսը.—անցեալ տարի հէնց այս կողմերումն էր, որ մի նաւակ ընկղմուեց և մօտ քառասուն հոգի խեղդեց։

—Քառասո՜ւն...

—Մէջն էլ մի քահանայ կար ու երկու կին։ Աղթամար ուխտ էին գնում խեղճերը... Տե՛ս, վարժապե՛տ, քիչ աջ նայիր. այդ ալիքները տեսնո՞ւմ ես.. մեծանալու-մեծանալու են և ծովը օրօրեն... Ընը՛, եկան... Զրվախենաս...

Հեռուից, իջնելով ու ելնելով, թանձր կանաչագոյն միքանի խոշոր ալիքներ, հաւաքուեցին ուրիշ շատերի հետ, մեծացան և յուզուած սրացան դէպի նաւը։ Մի ընդհանուր շարժումով՝ ջրերը նաւակի չորս կողմից ետ քաշուեցին, փոսացան, ապա նորից դիզացան եկող ալիքների հետ և երբ նաւակը շիւղի պէս նրանց կատարի վրա էր բարձրացել՝ պայթեցին նրա կողին ու ջրի լեղի անձրև տեղացին մեզ վրա։

—Այս առաջինն է...—ասաւ Թորոսը և ղեկը դարձրեց։

—Դեռ սա ի՞նչ է որ,—շարունակեց նա.—այնպէս սոսկալի սարեր են կազմում, այնպէս կատաղաբար, երկու աժդահաների նման միմեանց վրա գահավիժում ու թաւալում, որ Աստուած մի՛ արասցէ,

եթէ նաւակը մէջն ընկնի՝ փշուր-փշուր կլինի... Բայց փոթորիկ չենք ունենայ... Հրամանքդ առաջի՞ն անգամն ես մեր ծովի վրա...

—Առաջին անգամն է։

—Շնորհքը կը տեսնես մի քիչ։ Անցեալ օրն էր, որ տակովս աբաւ հինգ նաւակ, բոլորն էլ ցորեն և ոչխար բարձած։ Մի ամբողջ գիւղ թշւառացրեց. նրանց ունեցած-չունեցածը ջուրը թափեց...

—Այո,—շարունակեց Թորոսը.—ծո՛վը անգամ զուլում է անում մեզ։ Սրանից տասն օր առաջ հարկահանի ցորենաբարձ նաւակները ճանապարհ ընկան։ Մի զարմանալի բան էր։ Նախորդ օրը ծովը փոթորկից տրաքում էր, բայց յանկարծ հանդարտւեց։ Իմ նաւակը բերնէ-բերան լցրել էին... Ոստան իջանք. մի հատիկ իսկ չը կորուեց.

—Դիպւա՜ծ...—ասի ես։

—Դիպւա՜ծ...—գոչեց Թորոսը բարկութեամբ և աջ ձեռքի թիակը դէմ տւաւ.—դիպւա՜ծ... Ինչո՞ւ այդ դիպւածը կուրանում է, երբ մեր արդար քրտինքն է մէջտեղ գալիս, երբ մեր ցորենն է գնում, մեր ոչխարները...

Եւ յուզւած դարձրեց դեկի բռնատեղին ու նայեց լուսնին։

—Այս ալիքները տեսնո՞ւմ ես. հաւատացած եմ որ եթէ նաւակիս միջի ոչխարները վաշխառուինը չը լինէին և ինձ կամ մի գիւղացու պատկանէին, իսկոյն նաւակը շուռ կըգար, կըփշրւէր... բայց անիրաւ ապրանք է, և պիտի տեսնես, ողջ ողջ տեղ է հասնելու։ Ծխախոտ չունի՞ս, վարժապետ։

Շինեցի ու տւի։ Վառեց, բուռն շնչով միքանի անգամ ծխեց և վշտերով ակօսւած, խոժոռ դէմքը դէպի հորիզոնն ուղղած՝ լուսնի տխուր փայլի տակ մնաց լուռ և մտախոհ...

Ու նաւակը սլանում էր, ճեղքում սև ջրերը և ծփում մեծ ալիքների երեսին։

Վրթանէս Փափազեան

Թորոսը ինչո՞ւ է այդպէս կարծում.

Լերդ — թանձրացրած արիւն. թանձր, մուգ։
Բղանցք — փէշ։
Շառաւիղ — ճիւղ, կենդրոնից դէպի շրջանի եզրը քաշած գիծ։
Բոլոզ — թաղիքից շինւած, թասակի ձևով գդակ (քրդական)։
Ծիւղ — ծեղ, ճիւղի կտոր, տաշեղի կտոր։

Խոժոռ — անհելի, մռայլ (դէմք)։
Գահ — բարձր տեղ, թախտ, աթոռ։
Գահավիժել — բարձր տեղից վայր թափել, գլորել։

---

1. Հանի՛ր արմատներն ու բացատրի՛ր—արծաթազօծ, ալեկոծ, հարկահան, ցորենաբարձ, բռնատեղի, մտախոհ, ծխախոտ։
2. Աստւած մի արասցէ—ասա աշխարհաբառ։
3. Ածխագործ. ուրիշ ի՞նչ բառեր գիտես, որ վերջանում են գործ-ով և մարդու պարապմունքն են ցոյց տալ։
4. Փոթորիկը ալեկոծութիւնից ինչով է տարբերւում։
5. Դիպւած ուրիշ ինչպէս կասես։

ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ

Ծնւել է 1866 թւին Վանում. հայրը գրականութիւն սիրող քահանայ էր։ Սկզբնական ուսումը ստացաւ Ագուլիսում, ուր գաղթել էր հայրը ամբողջ ընտանիքով, այնուհետև շարունակեց սովորել Թաւրիզում և ապա Էջմիածնի Գէորգեան ճեմարանում։ Վերջը անցաւ Ժընև, որտեղ և աւարտեց համալսարանը։ Եղել է ուսուցիչ, նաև տեսուչ զանազան դպրոցներում թէ Կովկասում և թէ Ռուսահայաստանից դուրս, աշխատակից և երբեմն էլ խմբագրող զանազան թերթերի։ Գրել սկսեց դեռ պատանի հասակում։ Սկզբում նկարագրում էր տաճկահայերի ծանր վիճակը թիւրքերի, քուրդերի և այլ բռնաւորների հարստահարութիւններից։ Այսպէս կազմւեց նրա Պատկերներ Թիւրքահայերի կեանքից երկու հատոր ժողովածուն։ Յետոյ նիւթերը առնում էր ընդհանուր կեանքից, մանաւանդ նշանաւոր են բօշաների և պարսիկների կեանքը պատկերացնող (Խալթ-Սաբա, Սանթօ, Ազէրֆէզա) վէպերը։ Բազմաթիւ մեծ ու փոքր գրւածքներ է լոյս ընծայել թէ առանձին գրքերով և թէ ամսագրերում և թերթերում։ Բողոքող և մաքառող է ամեն անարդարութեան դէմ։ Իր մանկութեան մի քանի դէպքեր գեղեցիկ պատմել է Թղթէ նաւակից մինչև ծառը՝ հեղինակութեան մէջ («Հասկեր» 1905 թ.)



46. Փոթորիկ

Ծովը խառնըւած,
շանթ, հողմ ու կարկուտ.
երկինքը բըռնած
մէգ, մըռայլ ու մութ։

Մըռոված տարերք
իրար են եկել
երկինք ու եզերք
փակել, մթագնել։

Ծովի ահագին
խորքերն հիմն ի վեր,
աւազն ալիքին
խառնող գուք ուժեր,—

Ի՜նչ էք շըպըրտում
ցայտերն ամպերին,
ի՜նչ էք ըսպառնում
ձըկնորսի նաւին։

Կռւում տըրորւած,
դալկացած հէգին
մի տաք փըրփըրած
ջրի յորձանքին։

Կայծակի փայլով
թողէք խեղճ մարդուն,
թողէք ապահով
հասնի իրեն տուն։

Էնտեղ ձեռները
մեկնած երկինքին՝
մընում են փոքրերն
իրենց հայրիկին.

Կինն էնտեղ լալով
աղօթք է անում...
Ի՞նչ էք աղքատի
նաւին ըսպառնում։

Ո՛վ, հասի՛ր, շուտով,
Աստւած Բարերար,
յուզւած է ծովը,
երկինքը խաւար...

Թոմաս Հուդ. Թարգմ. Յովհ. Թումանեան

Նիւթ. Պատմի՛ր թէ ինչպէս ընտանիքը փոթորկի ժամանակ սպասում է ձկնորսի դարձին։

Շանթ — կայծակ։
տարերք — բնութեան գլխաւոր ուժերը կամ նիւթերը։
մրագնել — սեւնալ, խաւարել։
դալուկ — գունաթափ։
հէգ — խեղճ, թշւառ։
հիմն ի վեր — հիմքից, տակից։

---

1. Մնալ տանը, ո՞րտեղ ես մնում, մնում է յիսուն, աչքը վրան մնաց, մնալ ճայրիկին, ի՞նչ իմաստներ ունի այս դէպքերում մնալ բառը։

---

47. Անչառուս

ա.

Օգոստոսի շոգ օրերից մէկն էր։ Մայրս վերջին անգամ գրկեց ինձ, համբուրեց և ասաւ.

—Գնա՛ս բարով...

Հայրս չը համբուրեց ինձ։ Այդ լուրն և կամակոր մարդը երբէք իր հայրական սէրը չէր արտայայտում սովորական գուրգուրանքով։ Բայց նայելով նրա մռայլ դէմքին, ես զգացի, թէ ո՛րքան խորն է նրա վիշտը։ Կեանքի դաժանութիւնը ստիպել էր նրան բռնել իր միակ որդու ձեռքից և ձգել անյայտութեան ծովը։

Հօրս յանկարծակի սնանկութիւնը մեզ վերցրել էր թանկագին գործերի վրայից և շպրտել չոր տափի վրա։

Ես գնում էի Բագու, այդ արդիւնաբերական քաղաքը, ուր ձգտում էին ամենքը։ Ես գնում էի մի կտոր հաց ճարելու մօրս և քոյրերիս համար։

Ես ոչ մի զէնք չունէի կռւութեան կուի համար բացի իմ պատանի հասակից և պողպատ առողջութիւնից։ Մինչև այժմ իմ միակ

փափաքս եղել էր ուսումս շարունակելը, որը այլես ստիպուած էի թողնելու հօրս սնանկութեան պատճառով։

բ.

Նստեցի կառք։ Դա մալականի մի մեծ ֆուրգոն էր՝ ապրանքով լի մինչև կամարաձև ծածկոցը։ Բարձրացայ ահագին հակերի վրա և ինձ համար ընտրեցի մի յարմար անկիւն։



Բացի ինձնից կային երեք ճամփորդ. մի գինեվաճառ, որ գնում էր Բագու գինետուն բանալու, մի գէր ու գեղեցիկ կին տեղական հագուստով և սրա պատանի որդին։

Մալական կառապանը, իր տեղը յարմարեցնելով, բարձրացրեց երկայն մտրակը և սուլեց։ Նախ շարժւեց մէջտեղի ձին, ապա միւս երկուսը։ Կառքը ճռճռաց և յետոյ արձակեց մի այնպիսի դղրդիւն, որ կարծես մի մեծ տուն էր փլչում։

Մենք հեռացել էինք բաւական, բայց ծնողներս կանգնած էին դեռ միևնոյն տեղում։ Մայրս շարունակ հեկեկում էր։ Հայրս չուխայի լայն թևերի տակից երկինք բարձրացրեց իր երկայն ձեռները և խոկոյն էլ ձգեց կողքերին։

Արդեօք նա իմ ճանապարհն էր օրհնում թէ իր բախտն անիծում։ Ես շարունակ նայում էի դէպի ետ։ Կառքն իր ետևից բարձրացնում էր բարակ փոշի, որ ոսկեզօծւում էր մայր մտնող արևի դեղնագոյն ճառագայթներով։

գ.

Երբ հօրս բարձր փափախի սուր ծայրը չքացաւ այդ ոսկեզօծ փոշու մէջ, ինձ պաշարեց մի անասելի տխրութիւն։

Ես ձգեցի հրաժեշտի մի թախծալի հայեացք իմ ծննդավայրի

վրա։ Այնտեղ էի անցկացրել իմ անհոգ մանկութիւնը և վաղաժամ տւայտանքներով լի պատանեկութիւնը։

Հեռուից լսեց երեկոյեան զանգերի ձայնը։ Ինձ թւաց, որ այդ ձայնը գալիս է կապուտակ երկնքից, ինչպէս հրեշտակների համերգը։

Մերձակայ մզկիթի կիսակործան աշտարակից լսեց պարսիկ մոլլայի ազանը։ Նրա մթին ուրւագիծը նկարւել էր կապոյտ երկնքի վրա, ինչպէս մի վիթխարի թռչուն։ Ձեռներն ականջներին մօտեցրած՝ նա զիլ ձայնով հրաւիրում էր հաւատացեալներին՝ կատարելու երեկոյեան նամազը։

Լռեցին զանգերը, կամաց-կամաց խլացաւ մուէզինի ձայնը։ Արեգակը մայր մտաւ, լեռների ու դաշտերի վրայից հաւաքելով իր ոսկեգոյն շղարշը։

Կուչ գալով ֆուրգոնի մի խորշում, ես ճիգն արի արտասուքս զսպելու։

Բայց իզո՜ւր. շուտով իմ դառն հեծկլտանքը միացաւ անիւների խուլ դղրդիւնին և կառապանի սուր սուլոցներին։

Ա՜խ, զանգերի այդ վերջին ղօղանջիւնի, մուէզինի այդ վերջին կոչի, արեգակի այդ վերջին շողերի հետ կարծես իմ էութիւնից անջատւեց ինչ որ թանկագին կտոր, ընկաւ ապագայի անյայտութեան մէջ և մեռաւ։

Շիրվանզադէ

---

1. Հեղինակը ի՞նչ է ուզում ասել՝ «հայրը ձգեց իր որդուն անյայտութեան ծովը»։

2. Այս անջատումով տղան ի՞նչ թանկագին բաներից էր զրկւում։

ՆԻՒԹԵՐ. 1. Նկարագրէ՛ր այս տղայի վերադարձը մի քանի տարի անց արդիւնաբերական քաղաքից, ինչպէս որ ինքդ երևակայում ես։

2. Նկարագրէ՛ր քո կամ քո սիրելիներից մէկի անջատումը հայրենի տնից։

Անջատել—բաժանել։

սնանկ—հարստութիւնը կորցրած (մարդ), կոտր ընկած։

մալական—(ռուս.) ռուս աղանդաւոր, ռուսական ուղղափառ եկեղեցուց բաժանուածների մի տեսակը։

հակ—ապրանքի մեծ կապոց։
թախիծ—խոր ու անորոշ տխրութիւն։
տւայտանք—չարչարանք։
մոլլա—մահմեդական քահանայ։
ազան—աղօթք, որով մահմեդականները հրաւիրւում են մզկիթ։
մուէզին—մահմեդական կրօնաւոր։
ղօղանջ—զանգի ձայն, նաև ղողանջիւն։

1, Ասա մի բառով այս դարձւածքը՝ «վերցրել էր թանկագին գորգերի վրայից եւ շպրտել չոր տափի վրա»։

2. Ի՞նչ ասել է՝ «գոյութեան կռիւ»։

3. Որոշի՛ր արմատները և բացատրի՛ր—կամակոր, արդիւնաբերութիւն, գինեվաճառ, ոսկեզօծ, վաղաժամ, ժամերգ։

4. Դէմքը լինում է մռայլ, ուրախ. ուրի՞շ։

48. Հրաժեշտ

Մնա՛ս բարով, իմ հայրենիք,
իմ մանկութեան սուրբ օրրան,
քեզ պաշտել եմ ես վառ սրտով
ու կը պաշտեմ յաւիտեան։

Թէև բախտը խլում է ինձ
նւիրական քո գրկից,
բայց նա երբէք ջնջելու չէ
սուրբ անունդ իմ սրտից։

Ուր էլ լինեմ, ուր էլ մնամ,
թէկուզ և կիրթ ազգի մէջ,
սիրել եմ քեզ, և այդ սէրը
կ'ապրի անխախտ ու անշէջ։

Մնա՛ս բարով, իմ հայրենիք,
ինձ կեանք, արև պարգևող,
մնա՛ս բարով, վերջին անգամ
համբուրում եմ քո սուրբ հող...

Ալ. Ծատուրեան

1. Ի՞նչ ասել է թէկուզ։

2. Ի՞նչպէս կը լինի անխախտ, անշէջ եւ անկիրթ բառերի հակառակը։ Նոյն արմատներից նոր բառեր կազմի՛ր։

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Ծնուել է 1865 թուին Զաքաթալա քաղաքում։ Հայրը ձկնավաճառ էր։ Հօր մահից մնաց իր մօր հետ ծայրայեղ թշուառութեան մէջ։ Շուտով մայրն էլ մեռնում է։ Տղան հազիւ հազ աւարտեց քաղաքային դպրոցը և մեծ նեղութիւններով վերջապէս կարողացաւ մտնել Թիֆլիսի Արհեստաւորաց դպրոցը։ Նա եղել էր հեռագրական ցրիչ, մահուդեղէնի խանութում աշակերտ, հասարակ օրավարձով մշակ, զինւորական մարկիտանտի գործակատար, հին շորեր առնող ծախող, և այնուամենայնիւ չէր կորցրել ուսման սէրը։ Աւարտելով Արհեստաւորաց դպրոցը՝ նա մի պաշտօնից միւսը անցնելով, ընկաւ վերջապէս Մոսկւա, որտեղ և ծառայում է այժմ մի առևտրական տան մէջ։

Ծատուրեանը սկսեց գրել դեռ Արհեստաւորաց դպրոցի աշակերտ եղած ժամանակ։ Ունի բազմաթիւ ինքնուրոյն և թարգմանական ոտանաւորներ։ Իր բանաստեղծութիւնների մէջ երգում է պարզ և անպաճոյճ լեզւով զրկւածների և աշխատաւորների վշտերն ու ուրախութիւնները, հայրենիքի կարօտն ու իր հաւատը դէպի լաւագոյն ապագան։

49. Դէպի տուն

ա.

Արդէն բաւական ժամանակ էր, ինչ տարանտասը ձիերի էր սպասում Վորոնեժի նահանգի կայարաններից մէկում։ Ուղևորները, երկու հայ վաճառականներ, անցել էին ճամփորդների սենեակը, հանել խուրջինից իրենց պաշարը, ճաշել, ըրկի խողովակից մի քանի բաժակ գինի քաշել ու հանգիստ ձգւել տախտակէ մահճակալների վրա։ Հաւատացած էին որ տակաւին մի երկու ժամ պիտի սպասեն։ Նրանց հետ էր և մի 11—12 տարեկան նիհարիկ տղայ. Նա դուրս էր եկել պատշգամբ ու տաղտկութեամբ մի անկիւնից միւսը թափառում։ Կէսօրւայ այդ շոգ ժամին միայարկ կայարանը իր կից տնտեսներով մրափում էր շրջակայ ամայութեան մէջ։ Տղան մօտեցաւ ջրհորին, մի քանի անգամ ջրի մէջ իջեցրեց և քաշեց վեր ձողի ծայրից կախած դոյլը, տեղերից փախցրեց խոտի դէզի ու պատերի տակ նստոտած աքաղաղին ու հաւերին, ձայն տւաւ շներին, որոնք մեկ-

նել էին պոստային սայլակների և տարանտասի սուներում, ականջ դրաւ նոր վերադարձած ձիերի փռնչալուն ախոռատնում, և յետոյ կանգնեց ու տխուր նայեց շուրջը։

Ոչ մի ծառ, ոչ մի լեռ, նոյնիսկ ոչ մի բլուր—անծայր տափաստան։ Հեռւում սևին էր տալիս մի գիւղ բարձր աշխարակ-դէզերով, և տեղ-տեղ այդ միակերպ դաշտում, երբեմն ցրիւ, երբեմն խմբւած, կամացուկ շարժւում էին մուգ կէտեր—արածող ձիեր։ Պոստային ճամփի սպիտակ ժապաւէնով, դանդաղ և ծոյլ սողում էր սայլերի մի քարաւան։ Տղան իր հայեացքը դարձրեց դէպի հարաւ, որտեղից իրենք եկել էին, և այնտեղ ձիւնապատ հորիզոնի վրա նկատեց ամպի պէս մի բան։ Ամպ է արդեօք թէ՞ լեռների, հայրենի լեռների շղթան։ Այն սպիտակը արդեօք Կազբէկը չէ՞ կամ Էլբրուսը։ Գուցէ նրանց ետևից այն՝ իր ծննդավայրի ծուխն է օդի մէջ թանձրացած։ Եւ այնտեղ, իրենց տան պատշգամբում այժմ արդեօք մայրիկը չէ՞ կանգնած և չէ՞ նայում դէսը, դէպի այն կողմը, ուր հեռացել է իր աչքի լոյս Միշօն։

բ.

Եւ տղան զգաց յանկարծ իր այտերին, աչքերին, իր շրթունքներին մայրիկի ջերմ համբոյրները անջատման վայրկեանին, զգաց նրա զգեստի ու ամբողջ կերպարանքի դուրեկան բոյրը, նրա պինդ գրկախառնութիւնը։ Եւ թւում էր նրան թէ տեսնում է հօրը, որ կրկին ու կրկին պատւիրում է իր ուղեկից վաճառականներին ողջ առողջ հասցնեն տղային Մոսկւա Լազարեան ճեմարանը. տեսնում է տարանտասի շուրջը հաւաքւած իր ընկերներին և հետաքրքրութիւնով ու մասամբ էլ նախանձով լի նրանց հայեացքները... Ո՜հ, ինչպէս նայում էր նա՝ կառքի առջևի նստարանի վրայից դէպի ետ, դէպի իրենց տան դարպասը, որտեղից դեռ լսւում էին՝ «բարի ճանապարհ, բարի ճանապարհ», մինչև որ կառքը ծռեց ու մտաւ նեղ փողոցները։ Անիւները դղրդում էին խորդ ու բորդ սալայատակի վրա, ձիերը զգոյշ առաջ էին գնում ուղտերի, էշերի, ջորիների, սայլերի և թուլուխչիների միջից, օդը լի էր բաղկալների ու մանրավաճառների կանչերով, թարմ մրգերի ու արևելեան համեմունքների հոտերով։

Միշօն յիշում էր ամեն մանրամասնութիւն և այն, ինչպէս կառքը դուրս եկաւ քաղաքի դռնից ու սլացաւ գերեզմանատների և դաշտերի միջով. նա աչքը չէր հեռացնում քաղաքի տներից ու եկե-

ղեցիների գմբեթներից, և հրաժեշտ էր տալիս Կուր գետի ալիքներին, որոնց մօտից անցնում էր խճուղին։ Տարանտասը վազում էր հովտից հովիտ, լեռից լեռ, իջնում, ելնում, կանգնում կայարաններում, երբեմն ժամերով, և նորից առաջ վազում։ Բարձրացաւ Կովկասեան շղթան, իջաւ Դարիալի կիրճը... Ի՜նչ գեղեցիկ էին այդ կանաչ բլուրները, անտառապատ լեռները, ապառաժոտ ժայռերը, ի՜նչ ազատ էր թռչում քարէց քար գիժ Թերեկը՝ կառքի հետ մրցումի բռնւած. ի՜նչ խորհրդաւոր էին այս ու այն տեղ հսկող հինաւուրց աշտարակները, ի՜նչ գրաւիչ էին սարերի բարձր լանջերին ծիծեռնակի բների պէս կպած գիւղերը... Իսկ այժմ ո՞ւր է այդ ամենը։ Շուրջը անեզր տափաստան, միապաղաղ, անգոյն։

Տղան նայեց դէպի հարաւ. ամպը չըկար արդէն. ձգւել, անհետացել էր, և հորիզոնի այն կողմն էլ նոյնպէս հարթ ու հաւասար էր, որպէս և ամեն տեղ չորս-բոլորը։ Միշօն մէկ անգամից զգաց իրեն որբացած, ամենից զրկւած։ Կարօտն և անձկութիւնը համակեցին նրան ամբողջովին... Ո՛չ, դէպի տուն, ետ դէպի տուն, կանչում էր արագ բաբախող սիրտը։

գ.

Միշօն շօշափեց իր զգեստի աստառի մէջ մօր ձեռքով կարած մանր սպիտակ դրամները. քսան ռուբլի էր, կարելի էր դրանով տուն հասնել։

Եւ իրեն յատուկ եռանդով ու վճռականութեամբ նա իսկոյն մըտաւ ճամփորդների սենեակը, զգոյշ վերցրեց իր վերարկուն ու ախոռատան ետևով ճամփայ ընկաւ։ Գնում էր շտապով, գրեթէ վազելով... Գնում էր մի ժամ, երկու ժամ։ Նրա առջև երբեմն բարձրանում էր սատանի քամին և պտտւելով յանկարծ ճամփից սահում դաշտ։ Տղան շարունակ ետ էր նայում... Հաւատացած էր որ իր ուղեկիցները դեռ քնած են, և յոյս ունէր որ կը պատահի մի կառքի, որ իրեն արագ կը հասցնի առաջիկայ կայարանը։ Ահա ամբողջ թափով սլանում է մի կառք՝ ահագին փոշի բարձրացնելով։ Արագ մօտենում էր։ Տղան իսկոյն ճանաչեց իրենց տարանտասը և սկսեց փախչել, ինչքան ուժ ունէր։ Չափ գցած ձիերը յանկարծ կանգնեցին նրա կողքին, իր ուղեկիցները դուրս ցատկեցին կառքից ու առաջը կտրեցին.

—Ո՞ւր, Միշօ ջան, ո՞ւր։

—Դէպի տուն, Թիֆլիս. չեմ ուզում Մոսկւա, չեմ ուզում Լազարեան ճեմարան:

Գրեթէ մի կէս դար էր անցել այդ օրից: Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու բակում տեղի էր ունենում մի հանդիսաւոր յուղարկաւորութիւն: Սգաւոր քաղաքը վերջին ճանապարհն էր դնում իր պարծանք քաղաքացուն. ռուսաց զօրաբանակը վերջին պատիւներն էր տալիս իր յաղթական հրամանատարին, որի առաջնորդութեամբ առել էր Արդահանն ու Կարսը. բոլոր պաշտօնեաները վերջին հրաժեշտն էին տալիս Ռուսաստանի մեծագոյն վարչապետին:

Եւ թնդանօթների դղրդիւնով, հրացանների պայթիւններով, շարականների ձայներով՝ հայրենի հողը յաւիտեան իր գիրկն էր ընդունում իր Միշօին, կոմս Միքայէլ Լոռու Մելիքեանին:

Ստ. Լիսիցեան

Արդեօք վաճառականները թոյլ տւին տղային տուն վերադառնալ:

Տարանտաս—(ռուս.) համփորդական կառք, սովորաբար եռաձի և ծածկով:
տաղտկութիւն—ձանձրոյթ:
բաղկալ—(թուրք.) կանաչի և թարմ միրգ ծախող:
թուլուխչի—(թուրք.)—թուլուխով, կաշւէ տիկերով ջուր ծախող:
հինաւուրց—հին օրերի:
համակել—ամբողջովին պատել կամ լցնել:
սատանի քամի—սիւնի պէս բարձրացող և պտտւող քամի:
յուղարկաւորութիւն—թաղման տանելու հանդէսը:
վարչապետ—կառավարիչների գլուխ:
կոմս—բարձր ազնւականի, գրեթէ իշխանականի չափ տիտղոս (պատւաւոր կոչում):

---

1. Ի՞նչ տարբերութիւն կայ դէպ. դէպը և դէպի, նոյնպէս վազել և փախչել բառերի մէջ:

2. Ծուռ ու մուռ, բան-ման, հաց-մաց... ի՞նչ այսպիսի գործածական զոյգ բառեր գիտես, ուր երկրորդ բառը սկսւում է մ-ով:

3. Աստառ մանուածքի կամ զգեստի. հակառակ կողմը ի՞նչպէս է ասւում:

4. Ձին չափ գցել, երգի չափը տալ, կօշկի չափը առնել, իր չափը ճանաչել.—այս ասոյթների մէջ չափ բառը ի՞նչ իմաստներ ունի:

5. Ուղեւոր, ուղեկից, ուղեկալ. էլի ի՞նչ բառեր կարող ես կազմել ուղի բառից:

50. Ես իմ աշխարհի գարունն կուզեմ

Ես իմ աշխարհի
գարունը կ՚ուզեմ
զւարթ ու վսեմ.
գետակը փրփուր,
հաւքերը կայտառ,
ծաղիկը պայծառ:

Էս օտար երկրի
գարունն է մռայլ,
ծաղիկը անփայլ,
արեւը կրակ,
գետակը տխուր,
թռչունները լուռ:

Մեր սիրուն ձորի
զեփիւռն է քնքուշ,
արեւը անուշ...
Ա՜խ, իմ աշխարհի
գարնանն եմ կարօտ,
անուշ ու հոտոտ...

Հ. Հայրապետեան

Էտ միւս աշխարհի մարդը եթէ գար սրա աշխարհը, ի՞նչ պէտի ասէր սրա աշխարհի համար:

---

51. Մեծ նանը

ա.

Ընտանիքի մայրը քանի դեռ ամուսինը կենդանի է, երկրորդական դեր է խաղում, իսկ նրա մահից յետոյ՝ անմիջապէս միահեծան տէր է դառնում, առնում իր ձեռքն ամբողջ գերդաստանի սանձը և վայելում է ընդհանուր յարգանք, մանաւանդ եթէ առոյգ է ու կայտառ: Այդ օրւանից առանց նանի տնօրէնութեան և խորհրդի ոչինչ չի կատարւում: Ոչ միայն կանայք, ոչ միայն տան փոքրիկները, այլև չափահաս որդիքը առանց նանի ոչինչ գործ չեն բռնի: Մի յարկի տակ ժողոված անբաժան եղբայրները ամեն երեկոյ հաշիւ պէտք է տան մօրը իրենց բոլոր կատարած գործերի համար. բաժանւած որդիքն էլ պէտք հաղորդեն նրան իւրեանց անելիքը և լսեն նրա տւած բարի խորհուրդները:

—Գնամ նանիս հարցնեմ, օրհնի՛ էս իմ նոր գործը, որ Աստւած աջողի:

Եթէ որդիքը բաժանւած են՝ նանն ապրում է նրանցից մէկի մօտ, որը աւելի աւելի կարօտութիւն ունի իր հսկողութեանը, որի

երեխաները մանր են կամ կինը աւելի պատանի ու անփորձ։ Բայց և այնպէս բոլոր որդիների տները իր տունն է համարում. ժամանակ անժամանակ մտնում է, կարգադրում, բարեկամներին հիւրասիրում, կերակուրները եփում ու առանց իր հարսին հարցնելու՝ բաժիններ ուղարկում իր մէկէլ որդիներին կամ ամուսնացած աղջիկներին ու մօտիկ չքաւոր հարևաններին։ Շատ լաւ գիտի այդ ինքնիշխան կինը, որ իր համեստ հարսին հաճելի չի լինում իր արարքը. բայց ո՞ւմ ինչ. հարսն ինչ կը յանդգնի տանտիկնութեան իրաւունք բանեցնել, քանի սկեսուրը գլխին պտըտւում է։ Այսօր նա մեծ նանն է. քանի որդի ունի՝ էնքան էլ տուն ու օջախ ունի, էնքան էլ շերեփ կայ ձեռքին։ Թող, ուրեմն, Աստուած մեր հարսի խելքն առնի, մի թթու երես ցոյց տայ, իր մրթմրթոցի ձայնը մի քիչ բարձրացնի, իր սկեսոր առաջ պղնձին, եղի պուլկին կամ փոշամանին մօտ գնայ ինքնագլուխ, տես թէ տաք տաք շերեփը, որ նանի ձեռքին պատրաստ է, հարսի ինչ տեղը կը դաղի։

բ.

Մեծ նանին միայն հարազատ որդիները չեն որ լսում են. երեք չորս հօրեղբօր որդիներ իրենց զաւակներով, թոռներով ու ծոռներով նայում են ժրաջան տանտիկնոջ ձեռքին։ Քառասուն, յիսուն, վաթսուն, մինչև ութսուն հոգի մի ընտանիք են կազմում և այդ փոքրիկ գիւղի վարողն ու կապողը մեծ նանն է։

—Լաց մի՛ լինի, բալա ջա՛ն, մեծ նանը քեզ էլ, ինձ էլ դուրս կանի, կերակուր չի տալ,—երեխայի լացը կտրել է ուզում հարսներից մէկը։

—Ա՛յ կնիկ, սուս արա՛, մենք աշխարհքի միջում խայտառակ կըլինենք, ինչ կասի մեծ նանը, որ լսի, թէ երկու տեքերակնանիքդ իրար օձիքից ձաւար էք հաւաքում,—խրատում է իր կնոջը նանի որդիներից մէկը։

—Ա՛յ հարս, քո երեխէն էս ինչի՞ է կեղտոտ, երեսն անլուայ, ինչ փնթի փալասն ես դու, վե՛ր կալ իտակի։ Թէ մին էլ տեսել եմ, էտ վարսդ կը պոկոտեմ,—բարկանում է մեծ նանը հարսներից մէկի վրա։

Այսպիսի մեծ նաները ոչ միայն իրենց ընտանեկան շրջանում, այլև դուրսը՝ գիւղի մէջ յարգ ու պատիւ ունեն, հարսանիքներում մահենիքներում միշտ կանանց սեղանի վերևի կողմն են բազմում։

Գիւղական մի ծանրակշիռ հարցի մէջ այսպիսի մեծ նաներից էլ խորհուրդ են հարցնում, մանաւանդ եթէ խնդիրը վերաբերում է ընտանեկան հարցերին։

Թէպէտ մեզանում կինը առհասարակ տղամարդուց չխօսկան է, բայց մեծ նանը երբ որ 50 տարին անցկացրեց, սպիտակ քնթկալի փոխանակ մի սև աղլուխ կապեց, որ այրիութեան նշանն է, նա այնուհետև չխօսկան կը մնայ միմիայն իր կնքաւորի մօտ. բացի քաւորից ամենքը նրա եղբայրներն ու որդիներն են։ Գիւղի միջովը անց կենալիս՝ երիտասարդ տղամարդիկը նրա առաջին ոտքի կը կանգնեն և համեստութեամբ կը պատասխանեն մեծ նանի բարևին ու պարկեշտօրէն կը ծիծաղեն մեծ նանի սրախօսութիւններին։

Իսկ ջահել կանայք ու աղջկերք տանն էլ, քուչումն էլ պարտական են մեծ նանի ձեռքը պաչելու, թէկուզ կուժն ուսին էլ լինի, ջահելը պէտք է մօտենայ մեծ նանին, գլուխ տայ ու այնպէս անց կենայ։

—Քո տէրն ապրի՛, քո ախպէրն ապրի՛, բարով քեզ նշանենք, բարով կարմիրդ կապենք.—անխնայ բաժանում է մեծ նանը իր օրհնութիւնը բոլոր իր ձեռքը պաչողներուն։

Պերճ Պռօշեանց

1. Ի՞նչի հետ կարելի է համեմատել մեծ նանի իշխանութիւնը։

2. Ի՞նչն է իրար հետ կապում ու միացնում ընտանիքի անդամներին։

ՆԻՒԹԵՐ. 1. Մեծ նանի դերը ընտանիքի մէջ.—քաղէ՛ր յօդուածից այն բոլոր կէտերը, որոնք նրա պաշտօնն են կազմում։

2. Պատմի՛ր քո նանի կեանքից մի դէպք կամ ինչ որ գիտես նրա մասին։

Միահեծան—միայնակ տիրող, միայնակ կառավարող։

գերդաստան—մեծ ընտանիք։

առոյգ—կայտառ, ժիր, աշխուժ։

տնօրէնութիւն—կարգադրութիւն, որոշում։

պուլիկ—կաւէ փոքր աման, սովորաբար մէկ ունկանի։

դաղել—այրել, խարել։

ձաւար—ջաղացում խոշոր աղած հաճար կամ սանդի մէջ ծեծած, թեփը հանած ցորեն։

իրար օձիքից ձեռք հանել—*իրար հետ կռվել:*
փնթի—*թափթփված ու կեղտոտ:*
վարս—*գլխի երկար մազ:*

---

1. *Ի՞նչ ասել է՝* բթու երես ցույց տալ:

2. Մարդ ու կին, հարս ու փեսայ, սկեսուր—սկեսրայր (*կեսուր—կեսրայր*), զոքանչ—աներ, տեգր—տալ, քենի—աներ ձագ (*աներորդի*):

Կինը ի՞նչ է ասում՝ իր ամուսնուն, ամուսնու հորը, ամուսնու մորը, ամուսնու եղբորը և ամուսնու քրոջը:

Մարդը ի՞նչ է ասում՝ իր կնոջը, կնոջ հորն ու մորը, կնոջ եղբորն ու քրոջը:

Մարդու բոլոր ազգականները ինչպե՞ս են անվանում նրա կնոջը:

Կնոջ բոլոր ազգականները ինչպե՞ս են անվանում նրա մարդուն:

Այդ երկու ընտանիքները ի՞նչ անուն են տալիս իրար:

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆ



Պերճ Պռոշյան (իսկական անունը Յովհաննէս Տէր Առաքելեան, ծնվել է 1837 թ. Աշտարակ գյուղում, Էջմիածնի մոտ) դերձակի որդի էր: Գրել-կարդալ սովորեց Մողնու ս. Գէորգ վանքի դպրոցում, իրենց գյուղի մոտ, և Ներսէս Ե. Աշտարակցի կաթողիկոսի հովանավորությամբ մտավ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը: Ապա գրեթե իր ամբողջ կյանքը պարապեց ուսուցչությամբ, նախ իր գյուղում, ապա Թիֆլիսում և Անդրկովկասի այլ և այլ տեղերում: Վերջերը ուսուցիչ էր Ներսիսեան դպրոցում: Վախճանվեց 1907 թվին և թաղված է Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը:

Կարդալով Աբովեանի «Վէրք Հայաստանի» վէպը՝ այնքան ոգևորվեց, որ իսկույն նստեց և գրեց իր առաջին վէպը իրենց գյուղի բարբառով: Այդ Սոս եւ Վարդիթեր վէպը տպվեց 1860 թ. «Կռունկ» ամսագրի մէջ: Այստեղ նա ճշգրիտ պատկերացնում է ամենայն մանրամասնություններով Աշտարակի սովորությունները, բարք ու վարքը: Այնուհետև լույս տեսած գրվածքներից նշանավոր են Կուածաղիկ և Հացի խնդիր վէպերը: Պռոշյանը գրեթե բացառապէս Աշտարակի նիստ ու կացն էր նկարագրում վիպական ձևով ամենայն հարազատությամբ. Նրա լեզուն գավառաբարբառի և գրական լեզվի խառնուրդ է:

---

52. Դաշտի զանգակ ծաղիկներ

Դաշտի շաղիկ-շողիկներ,
անգակ-զանգակ ծաղիկներ,
ինչ եք նայում ինձ վրա
մութ կապուտակ աչերով.
ձեր մտքումը էլ ի՞նչ կայ,
որ մայիսին, օրերով,
զմրուխտի պէս խոտերում
հա՛ զրնգում էք, զրնգում,
գլխիկներդ օրորում:

Դաշտի շաղիկ-շողիկներ,
անգակ-զանգակ ծաղիկներ,
անցնել կ'ուզեմ ձեր մոտով,
չը տրորեմ ձեզ ոտով,
բայց չեմ կարող, ինչ արած,
պահել իմ ձին փըրփըրած:
Կապուտակ ձիս բաց դաշտով
սլանում է ոնց գընդակ,
նա է, նա ձեզ տըրորում,
նա է տալիս ոտի տակ:

Թարգ. ռուս. Աթ. Խնկոյեան

1. Անգակ-զանգակ, արմանք-զարմանք, արթուն-զարթուն, արդ ու զարդ—զ-ն *ի՞նչ դեր է խաղում այստեղ:*

---

53. Տատիս ապին

ա.

Ես միշտ պատկառանքով էի նայում տատիս հսկայական թիկունքին ու առնական բազուկներին: Ցորենի չալը նա մեն-մենակ բարձրացնում էր մշակի մէջքին: Ես շատ էի սիրում իմ յաղթանդամ բարձրահասակ պառավ տատին: Գիշերները քնում էի իր հետ և նա ինձ հեքիաթներ էր պատմում:

Մի գիշեր, երբ փոխում էր շապիկը, նրա աջ կողքի վրա տեսայ մի մեծ սպի:

—Տատի, այդ ի՞նչ է կողքիդ վրա,—հարցրի ես հետաքրքիր ու խնդրեցի, որ պատմի ինձ, թէ ինչպէս և որտեղ է ստացել նա այդ ահագին վէրքը:

«Մի գիշեր ես ու հորաքույրդ մենակ էինք տանը. քնած էինք պատշգամբի վրա,—պատմեց տատս մի քիչ մտածելուց յետոյ մռայլ ձայնով:—Ամառ գիշեր էր, սենեակում տօթից շունչ քաշել չէր լինում: Շատ էի քնել թէ քիչ՝ չը գիտեմ, մէկել լսեցի, որ պարտէզին

նայող լուսամուտից ինչ որ մի ծանր բան դրմբաց պատշգամբի վրա։ Նստեցի անկողնիս մէջ։ Լռութիւն. ամէն ինչ հանդարտ էր։ Միայն հեռուից, շատ հեռուից, լսւում էր շան հաչոց։ Լուսին չը կար, բայց երկինքը պարզ էր, աստղերը պսպղում էին ադամանդի պէս։

«Նայեցի աջ ու ձախ, հօրաքոյրդ հանգիստ քնած էր։ Նորից պառկեցի և վերմակը քաշեցի գլխիս։ Նոր աչքերս խուփ էի արել, յանկարծ ոտներիս վրա զգացի մի ծանրութիւն և ցաւ։ Կարծես, մէկը ինձ կոխկռտելով անցաւ...»

—Տատ,—գոչեցի ես՝ ընդհատելով պառաւի խօսքը,—վախում եմ։

Տատս գրկեց ինձ, սեղմեց իր լայն կրծքին։

—Յիմար, ինչի՞ց ես վախենում.—ասաւ նա և գլուխս համբուրելով շարունակեց.

բ.

«Ես արագ ոտքի թռայ, գուալով՝ ով է։ Աստղերի լուսով պատշգամբի ծայրում նշմարեցի հինգ-վեց մութ կերպարանք։ Իսկոյն հասկացայ բանի էութիւնը։ Աւազակներ էին։ Իմ ձայնից հօրաքոյրդ զարթնել էր և նոյնպէս ոտքի կանգնել։ Սև կերպարանքներից երկուսը մօտեցան ինձ։ Կիսախաւարի մէջ նկատեցի, որ դաշոյններով զինուած էին։ Առանց երկար մտածելու վերցրի վերմակս և մի անկթարթում ձգեցի մօտեցողների գլխին։ Հօրաքոյրդ հետևեց իմ օրինակին։

—Անիծածնե՛ր, ես ձեզ շան պէս կը խեղդեմ,—գոչեցի թուրքերէն և երկուսին միասին գրկելով՝ բարձրացրի ու գցեցի լուսամուտով դէպի պարտէզ...»

Արտասանելով այս խօսքերը, տատս կանգ առաւ։ Երկիւղից և ուրախութիւնից սիրտս թրթռում էր բռնւած ծտի պէս։

«Օ՜, հօրաքոյրդ քաջ կին է,—շարունակեց պառաւը հիացմամբ։—Նա խսկ և խսկ իմ աղջիկն է։ Մէկին էլ նա շպրտեց դուրս։ Ես վերցրի բարձս և ձգեցի չորրորդի երեսին, որ մօտեցել էր դռներին։ Միւսները մօտեցան ինձ։ Բայց ես այլևս վախ չունէի։ Յարձակւեցի նրանց վրա, երկայն մինդարը վերցնելով։

—Օգնութիւն, օգնութիւն,—աղաղակում էր հօրաքոյրդ,—մեզ սպանում են։

«Սկսւեց անհաւասար կռիւ երկու անզէն կանանց և երեք աւազակների մէջ։ Օ՜, եթէ ձեռքիս մի դաշոյն լինէր, ոչ մէկին կենդանի չէի թողնի։

«Բակում լսւեցին ձայներ։ Մէկը հրացան արձակեց։ Մեր հարևաններն էին, եկել էին օգնելու։

«Յանկարծ կողքիս վրա զգացի մի տաքութիւն, ապա սաստիկ ցաւ։ Ձեռս տարի, զգացի թաց էր։ Ինձ վիրաւորել էին։ Արիւնը հոսում էր աղբիւրի պէս։ Ուշաթափ ընկայ։

«Բայց տունն և աղջկաս կեանքը ազատւած էին։ Աւազակները փախել էին, տանելով իրենց հետ ջարդւած ընկերներին։

—Ահա իմ վէրքի պատմութիւնը, Թռնիկս,—աւարտեց տատս։

—Հիմի հասկացա՞ր։ Դէ պառկիր ու քնիր»։

Բայց ես այնքան ազդւել էի, այնքան յուզւել, որ այդ գիշեր մինչև լոյս չը կարողացայ աչքերս փակել։

Շիրվանզադէ

Նանը ի՞նչով էր պատկառանք ազդում իր թոռանը այս պատմությունից առաջ և այս պատմությունից հետո։

Նիւթ. Պատմիր նոյն դէպքը գողերից մէկի բերանով, որի բերանով որ ուզում ես։

Սպի—*առողջացած վէրքի հետքը։*
առնական—*տղամարդուն յատուկ։ Արմատ* **առն** (**այր**—*գրաբար՝ տղամարդ*)։
ջուալ—*մեծ տոպրակ։*
յաղթ—*զօրեղ, ուժեղ։*
էութիւն—*ինչ լինելը։ Արմատը։ Ուրիշ ինչ բառ գիտես նոյն արմատից։*
մինդար (*թուրք.*)—*փոքրիկ, բարակ ներքնակ։*

---

1. *Ի՞նչ տարբերութիւն կայ* **կերպարանք** *և* **պատկեր** *բառերի մէջ։*

2. **Վազել-վազվզել, գոռալ-գոռգոռալ, չափել-չափչփել,**... *Կազմիր նման կրկնարմատ բայեր և հանիր արմատը կրկնելու նպատակը։*

3. *Որո՞նք են* **ակնթարթ** *բառի արմատները։ Այդ արմատներով կազմիր ուրիշ բառեր։*

4. *Ասա* **պսպղալ** *բառի հոմանիշները։*

5. *Դասաւորիր իրենց ուժի աստիճանով*—**տօթ, տապ, տաք, շոգ**։

54. Բրուտի շունը

Սոված գելը ոլո՜ր-մոլո՜ր
փորը վեց-վեց գիշեր բոլոր
չափչփում է գեղի բոլոր,
գեղի բոլոր, ոլո՜ր-մոլո՜ր։
Շներն յանկարծ որ իմացան,
ափ ու լափով իրար անցան,
հարայ տուին, հաւար գցին,
հաչ ու կանչով աշխարհ լցրին,
քաղցած գիլուն դուրս խռկեցին,
դուրս խռկեցին, հա՜ խռկեցին,
գեղից հեռու վռնդեցին...
Լեզուն հանած, հեքը կտրած,
վազ է տալիս գելը խրտնած,
վազ է տալիս սար ու ձորով,
սար ու ձորով, սոված փորով...
Վազ է տալիս ու երկիւղով
ետ է նայում աչքի տակով,
ետ է նայում ու ինչ տեսնում.
Շուն ու շնուոր չեն երեւում,
մեն-մենակ մի բրուտի Թազին,
վերջ չի տալիս իրա վազին,
շունչը կտրած հազ ու հեքից՝
պոկ չի գալիս իրա ետքից...
Ու գէլն յանկարծ ետ է դառնում
Թազու բկից ամուր բռնում.
«Դատըդ ինչ է, ա՜ շան լակոտ,
որ վազում ես էտպէս կրակոտ։
Էն Համբարենց հաւն եմ կերել,
Կիրակոսենց կովն եմ կերել,
Գարեգինենց գառն եմ լափել,
Շամիրամենց շանն եմ խաբել,
շանն եմ խաբել, գիւղից հանել,
գիւղից հանել, անուշ արել։
Ես քո տիրոջն ինչ եմ արել,
կաւ ու կճուճ հօ չեմ տարել,
որ դէմս էտպէս կրակ ես կտրել...»

Գիլու բերան, սոված բերան...
Թազուն արաւ երկու բերան...

Ջաւախեցի

Ի՞նչ է այս առակի միտքը, եւ ճի՞շտ է։

ՆԻՒԹ. Ինչպէս կը պատմէր բրուտի Թազին այս ամբողջ պատմութիւնը, եթէ գայլի բերանն ընկած չը լինէր և վերադառնար։

Թազի—որսի բարակ շուն։
խռկել—դուրս քշել, վանել, վռնդել։
շնուոր—շան հետ եղողը։

---

1. Ուրիշ ինչ ձեւով կարելի է ասել—**փորը վեց-վեց է անում, հարայ տալ, հաւար գցել, շունչը կամ հեւքը կտրել է, կրակ է կտրել**։
2. Ի՞նչ տարբերութիւն կայ,—**բկից բռնել** և **բուկը բռնել**, **ձեռքից բռնել** և **ձեռքը բռնել**—դարձուածքների մէջ։

---

55. Անտառի մանուկը

ա.

Բաղիր-Իրգենց խառնիճաղանչ քոչը բազմաթիւ չորքոտանիներով ահագին տարածութիւն էր բռնում. սարերի նեղլիկ ճամփաներում ձգւում էր մօտ կէս վերստ։ Այնքան հեռու էին ընթանում իրարից, որ հարայ տալով էին կանչում միմեանց։ Երբ իջնում էին հանգստանալու, այնքան տեղ էին բռնում, որ կասես մի գիւղ լինէին, ոչ թէ մի տուն, մի օջաղ մենակ։

Նալ-Թոքանի անտառի սուերներում Բաղիր-Իրգենք հանգստացան մի ամբողջ օր։ Շոգի պատճառով ճամփայ էին գնում աւելի գիշերները, որոնք պարզ էին, լուսնկայ։ Իրիկնապահին մօտ չուլ ու փալաս հաւաքեցին ու ճամփայ ընկան՝ շտապով, մէկը միւսին վռազեցնելով, խառնիխուռը, հարայհրոցով, երեխաների ճիչ ու լացով. մէկը շուտ, միւսը ուշ, մլուլով, քնից դեռ կարգին չը կշտացած։

Մի երկու օր էլ գնացին այդպէս խառնիխուռն քոչով ու վերջա-

պէս հազար ու մի դժուարութիւններով հասան սարերի խորքերում կորած իրենց եայլաղը։ Երեք-չորս օրում հազիւ կարգի բերին իրենց ու նոր միայն ուշքի եկան տեսան, որ երեխաներից մէկը չը կայ. այնքան էին խառնուած, շաղուած, այնչափ գլուխները կորցրած ու լոյսն ու մթինը աչքներից գցած, որ երեխայի բացակայութիւնը չէին նկատել այդքան ժամանակ։ Ո՞վ հնար ու ժամանակ ունէր մտիկ տալ՝ թէ երեխաներից որն է տեղը, ո՛րն է պակաս։

Բաղիր-Իրզենք հինգ եղբայր էին. ամէն մէկը տասը-տասներկու երեխայ ունէր։ Երբ հարցնող էր լինում, անուն-անուն մատներով համարում էին, համարում էին ու համարը չէին գտնում։

Իրար անցան, դէս ու դէն ընկան իսկոյն. քըքրեցին եայլաղի մօտակայ շրջակաները, տակն ու վրա արին սարերը, ձորերը, անտառներն ու գիւղերը, հարց ու փորձ արին ամէն մի հանդիպողի. երեխան չը կար ու չը կար։ Պարզ էր, որ մնացել էր ճանապարհին։ Մի փոքրիկ, երկու տարին հազիւ բոլորած աղջիկ էր կորած մանուկը, անունը Հիւրզաթ։ Բաղիր-Իրզայի «կըրտըպըրտանքն» էր, այսինքը ամենափոքրը նրա բազմաթիւ զաւակներից։ Երբ կորուստը պարզուեց, կանայք ու երեխաները, Հիւրզաթի մայր Սանամը մանաւանդ, աննկարագրելի լաց ու կոծ սկսեցին. վայեցին այնպէս, որ քիչ էր մը-

նում, թէ քարերն էլ նրանց հետ միասին լաց լինեն։ Ո՞վ էր իմանում՝ ո՛ր ձորումն է մնացել, ո՛ր անտառում կամ ո՛ր սարի լանջի, մեն-մենակ, անտէր-անտէրունչ, լաց է լինում, իր նանին կանչում. բայց նանը հեռու է, հեռու, նրան չի լսում…

Բ.

Փոքրիկ Հիւրզաթը կորել էր Նալ-Թոքանի անտառներում. գուցէ մի թիթեռնիկի ետևից ընկած՝ գնացել էր դէպի անտառի խորքը կամ հէնց այնպէս էր հեռացել քնած քոչուորներից։ Գնացել էր, գնացել ու պատահել մոռի թփերի. յափշտակուել էր նրանց մուգ կարմիր հասած համեղ պտուղներով, կերել, կերել մի կուշտ ու հէնց այնտեղ, խիտ թփերի մէջ, փափուկ մամուռի վրա մեկնուել քնել։

Նրան մոռի թփերի մէջ մուշ-մուշ քնած գտան հետևեալ օրը առաւօտեան մի քանի հայ տղերք, որոնք մոռ քաղելու էին գնացել Նալ-Թոքանի անտառները։ Զարմացան անչափ։ Դէս ու դէն նայեցին. ամայութիւն էր ամէն տեղ։ Տղերքն իսկոյն հասկացան, որ երեխան քոչուորներից է շեղուած ու մոռացուած այնտեղ. հասկացան նաև, որ թուրք երեխայ է, քանի որ հայ քոչուորներ այն վայրերով չեն անցնում երբէք։

Երեխան քնած էր այնքան քաղցր, որ տղերքն ափսոսացին արթնացնել։ Նստեցին մօտը ու սպասեցին այնչափ, որ երեխան ինքն իրեն արթնացաւ։ Զարմանալի բան է. նա չը վախեցաւ բոլորովին. բացեց աչքերը ու քուն ու քուն նայեց տղերանց. քիչ-քիչ ուշքի եկաւ ու անթարթ աչքերը բևեռեց նրանց վրա։ Տղերանցից մէկը կանֆետ ունէր. իսկոյն հանեց գրպանից մի ամբողջ բուռը ու մեկնեց երեխային։ Նա անվճռաբար վերցրեց մի հատ ու ժպտաց։ Այդ րոպէից տղերքն ու մանուկ Հիւրզաթը մտերմացան։ Տղերքը թղթահան էին անում կանֆետները ու մին-մին ուտեցնում։ Մեծ հաճոյքով էր ուտում Հիւրզաթը ու ժպտում. անկապ-անկանոն բառեր էր թոթովում թուրքերէն, երբ գտնողները աշխատում էին նրան խօսեցնել։ Ոչինչ չէր կարելի իմանալ նրանից, նոյն իսկ նրա անունը։

Տղերքը թողեցին մոռ քաղելը ու աղջկան խնամքով գրկած իջան գիւղը։

Նրանց գիւտը հետաքրքրութիւն պատճառեց ամբողջ գիւղին։ Այն տունը, ուր տարել էին երեխային, շուտով լցուեց մարդկանցով, մեծ մասամբ կանայք էին. գալիս էին հա գալիս տեսնելու գտած թուրք

երեխային։ Շատերը միրգ ու չամիչ էին բերում իրենց հետ։ Փոքրիկը բոլորին էլ ժպտում էր, մանաւանդ երբ տեսնում էր կանֆետն ու չամիչը, որոնցից շուտով մի մեծ կոյտ գոյացաւ նրա առաջին։ Բառեր էին թոթովել տալիս նրան ու հրճւում. ամենքը ցաւակցում էին նրա վիճակին։ Կանայք նայում էին, նայում ու ասում վշտացած.

—Է՜հ, հիմի դրա մէրը արիւն է լալիս ու տափերը պուկում դրա համար։

—Է՜, հիմի, ով է գիտում, սար ու ձորն ընկած վայ բալա կանչելով ման է գալիս դրան էն զամեռը։

—Նրա գլուխը հողեմ, նրա գլուխը. քոչը ճամփայ ընկնելիս էն խե՞ չի մի լաւ մտիկ տւել, տեսնի՝ երեխէն կա՞յ թէ չէ։

—Աղջի, ասիլ մի. էն գետատարին, ով է գիտում, ինչքան ցաւ ու ցեց է եղել ճամփին։ Քոչի հոգսը շատ է լինում. տեսած եմ. քոչ գնալիս ամենաաչքաբաց մարդն անգամ իրեն կորցնում է ու լոյսն ու մութը աչքից գցում։

գ.

Մանուկի համար իսկոյն տէր էլ գտնւեց. գիւղի ունեւորներից մէկն էր, Քիքունց Վարդան ամին։ Ինքն ու կինը լսելուն պէս եկան տեսան երեխին, հաւանեցին անչափ ու ասին հրճւանքով.

—Տղերք, ձեզ մատաղ. էտ ինչ լաւ զատ էք գտել. ապրէք, որ համ գտել էք, համ բերել։ Դէ էտ է, էտ երեխին Աստուած ինքն է մեզ համար ուղարկել. էսօր երեսուն տարի է մենք պսակւած ենք ու երեխից զուրկ։ Կը տանենք, կը պահենք. կը մեծացնենք ոնց մեր երեխին։ Հը՞, ինչ էք ասում, ա՛ ժողովուրդ,—դարձաւ Վարդան ամին հաւաքւած բազմութեանը, որի մէջ էին նաև գիւղի տանուտէրն ու քահանան։

—Ի՞նչ պէտք է ասենք, Վարդան ամի,—ասին բազմութեան միջից,—էտ երեխան շատ բախտաւոր է էլի. գտել են, բաւական չի. հիմի էլ քեզ պէս վարլու մարդի տուն է ընկնում։ Տէ՛ր, ինչ ենք ասում. դրուստ որ քեզ համար է ուղարկել Աստուած դրան։

—Բա որ հէրն ու մէրը լսեն ու գան տանելու, էն ժամանակ ինչ կասէք,—նկատեց մէկը։

—Ի՞նչ պիտի ասեմ,—խօսեց Վարդան ամին,—կը խնդրեմ, որ երեխին թողնեն ինձ մօտ։ Երբ ընդունեն ոչ, կը տամ իրենց. ինչ պիտի ասեմ որ...

—Լաւ. թէ՞ էտպէս լինի,—ասաւ նոյն հարցնողը։

—Է՜հ, ես ու մեր կնիկը էս երեխին ո՞նց պիտի պահենք, ո՞նց,—ասաւ Վարդան ամին, իր գիրկն առնելով աղջկան. հէրն ու մէրը որ գան տեսնեն սրա ապրուստը, տանիլ չեն, մեզ կը բախշեն, հաւատացած եմ։ Ա՛ տէր, սրա անունը ի՞նչ դնենք,—դարձաւ քահանային։

—Անունը կը դնենք Շողակաթ։ Էտ նշանակում է, որ երեխէն արևի շողերի հետ միասին երկնքից կաթել է քեզ համար,—ասաւ տէր հայրը ժպտալով։

—Փառաւորւես, ա՛ տէր, լաւ անուն դրիր,—ասաւ Վարդան ամին,—դէ իմ բախտից Աստուած էս երեխին ինձ բախշի։

—Ամէն, ամէն,—աղաղակեցին բազմութեան միջից։

—Աղջի,—դարձան Վարդան ամու կին Ոսկի աքօրը կանանցից մի քանիսը,—ա՛խր երեխէն թուրքի է. մի հանգի սազում չի, որ խակապէս քունը չինես։ Նրանում հայի արիւն չը կայ։ Ինչքան էլ չը լինի, խորթ աչքով ես մտիկ տալու։

—Ի՞նչ անենք թուրքի է. չէ որ Աստծու ստեղծած է։ Էտ ինձ հերիք է. հոգուս պէս կը պահեմ,—ասաւ Ոսկի աքիրը, առնելով աղջկան Վարդան ամու գրկից։

Մարդ ու կին անչափ երջանիկ էին իրենց անակնկալ գիւտով։

Ոսկի աքիրը նրան խնամքով գրկած տարաւ իրենց տուն, ճանապարհին անվերջ բարեմաղթութիւններ լսելով։ Վարդան ամին բազմութեան մէջ գտնւող հասակաւոր մարդկանց տարաւ իր տունը արաղ տալու. իսկ գիւտն արած տղերանց բաւականին դրամ բախշեց ասելով.

—Տղերք, շատ ապրէք, գնացէք մի լաւ քէֆ արէք։

դ.

Վարդան ամու ու Ոսկի աքօր երջանկութիւնը շատ կարճատև եղաւ սակայն։ Շողակաթ-Հիւրզաթին վիճակւած չէր նրանց աղջիկը դառնալ։ Դէպքից հազիւ մի տասը-տասներկու օր անցած մի օր վաղ առաւօտեան գիւղը թափւեցին մի խումբ թուրքեր՝ տղամարդիկ ու կանայք, մեծ մասամբ կանայք. տասնըհինգ հոգի կը լինէին։ Կանայք սգալով մտան գիւղը։ Տղամարդիկ հանգստացնում էին նրանց ասելով.

—Սուս եղէք. խայտառակիլ մեք մեզ էս գեղումը ձեր վայնասունով։ Էն է երեխէն որ էստեղ լինի, կը տան էլի, թագցնիլ չեն։ Սուս կացէք։

Բայց կանայք չէին լսում։ Մէկը վայում էր ամենից բարձրաձայն։ Նա խելագարի էր նման. տալիս էր ծնկներին, փետում մազերն աղաղակելով.

—Վա՜յ բալա՜, վա՜յ իմ կորած բալա՜, էտ ո՞րտեղ ես։

Պարզ էր, որ Հիւրգաթի եաևից էին եկել. դէս ու դէն ընկնելով իմացել էին վերջապէս, որ այդ գիւղի աղերքը մի երեխայ են գտել Նալ-Թոքանի ծմակներում։

Ողջ գիւղը թափւեց խկոյն եկւորների գլխներին։ Բոլորն էլ կարեկցում էին նրանց ու հանգստացնում ասելով, որ իրաւ երեխան իրանց գիւղումն է, մի հարուստ մարդի տանը, որտեղ նրան աչքի լոյսի պէս են պահում։

Թուրքերն ու Թրքուհիները բազմութեան առաջնորդութեամբ գնացին Բիքունց տունը։

Երեխան իր մօրը տեսնելուն պէս մի ակնթարթ ապշած նայեց նրան ու նետւեց ընկաւ գիրկը։ Այնպէս կպաւ նրա կրծքից, որ էլ ոչ մի ուժ չէր կարող բաժանել նրանց։

—Հիւրգա՜թ, Հիւրգա՜թ, խելագարի պէս աղաղակում էր մայրը։

Ներկայ եղողներից շատերի աչքերից արտասուքի կաթիլներ գլորւեցին։

Վարդան ամին տխուր նայում էր։

—Հէ՛չ. էս երեխէն մեզ նասիբ չեղաւ։ Ջեմ իմանում, որ մեղքիս համար է Աստուած էսքան բարկացել մեզ վրա։

Ոսկի աքիրն աւելի սրտակոտոր եղաւ. իր օրում այնչափ վշտացած չէր։

Երբ նա Հիւրգաթի ծնողներից իմացաւ, որ նրանք բազմաթիւ զաւակներ ունեն, որոնցից վեցը տղայ են, հինգը աղջիկ, դարձաւ Հիւրգաթի մօրը.

—Աստծու տունը շէն կենայ, ա՛ քո՛ւր. քեզ էսքան տւել է ու կը տայ. ինձ մինն էլ չի տւել։ Էս մինը մեզ բախշի. խեղճ եկ ինձ ու մարդիս։ Մեր հոգու պէս կը պահենք։ Բարեկամ կը դառնանք ձեզ հետ. կը գաք, կը տեսնէք՝ ինչքան սրտներդ կ'ուզի. մենք էլ ձեր տունը հիւր կը գանք։ Հիւրգաթը կը բախտաւորւի մեզ մօտ։ Փառք Աստծու, ունևոր օջաղ ենք. մեր բոլոր ունեցածը դրան է մնալու։ Թո՛ղ, քուրիկ. թո՛ղ Հիւրգաթին ինձ մօտ։

Թուրք մայրը դողում էր Ոսկու աքօր ամեն մի խօսքից՝ կ'ասես ուժով խլելիս լինէին իրենից իր զաւակին։

Յետոյ, աղջկան ամուր գրկած, գլուխը վեր բարձրացրեց և յուզւած ձայնով ասաւ.

—Երեխէք շատ ունեմ, ա՛ քո՛ւր, դրուստ է. բայց սա էլ է նրանց պէս սրտիս կտորը. ես ո՞նց կտրեմ սրան իմ սրտից ու տամ քեզ...

Ու այնպէս լաց եղաւ, որ բազմութիւնը աչքները վար յառած՝ նրա հետ սկսեց արտասւել։

—Հերիք է, ա՛ կնիկ, էլ բան մի՛ ասի,—խօսեց Վարդան ամին,—տասը չի, որ քսանն էլ ունենայ, էլի էն երեխէն նրա սրտի կտորն է. չի կտրի մեզ տայ։ Դէ էսէնց է մեր բախտը. տազ արա։ Էլ մի խօսի, սուս կա՛ց։

Ոսկի աքիրը սուս արաւ ու խեղդեց սրտում իր մորմոքիչ վիշտը։

Նա տաք համբոյրներով ու դառն արցունքով բաժանւեց ընդմիշտ «իր Տողակաթից», տալով նրան և այն գեղեցիկ շորերը, որ մեծ խնամքով ինքը իր ձեռքով կարել էր, և Վարդան ամու գնած սիրուն փափուչները, խաղալիքները, քաղցրաւէնիքը...

Ոսկի աքօր ու Վարդան ամու յիշողութեան մէջ Տողակաթ-Հիւրգաթը մնաց ինչպէս մի քաղցր կարճատև երազ։

Ստեփան Տէր-Աւետիքեան

Նիւթ. Լրացնելով և քեզնից մանրամասնութիւններ աւելացնելով պատմի՛ր՝ թէ ինչպէս հայ տղերքը անտառում գտան Հիւրգաթին։

խառնիճաղանճ—ամեն տեսակի մարդկանց խառն բազմութիւն։

ընթանալ—գնալ, երթալ։

ամայի—անմարդաբնակ։

գոյանալ—առաջանալ, կազմւիլ։ Ո՞րն է արմատը։ Ի՞նչ նոյնարմատ բառեր գիտես. ի՞նչ նշանակութիւն ունի այդ արմատը։

հանգ—ձև, կերպ։

զամեռ—մեռած։

մաղթել—բարի ցանկանալ, նոյնը և **բարեմաղթել**։

ծմակ—լեռան կամ ձորի ոչ արեգունի, հիւսիսնայող լանջը, ուր սովորաբար աճում են անտառները։ Դրա համար էլ նշանակում է նաև անտառ։

աբիր (ժողովրդ.)—քոյր։

ամի (Թուրք.)—հօրեղբայր.

չուլ (Թուրք.)—կոպիտ գործւածք, սովորաբար յատակին փռելու համար։

վարլու—ունևոր, պատւաւոր:
փալաս (Թուրք.)—հին մաշւած կտոր:
եայլաղ (Թուրք.)—սարերի արօտատեղիներ:
մլուլ—դանդաղութիւն: մլուլ անել—դանդաղ շարժւել:

1. Հանիր յօդւածի միջից բոլոր զոյգ գործածւող բառերը, օրինակ՝ կարգ ու կանոն, տէր-տիրական: Աւելացրու քեզանից այդ տեսակ զոյգ բառեր:

2. Տուր շոգ բառի հոմանիշները:

3. Ցոյց տուր որդի, զաւակ, տղայ, երեխայ, մանուկ բառերի տարբերութիւնները:

4. Ի՞նչ ասել է՝ խաղել, ճնճել, պոկել:

5. Տուր սազել և վռազել Թուրքերէնից փոխ առած բառերի հայերէնը:

56. Փայտհատն ու մահը

Ծերն հազալով, կըղտալով,
Թոյլ ծնկներին զօռ տալով,
մէջքից ցախը վեր առաւ,
Նստեց, այսպէս սուգ արաւ.

—Ես տուն ունեմ՝
դուռ չունի,
Թոնիր ունեմ՝
խուփ չունի:
Ջուհն է ծածկել դռնակս,
փայտն է մաշկել կռնակս:
Ես ծեր... անցած...
տընով քաղցած.
հա՛ մերկ... հա՛ զուրկ...
տալիք ու տուրք...
Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ...
ո՞ւր ես սև մահ,
այս էլ ապրուստ...

Մին էլ պուպուստ,
մահ թէ՝ «Հա՛,
ծերուկ, ի՞նչ կայ»:
Ծաքած լեղին,
մոմից դեղին՝
կըմկըմալով,
լեզւին տալով,
ծերուկն ասաւ.
—Աստւած վկայ,
ոչինչ չը կայ:
Մինը չը կար
որ էս փայտը շալակս տար.
ապրես, տեսա՛ր,
ինչ շուտ հասար.
Բան մի կարծի...
փայտն ինձ բարձի,
դու ետ դարձի:
Աթաբէկ Խնկոյեան

Ի՞նչ է այս առակի միտքը եւ ի՞նչ այլ վերնագիր կարելի է դնել այդ իմաստով:

ծղտալ—խուխուացնելով հազալ:
մաշկ—բարակ կաշի, բարակ կեղև:

1. Ի՞նչն ունի՝ կճեպ, կլեպ, մորթ, մաշկ, փառ, կաշի, կեղև:
Կազմիր այս բառերից պարզ բայեր. ի՞նչ իմաստ են ստանում. կճպել...

2. Մին էլ պուպուստ ի՞նչ ասել է:

3. Ի՞նչով են տարբերւում՝ տալիք, տուրք, հարկ.
բարձել, բեռնել, բեռնաւորել:

4. Ի՞նչ ասել է՝ լեղին ճաքել. ուրիշ ի՞նչպէս կասես.
սիրտը ճաքել, ուրիշ ի՞նչպէս կասես:

ԱԹԱԲԷԿ ԽՆԿՈՅԵԱՆ

Ծնւել է 1870 թւին Ղարաբոյա գիւղում (Փամբակի շրջան) գիւղացի ծնողներից:

Սովորել է Ալեքսանդրապոլում նախ մասնաւոր դպրոցներում և ապա քաղաքային դըպրոցում, և ուսուցչութեան քննութիւնը տալով՝ պաշտօնավարում է թէ ծխական և թէ պետական դպրոցներում:

Լաւ ծանօթ լինելով ժողովրդական լեզւին և գրականութեանը՝ աջողութեամբ մշակում է ժողովրդի բերանից լսած նիւթերը—հեքիաթներ, զրոյցներ և մանաւանդ առակներ: Հայոց լաւագոյն առակախօսներից մէկն է:

57. Գաբօ բիձու չերամապահութիւնը

Ես ու Գաբօ բիձէն անցնում էինք Լօռու ձորով:

—Հէ՛յ, տիրացու—ձայն տւաւ նա:

—Համմէ:

—Հրամանքդ շատ: Ես տեսնում եմ՝ որ էս մեր նոր ուսումնաւածները շատ աշխարհքիցը դուրս մարդիկ են. դու սրան ի՞նչ կասես:

—Ինչո՞ւ, Գաբօ բիձա:

—Նրա համար, որ հէնց գիտեն՝ ամեն բան մենակ իրենք են հասկանում, իրենցից առաջ էլ ոչ մարդիկ են եղել, ոչ բան են հասկացել: Մին էլ կը տեսնես բռնեցին ու գլխիդ դէլի աւետարան կար-

դացին—հա՛ էս ճանճ պահիր, էս աբրեշումի ճիճու պահիր, էսպես մառ-ծուն շինիր, էսպես ցանիր, էնպես հնձիր... Տօ հեր օրհնած, մի առաջ հարցրու, տես՝ էտ բաները դրանք էլ միտք են արել թէ չէ, նրանից ետը՝ թէկուզ ուշունց տուր։

—Յետոյ մի՞տք էք արել որ, Գաբօ բիձա։

—Ախպէր, ա՛յ, ես հիմի օրինակի համար՝ մինն ասեմ, դու տես՝ մենք էլ հացակեր մարդիկ ենք, բան ենք հասկանում թէ չէ։—Մի աշունք մեր Դաւօն գնաց քաղաքը խոզ ծախելու։ Մի ճանաչ մարդ աբրեշումի ճիճւի սերմ էր տւել թէ՝ տարէք ձեր տեղը առաջ բերէք։ Ճամփայ պահեցինք մինչև գարունքը բաց եղաւ։ Գարունքը որ բաց էլաւ, ինչ որ խրատ էր տւել՝ էս ճիճւի սերմը բերինք մեր խիզանի ծոցումը դրինք, որ տաքանան, դուրս գան։ Դուրս եկան՝ ասեղի ծէրի չափ մանր սև զատեր։ Տիրացու։

—Համմէ։

—Էտ ձեր ուսումնականները թէ գիտեն՝—աբրեշումի ճիճուն ինչ կուտի։

—Թթան տերև։

—Ապրես, դրուստ ա։ Գնացի ձորիցը մի շալակ թթան տերև բե-րի, կալեցի մենծ տան ամբարի ոտիցն ու ճիճուն վրէն ածի։ Ինչ-քան մարդ եկաւ նայելու, ոչ-ոքի տուն չը թողինք, որ աչքով չը տան. ասինք՝ թող մի տեսնենք ինչ ա դուրս գալի։ Ա՛յ տղայ, էտ անտէր ճիճուները մի քանի օր կացան ու կոտորւեցին։ Հիմի թէ ասենք նրանի՞ց էր, որ գոմշի ձագը շատ էր մօտիկ կապած, տանատակ էր տալիս, թէ նրանի՞ց էր, որ հաւերը տուն էին թափում՝ կըտցահա-րում. դէ ո՞նց անենք։ Հօ չէինք կարող հաւերը կոտորել կամ ձագն սպանել։ Թէ ասենք անձրևիցն էր, որ երդիկովը ներս էր թափում, մին էլ մարդ միտք ա անում, թէ բա քաղքումն անձրև չի գալի՞... Մի խօսքով բանը գլուխ չեկաւ։ Տեսանք, որ մեր երկրումը աբրե-շումի ճիճուն անում չի, բան չի դառնում։ Դէ, զարմանալու ինչ կայ որ. էնպէս երկիր կայ՝ հաւք չի ապրում, էնպէս երկիր կայ՝ ցորեն չի դուրս գալի. ամեն աշխարհք մի տեսակ բնութիւն ունի, բայց էս մեր նոր ուսումառածները էսքանն էլ չեն հասկանում։

Յովհ. Թումանեան

Ուրեմն ինչի՞ց է որ «մեր աշխարհումը աբրեշումի ճիճուն չի անում։»

Նիւթ. Ի՞նչ է պատմելու «տիրացուն» իր ընկերոջը Գաբօ բի-ձու մասին։

խիզան (թուրք.)—կին։

---

1. Ե՞րբ ենք ասում՝ «հրամանքդ ցաւ.» միտքն ինչ է։

2. Ի՞նչ ասել է՝ աշխարհիցը դուրս մարդ, հացակեր մարդ. որո՞նք են դրանց հականիշները։

3. Ճամփայ պահել, ճամփից հանել, ճամփայ սովորեցնել... Բեր ճամփայ բառերով ուրիշ ասոյթներ և բացատրիր նրանց իմաստը։

4. Տուն թողել, տուն անել... Ասա ուրիշ օրինակներ, որտեղ տուն գործ է ածւած Ներս-ի փոխարէն։

5. Ի՞նչ ասել է՝ մեկի գլխին գայլի աւետարան կարդալ։

---

58. Գութանի երգը

Արի՛ գութան, վարի՛ գութան,
օրն եկել է, ճաշ դառել,
առը շուռ տուր, խոփիդ ղուրբան,
օրհնեալ է Աստուած, հօրովէլ։

Քաշի՛ր, եզը, ուսիդ մատաղ,
քաշի՛ր՝ քաշենք, վար անենք.
ճիպտին արա՛, քըշի՛ր հօտաղ,
մեր սև օրին ճար անենք։

Պարտքատէրը գանգատ գընաց,
քեօխւէն կըգայ, կըծեծի,
տէրտէրն օրհնեց, անվարձ մընաց,
կը բարկանայ, կանիծի։

Էն օրն եկան թովջի արին,
հարկ են ուզում տէրութեան.
ինչ տամ կոռին ու բեգեարին...
Վարի՛, վարի՛, իմ գութան։

Ձեռըս պակաս, ուժըս հատած,
հազար ու մի ցաւի տէր,
ինձ են նայում մերկ ու սոված
մի տուն լիքը մանուկներ։

Արի գութան, վարի՛ գութան,
օրն եկել է, ճաշ դառել,
առը շուռ տո՛ւր, խոփիդ ղուրբան,
օրհնեալ է Աստուած, հորովէլ։

Յովհ. Թումանեան.

1. Գիւղացու վաստակը ո՞ւր է գնում։
2. Գիւղացին ի՞նչու գութանին է ասում իր ցաւերը։

ՆԻՒԹ. Նկարագրի՛ր թէ ինչպէս մի օր վարեցիք հողը և դու ի՞նչ էիր անում։

առ—հողի այն մեծ կտորը, որ խոփը կտրում շուռ է տալիս, շեփ։
ղուրբան (Թուրք.)—մատաղ։
ճիպտին անել—ճիպոտով խփել եզը քշելու համար։
քեօխւա (Թուրք.)—տանուտէր։
բոլջի (անել)—հարկի, տուրքի բաժանում։

59. Շաշ Պետին ու գիժ Ուհանը

ա.

Մի կարճ փայտ ձեռին, գլուխը կախած գնում էր Պետին դէպի Ուհանի տունը։ Հագին համարեա թէ շոր չունէր. չիլա շապկի միայն վզի օղակն էր մնացել բդին հուպ տուած, ետևի կողմը պոկ էր եկած, իսկ առաջից թելի նման երկու ծուէն էր մնացել կախ ընկած. շապկի վրայից հագած չուխէն չէր կարողանում ծածկել նրա մարմնի բաց տեղերը, անդրավարտիքը բոլորովին քրքրուել էր և բաց ծնկները փըրշերից ու կառներից չանկռտուել, արիւնը բաց մսի վրա չորացել էր։

Նա կանգնեց վերջապէս տիրացու Ուհանի տան ետևը՝ ցանկապատի տակ ու սկսեց կանչել.

—Ուհա՜ն, Ուհա՜ն, էհէ՜, Ուհա՜ն...

—Հի՜յ, էտ ի՞նչ է, Պետի՛.—սրահի տակից գլուխը հանեց տիրացուն։

—Ուհա՛ն, արջառս խո՞ ես տարել, ա՛ քեզ մատաղ։

—Արջառդ ո՞րն է, ադա՛։

—Ո՞նց թէ՝ արջառդ որն է. գիտե՞ս ոչ՝ արջառս որն է։

—Չէ։

—Հիմի դու արջառս գիտե՞ս ոչ։

—Չէ.—կրկին բացասական պատասխան տուաւ Ուհանը։

Օրը բարձրանում էր, Պետին դաշտը աշխատանքի պէտք է գնար, րոպէն թանկ էր աղքատ երկրագործի համար։ Նա սրտի այրուելուց սկսեց թուել իր արջառի բոլոր արտաքին նշանները.

—Ա՛յ տղայ, արջառս էն ցցապոզ, երկու աչքունքանի, պոչը երկար, ծէրը ծաղիկ, փորը խոշոր, գլուխը կոպալ, սևաշալւար անասունն է, որ սրանից երկու ամիս առաջ շակիս հետ փոխեցիր. իմացա՞ր հիմի։

—Իմացայ, փոխեցի, հիմի էլ խլում եմ, առաջս ո՞վ է կտրում, քէֆս չի՞։

—Ա՛, ո՞նց թէ՝ առաջս ով է կտրում։ Ապրանքի տէրը ես եմ, դու ես տիրապետո՞ւմ. աշխարհս հալա-հալա՞ է։

—Քու ապրանքը շակն է, շակը, որ հրէն, է՜, գետի եզերքին շան ու գէլի բաժին է դառել.—պատասխանեց Ուհանը շատ սառը կերպով, մատով ցոյց տալով հեռուն։

—Ուհա՛ն, ա՛ քու տունդ չը քանդուի, դու արջառը էն պայմանով տուիր, որ երբ շակը սատկի կամ գետումը խեղդուի, ետ խլե՞ս։

—Բա դու լղար, ցաւոտ, շակը ինձ տուիր, որ գնայ գետն ընկնի խեղդուի, արջառս տանես լծես, վնասը ես քաշե՞մ։

—Ա՛, տնաքա՛նդ, դու հօ մարդ ես, ինչի՞ ես անաստուած-անաստուած խօսում։ Սրանից երկու ամիս առաջ առուտուր ես արել քու հարևանի հետ, արջառ ես փոխել, յետոյ շակը տարել ես գետը գցել սպանել, կաշին մաշկել տանդ դրել. դէ՛ հիմի դու խղճմտանք չունի՞ս, բա վերև Աստուած, ներքև գետինք չը կա՞յ, բա դու քրիստոնեայ չե՞ս...

—Ջէնդ կորի՛, շա՜շ Պետի, գլխիս գէլի աւետարան մի՛ կարդալ, կորի՛, թէ չէ կը գամ էնքան կը թակեմ, որ թան խմելուց կ'ընկնես.—կոշտ ու սպառնական ձայնով պատասխանեց Ուհանը։

Իսկ Պետին մօտեցաւ անասունների խմբին, ջոկեց իր եզը և ուզում էր քշի դէպի իրենց տան կողմը, կարծելով թէ իր խօսքերը որևէ ազդեցութիւն ունեցան տիրացու Ուհանի քար սրտի վրա։ Եզը փախչում էր դէպի հին տիրոջ տան կողմը, իսկ Պետին աղաչելով վազում էր, որ կտրի առաջը.

—Հօ՛, հօ՛, քեզ մատաղ, բիժի՛ ջան, բիժի՛ ջան...

—Էհէ՛յ, ա՛ սարսաղ, էտ ո՞ւր ես տանում էտ եզը, գլուխդ քա՞ր է

գալիս.—ասաւ Ուհանը ու մի դագանակ առաւ, վազ տուաւ դէպի նա և համնելուն պէս մի քանի հարուած իջեցրեց: Պետին դագանակը խլեց և շպրտեց գցեց մօտիկ ցանկապատը: Իսկ անիրաւը յանկարծ վրա ընկաւ, բռնեց աղքատի վզին մնացած յետին հնոտի շապկի օձիքից և հայհոյելով սկսեց ձգձգել, պատռել, մերկացնել նրան:

բ.

Աղքատ Պետին զիժ Ուհանից ուժով էր. նա կարող էր Ուհանի պէս երկուսին ծեծել, միայն Ուհանը աւելի հարուստ էր և Պետին շատ լաւ գիտէր, որ ինքը ինչքան էլ արդար լինի, տանուտէրի առաջ մեղաւոր պիտի ճանաչուի:

Նա չը համարձակուեց ձեռք բարձրացնել տիրացու Ուհանի վրա: Վշտացած գնաց գեղամէջ, կանգնեց մի ցորենի հորի մօտ, ուր տանուտէրը ցորեն հանելով էր զբաղուած: Կանգնեց, փափախը վեր կալաւ, ասաւ.

—Բարի աջողում քեզ, տանուտէր ջան:

Պատասխան չը ստացաւ:

—Տանուտէր, ասում եմ՝ բարի աջողում.—ձայնը աւելի բարձրացրեց նա, բայց էլի պատասխան չը ստացաւ:

Պետին քիչ էլ մօտեցաւ հորին:

—Տանուտէր ջան, բա՛, Աստուած վեր կառնի, որ երկու ամիս է եզն եմ փոխել Ուհանի հետ, հիմի գլուխս թակելով ետ է առնում.—արդէն սկսաւ ուղղակի գանգատուել:

Տանուտէրը մինչև անգամ գլուխը չը բարձրացրեց ու չը նայեց աղքատի երեսին: Պետին խեղճ-խեղճ ձայնով էլի կրկնեց, էլի աղաչեց.

—Տանուտէր ջան, բա ի՞նչ ես ասում, ո՞նց անեմ: Հունձս, բանս մնաց. տանս էլ սոված են:

Գիւղումը Պետին շաշ անունն էր ստացել, որովհետև աղքատ էր, ուժ չունէր, որ խօսքը դուրս տանէր. լաւ ասէր թէ վատ՝ բոլորը յիմարի տեղ էին դնում:

—Ա՛ շա՛շ, գլուխս քանի ցաւացնես, չե՞ս տեսնում՝ ցորեն եմ հանում. ուզում ես ետ դառնամ՝ գլուխդ երկու կէս անե՞մ...

—Տանուտէր ջան, համարձակութիւն չը լինի, դու ցորեն ես հանում, անուշ լինի քեզ, բայց իմ բանը մնում է. մենակ, աղքատ մարդ եմ, խափան եմ մնացել, մի բան ասա՛:

—Ի՞նչ բան, ի՞նչ եզը, ի՞նչ խափան: Դուրս տար՝ տեսնենք:

—Վիի՜, տանուտէր ջան, բա իմացար ո՞չ, հինգ-վեց հետ ասի, հօ:

—Փէստ վեր եմ առնելու էս ախմախի գլուխը ճղեմ, հա՛: Էն է՝ տանուտէրն էլ քեզ պէս շաշերի գլուխն ունի, որ բան ու գործը թողնի, քեզ պէս էշին լսի, էլի՞:

—Տանուտէ՛ր ջան, բա մի՞ն էլ ասեմ:

—Մին էլ ասա, դեռ տասնըմին էլ. թէ կուզես իսկի ասիլ էլ մի.—ասաւ տանուտէրը և խռոված պէս երեսը շրջեց ու դարձեալ սկսեց պարկի բերանը կապել:

—Քու որդկերանց գլխովը մատաղացու պէս պտիտ գամ, տանուտէր ջան, ղալաթ արի, որ քէփիդ դիպայ: Լա՛, ասի թէ՝ սրանից երկու ամիս առաջ տիրացու Ուհանի հետ առուտուր եմ արել, գոմշիս շակը փոխել եմ նրա արջառի հետ. Ջուրը վարարած ժամանակը տարել է, գետն արել խեղդել, կաշին մաշկել է տանը դրել. և արջառս էլ տաւարի մէջն արել: Էսօր գնացի աղաչանք, պաղատանք արի, որ ետ տայ, գլուխս թակեց ճամփայ դրեց. էտ քիչ էր, մեռելներիս էլ տեղահան արաւ գերեզմանից, ամենին էլ ուշունց տուաւ:

—Ուհանը քեզ թակե՞ց.—հարցրեց տանուտէրը հեգնական ձևով:

—Հրամանք ես, տանուտէր ջան:

—Շատ լաւ է արել Ուհանը. դեռ սպանած պէտք է լինէր: Տօ, բա վիզդ ինչի՞ ես էտքան հաստացրել, որ նա էլ է քեզ թակում:

—Տանուտէր ջան, նա կարալ չի ինձ թակի, բայց...

—Գնա՛, գլխիցս կորի. ամօթ էլ չես քաշում բոյիցդ, եկել ես գանգատի թէ «Ուհանն ինձ թակեց»: Կարում ես՝ դու էլ նրան թակի, եզդ տար, կարում չես՝ տանդ վեր ընկի. քեզպէսի եզը ով ասես կուտի, սուտ հօ չէ ասած՝ «գիժը կը դատի, խելօքը կուտի»...

գ.

Պետին մի փոքր լուռ մնալուց յետոյ՝ դառն սրտով, վիրաւորուած հեռացաւ տանուտէրից: Փոքր ինչ անցած՝ Ուհանի կալի մօտ կրկին աղմուկ բարձրացաւ:

—Տիրացու Ուհա՛ն, բա հիմի դու եզս տալիս չես, էլի:

—Կո՞յր ես. տեսնո՞ւմ չես, որ տալիս չեմ:

—Ասենք եզս խլում ես, բա կաշի՞ն:

—Ինչի՞ կաշին:

—Շակի:

—Կաշին էլ չեմ տալի:

—Խի՞, մի ասա տեսնենք։

—Քեզ համար եմ չարչարւել, շակը գետից հանել, մաշկել, աղ արել, չորացրել…

—Բա հիմի դու երկուսն էլ տալիս չե՞ս։

—Չէ՛,չէ. տալիս չեմ, գնա որտեղ ուզում ես գանգատւիր։

Պետրոն մոքի հետ ընկած կրկին մօտեցաւ անասունների խըմբին, եղը ջոկեց, որ քշի. գիժ Ուհանը յանկարծ դուրս ընկաւ տանից և հասնելով նրան, ելաւ առաջը կտրեց։ Այստեղ արդէն աղմուկը աւելի ուժով սկսւեց։ Աղքատ շաշն ու գիժ հարուստը փոխադարձ հայհոյանքներով յանկարծ իրար դմփեցին։

Պետրոն Ուհանին մի ձեռքով շպրտեց գետին, բայց անը սրտումն էր։ Ուհանը աքաղաղի պէս վեր կացաւ, էլի կպաւ Պետրոնի օձիքից. վերջինս մի թեթև հարւածով կրկին գետին գլորեց նրան, որի քիթը հողումը տնկւելուց արիւն գցեց… Ուհանի տեղը որ նեղացաւ, յանկարծ գրպանից հանեց սրած դանակը ու խրեց Պետրոնի ազդրի փափկամսի մէջ։ Պետրոն վայ կանչեց և ընկաւ գետին, իսկ Ուհանը ազատւելով նրա ձեռքից՝ եղը ետ տարաւ։

Հարայը հասաւ Պետրոնի կին Խանումին, որ ճչալով եկաւ ընկաւ վիրաւորւած ամուսնու կուռը և լաց լինելով տարաւ տանուտէրի դուռը։ Ինքը չխօսկան էր տանուտէրից, քթկալը վերև քաշեց, քօղը ներքև, երեսը համարեա ծածկեց և մի փոքր երեխայ մօտը քաշելով՝ նրա բերանով սկսաւ դառնապէս գանգատ անել։

—Ա, անզգամ, քիչ ունիդ արա. մարդիդ վեր կալ, տար քու քանդւած տունը, մինչև որ կիրակի օրը վճիռ տանք էտ մասին։

—Տանուտէր ջան, կնկանդ համար երկու սատ մանած կ'անեմ, քու որդկերանց գլխովը պտիտ գամ, արջառս ետ տուր։ Նա տունս քանդեց, երեխանցս սոված տուն արած թողեց…

Տանուտէրը լռեց։ Պետրոն շարունակ ախ էր քաշում։ Խանումը արցունքն աչքերին մարդու կուռը ընկաւ կրկին և դէպի երկինք անէծք ուղղելով տարաւ տուն, դալլաք կանչեց, դանակի կտրուածը մսից հանել տւաւ, վէրքի վրա սպեղանի դրաւ, փաթաթեց, կապեց։ Բայց վէրքը երկիւղալի էր, Պետրոնի մարմինը ուռաւ և նա անկողին ընկաւ մի քանի ամիս։ Ամառւան աշխատանքը մնաց թերի և թռչունների կերակուր դարձաւ. Նրա լուծը մնաց տափին և առանց աշնանացանի։ Նրա ութը հոգուց բաղկացած ընտանիքը քաղցեց ու մերկացաւ, որովհետև տան տղամարդը, միակ աշխատողը միայն Պետրոն էր։ Նրանց

ալիւրը սպառւած էր, տաշտն ու մաղը դատարկ, ոչ-ոք չէր հարցնում, թէ ինչ են ուտում, ինչպէս են ապրում։

Այսպէս շաշը դատեց, գիժը կերաւ մարսեց, կաշառակեր տանուտէրն էլ մինչև այսօր նրանց դատը չը տեսաւ։

Յարութիւն Բ. Ծուղուրեան

1. Ի՞նչ է շաշ Պետրի դժբախտութեան գլխաւոր պատճառը։
2. Համեմատիր գիժ Ուհանի և շաշ Պետրի բնաւորութիւնները։
3. Այս պատմութեան մէջ գլխաւոր յանցաւորը ո՞վ է։

Նիւթ. Պատմիր ամբողջ յօդւածի բովանդակութիւնը հակիրճ և ամփոփ, առանց խօսակցութիւնների։

Ծիլա (շապիկ)—մի տեսակ կարմիր կտաւ։
քճճել—գզգզւել։
կառն—փշոտ բոյս՝ գնդաձև գլխով։
արջառ—երկու երեք տարեկան որձ հորթ, որ սովորաբար նոր են լծում։
ճակ կամ **ճիճակ**—գոմէշի ձագ։
հնոտի—հին շոր։
ղալաթ (թուրք.)—սխալ։
դալլաք (թուրք.)—գիւղական սափրիչ, որ միևնոյն ժամանակ և բժշկութիւն է անում։
սպեղանի—վէրքի վրա դրւող դեղ, մալհամ։
կոպալ—հաստ և խոշոր գլուխ ունեցող գաւազան։

---

1. Ի՞նչ ասել է՝ օրը բարձրանում էր, մեկի առաջ կտրել, իր խոսքը դուրս տանել, խափան մնալ։
2. Ապրանք ինչին են ասում։
3. Գետն անել, գոմն անել, արտն անել…, այս դէպքերում ինչ է նշանակում անել։
4. մատ խառնել, մատ խաղացնել, մատը թափ տալ, մատը կծել. մատը մատին չը խփել. մատին փաթաթել, մատի վրա խաղացնել, իր մատների միսը ուտել, մատով ցույց տալու դառնալ.
Գործածիր նախադասութիւնների մէջ և իմաստը բացատրիր։

ՅԱՐՈՒԹԻՒՆ Ք. ՃՈՒՂՈՒՐԵԱՆ

Ծնուել է Ղազախի Խաչթառակ գիւղում 1864 թւին, սովորել է սկզբում իրենց գիւղում և ապա աւարտել է Ներսիսեան դպրանոցը։ Քահանայ է ձեռնադրուած Թիֆլիսի Թանդոյեան Ս. Աստուածածին եկեղեցում։ Գրում է պատկերներ գիւղական կեանքից, նկարագրելով գիւղացիների տգիտութիւնը, գիւղի իշխանաւորների, վաշխառուների, կալուածատէրերի և ռեհասարակ ուժեղների կեղեքումները։ Առաջին պատմուածքները ժողովուած են Մոռացուած աշխարհ երեք հատորիկների մէջ։ Ունի և ուրիշ՝ առանձին գըրքերով հրատարակուած պատկերներ։

---

60. Խոտհունձ

Զուգուած, զարդարուած
Թաւիշ կանաչով,
ցոլում է դաշտը
ոսկի ճաճանչով։
Մայիսեան այգը
գոհար է մաղել,
ծաղկանց Թերթերը
շողել ու շաղել։
Հազար տեսակի
Թռչուն է երգում,
իմ դրախտ դաշտը
գլնգում, գլնգում։

Կուրծքս սարալանջ,
մէջքս Թիկնաւէտ,
երբ գամ գերանդով
չափւելու քեզ հետ,
մի՛ դժգոհիր, դա՛շտ,
քեզ չեմ խնայի,
ատլաս զգեստիդ,
երգին չեմ նայի։
Զնգան գերանդով
խոտդ կը հարեմ,
սիրուն շարքերով
լասեր կը շարեմ
ու վերջին օրը
հողդ կը պաչեմ,
«Շէն ես, շէն մնաս»
սրտանց կը կանչեմ։

Փոխադր. ռուս. Աթ. Խնկոյեան

Ինչու է հողը պաչում։

այգ—լուսաբաց, ծէգ։
լաս—մանգաղի մէկ զարկով կտրուած խոտը։

---

1. Ի՞նչ ասել է՝ շողել և շաղել, թիկնաւէտ։

61. Այգին

ա.

Մի առաւօտ Սերոբենց դուռը բացւեց և ներս մտաւ քեռի Գոգորը, բարձրահասակ ու լայնաթիկունք մի ծերունի։ Տանտէրը իր Թուլացած մէջքը սիւնին դէմ տուած՝ դառը մտքերի ծովն էր ընկըղմըւել, իսկ տանտիկինը հիւանդ պառկած էր անկողնու մէջ։

—Բարի լոյս, քւոր որդի,—ասաւ բարի ծերունին, պատկառելի հանդարտութեամբ առաջ գալով ու տէրողորմեայի սև հատիկները մէկ-մէկ գցելով։

—Աստծու բարին, քեռի Գոգոր,—մի տեսակ դժկամութեամբ պատասխանեց Սերոբը, տեղից կանգնելով.—համեցէք նստիր։

Քեռի Գոգորը առանց շտապելու տեղաւորւեց սիւնի առջև փռած հնամաշ Թաղիքի վրա ու բռնոթամանը գրպանից հանեց։

—Ի՞նչ կայ, քւոր որդի, ինչո՞ւ ես էտպէս տխուր։

—Էհ, ի՞նչ ասեմ, քեռի Գոգոր, Աստուած գլխիս քար գցեց, տունս քանդւեց, ծխս սատկեց,— խեղդուած ձայնով պատասխանեց Սերոբն ու ցուցամատով սրբեց այտի վրայով ցած գլորւող արտասուքի կաթիլը։

—Ոչինչ, վնաս չունի, որդի, փառք դրան, դա մի Թեթև անաջողութիւն է, դիմացի՛ր, սիրտդ լայն պահիր. դու դեռ ջահիլ ես ու առողջ, մի՛ յուսահատւիր։

—Ասում ես՝ մի՛ յուսահատւի, քեռի Գոգոր, ախր ինչպէս չը յուսահատւեմ։ Չէ՞ որ մեր ամբողջ ընտանիքը էն ձիու երեսին էր ապրուստ անում ու նրա աշխատանքովն ապրում։

—Հասկանում եմ, Սերոբ ջան, ես հասկանում եմ քո նեղ դրութիւնը, ախ ու վախը դարդիդ դարման չի անիլ։

—Հապա ի՞նչ անեմ, քեռի Գոգոր, ասա՛, սովրեցրո՛ւ, հօրդ հոգին լոյս դառնայ։ Դու փորձուած մարդ ես, քո գլխովդ շատ չար ու բարի է անցել. մի խելք դիր իմ գլուխս, ասա՛, ինչ անեմ։

—Ի՞նչ անես։ Ա՛յ ասեմ, որդիս, տեղիցդ վեր կաց, բահդ դիր ուսիդ ու ինձ հետ արի,—ամեն մի նախադասութեան վրա առանձին շեշտելով արտասանեց քեռի Գոգորը և պտղունցում մնացած բռնոթու կիսատը քաշելով՝ բեխերը սրբեց, մօրուքը շփեց ու տեղից կանգնեց։

բ.

Գարնանային առաւօտ էր։ Երկար ժամանակ գնում էին նրանք այգիների քարքարոտ ու ծուռտիկ ճանապարհներով, բողբոջած ծառերի հովանու տակ, մինչև որ հասան մի անմշակ հողաբաժնին։ Այդ հողի գլխին բարի ծերունին կանգ առաւ, նստեց նորածիլ կանաչի վրա, կորացած մեջքը ծառին յենեց, մի ծորալի ծփ արձակեց ու բռնոթամանը գրպանից հանեց։

—Նստի՛ր, Սերոբ ջան, նստի՛ր, մի քիչ հանգստանանք։ Էս հողը քոնն է կարծեմ, չէ՞։

—Իմն է, քեռի ջան, լուսահոգի Թաթոս ամու ընծայածն է։

—Աստուած հոգին լուսաւորի։ Քանի՞ տարի կը լինի, որ քո ձեռքին է։

—Կը լինի վեց տարի։

—Հապա ինչո՞ւ ես ծուլութիւն արել, ինչո՞ւ էսքան ժամանակ այգի չես գցել. տեսնո՞ւմ ես, չորս կողմդ բոլորը տնկած է։

—Էէ՜, քեռի Գոգոր, ի՛նչ ես կորցրել ու ինչի՛ ես ժան գալի։ Այգի տնկե՜լ, լաւ ես ասում, լաւ երազ է, եթէ բարին կատարի։ Բայց ո՞վ է տուել մեղաւորին արքայութիւն։ Էստեղ իմ մեջքս կոտրուել, իմ սիրտս փորումս սևացել է, դու էլ ասում ես՝ այգի տնկէ՛ր, կասես էրամենց տղերանց պէս վեց աժդահա ախպէր ունեմ ետևիցս կանգնած։

—Օգնական չունի՞ս։ Ա՛յ ես քեզ օգնական։ Մի բան ասեմ, հանաք մի համարի՛ր. արի՛ հէնց էսօրուանից սկսենք էս հողը ձևել ու եկող ամսին անպատճառ մի տախտակ տնկենք։

Այդ խօսքերի հետ քեռի Գոգորը վեր կացաւ տեղից, գդակը դրաւ ծառի ճղքին, չուխէն հանեց, թաշկինակը գլուխը կապեց ու, Աստծու անունը տալով, բահը ձեռք առաւ։

Սերոբը մնացել էր շուարած, տեղումը նստած։ Այնքան անսպասելի էր այդ բոլորը, որ չէր կարողանում աչքերին հաւատալ։ Սոված Սերոբ ու սեփական այգի. ինչքան տարբեր բաներ։

Սուր բահը քեռի Գոգորի վարժ ձեռներում գործում էր աջող։ Խոնաւ հողի սև կոշտերը իրար վրա դիզելով՝ մի երկար թումբ կազմեցին։

Ծեր անդամները շուտ են յոգնում։ Առաջին թումբը կապելուց յետոյ ալևոր բանուորը բահը գետնին գցեց, կոշտացած ձեռով քրտինքը սրբեց ու բռնոթի քաշելու պատրաստութիւն տեսաւ։

Սերոբն իր ապշած աչքերի անթարթ հայեացքն ուղղել էր նրա վրա և տեսողութեան բոլոր ուժը լարել, ուզենալով որոշել՝ երա՞զ է իր տեսածը թէ ճշմարիտ։

—Վե՛ր կաց, քուր որդի,—քաղցրութեամբ ասաւ քեռի Գոգորը,—դժուարութիւնն անցաւ, հիմքը դրուեց, աչքդ լոյս, ա՛յ տեսնում ես, այգուդ առաջին թումբն արդէն պատրաստ է։

Սերոբը սթափուեց։ Ճիշդ որ առաջին թումբն արդէն պատրաստ էր, որը ձկան մեջքի պէս դուրս էր ցցուել դալար խոտերի միապաղաղ կանաչ մակերևոյթից։ Յանկարծ Սերոբի սիրտը թնդաց ուրա-

խութիւնից, գժի պէս վեր թռաւ նստած տեղիցը, անխօս վազեց դէպի ծերուկը, երկու ձեռով ամուր բռնեց նրա աջն ու ջղաձգաբար մօտեցրեց իր այրուող շրթունքներին։ Յետոյ վեր առաւ բահը ու մեծ եռանդով շարունակեց ծերունու սկսած գործը։

Այնուհետև մի ամբողջ ամիս Սերոբն ու Գոգորը իրենց քրտինքով թրջում էին նորաբոյս թումբերը, մինչև որ կարողացան մի տախտակ գլխէ-գլուխ խաղողի դալար մատներ տնկել ու կանաչեցնել։ Նորաբողբոջ վազերը իրենց զուարթ տեսքով մխիթարութիւն

էին պատճառում երկու աշխատաւորներին և կրկնակի եռանդ ներշնչում նրանց։

Ջրու կորուստը շուտով մոռացուեց, Սերոբի սիրտը նորից բացուեց, թախիծը կորաւ, ու եկան յոյսի օրերը։

Արշակ Տաճնազարեան

Իր արածովը ի՞նչ խրատ տուաւ ծերունին։

ՆԻՒԹ. Շատ շատ տարիներ անց ինչպէս կը պատմի Սերովբը իր որդիներին այս դէպքը։

Ռռնօքաման —քթախոտի տուփ։

պեղուեց—բութի և ցուցամատի ծայրերը իրար միացրած՝ մի բան վերցնելու համար։

տախտակ (այգում)—այգիի մի մասը, որ բաղկանում է թումբերի ամբողջ մէկ շարքից և ջրւում է ջրի նոյն ճանապարհով։

մատ (խաղ)—վազի ճիւղը, որ կտրում են դէն գցելու կամ նոր վազ տնկելու համար։

---

1. Ե՞րբ ենք ասում՝ ի՞նչ ես կորցրել, ի՞նչի ես ման գալիս. երազդ բարին կատարի. (հորդ) հոգին լոյս դառնայ. մէջքս կոտրուեց. սիրտդ լայն պահիր։

2. Ո՞րոնք են արմատները՝ նորաբողբոջ և հնամաշ բառերի։

3. Գործածիր նախադասութիւնների մէջ և իմաստը բացատրիր.
վազի մատ, եղանի մատ, մի մատ երեխայ, մի մատ մեղր.
մատը խառն է, մատը մէջն է, մատի փաքաքան.

---

62. Մայր հողի ուժը

Սուեատագորը ռուսաց աւագ հսկաներից մինն էր, որոնք վայրենի և թափառաշրջիկ կեանք էին վարում։ Բոլոր աւագ հսկաների մահից յետոյ նա դեռ ապրում էր քաշուած իր Սուրբ սարերը և երբէք ներքև չէր գալիս. գետինը չէր կարողանում նրան տանի և ներքևը արդէն փոխուած էր աշխարհքը, արդէն մարդիկ դարձել էին նստակեաց և վար ու ցանք էին անում։ Էնտեղ երևացել էին նստակեաց կեանքին սովոր նոր, կրտսեր հսկաներ, որոնցից մէկն էր Միկուլա կամ Նիկոլա Սելեանինովիչը, այսինքն՝ Շինականը։

ՍՈՒԵԱՏԱԳՈՐ

ա.

Էն սեպ սարերում, էն սուրբ սարերում
նստած էր հսկան՝ Սուեատագորը մեծ,
չէր գալի ռուսաց հողը սրբազան,
չէր կարում տանի գետինը նրան։
Ուզեց մի անգամ սիրտը հսկայի
ժուռ գայ մի ազատ լայնարձակ դաշտում.
Թամբեց նժոյգը իր հսկայական,
ժէռոտ կողմերով ելաւ ճանապարհ։
Ծլխաց լանջի տակ սիրտը այրական,
խաղս առաւ ուժը երակների մէջ
ու դուրս է յորդում առես խաղալով։
Նեղւում է սակայն հսկան էն ուժից,
նեղւում է ինչպէս մի ծանր բեռից,
ուրիշն էլ չըկայ, որ հետը չափւի։
Ու ձըգում է վեր մըկունդն իր պողպատ,
ամպերից վերև, աչքից կորցընում,
բռնում է կըրկին ճերմակ ձեռներով
ու խօսում է նա ինքնիրեն էսպէս.
—Եթէ գտնէի ես ուժը հողի,
օղ կամրացնէի երկնի կամարից,
օղից երկաթի շըղթայ կանէի,
ցած կը քաշէի երկինքը ներքև,
երկիրն էլ տեղից ես շուռ կը տայի,
ողջ կը խառնէի—երկինք ու երկիր։

բ.

Էստեղ նկատեց, որ դուրան դաշտում
Գընում է հեռի մի այլ աժդահա,
ու էն աժդահի ուսովը ձգած
կայ ճամփորդական մի փոքրիկ խուրջին։
Եթէ քըշում է նըժոյգն ամեհի,
բաց թողնում ձիու թափովը ամբողջ—
առաջ է շարժւում ճամփորդ աժդահան,
ու չի հասնում ձին իր հսկայական.

Թէ մեղմ է քշում ու դանդաղ քայլքով,—
իր տեղն է հըսկան, չի շարժւում ասես։
Ու գոռաց էսպէս Սւեատագորը մեծ.
—Հէյ դու անցւոր, անծանօթ կըտրիճ,
կա՛ց, կանգնի տեղըդ մի առժամանակ։
Թէ քշում եմ ես նըժոյգս ամեհի,
բաց թողնում ձիու թափով իր ամբողջ,
գնում ես հեռու քո ճանապարհին
ու չի հասնում ձին իմ հըսկայական.
Թէ մեղմ եմ քշում ու դանդաղ քայլքով,
քո տեղն ես դու միշտ, չես շարժւում ասես։
Կանգնեց իր ճամփին անցւորն անծանօթ,
վեր դըրաւ գետնին ուժեղ ուսերից
իր ճամփորդական խուրջինը փոքրիկ։
Ու մօտ քշեց ձին Սւեատագորը մեծ.
—Ասա՛ մի տեսնեմ, դու քաջ տըղամարդ,
ի՛նչ է քո բեռը խուրջինիդ միջին։
Ու ճամփորդն էսպէս տըւաւ պատասխան,
—Ով դու փառապանծ հսկայ դիւցազուն,
փորձ փորձի՛, մի առ իմ բեռը չընչին,
վե՛ր առ, թէ կարաս, հըզօր ուսերիդ
ու էնպէս քըշի դաշտը լայնարձակ։
Պատասխան տւաւ անցորդն անծանօթ,
ու ձիուց իջաւ Սւեատագորը մեծ։

գ.

Առաջ մի մատով ուզեց վեր քաշի,
չըշարժւեց տեղից խուրջինն էն փոքրիկ։
Ապա մի ձեռքով բռնեց աժդահի,
կըրկին չը շարժւեց խուրջինն իր տեղից։
Դէմ տըւաւ ապա կուրծքը իր ճերմակ,
ուսի էն չընչին, փոքրիկ խուրջինին,
բըռնեց ահաւոր ուժով իր ամբողջ՝
մինչև ծըռնկները գընաց հողի մէջ,
արիւնը կաթեց ճերմակ երեսից,
իր տեղն է սակայն խուրջինը կըկին։

Ու էսպէս խօսեց հըսկան զարմացած.
—Շատ եմ ման եկել աշխարհքումը ես,
էսպէս հըրաշքի դեռ չեմ հանդիպել,
էսպէս մի տեսիլք չեմ տեսել երբեք,
չեմ տեսել էս բեռն իմ ծնած օրից.
ուժ ունիմ էսքան—ուժըս չի պատում…
Ի՞նչ կայ քո փոքրիկ խուրջինի միջին,
և ո՞վ ես ինքըդ և կամ ո՞րտեղից,
պատասխա՛ն տու՛ր ինձ, անծանօ՛թ հըսկայ։
—Իմ փոքրիկ խուրջնում Ուժն է Մայր-հողի
իսկ ես Միկուլան Սելեանինովիչ»։
Պատասխան տըւաւ անծանօթ հըսկան։

Ռուս. թարգմ. Յովհ. Թումանեան

1. Ինչու է հողը կոչւում «մայր հող»։

2. Եվ ի՞նչ «հողի ուժ» է խուրջինի մէջ, որ կրում է Շինականը իր ուսին։

3. Սւեատագոր հսկան ինչո՞ւ չի կարողանում բարձրացնել այդ խուրջինը։

ժուռ գալ—պտտել, ման գալ։
ձխալ—ուրախությունից ցնծալ, հրճվել։
յորդ—առատ, վարար (ջուր). **յորդել**—ափերից դուրս գալ։
մկունդ—գուրզ։
դուրան—հարթ։
հետի, հետևակ—ոտով գնացող։
աժդահա, ամեհի—ահագին։
փառապանծ—փառաւոր և պանծալի։

---

1. Հանիր արմատները—ժեռուտ և այրական։
2. Ի՞նչ ասել է՝ ուժը երակների մեջ խաղս է անում, մեկի հետ չափվել, ուժս չի պատում։
3. Ինչպե՞ս ենք ասում՝ հրաշք, ինչպե՞ս՝ տեսիլք։
4. Թափառաշրջիկ—հականիշը, ավագ—հականիշը, խռով—հականիշը։

63. Ողկոյզը

Նաթանը, սաղմոսերգու Դաւիթ թագաւորի որդու իմաստուն դաստիարակն էր։ Նա խորապէս անհանգիստ էր ու վշտացած իր աշակերտի անվայել վարքովը։

Սողոմոնը գինով էր տարւել, ժամանակը վատնում էր անարժան ընկերների շրջանում և հարբելով՝ կեղտոտ հանաքներ էր անում նրանց հետ։ Մանաւանդ վշտանում էր Նաթանը նրա համար, որ լաւ ճանաչում էր պատանու բարի սիրտը։ Գիտէր նոյնպէս, որ վաղ թէ ուշ Սողոմոնը պիտի նստէր Դաւթի գահը։

Ահա մի օր գալիս է արքայազնի մօտ թագաւորի ծառան ու ասում.

—Այս րոպէիս անցնում էի քո հօր, Դաւիթ թագաւորի այգու մօտից և տեսայ այնտեղ՝ մի տղայ խաղողի որթը քաշում էր նեցուկների վրայից, տերևները պոկում, ցեխի մէջ էր տրորում և՛ որթը, և՛ գեղեցիկ ողկոյզները։

Զայրացաւ Սողոմոնը այդ աւերիչի վրա, թուրը վերցրեց և վազեց դէպի այգին՝ կանչելով.

—Իր արիւնով կը վճարի նա, որ աստուածային պարգևը այդպէս անխիղճ ոչնչացնում է։

Բայց այստեղ նրան դէմ եկաւ Նաթանը և հարցրեց.

—Ո՞վ է քո զայրոյթը այդպէս գրգռել, ո՞ւմ ես սպառնում թրովդ։

Սողոմոնը պատմեց այգին փչացնող տղայի մասին։

—Նա՞ է քո զայրոյթը գրգռել։ Նրա՞ արարքից են քո աչքերը վառւում կատաղութեամբ, ինչպէս առիւծի ձագի աչքերը։

—Մի՞թէ պատժի արժանի չէ՞ նա, ով անողորմ կերպով աւերում, տրորում, ոչնչացնում է բնութեան լաւագոյն պարգևները,—պատասխանեց Սողոմոնը։

—Պատեանիդ մէջ դի՛ր թուրը,—ասաւ Նաթանը.—Ե՛ս ուղարկեցի քեզ մօտ ծառային, որ պատմի այգու աւերման մասին։ Հօրդ այգին ողջ է։ Բայց աւելի մեծ բարութիւնն է փչանում։ Սողոմոնի վրա ժողովուրդը նայում է որպէս խաղողի որթի վրա, որից ամբողջ թագաւորութիւնը մի օր ուրախութիւն և առատութիւն պիտի ստանայ։ Իսկ Սողոմոնը ոչնչացնում է, ցեխի մէջ է տրորում իր միջի լաւագոյն պարգևները, որ Աստուած է նրան շնորհել։

Պատանի արքայազնը լսում էր ծերունուն՝ աչքերը վայր ձգած, և նրա հոգու խորքն էին ընկնում իմաստունի խօսքերը։

Կրումմախէր

1. Այս պատմութեան մէջ այգու հետ ի՞նչն է համեմատւում։
2. Նաթանը ի՞նչի վրա էր դրել իր յոյսը՝ իր ծառային ուղարկելիս։
3. Սողոմոնը իսկապէս ինչի՞ վրա էր զայրացած եւ ի՞նչպիսի հոգի ունէր այդ պատանին։

Սաղմոս—հրէաների կրօնական երգը, նոյնպէս Աստուածաշնչի այն մասը, որ այդ երգերն է պարունակում։
վատնել—զուր ծախսել, սպառել։
արքայազն—թագաւորի ցեղից ծագած։

64. Ռոստեւանի ու Աւթանդիլի մրցութիւնը

ա.

Զափից դուրս մեծ էր ու առատ Արաբստանի Ռոստևան թագաւորը։ Բախտաւոր էլ ծերացաւ ու ծերութեան օրերում զգաց, որ ժամանակն է երկրի կառավարութիւնը ջահել ձեռքերի յանձնելու։ Բայց արու զաւակ չունէր. ունեցածը մի մինուճար աղջիկ էր, մի շատ իմաստուն ու գեղեցիկ աղջիկ, Թինաթինա անունով։ Մի օր էլ կանչում է թագաւորն իր մեծամեծներին ու էսպէս է խօսում նրանց հետ։ Ասում է.

Անց են կացել իմ տարիքը,
ծերութիւնով հիւանդ եմ ես.
ծերութիւնը ծանըր ցաւ է,
էլ ի՞նչ ասեմ, յայտնի է ձեզ։

Էսօր չըլնի, էգուց ըլնի,
մահը կեանքըս կըգողանայ.
ո՞վ է մնացել էս աշխարհքում,
և կամ թէ ո՞վ պիտի մնայ։

Հիմիկ եկեք եկէք անենք
իմ աղջկանը մեզ թագաւոր.
մի տեղ որ նա երևում է՝
էլ արևը չի հարկաւոր։

Մեծամեծները աշխատում են Թագավորին համոզեն, որ էսպես չանի, բայց չի աջողվում ու Ռոստեմը հավաքում է ժողովրդին ու իր աղջկանը հռչակում է Թագավոր։

Եկան բոլոր արաբները,
եկան զորքն ու զենքը սարքին.
սաղի կտոր Աւթանդիլը
գլուխ կանգնած ամբողջ զորքին։
Հավատարիմ ծառան Սոկրատ
էր արքայի ավան-չավան,
էնպես մի գահ նա պատրաստեց,
որ աշխարհքը կացավ հավան։
Ծիծաղում է Ռոստեմը,
իր աղջկան մեջտեղ բերավ,
նստեցրեց ու իրեն ձեռով
Թագը նրա գլխին դրրավ։
Արքայական գավազանը
հերն աղջկայ ձեռն էր տալի,
ճոխ ծիրանին փափուկ ուսին
շատ արմաղան սազ էր գալի։
Թագավորն ու իրեն զորքը
ետ կանգնելով գլուխ վէր բերին,
օրհնանքներով բազմեցնելով
գահի վրա պատիւ արին։
Թըմբուկ զարկին. ծնծղաները
անուշ անուշ ձէն են տալի,
բայց աղջիկը լաց է լինում,
Թուխ մազերը ժաժ են գալի։
Իրեն արժան չի համարում,
որ հօրական գահն ունենայ,
արտասուքը, որ Թափում էր,
մի վարդանոց կըջրէր նա։
—Մի լաց լինի, ինչ որ ասեմ
լսիր, աղջիկս, ականջ.
էս օրվանից արաբների
դու Թագուհին պիտի լինիս։

Արաբիայի տէրութիւնը
նըրա համար տըւի ես քեզ,
որ հեզ, խոնարհ ու իմաստուն—
քո աշխարհքը փառաւորես։
Վարդն ու հողը միօրինակ
արևով են միշտ ողողած,

դու էլ էնպէս՝ մեծին, փոքրին
պիտի լինիս միշտ ողորմած։
Լաւ իմացիր, ինչ որ կըտաս՝
էն է մենակ, որ դու ունես.
ինչ որ չես տալ՝ էն է կորած,
ինչքան էլ որ պինդ պահպանես։

Հօր խրատին ուշադիր աղջիկը հէնց իր թագադրութեան հանդէսին իր զարդերից սկսած մինչև գանձարանի գանձերն ու ախոռատան նժոյգները՝ դուրս է բերում բաժանում ժողովրդին։ Ժողովուրդն էլ յափշտակում է ագահութեամբ։

«Գըռփում էին արքայական
գանձը, ինչպէս թուրքի աւար.
շտապողների ոտի փոշուց
ողջ քաղաքին պատեց խաւար։
Ո՞վ էր տեսել, ո՛վ էր լըսել,
ինչ թագուհին էն օրն արաւ.
կուշտ մարդն էլ աչքածակ է,
ծեղ չըթողեց, որ չըտարաւ։
Մի օր ամբողջ ուտելիքներ
անուշ արին սուփրի բոլոր,
հազարփեշէն ձեռնէ ձեռը
ման էր գալիս ոլոր-ոլոր։

բ.

Երբ միամիտ բազմականը
ուրախութեան ծովը մըտաւ,
Ռոստևանի ճակտի վրա
սև տխրութեան մի ամպ իջաւ։
Սուփրի շուրջը նստողները
իրենց մէջը զրոյց արին,
թէ՝ ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեց
մեր ալևոր թագաւորին…

Ու իրենց մէջ էլ վճռում են, թէ թագաւորի մտքովը մի չար բան է անց կացել, որ առանց յայտնի պատճառի յանկարծ տխրեց։ Նրա որդեգիր Աւթանդիլ սպարապետն ու սիրելի նախարար Սոկրատը ուզում են միտքն իմանան։

Երկուսն և եթ թասեր առած,
գինով լիքը պէծպըծալի,
շատ յարգևոր արարմունքով
Ռոստևանին մօտ են գալի։

Մօտ են գալի։ Նախարարը կատակ է անում ու ափսոսում, թէ ինչու Ռոստևանը իր թագաւորութիւնը տւաւ աղջկանը և անդառնալի զրկւեց և՛ թագից ու փառքից, և՛ էնքան հարստութիւնից ու չեղած տեղից ցաւ ու վիշտ ստեղծեց իրեն համար։ Թագաւորը մի քիչ զարմանում է, մի քիչ էլ նեղանում, որ իրեն հետ էսպէս կատակ են անում, ու ասում է.

—Ձէ, աչքի լուս, գլխի չընկար.
էտ բեռը ես հեշտ կը տանեմ,
բայց թէ մի ցաւ սիրտս է մտել
ու չը գիտեմ թէ ինչ անեմ։
Խըփըշտեցի ինչպէս մի ձու
իմ արմաղան գարնան օրեր,
ծերութիւնը սըրտիս մէջը
բուն է դրել՝ ինչպէս մի վէր։
Ծէրէ ի ծէր Արաբըստան,
ինչ որ հիմի կայ իմ ճանգը,
էլ մարդ չը կայ, որ գիտենայ
կռիւ տալու կարգն ու հանգը։
Ազիզ մազիզ մեծացրել եմ
մի հատ աղջիկ դօշիս կըպած,
չեմ ունեցել տըղայ զաւակ,
կուչ եմ եկել սիրտըս խըփած։
Իրեն հօր պէս նա կիմանար
թէ ո՛նց գըցէր նետ ու գընդակ.
Աւթանդիլը գիտի մի քիչ,
էն էլ սովրեց իմ ձեռի տակ։»

Աւթանդիլը էս որ լսում է՝ ժպտում է։ Թագաւորը հարցնում է ժպտալու պատճառը։ Սպարապետը խոստանում է ասի, եթէ միայն Թագաւորը չի բարկանայ։ Խօսք առնելուց յետոյ ասում է թէ՝ Թագաւորը զուր է պարծենում էնտեղ, որտեղ կայ ինքը՝ Աւթանդիլը։ Եթէ ուզում է՝ դուրս գայ մրցութեան։ Թագաւորը յօժար է կենում, ու վճռում են, իրենցից որը յաղթէ՝ երեք օր մնայ անգդակ։ Իսկոյն տխրութիւնն անց է կենում, ուրախութիւնը տիրում է ամենքին ու մրցութեան՝ որսի հանդէսի պատրաստութիւններ են տեսնում առաւօտեայ համար։

դ.

Նոր էր ծագում առաւօտը
ետ քաշելով մըթան թաղիք,
Թագաւորի տան առջեը
բուսաւ ինչպէս շուշան ծաղիկ։
Շուշան, հագած վառ ծիրանի,
դէմքն էր յակինթ կարմիր վառման,
ոտից գլուխ սպառազէն,
ու ոսկեկար գըլխի չալման։
Իր կարմիր ձին խրխընջալով
փորփըրում էր ոտով գետին,
Ռոստեմի միտն էր գըցում,
թէ հասել է ժամը ետին։
 Թագաւորը ձիուն հեծաւ,
ետ մընացին շէն ու գեղեր,
չորեք կողմը դաշտը տընտղեց,
փակեց, կապեց որսի տեղեր...
Ձիաների ոտի փոշին
վեր էր ըլնում ինչպէս որ մուխ,
արեգակի պէծն ու շողքը
մթնեցնում էր ամպի պէս թուխ։
Որսորդները ծէրէ ի ծէր
տափն անցկացան ողջ չափէչափ,
նըրանց արագ նըժոյգներին
պատեց քըտինքն, ինչպէս որ քափ։
Կոտորեցին ու խըժռեցին
գազաններին, թէ չար, թէ լաւ,
մինչև նրանց կարմիր արնից
ողջ թաթախեց իրենց հալաւ,
մինչև նրանց կարմիր արնից
կարմիր ներկւեց դաշտը բոլոր,
ու բարկացաւ նրանց վըրա
վերևումը Հայրն Երկնաւոր։
Տափն անցկացան՝ ջուր էր հոսում,
Ջըրից դէնը ժայռ անհագին.
Գազանները ընկան անտառ,

ուր էլ վազել չէր կարող ձին։
 Փողը փըչեց. արնոտ որսին
դադար տւին, թողին ձեռից,
Ռոստեմն ու Աւթանդիլը
յոգնած իջան ձիաներից։
Նըստոտեցին ծառերի տակ,
իրարու հետ հանաք արին,
հանաք արին ու պատմեցին՝
ոնց անց կացաւ չարն ու բարին։
—Ես յաղթեցի,—մին սա, մին նա
ասում էին մէկըզմէկի,
ծիծաղելով, հանաքներով,
ինչպէս ընկեր մի հասակի։
Եկան որսի վըկաները,
հարցմունք արաւ արքան էսպէս.
—Ճըշմարիտը դուք ասացէք,
ու չը պաշտէք էստեղ երես»։
Ասաւ. մինը առաջ եկաւ՝
—Արքայ, ասաւ, ձեռը դօշին,
ճիշտը թողած՝ սուտը խօսել
մի՞թէ կարայ ոտից փոշին։
Ամեն բանը չի պատմւիլ,
ձեզ պէս մարդկանց հեշտ չի դատել...
բայց դըրա հետ նետ գըցելում
դու չես կարող համեմատւել։
Թէ գիտենանք մեզ ամենքիս
մասմաս կանես—էլ ճար չը կայ,
մեր խօսքերը քեզ չեն օգնի,
մի մազի չափ քեզ պէտք չեն գայ։
Աւթանդիլըդ նշանումը
նետն էր գըցում մինչև թեը,
նըրա զարկին ոչ թէ որսը,
չէր դիմանալ ինքը դևը։
Երկուսովըդ քսան հարիւր
գազան էք դուք մահին տըւել,
բայց քսանով Աւթանդիլըդ
սպանել է քեզնից աւել։

Ինչքան որ դու նետ գլցեցիր՝
Աստուած քեզ տայ էնքան տարի,
բայց թէ գետնից շատ ենք առել
փոշոտներից քո նետերի...»
Ռոստեւանին դուր էր գալիս
էս գործն, ինչպէս մի խաղ նարդու,
սիրում էր նա քաջութիւնը
իր մեծացրած տղամարդու։
Էսպէս նրանք խօսում էին
էն հովասուն ծառերի տակ,
նրրանց շուրջը խուրձ խուրձ կանգնած
զինուորները յաղթահասակ։
Շոթա Ռուսթաւելի, թարգմ. Սարգիս

1. Ի՞նչ ես կարծում՝ ինչով վերջացաւ այս պատմութիւնը.
2. Թագաւորի իր աղջկան տուած խրատներից ամենամեծը ո՞րն է:
3. Ընդգծի՛ր ամենից աւելի սիրուն եւ ամենից աւելի խոր մըտքեր պարունակող տեղերը։

ՆԻՒԹ. Ի՞նչ տեսակ մարդ է Ռոստեւան թագաւորը։

Ռոստեւանի եւ Աւթանդիլի մրցութիւնը մի հատուած է Շոթա Ռուսթաւելու՝ Ընձենաւոր հըռչակաւոր վիպասանութիւնից, որ վրացոց գրականութեան ամենամեծ ստեղծագործութիւնն է։ Շոթա Ռուսթաւելին ապրում էր Վրաստանի Թամար Թագուհու օրով (տասներկուերորդ դարի վերջը և տասներեքերորդի սկիզբը), և նրա պալատական բանաստեղծն էր։ Վիպասանութեան մէջ նկարագրւած են ինքը Թագուհին (իբրև Թինաթինա), նրա ժամանակակից նշանաւոր մարդիկ իրենց պալատական և իշխանական նիստ ու կացով։

Աւագ-չաւաճ—պալատի ծիսակատարութիւնների, հանդէսների և ճաշկերոյթների կարգադրիչ։

ծիրանի—պայծառ կարմիր գոյնի կտոր, որից պատրաստում են թագաւորի վերնոցը։
արմաղան—շատ գեղեցիկ, չքնաղ, սքանչելի։
ծնծղայ—երկու պղնձէ ափսէներից կազմած գործիք, որ իրար զարնելով հնչեցնում են։
հազարփեշտ—գինու կոթաւոր մեծ թաս։
բազմական—սեղանին բազմած մարդը կամ հասարակութիւնը։
սպառազէն—զինւած, զրահաւորւած։
չալմա—(արաբ.)—արաբական գլխի փաթթոց։
խալաթ—զգեստ, հագուստ։
սպարապետ—ձիաւոր զօրքի ընդհանուր հրամանատար։
դոշ—(թուրք.)—կուրծք։
գոփել—յափշտակել, խլել, կեղեքել։
վառման—վառուող։

---

1. Ի՞նչ ասել է՝ մինուճար, ճեզ, ճժոյգ, ծեղ, աւար, աչխածակ, խնդութիւն, նախարար, յօժար, պէծ, նարդի խաղ, քաղիհ։
2. Իսկոյն եւեթ, այնտեղ եւեթ, ճիմիսկ եւեթ, այն օրն եւեթ. գտի՛ր ուրիշ նման օրինակներ։ Ի՞նչ տեսակ բառերի հետ է գործածւում եւեթ և ի՞նչ իմաստ է տալիս։
3. Բացատրի՛ր գլուխ վեր բերել, երես պաշել, մէկի ձեռքի տակ սովորել ասույթները։

---

65. Անապատում

ա.

Թխադէմ գիշերը աչք-ունքը կիտած տարածել էր իր սեաթոյր թեւերը հարթ, աւազոտ անապատի վրա։ Մութ-կապոյտ երկնքի միայն բարձր կէտն էր երեւում իր աղօտ, առկայծուն կանթեղներով, իսկ հորիզոնը մթութեան մէջ էր ընկղմւած։ Մեռելութիւն էր տիրում այդ միապաղաղ տափաստակի վրա. ձայն ձուն չըկար. անշարժ էր աւազի ծովը։

Բայց մի վայրկեան ևս, և ամայի անապատը դղրդաց, շարժւեց. անցաւ մի վայրկեան ևս, կրկնեց նոյն դղրդոցը աւելի հուժկու և ահարկու, կրկնւեց և տարածւեց ամբողջ հարթութեան վրա ու վըրդովեց տիրող խաղաղութիւնը։

Կենդանիների թագաւորն էր, որ իր մռնչիւնով սարսափահար արաւ. նա՝ կիզիչ արևից թաքնւած՝ ամբողջ օրը մրափել էր իր որջում, այժմ դուրս էր եկել։

Նրա մռնչիւնը տարածուեց մի ակնթարթում, և բոլոր կենդանիները փշաքաղած ու զարհուրած ետ-ետ փախան իրանց որջերը։

Բայց ո՞վքեր էին այն երկու խօսուն արարածները՝ անապատի մէջ մոլորուած... Մի՞թէ նրանք չը լսեցին և չեն սարսափում ահեղագոչ մռնչիւնից։

Մայր ու որդի են այդ երկուսը, անապատում իրենց ճամփան մոլորած, երկար-երկար թափառած և յոգնած։ Նրանք էլ լսեցին հզօր ազդարարութիւնը, զարզանդեցին, սարսուռ անցաւ նրանց մարմնով և քիչ էր մնում երեսն ի վեր գետին ընկնէին, բայց գնում են, գնում են խոնջած քայլերով, գնում են ոլոր-մոլոր, առանց իմանալու, թէ ուր։

—Մօտենում է, մայրիկ, այն սարսափելի ձայնը, մօտենում է. —ասաւ զաւակը և շունչը կտրած, մօր փէշից կպած՝ էլ չը կարողացաւ խօսել, ոչ էլ նիհար, անզօր ոտները աւազի միջից դուրս քաշել։

—Ոչինչ չը կայ, մի վախենայ, որդեակս, եկ, եկ, շալակս առնեմ քեզ, յոգնել ես.—ասաւ մայրը և իր միակ աչքի լոյս որդուն՝ ահ ու դողի մէջ շալակը առաւ։

բ.

Անհաբեկ մայրը իր թանկագին բեռը շալակին՝ շտապում էր առաջ։ Նա գնում էր արագ շարունակ շուրջը նայելով, բայց ոչինչ չէր տեսնում. աչքերովը կարծես առիւծին էր փնտռում։

Ահա նորից մռնչիւն և աւելի մօտից։ Կանգ առաւ իսկոյն, քարացաւ մայրը, սաստկացան սրտի զարկերը, ոտները թուլացան, ամբողջ մարմինը սառը քրտինք ծածկեց և ընկաւ։ Խելքը դեռ գլխին էր. նա մտածում էր քնած որդուն աւազի տակ ծածկել, թող ինքը միայն անկշտում գազանին զոհ դառնայ, միայն թէ իր սիրելի որդին նրա ճիրաններից ազատուի։ Սկսեց փորել, բայց ձեռքերում ուժ չը կար. փխրուն, սառն աւազը չը կարողացաւ դէս-դէն անել, մնաց նուաղած՝ ձեռքն աւազի մէջ խրած։

Դարձեալ մռնչիւն... բայց այս անգամ փոխանակ սարսափեցնելու և աւելի ուժասպառ անելու, քիչ ուժ տուաւ. կարծես առիւծը հեռանում էր, ձայնը աւելի հեռուից էր գալիս։ Մայրը ծալապատիկ նստած համբուրում էր քնած տղին և նրա գանգուր մազերն էր փայփայում ուրախացած։

Բայց չը պէտք էր ուշացնել, պէտք էր հեռանալ։ Եւ նա առաւ որդուն կռնակը և առաջ գնաց։

Բաւականին ճանապարհ կտրել էր, երբ տեսաւ ոտներումը էլ ուժ չի մնացել, կանգնեց, վայր դրաւ նորից իր քնած մանուկը զգուշութեամբ, մէջքից վայր բերաւ մնացած պաշարն ու կժի մէջ տաքացած ջուրը և նստեց։ Ի զուր էր աչքերին ուժ տալիս. նա ոչինչ չէր տեսնում, իր գլխի վերև մութ կապոյտ երկնակամարն էր իր աղօտ աստղերով։ Խոր հոգոց քաշեց ու պառկեց. քիչ-քիչ քունը ծանրացաւ նրա աչքերին և նա պինդ գրկած իր թխադէմ, գանգրահեր տղին՝ քնեց։

գ.

Արևը նոր էր ճաճանչել, երբ եգիպտացի կինը տղին զարթեցրեց և ձեռքը բռնելով շարունակեց ճանապարհը։ Արևի ճառագայթները սաստկանում էին. աւազը տաքանում էր, բայց նրանք անդադրում

քայլում էին։ Կէս օրւայ ժամը հասաւ. կրակ էր թափում վերևից արևը. կրակ էր կտրել հատիկ հատիկ աւազը. այրւում էին տղի ոտները. շարունակ ետ էր մնում. վերջապէս էլ չը կարողացաւ առաջ գնալ։ Կժի մէջ եփ եկած ջուրը, որ մի խմելու էր մնացել, ծարաւից տապակւող մայրը, իրան զրկելով՝ տուաւ որդուն, բայց այդ ջուրը չը կոտրեց տղի ծարաւը։

Այրւում էր խեղճ մօր սիրտը ամեն անգամ, երբ աղանձւող բերանով հազիւ հազ արտասանում էր որդին.

—Մայրիկ, ծարավ եմ։

Ջուր չը կար, ի՞նչ աներ, ի՞նչ մոխիր տար գլխին դժբախտ կինը։ Աստված իմ, պիտի դուրս գա՞ր վերջապես այս անապատից, թե պիտի դալկանար ու մարեր. իր սիրասուն զավակը պապակված ու ցամաքած այդ կիզիչ արևի տակ, այդ կայծկլտող ավազների մեջ։

Տղան այլ ևս չէր շարժվում. ընկած էր անշարժ, անձայն, շունչն էլ չէր լսվում։ Մոր աչքերում էլ արցունք չը կար, չորացել էր. մորմոքած սրտով խելագարի պես վրան ընկավ, համբուրեց, լիզեց և ապա կուրծքն ու գլուխը զույգ ձեռքերով ծեծելով՝ նորից ոտքի կանգնեց։

Կանգնած է նա անշարժ, արձանացած և անթարթ նայում է որդու անշարժ մարմնին։ Ուրիշ ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր զգում. երկա՜ր, երկա՜ր։ Բայց հանկարծ երբ աչքերը վեր առավ ու նայեցավ դեմը, ի՞նչ էր այնտեղ, հեռուն... Օազի՞ս, մի՞թե իրավ օազիս, արդեօք բախտը չէ՞ր ծիծաղում իր վրա...

Այլալվեց կինը սկզբում, և չէր ուզում իր աչքերին հավատալ, բայց յետոյ ուշքի եկավ, դիտեց ու դալարը նշմարեց։ Գիրկն առավ որդուն և ոտքերի բոլոր ուժովը վազեց դեպի երևացող արմավենիները, դեպի փրկարար ջուրը։

Մելիք

ՆԻՒԹ. Ծովի վրա։ Նկարագրի՛ր բաց ծովում նավակի մեջ մնացած հայր ու որդու վիճակը։

Սևաթույր—*սևագույն։*
առկայծել—*կայծկլտալ, կայծեր արձակել։*
հուժկու—*ուժեղ*
փշաքաղվել—*մարմինը փուշ փուշ լինել։*
աղանձվել—*այրվել, աղանձի նման դառնալ։*

---

1. Առկայծող—առկայծուն, խօսող—խօսուն, փայլող—փայլուն, փխրող—փխրուն, սիրող—սիրուն.—*շարունակի՛ր և որոշի՛ր՝ օրինակների մեջ գործածելով թե ինչ տարբերություն կայ երկու մասնիկների մեջ։*
2. *Հանի՛ր արմատներն ու բացատրի՛ր* ահեղագոչ, ահաբեկ, գանգրահեր։
3. Ճիրան, ճանկ, մագիլ *ինչով են տարբերվում* եղունգ-*ից։*
4. Ծարավ *արտայայտելու համար ինչ բառեր և դարձվածքներ գիտես։*
5. *Ի՞նչ ասել է* մորմոք, նվաղել, աղանձ։
6. Գլխին մոխիր տալ *ուրիշ ինչպես կասես։*

66. Երևանյան դաշտի շոգը

ա.

Ճաշվայ շոգը անց էր կացել։ Սար ու ձոր գլուխները էլ ետ բարձրացնում էին, որ փոքր շունչ առնեն։ Արեգակը Մասիսի քամակիցը՝ հանդարտ աչքը բաց էր արել ու մունջ-մունջ Երևանի բերդին մոտիկ էր տալիս ու էն է ուզում էր, որ կամաց կամաց մեջ մտնի։ Թանձր սև մուժը եկել, բոլոր դաշտերի, ձորերի երեսը բռնել, օդը ծանրացրել, կալել էր։ Թռչունը տեղիցը չէր ուզում ժաժ գայ, հավը բնիցը գլուխը հանի։ Ամեն տեղից ոտքը խաղաղվել, ամեն տեղից ձէն ու ձուն լռվել, պապանձվել, փասայ-փուսէն քաշվել էր։

Ջուր ջրողը առվի վրա էր թեք ընկել, քնած մնացել, վար ու ցանք անողը՝ հանդումը, այգեպանը իր ծառի տակին շվաքումը քուն մտել, հանգստացել։ Մարդ ու անասուն գեղերումը էլ չէին երևում։

Երբեմն էս ու էն բլրի ծէրից, էս ու էն սարի լանջից, ճամփում, հանդում մէկ կերպարանք սևին էր տալիս, ձիու քամակից դէս ու դէն թեքվում, երեսի, քամակի վրա շուռ գալիս, էլ ետ գլուխը ուղղում, ասպանդակն ու սանձը ժաժ տալիս, ձիուն քացի տալիս, կամ մտրակով խփում, որ ոտները մի քիչ արագ փոխի, շուտ տեղ հասնի։ Մէկ ուրիշն էլ ձեռը ականջի արմատին դրած՝ տխուր, բարակ ձէնով մէկ բայաթի էր սկսել քթի տակին, ձիու սանձը կենդանու գլխին գցած, բզում էր, գնում, որ տուն հասնի ու իր յոգնած, ջարդված մարմինը կամ մէկ շվաքի տակ հանգստացնի, կամ իր տան դուռը, քանի որ դեռ մութը վրա չէր հասել, իր ընտանիքի երեսը տեսնի ու սիրտը բացվի։

Մէկ կանաչ խոտ, մէկ դալար թուփ, կամ մէկ ծաղիկ, մէկ տեղ էլ է չէր երևում, որ մարդ հոտն առնի, կամ երեսին մոտիկ տայ, սիրտը բացվի ու ճամփի երկարությունը մոռանայ, կամ շոգի ձեռից էրված, խորոված մարմին հովություն տայ, էնպէս էր սար ու ձոր, դաշտ ու հանդ չորացել, խանձվել ու պապանձվել։ Միմիայն խոտերի ծիղերն ու ծղնօտների սուր-սուր ծէրերն էին էստեղ, էնտեղ՝ ցից-ցից գլուխ բարձրացրել, տխուր, տրտում, մոլորված, պաշարված կանգնել, մնացել։

բ.

Օձ, կարիճ, խլէզ, բզէզ ու ինչ կերպ կենդանի ասես՝ մորեխ, մժեղ՝ հրապարակ էին բաց արել։ Որը մէկ թուփի տակից, որը մէկ

քարափի գլխից, որը խոտերի միջին կամաց-կամաց ժաժ գալով, պոչ ու գլուխը իրենց քաշելով, կամ ծլունգ լինելով, էլ ետ սուս անելով, կամ գետնի, ապառաժի վրա սողալով, շւացնելով, փշշացնելով, ծւալով, ծղրտալով ոտն էին ելել, ուզում էին իրենց արևի ձէնն ածեն։ Որն էլ իր բնի առաջին արևկող անելով, գլխները հանել, մունջ-մունջ ականջ էին դրել, սուր-սուր աչքները ցցել, ձլացել, էս կողմն, էն կողմն էին մտիկ տալիս։

Էսպէս մեռել, լռել էր բնութիւնը ու մէկ շշուկ էլ է մէկ տեղից չէր լսւում։ Միմիայն հեռու տեղից մէկ բարակ քամի երբեմն-երբեմն փչում, ծառերի տերևները սլլացնում, ժաժ էր գցում ու գոլ-գոլ մարդի երեսին, բերնին՝ ձեռը նազուկ քսում, շւտով անց էր կենում ու փշերի, խոտերի, քարափների, ձորերի մէջը մտնում։

Մթնած ու լռած դաշտի գեղերը, հանդերը, փոսերը՝ ինչպէս ծխի մէջը խրւած, կամ ինչպէս սև ամպի կտորներ, կամ ինչպէս էրւած, խանձւած տեղեր՝ էս տեղից էն տեղից սևին էին տալիս ու խառնիխուռն երևում։

Խաչատուր Աբովեան

---

1. Ասա մուժ բառի համանիշները։

2. Ի՞նչ ասել է՝ ամեն տեղից ոտքը խաղաղել էր, փասայ փուսեն հաւաքեց, կենդանիներր իրենց արեւի ձենն էին ածում.

3. Ձեն ու ձուն, փասա—փուսա, ծակ ու ծուկ, չեմ ու չում... գտիր ուրիշ այսպիսի զոյգ-բառեր։

---

67. Գորտն ու ագռաւը

Գորտը ընկած ցամաք առուն,
կռռկռում էր ու կռռկռում։
—Քի՛չ կռռկռա, այ գորտ քեռի,
աշուն կը գայ՝ ջուր կը բերի,—
յոյս էր տալիս մի ծեր ագռաւ։
—Է՛, ի՞նչ անեմ, սիրտս վառաւ.
մինչև ցամաք առուն ջուր գայ,
գորտի աչքն էլ հօ դուրս կը գայ։

Աթաբէկ Խնկոյեան

68. Քեօրօղլին եւ Բոլի բէգը

ա.

Քեօրօղլին գող չէր և ոչ աւազակ, այլ մի ինքնագլուխ իշխան, իսկ այդ անկախութեանը հասել էր նա իր անվեհերութիւնով և քաջագործութիւններով։ Նա չէր յափշտակում և կողոպտում, այլ հարկ ու մաքս էր առնում և չտւողներին անխնայ պատժում։

Ամեն օր գանգատ ու բողոք էր, որ անընդհատ հասնում էր Իրանի թագաւորին։

Քեօրօղլին, ասում էին, թալանում է քարւանները, գերի է տանում հարուստ վաճառականներին և մինչև մեծ փրկանք չի առնում, բաց չի թողում։

Գիւղացիներին ոտքի է կանգնեցնում իրենց խաների ու բէգերի դէմ, կոտորում և կոտորել է տալիս կալւածատէրերին ու տէրութեան կապալառուներին, և այսպիսով իր կողմն է գրաւում երկրագործ ժողովրդին։

Շատ անգամ կտրում է գիւղացոց յարաբերութիւնը քաղաքացոց հետ, ուտեստի պաշարը թանգացնում, և մինչև քաղաքներից մեծ վճար չի առնում, յարաբերութեան կապը չի արձակում։

Որտեղ մի կարգէ դուրս քաջ տղամարդ կայ, գնում է Քեօրօղլու դրօշակի տակ մտնում։ Որտեղ մի փախստական և մահապարտ կայ, նրա հովանաւորութեանն ու պաշտպանութեանն է դիմում։ Այսպիսով նա կազմակերպած խումբեր ունի երկրի բոլոր ամուր տեղերում։ Բոլոր անմատչելի բերդերին տիրելով՝ ամենի վրա իր անունն է դրօշմել։ Բոլոր խումբերն իրար հետ սերտ կապ ունեն, և հարկաւոր դէպքերում միմեանց օգնութեան են հասնում։

Ամեն հաւատի ու ցեղի մարդ կայ նրա խմբի մէջ. բայց ով որ միանգամ այդ խմբի մէջ է մտնում, ո՛չ մի հաւատի չի ծառայում։ Ինքը պաշտելու չափ սիրում է ամեն մէկին և ամենի յիմար կամքը կատարում, նոյն իսկ իր կեանքը վտանգի տակ դնելով։ Իրենց կանանց նրանք փակւած չեն պահում. կանայք պարտաւոր են զինավարժութեամբ պարապել, ձիավարութիւն գիտենալ և հարկաւոր դէպքերում քաջութեամբ կռւել։ Այս կերպով ահա նա հաւաքել է երկրի ամենագեղեցիկներին և ամենաքաջերին, որոնք հմայւածի պէս անձնւիրութիւն են ցոյց տալիս նրան, և անհաւատ լինելով՝ նրան միայն հաւատում ու սիրում։

Բ.

Իրանի թագաւորը ահագին զօրքով ուղարկեց իր ամենից փորձառու զօրապետին Բոլի բէգին և պատուիրեց նրան, որ Քեօրօղլուն կալանաւորի, պաշարելով այն բերդը, ուր որ նա կը լինի։ Սպանելու հրաման չը տւաւ, ընդհակառակը՝ ասաւ որ՝ եթէ Քեօրօղլուն սպանես, քեզ կախաղան կը բարձրացնեմ. եթէ քաջ ես, նրան պէտք է բերես ինձ մօտ ողջ առողջ։

Քեօրօղլին այդ ժամանակ գտնւում էր մեր երկրումը, իսկ մեր երկիրը Իրանի իշխանութեան տակն էր։

Նա սովորութիւն ունէր շատ անգամ ծպտած ման գալու։ Նըստում էր մի իշի կամ ջորու վրա, աշուղի հագուստով, սազը մէջքից կախած, առանց որ և է զէնքի և գիւղէգիւղ թափառելով, զանազան տեղեկութիւններ էր հաւաքում և ըստ այնմ իր զգուշութիւնը գործ դնում և անելիքն անում։ Մէկ անգամ էլ հէնց այսպէս ծպտած ժամանակ լսում է, որ Բոլի-բէգը եկել է մեծ զօրքով և բանակ է դրել Թոնա գետի մօտ։ Եկել է ոչ իբրև զօրքով պատերազմ, այլ իբրև մի ցեղապետ իր ժողովրդով ամարանոց, իր հետ բերել է և իր կանանցը։ Իրանց հետ ունեն նաև ոչխար, տաւար, ուղտեր և ամենայն ինչ։

Քեօրօղլին, առանց երկար մտածելու, իր ջորին քշում է ուղիղ դէպի այդ բանակը, որ կշռի նրա ուժ ու քանակը։ Հէնց որ նրան տեսնում են, ամեն մէկն իր կողմն է քաշում և հրաւիրում իբրև աշուղի, բայց Քեօրօղլին ոչ մէկին չի լսում, քշում է ջորին և իջնում զօրապետի վրանի առջև։ Բոլի-բէգը շատ ուրախանում է և հրամայում է նրանց ցոյց տալ իր շնորհքը, զւարճացնել իր խաղերով, և եթէ գիտէ, Քեօրօղլու խաղերիցն ասի։ Այս առաջարկութիւնից օգուտ քաղելով՝ Քեօրօղլին ասում է հետևեալ խաղը մեղմացնելով իր ահեղ ձայնը, որ չը ճանաչւի։

Ո՞վ կաք այս բանակում իմ ծանօթներից,
Շուտով իմ քաջերին մի լուր հասցրէք.
Թող յարձակւեն ամեն կողմից խմբերով՝
Ինձ էլ մէկ վահան ու մի թուր հասցրէք.
Հասէք, շուտով հասէք,
Մի լուր հասցրէք։
Չեն ճանաչում արծիւն ագռաւի շորում,
Չորս կողմից ծաղրում են ու կոցահարում,
Քեօրօղլուն բռնելուն թակարդ են լարում,

Եկէք սրանց գլխում մի խելք մտցրէք,
Հասէք, շուտով հասէք,
Մի լուր հասցրէք։

Քեօրօղլու խաղի միտքը լաւ հասկացան նրա բարեկամ լրտեսները և շտապեցին լուր տանելու նրա քաջերին։ Բայց Բոլի-բէգն էլ կասկածի եկաւ, թէ սա ինքը չէ՞ արդեօք Քեօրօղլին, և հարցրեց.

—Աշուղ, այդ խաղը ե՞րբ է ասել Քեօրօղլին։

—Միթէ քեզ յայտնի չէ, խան,—պատասխանեց Քեօրօղլին.— որ փադիշահը քանիցս անգամ ուզեցել է կալանաւորել Քեօրօղլուն. մէկ անգամ էլ Բոլի-բէգին է ուղարկում մեծ զօրքով։ Քեօրօղլին աշուղի հագուստով պատահմամբ ընկնում է նրա բանակը, ուր և ասում է այս խաղը, որով իմաց է տալիս իր քաջերին, թէ ուր է ընկել ինքը, և նրանք էլ գալիս են ազատում։

—Այդ Բոլի-բէգը չի լինում, աշուղ, այլ գուցէ Վելի բէգը լինի եղած։ Բայց դու այս ասա, ինչո՞վ ես հաստատում, որ դու ինքդ չես Քեօրօղլին, որովհետև ինքդ քեզ մատնում ես, խոստովանելով, որ Քեօրօղլին երբեմն ծպտած աշուղութիւն էր անում։

—Խան, հէնց այդպէս էլ հարցրել է Բոլին, և տեսէք՝ Քեօրօղլին ինչ է պատասխանել.

Ի՞նչով ուզես, Բոլի, ես երդում կ'ուտեմ,
Որ ես մի խեղճ հայ եմ և ոչ Քեօրօղլին.
Երկինք, գետինք, Աստուած վկայ կը կանչեմ,
Որ ես մի խեղճ հայ եմ և ոչ Քեօրօղլին.
Հայ եմ, հա՜յ, հարա՜յ,
Հայ եմ, ուղիղ հայ։

Եթէ թուրը ձեռին Քեօրօղլուն տեսնես,
Հաւատա ինձ, Բոլի, դու կը սարսափես,
Թէպէտ սազ էլ ունի, երգում է ինձ պէս,
Բայց ես մի խեղճ հայ եմ և ոչ Քեօրօղլին,
Հայ եմ, հա՜յ, հարա՜յ,
Հայ եմ, ուղիղ հայ։

—Սպասիր, աշուղ,—ասում է Բոլին,—այդ իմ հարցի պատասխանը չէր։ Ես իսկական Բոլի-բէգն եմ և ոչ Ալին կամ Վելին, և հիմա ուղղակի հարցնում եմ քեզ. ինչո՞վ ես ապացուցանում, որ դու Քեօրօղլին չես։

—Խան, ես այդպէս չը հասկացայ,—պատասխանեց Քեօրօղլին.

—Ես հէնց իմացայ, թէ դու Բօլի-բէգի հարցումը տւիր, ես էլ Քեօրօղլու պատասխանն ասի։ Եթէ ինձ վրա կասկած ունես, որ մաքովս անցնել չէր կարող, ուրեմն լսիր իմ պատասխանը։

Քեօրօղլին ուզում էր միայն զբաղեցնել Բօլի-բէգին, մինչև հասնէին իր քաջերը, բայց և այնպէս, նա այլ ևս չի ուզում իրեն ուսատացնել և յայտնում է, թէև մութ կերպով, որ ինքն է Քեօրօղլին և ունի հայկական ծագում։

Ես մի Ջալալի եմ, անունս է Ռուշան,
Հօրս անունն է Խոր, մօրըս՝ Խորիշան.
Արհեստով աշուղ եմ, ինչպէս տեսնում էք,
Որ ես Քեօրօղլին չեմ, ահա ձեզ նշան։

Եթէ իրաւ ես լինէի Քեօրօղլին,
Իմըս լինէր նրա թուրը, նրա ձին,
Այն ժամանակ կը տեսնէիր, Բօլի-բէգ,
Որ Քեօրօղլուց պակաս քաջ չէ Խօրօղլին։

Քեօրօղլին է իմ սիրելին, իմ խանը,
Ես նրա երգիչն եմ, նա իմ պաշտպանը,
Նրա ահեղ ձայնը միայն լսելով՝
Դողում, զարհուրում է ողջ Պարսկաստանը։

Վախ չունիմ մահ ու ահից,
Ազատ եմ մահու ահից,
Մարդիկ մահով չեն մեռնում,
Այլ միայն մահու ահից։

Այս երգից յետոյ Բօլի-բէգն ասում է.

—Աշըղ, դու Քեօրօղլին ես, թէ Խօրօղլին, այդ ինձ համար միևնոյն է, երկուսդ էլ վտանգաւոր էք։ Ես Խօրօղլուն կը բռնեմ, թող Քեօրօղլին գայ նրան ազատէ։

Այս ասելով Քեօրօղլու ոտները կապել է տալիս, ուզում է կապել տալ և կռները, բայց Քեօրօղլին խնդրում է, որ կռներն ազատ թողնեն ու սազը ձեռքիցը չառնեն։

—Խան, այս շատ մեծ պատիւ է, որ ինձ տալիս էք, ասած է՝ «մէկ օրւայ խանութիւնն էլ է խանութիւն». դուք մէկ օրով ինձ Քեօրօղլի էք շինում, թոյլ տւէք ուրեմն Քեօրօղլու խաղերիցն ասեմ ձեզ համար, մինչև կը բռնէք իսկական Քեօրօղլուն և խեղճ աշըղիս կազատէք։

Եւ Քեօրօղլին սկսեց բուն Քեօրօղլու ահեղ ձայնով հետևեալ խաղը.

Բօլի նամարդ արա, մեղքերդ քաւի,
Հրէս որտեղ որ է՝ քաջերըս կը գան.
Դագաղըդ շինել տուր, պատանըդ կարի,
Հրէս հոգիդ առնող դևերըս կը գան.
Եկէք, քաջեր, եկէք,
Էլ մի ուշանաք։
Մէկ կայ հազար արժէ, հազար կայ ոչ մին,
Ամբողջ բանակովդ չարժես իմ մէկին.

Գերանդիով, Թափուզներով ահագին,
Հրէս կացնով ջարդող գիժերըս կը գան.
Եկէք, քաջեր, եկէք,
Էլ մի՛ ուշանաք։
Քեօրօղլուս աթոռն է անառիկ Սասուն,
Հսկաներիս թիւն է մինչև քառասուն.
Լացէք գլուխներըդ, ով դուք անասուն,
Հրէս ձեզ պատառող վագրերըս կը գան.
Եկէք քաջեր, եկէք,
Էլ մի՛ ուշանաք։

Քեօրօղլու ահեղ ձայնից ոչ միայն մարդիկ սարսափեցին, այլ և բոլոր անասունները, որոնք կարծեցին թէ առիւծ է մռնչում։

—Լռի՛ր, յանդուգն,—բղաւեց Բօլի-բէգը կատաղած և հրամայեց կապոտել Քեօրօղլու կռները։ Քեօրօղլին ոչ մի ընդդիմութիւն ցոյց չը տւաւ։ Նա այդ բոլորը մի կատակ էր համարում, իսկ նրանց Թոկերը իր համար մի սարդի ոստայն։

Գ.

Քեօրօղլու ձեռք ու ոտքը կապոտելուց յետոյ, մի թոկ էլ վզիցը կապեցին և Բօլի-բէգի հրամանով տարան Թօնա գետի ափը, որ նրան ընկղմեն գետի մէջ առանց խեղդելու, այլ այնքան ընկղմեն և հանեն, մինչև ուժից ընկնի խպառ և ուղիղը խոստովանի, եթէ ինքը ճշմարիտ Քեօրօղլին է։

Գետափին ձիաներ կային օրուգ տւած։ Հէնց որ մօտեցաւ այդ ձիաներին, Քեօրօղլին Թոկերը կտրտեց, իր տանողներին քարերի պէս շպրտեց գետի մէջ, իսկ ինքը մի ոստիւնով Թռաւ մի լաւ ձիու վրա և անթամք ու անսանձ ձիու գլուխը երկու ձեռքով իր ուզած կողմն ուղղելով, դուրս պրծաւ բանակից։ Այս անակնկալ դէպքի վրա ամենքն էլ շփոթւեցին ու շշկլւեցին, և բոլորովին սարսափեցին, երբ տեսան հեռուից մի թանձր փոշի բարձրացած վազում է դէպի իրանց այնպէս արագ, որ կարծես նրան մղում էր մի ահեղ փոթորիկ։

Այդ փոշին և մէգը բարձրացրել էին Քեօրօղլու քաջերի ձիերը, որոնք գալիս էին սրարշաւ և նրանց տրոփիւնը արդէն մինչև բանակն էր հասնում։ Բօլի-բէգը, որ Քեօրօղլու կողմից յարձակւելու երկիւղ չունէր բոլորովին, և ով կը համարձակւէր մի փոքրիկ խմբով ամբողջ բանակի վրա յարձակւել, շուտով պատրաստւեց դիմադրելու։

Բայց ինչ օգուտ։ Եկողները հազարներից ընտրւած մի մի դիւցազն էին, իսկ Քեօրօղլին էլ արդէն նստել էր իր Նժոյգ Ղռաթի վրա և ձեռքն առել իր վահանն ու Թուրը։ Նա գալիս էր բոլորի առջևից։ Բանակին մօտեցան թէ չէ՝ այնպէս յարձակւեցին, ինչպէս ժիր հնձողներ հասած արտի վրա, և սկսեցին հնձել անխնայ։ Ձիաւորները հնձում էին, իսկ ձիաները ոտնատակ տալիս, կասում։ Հնար չը կար դիմադրելու, զօրքը երեսը շրջեց և փախուստ տւաւ։ Փախաւ և Բօլի բէգը, բայց նրան շրջապատեցին և կալանաւորեցին։

Այս փառաւոր յաղթութիւնից յետոյ երբ որ վերադարձաւ տուն, Քեօրօղլին մի փառաւոր խնջոյք տւաւ, երգերով պատմեց իր սիրելի կնոջ Նիգեարին բոլոր անցքը և անուն անուն գովեց իր քաջերին, մէկ մէկ Թւելով ամեն մէկի արածը։ Նիգեարն էլ ի նշան շնորհակալութեան մի ահագին բաժակ լցնում էր գինով և իր ձեռքով տալիս ամեն մէկին։

Ղազարոս Աղայեան

ՆԻՒԹ. Հանի՛ր և լրացրո՛ւ այս յօդւածից միայն Բօլի բէգի մասին պատմածը։

Անվեհեր—անվախ։

մաքս—սահմանը անցնելու ժամանակ ապրանքներից առնւող տուրք։

փրկանք—գերիներին ազատելու վճարւող փողը։

կապալառու—որոշ վճարի փոխարէն որևէ մի շահաւէտ գործ ժամանակով վերցնող մարդ։

դրօշմ—կնիք։

կալանաւոր—ձերբակալւած, բռնւած մարդ։

պատանք—մեռածին փաթաթելու սաւան։

թոփուզ—(թուրք.) զարնելու գուրզ, մկունդ։

օրուգ տալ—օրըգել։

սրարշաւ—արագ վազելով։

---

1. Ասա մէկ բառով՝ երդում ուտել, կարգէ դուրս։
2. Ի՞նչ ասել է՝ իր դրօշակի տակ հաւաքել։
3. Հանի՛ր արմատներն և բացատրի՛ր՝ ինքնագլուխ, առաջարկութիւն։
4. Ի՞նչով է տարբերւում հովանաւորել-ը պաշտպանել-ուց։

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ



Ղազարոս Աղայեանը ծնւել է 1840 թւին Բոլնիս-Խաչէն գիւղում, Թիֆլիսից 60 վերստ հեռու։ Իր արտասովոր յիշողութիւնով և սուր մտքով նա հէնց մանկութիւնից զարմացնում էր բոլորին։ Եօթը տարեկան հասակում անգիր գիտէր անթիւ ժողովրդական երգեր, հեքեաթներ և խաղեր, որ լսում էր իրենց տան մէջ իջնող թափառական աշուղներից։ Գրել-կարդալ սովորեց իրենց գիւղի քահանայի աղջիկ Մանիշակի մօտ, յետոյ հարևան Շամշուլդէ գիւղի քահանայի մօտ, ապա մտաւ Ներսիսեան դպրոց։ Տուն վերադառնալիս՝ այնպէս անխնայ յարձակւում էր ժողովրդական նախապաշարմունքների վրա, որ հայրը զայրացած դուրս արաւ նրան տանից։ Եօթը տարի թափառեց Աղայեանը սար ու ձոր, որսորդների ու անտառաբնակների հետ, հազար ու մի գործի կպչելով, մինչև որ ընկաւ Թիֆլիսի տպարաններից մէկը։ Այստեղ նրա մէջ աւելի մեծ ուժով զարթնեց ուսման սէրը, և նա որոշեց իր ուսումը լրացնել հայրենիքին ծառայելու համար։ Մեծ դժւարութիւններով և զոհաբերութիւններով կարողացաւ հասնել Մոսկւա և Պետերբուրգ. այստեղ գրաշարութեամբ և եկեղեցում տիրացութեամբ փող էր աշխատում, իսկ ազատ ժամերը նւիրում էր ընթերցանութեանը, շփւում էր ուսանողների հետ, դասեր էր առնում, ժամանակի լաւագոյն ձգտումներով յափշտակւում։ Այստեղ նա գրեց իր «Արութին և Մանւէլ» վէպը, որ մեծ աջողութիւն ունեցաւ։ Յետոյ կաթողիկոսը նրան հրաւիրեց Էջմիածին որպէս տպարանի կառավարիչ և ապա «Արարատ» ամսագրի խմբագիր։ Վերջը նա ուսուցչութիւն էր անում Ախալցխայում, Ալէքսանդրապոլում, Երևանում, Շուշում, մի ժամանակ եղաւ Թիֆլիսի թեմական տեսուչ։ Իր ճշմարտասիրութեամբ երբէք չէր կարողանում տանել ոչ մի կեղծիք, ստութիւն և անարդարութիւն և կատաղի կռիւ էր մղում թէ հնամոլների և թէ տափակամիտ նորասէրների դէմ։ Աղայեանը եղաւ առաջին հայ մանկական գրողը։ Նրա «Տորք Անգեղ» վիպասանութիւնը, «Արեգնազան», «Անահիտ», «Գիւնազ տատի հեքեաթը» և այլ հեքեաթները, մանր մանկական երգերն ու խաղերը իրենց կենդանի լեզւով ու բանաստեղծական գեղեցկութիւններով հայ մանկական գրականութեան զարդը դարձան։ Շատ էր աշխատում դասատւութիւնը հայոց դպրոցներում պարզ ու բնական դարձնելու. ունի բազմաթիւ մանկավարժական գրւածքներ և «Մայրենի լեզու» դասագիրք։ Նրա ջանքերով հայոց գրականութեան մէջ տարածւեց նոր ուղղագրութիւնը։ Վախճանւեց 1911 թւին։ Իր կեանքը նկարագրել է «Իմ կեանքի գլխաւոր դէպքերը» վերնագիր կրող հետաքրքրական գրւածքում։

69. Քաջ Կիւիւը

Ճախիններում, գետին մօտիկ,
գեղափետուր ու խատուտիկ,
բարձրասրունք, ցըցունազարդ
ծվ է ճեմում սէգ ու հպարտ,
կի—ւի՜ւ, կի—ւի՜ւ...

Գեղափետուր ու խատուտիկ
քաջ կիւիւն է գետին մօտիկ,
իր գինուորներն արթուն չորսդին—
ուրուրն ու բուն, բազէն ու ցին։

Ուրուրն ու բուն, բազէն ու ցին
Լագլագի դէմ արշաւեցին։
Թեւին արաւ Լագլագն ահից.
—«Աման, ասաւ, մի՛ դիպչէք ինձ,
ինձ ու մանրիկ իմ ձագերին.
ճահճի միջին, առւի եզրին
մի հատ ոտից կանգնած էսպէս՝
քաշ կիւիւի Ջըրւորն եմ ես»։

Ուրուրն ու բուն, բազէն ու ցին
Ագռաւի դէմ արշաւեցին։
Թեւին արաւ Ագռաւն ահից.
«Աման, ասաւ, մի՛ դիպչէք ինձ,
ինձ ու մանրիկ իմ ձագերին.
ծառի ծէրին, սարին, քարին
սեւեր հագած ծընած օրէս
քաշ կիւիւի երէցն եմ ես»

Ուրուրն ու բուն, բազէն ու ցին
Սագի վըրա արշաւեցին։
Թեւին արաւ Սագը ահից.
«Աման, ասաւ, մի՛ դիպչէք ինձ,
ինձ ու մանրիկ իմ ձագերին.
տիղմի միջին ու մարգերին
օրօր—շօրօր, խոնարհ ու հեզ,
քաշ կիւիւի տնտեսն եմ ես»։

Ուրուրն ու բուն, բազէն ու ցին
Կըռունկի դէմ արշաւեցին։
Թեւին արաւ Կըռունկն ահից.
«Աման, ասաւ, մի՛ դիպչէք ինձ,

ինձ ու մանրիկ իմ ձագերին.
ամէն աշխարհ, որ աշխարհին
գարունը գայ՝ բանայ հանդէս—
քաշ կիւիւի Աշուղն եմ ես»։

Յովհ. Թումանեան

1. Ինչո՞ւ է կիւիւը Թագաւորի նմանեցրած, իսկ ուրուրն ու բուն, բազէն ու ցին՝ զինւորների։

2. Ինչո՞ւ լագլագը՝ Ջրբաժան է, ագռաւը՝ երէց, սագը՝ տանտիկին, իսկ կռունկը՝ աշուղ։

3. Այս բոլոր արշաւանքների մէջ կիւիւի արածն ինչ է։

ճախին—ճահճոտ մարգագետին։
խատուտիկ—նախշուն։
ցցուն—թռչունների գլխին ցցւած մի փունջ փետուր։
ճեմել—ման գալ, զբօսնել։
ուրուր, բազէ ու ցին—ցեղակից գիշատիչ թռչուններ։
շօրշօրալ—օրօրւելով, ճօճւելով ման գալ։

---

1. Որո՞նք են հետեւեալ բառերի արմատները. գեղափետուր, բարձրասրունք, ցցունազարդ, տնտես։

2. Ոտի ո՞ր մասերն են—սրունք, ոլոք, ազդր.

3. Ի՞նչ տարբերութիւն կայ տիղմի և ցեխի մէջ։

4. Արշաւել—ի՞նչպէս կարելի է ասել այլ կերպ։

5. Գործածի՛ր նախադասութիւնների մէջ և բացատրի՛ր ոտ բառի նշանակութիւնը.

ոտք դնել, ոտք ելնել, ոտք կոխել, ոտք լինել, ոտք մեկնել մեկի հետ.

ոտքը կտրել մի տեղից, ոտն անել, մեկի ոտքը գալ, մեկի ոտքը ընկնել, ոտքը քարի առնել, ոտքը գետնից կտրուել է, ոտքը պնդացնել.

ոտի տակ տալ, մեկի ոտի տակը փորել, ոտի տակ լինել, ոտքի կանգնել, ոտքի կանգնեցնել, ոտքի հանել, ոտքի ելնել, ոտքին տեղ անել, ոտքից ընկնել.

ոտքը բերել, ծանր,

ոտքով գլխով, ոտքի վրա, ոտքով երթալ.

տասը ոտք լայնութիւն, հրացանի ոտք, սարի ոտք, ոտանաւորի ոտք.



70. Մի փոքրիկ թագաւորութիւն

ա.

Գնում էինք Մամադ բէգի օբան։

Արևը արդէն այրում էր, երբ հասանք Եփրատի վերին հոսանքին. գետը այնտեղ ծանծաղ էր, կօշիկներս հանեցինք, հագուստներս վեր քաշեցինք, մտանք սառը ջուրը և անցանք։ Սկսաւ վերելքը։ Տեղ-տեղ ճանապարհը ձգւում էր քարքարոտ բլուրների փեշով, տեղ-տեղ գծում էր խիստ թեք լանջ։

Դժւարին ու յոգնեցուցիչ ճամփան աննկատելի դարձնելու համար՝ ես դիմեցի մեզ ընկերացող հային.

—Իսկ ո՞րքան կը լինի բէգի կարողութիւնը։

—Ո՜վ գիտի. հաշիւ չըկայ նրա կարողութեանը։ 1300 սոմարից աւել է իր հողերը, 2000-ից աւելի իր ոչխարը, 70–80-ի չափ եզ, կով, գոմէշ ունի և 20-ից աւելի ձի։

—Ապա փո՞ղ։

—Շատ շատ են բէգի ոսկիները, գնա մինչև տասը հազար. մեզ փողը տոկոսով է տալիս։ 40—50 գիւղ իր ձեռքի տակն է, չըկայ մէկը, որ պարտ չըլինի բէգին.

—Իսկ տան մէջ շա՞տ ունի.

—Նրա խալի ու կապերտներին, թաղիք ու ջեջիմներին, բրդով ու մազով լիքը խուրջիններին ու բեռներին, գրաւ վերցրած արծաթ ու ոսկի զարդերին և տկերով իւղ ու պանրին հաշիւ չըկայ։ Երբ սարը կը բարձրանայ, 70 ուղտ կը չոքի բէգի դռանը՝ տանմէջը վերցնելու համար։

—Առաջո՞ւց էլ Մամադ բէգը այդպէս հարուստ էր թէ նո՞ր է դիզել այդ հարստութիւնը։

—Որտեղի՜ց. 15 տարի առաջ համարեա ոչինչ չունէր. բայց երբ կազմակերպւեցին համիդական գնդերը և Մամադ բէգը կարգւեց համիդէի կայմակամ, այդ ժամանակից սկսաւ հարստանալ ու հարըստանալ։

—Իսկ հայերի հետ ի՞նչպէս է վարւում։

—Նա մեր բարերարն է։ Նա մեզ պաշտպանում է ճնշումներից ու կողոպուտից. թէ նա չը լինէր, ամեն մի քիւրդ մեզ կը թալանէր, կըսպանէր։

—Իսկ դրա փոխարէն ինքն ի՞նչ է ստանում ձեզնից։

—Ամեն ինչ։ Քառասուն-յիսուն քրդի գիւղ, չորս-հինգ էլ հայի գիւղ, բոլորս բէգի ռայաթն ենք, մեր բոլոր աշխատանքը նրան է գնում, մենք նրա համար ենք չարչարւում. այդ կարողութիւնը, որ բէգը դիզել է, մեր ճակատի քրտինքն է։ Բէգը կարիք չունի բռնութեան դիմելու, նրա լոկ խօսքը հայի համար բռնութիւնից էլ զօրաւոր է. Թումօն մի լաւ ձի ունէր. մի օր բէգը մարդ ուղարկեց ձին ուզեց մօտիկ գիւղ գնալու համար։ Ձին եկաւ, բայց այլևս ետ չուղարկւեց. ձիու տէրը չը համարձակւեց նոյնիսկ յիշեցնել բէգին, որ ձին ետ չէ ստացել։ Այդպէս էլ ուրիշ քանի՜-քանի ձի։ Ապա ընծայ բերւած գառները, ոչխարները, կովերն ու եզները։ Ապա բէգի ոչխարն ու տաւարը, որ ձմեռները հայերը վերցնում են իրենց խոտով պահելու. ո՞րը պատմեմ, պարոն, ո՞րը մտաբերեմ։

բ.

Ծարաւը մեզ անասելի կերպով տանջում էր. հմայիչ բնութիւնն էր միայն, որ ամեն տանջանք մոռացնել էր տալիս։ Անտեղի չէր, որ այդ լանջերը Ալադաղ, Ծաղկանց լեռներ էին կոչւում. կանաչ խոտով ծածկւած էին այդ լանջերը։ Մի այնպիսի բուրմունք էր կանգնած, բազմազան ծաղիկներից այնպիսի անուշահոտութիւն էր հաս-

նում ինձ, որ երբեք մոռանալ չը պիտի կարողանամ։ Ահա այդ հովտի խոտերի մէջ, աղբիւրի ափին, նստեցինք մենք յոգնած ու քրտնած։ Աղբիւրից փոքր ինչ վեր ընկած էին երեք քրդական տներ․ որտեղից մի մանուկ փարչը ձեռքին մօտենում էր մեզ․ այդ քիւրդ մանուկին մի զուրուշ դրամ տալով ուղարկեցինք, որ կաթ բերի։ Քիւրդ մանուկը վերադարձաւ մի փոքրիկ ամանով կաթ ձեռքին, բայց նա ետ էր բերել նաև դրամը․ մանուկի մայրը, որ որդու ետևից դուրս էր եկել և նայում էր մեր կողմը, կարծեք ասելիս լինէր․

—Լեռնականներս հիւրասիրութիւնը փողով չենք ծախում։

Մի փոքր հանգստանալուց յետոյ շարունակեցինք մեր ճանապարհը։ Մէկը միւսից դժուարին վերելքներ կատարելուց յետոյ, վերջապէս, հև ի հև դուրս եկանք մի սիրուն լեռնահովիտ, ուր գտընւում էր Մամադ բէգի օբան։ Մեր առաջ ցցւած էին Ալագազի մի քանի կատարները, որոնց ծմակներում դեռ սպիտակին էին տալիս ձիւնի շերտերը, իսկ լանջերի վրա, խոտաւէտ հովիտի մէջ փռւած էին մի քանի տասնեակ մազէ սև վրաններ, մեծ ու նոր․ դրանք Մամադ բէգի վրաններն էին։ Մեզ առաջնորդեցին մի մեծ սպիտակ վրան։ Դա մի հսկայ, բարձր ու ընդարձակ վրան էր, որպիսին լինում է զօրաբանակներում զօրքերի հրամանատարին յատկացրած։ Դրսից ու ներսից զարդարւած էր կարմիր կտորից կարւած արևելեան գեղեցիկ նախշերով․ վրանը ունէր երկու մուտք միմեանց դէմ ու դէմ․ երկու կողմերում, ներսից, կիսաշրջանի ձևով փռւած էին թաղիքներ ու կապերտներ, իսկ ձախ կողմում, գլխաւոր մուտքի մօտ, դրւած էին բարձեր․ դա բէգի տեղն էր․ այդ բարձերի վրա բազմած՝ նա լսում էր բազմաթիւ բողոքաւորներին և իր վճիռներն արձակում․ այդտեղ բազմած նա ընդունում էր հիւրերին։ Սպիտակ վրանից փոքր ինչ հեռու փռւած էր մազէ սև վրանը՝ աւելի քան 10 սաժէն երկարութեամբ և երկու երեք բաժանմունքներով․ դա բէգի ննջարանը, կանանոցն ու մթերանոցն էր։ Սև վրանը այնպէս էր խփւած, որ սպիտակ վրանի երկրորդ մուտքից երևում էր նրա միմիայն ետևը․ երեսը դարձրած էր միւս կողմը։

Ես ու ընկերս սաստիկ յոգնած նստեցինք բէգի տեղից փոքր ինչ ցած։ Բաւական թւով քրդեր բողոքաւոր էին եկել, տեղ էին բռնել նոյնպէս, երբ յայտնեցին, որ բէգը եկաւ։ Մի քանի րոպէից յետոյ ներս մտաւ բէգը․ բոլորը ոտքի կանգնեցին և ձեռքները կրծքներին խոր գլուխ տալով՝ սպասեցին բէգի նշանին։ Ես ու ընկերս

էլ կանգնեցինք տեղներիցս և ողջունեցինք բէգին, որը մի հետաքրքիր հայեացք ձգելով մեզ վրա՝ ընդունեց մեր ողջոյնը, բազմեց իր տեղը և ձեռի նշանով հրաւիրեց մեզ նստելու։ Բոլորը նստեցին։ Բէգը դարձաւ դէպի բողոքաւոր քրդերն ու սկսեց իր սովորական հարց ու փորձը։ Հարց ու փորձը պտտւում էր մի ձիու գողութեան և արօտներն ուտեցնելու հարցի շուրջը։ Ես բոլոր ժամանակը հետաքրքրութեամբ լսում էի հրապարակական ցեղային այդ դատավարութիւնը, թէև ամբողջ օրը ոչինչ չէի կերել և սաստիկ քաղց էի զգում։ Երկու ժամ ու կէս տևող դատավարութիւնը վերջապէս աւարտւեց և բէգի հեղինակաւոր որոշումները լսելով՝ քրդերը խոր գլուխ տւին ու հեռացան։ Ինչպէս յետոյ իմացայ, բէգը այդ ամենօրեայ դատավարութիւնից ունէր մեծ եկամուտ․ նա ստանում էր գառ, ոչխար, նոյնիսկ ձի՝ նայած դատի մեծութեանը։

Գ․

Երբ վրանում մնացել էինք ես, ընկերս, բէգը, բէգի մեծ տղան և մի հոգևորական, երկու ծառաներ ներս մտան, մէկը դրաւ յատակի վրա ինձանից քիչ հեռու ցածլիկ սեղանակալը, իսկ միւսը դրաւ սեղանակալի վրա ճաշի սեղանը։ Դա միջակ մեծութեան պղնձէ սինի էր, յատակը լաւաշ հացով ծածկւած, սինու մէջտեղը հացի վրա դրւած էր փոքրիկ տակով պղնձէ լայնեզր մեծ ափսէ, լցւած բրնձէ փլաւով այն աստիճան, որ չորս կողմից բրինձը օղակաձև թափւել էր հացի վրա․ փլաւի վրա կտոր-կտոր շարւած էր գառան միսը, իսկ փլաւի գլխին ցցւած էր գառան գլուխը․ այդ նշան էր, որ հիւրը առանձին պատւի էր արժանանում։ Ծառաներից մէկը դրաւ սեղանակալի վրա մի մեծ պղնձէ թասով մածուն։ Բէգը թևերը ետ ծալեց, նոյնը արին և միւսները, բէգը հինգ մատները տարաւ փլաւին և ճաշը սկսաւ։

Սեղանը վերցրին․ բէգի տղան խօսակցելով տարաւ մեզ դէպի միւս վրանները և հրաւիրեց ներս դրանցից մէկը․ դա իր վրանն էր, ուր ապրում էր ընտանիքով։ Վրանը բաղկացած էր երկու բաժանմունքից․ մէկը փոքր էր և զարդարւած թաղիքով ու կապերտներով․ այդտեղ մենք նստեցինք գորգի վրա։ Վրանի մեծ բաժանմունքից հետաքրքիր քրդուհիների գաղտագողի հայեացքները ընկել էին մեզ վրա։ Շուտով թէյ բերին․ թէյի բաժակները շատ փոքր էին, զանազան ձևի և տարբեր նախշերով, պնակները նոյնպէս զանազան էին։

այն գդալը, որ ինձ բաժին էր ընկել, շատ փոքր էր և պոչի ծայրը մի փոքր կոտրուած, այնպէս որ երբ նրան իջեցրի բաժակի մէջ, ամբողջապէս թաղուեց թէյի մէջ և բռնելու այլևս տեղ չը մնաց։

Երբ թէյից յետոյ շնորհակալութիւն յայտնելով դուրս եկանք, ինձ յայտնեցին, որ բէգը մեծ վրանում մեզ է սպասում։ Բէգը իր տեղում նստած ընդունեց մեր ողջոյնը և ձեռքի նշանով հրաւիրեց, որ նստենք իր կողքին. վրանի երկրորդ մուտքը արդէն ծածկուած էր։ Շուտով յայտնուեց ծառան ճրագը ձեռին, և կախելով վրանի սիւնից հեռացաւ։ Դուրսը մթնում էր։

Մեր խօսակցութիւնը երկար շարունակւում էր։ Բէգը հարցրեց, թէ ինչ տպաւորութիւն է անում իմ վրա իրենց երկիրը. խօսեցինք ճանապարհների անհրաժեշտութեան մասին, վերջը անցանք հանքերի մշակման և հանքային ջրերի շահագործման խնդիրներին։ Բոլոր հարցերում բէգը համաձայն էր ինձ հետ և նա ամեն կերպ իմ աչքում ուզում էր ձևանալ լուսամիտ և բարի մարդ։

Սակայն այդ չէր բէգի սկսած խօսակցութեան բուն նպատակը։ Նուրբ քաղաքագէտ լեռնցին բաւական վարպետօրէն խօսակցութիւնը դարձրեց իր և հայերի մէջ եղած յարաբերութեան վրա. այստեղ բէգը ոգևորուեց, աշխատելով ինձ վրա թողնել ուժեղ տպաւորութիւն։ Նա սկսեց պատմել իր արած լաւութիւնները հայերին, թէ ինչպէս նրանց պաշտպանել էր և նեղ ընկած ժամանակ օգնութեան հասել։

Մի երկու ժամ անցել էր արդէն, երբ բէգը բարի գիշեր մաղթելով դուրս գնաց. ինձ վրա թողել էր կիրթ արևելցու տպաւորութիւն։

—Տեսա՞ր, պարոն, ինչպէս բէգը արդարանալ էր ուզում.—փըսփսաց ականջիս այն գիւղացին, որը ճանապարհին պատմում էր բէգի գործերից։

Դ.

Յոգնածութիւնը մի կողմից, լեռնային ցուրտ օդը՝ միւս, այնպէս էին ազդել ինձ վրա, որ երբ անկողին մտայ, անմիջապէս տաքացել էի ու քնել։

Առաւօտեան զարթնեցի շատ շուտ. վաղորդեան լեռնային ցուրտ օդը թափանցում էր մինչև ոսկորներս։

Շուտով արևը ծագեց, բէգը դուրս եկաւ սև վրանից, կարգադրեց մեզ համար երկու ձի պատրաստել և ապա մօտենալով մեզ՝ ողջունեց ու մեր առողջութիւնը հարցրեց։

Մի փոքր անց մեզ նախաճաշ մածուն ու սեր տուին։ Կէս ժամ յետոյ բէգին շնորհակալութիւն յայտնեցի, նստեցինք ձիերը և երկու քրդերի առաջնորդութեամբ ճամփայ ընկանք։ Այդ ժամանակ միայն սև վրանի առջևով անցնելիս մի վայրկեան միայն ես կարողացայ նրա ներսը տեսնել։ Թաղիքներով, կապերտներով և հազար ու մի իրերով լիքը վրանի մէջ տեղը մի բազմոցի վրա նստած էր շքեղ քրդական տարազով սևաչեայ, գեղեցիկ մի ջահել քրդուհի. դա բէգի երկրորդ կինն էր։

Մի քանի րոպէ ևս, ես թևակոխեցի սիրուն Ալադաղի սիրուն լեռնահովիտը և Մամադ բէգի սև ու սպիտակ ահագին վրանները ծածկուեցին իմ աչքերից. այդ փոքրիկ թագաւորութեան սահմանները թողի ու անցայ։

Ա.—Դօ.

1. Ի՞նչու համար հեղինակը բէգի իշխանութիւնը թագաւորութիւն է անուանում։

2. Ի՞նչի մէջն է բէգի «բարերարութիւնը»։

Նիւթ. Նկարագրէ՛ր թէ ով է և ինչ տեսակ մարդ է Մամադ բէգը։

Օբա—խաշնարածների վրանների խումբը լեռներում։
սոմար—հացահատիկի և հողի չափ։
համիդական գունդ—այսպէս է կոչւում Սուլթան Համիդի կազմած քրդական զօրքը։
կայմակամ—գաւառի գլուխ, զօրքի մի մասի գլուխ։
ռայա—հպատակ ժողովուրդ։
ռայաթ—ռայայի բնակած տեղը։
տանմէջ—տանու իրերը, տան շարժական կայքը։
վաղորդեան—առաւօտեան, վաղուայ։
քաղաքագէտ—պետութեան գործերը հասկացող մարդ։
գաղտագողի—գաղտնի, ծածուկ։
հեղինակաւոր (որոշում)—կշիռ ունեցող և գործից հասկացող մարդու արժէքաւոր որոշում։

---

1. Հանէ՛ր արմատները և բացատրէ՛ր—**վերելք, եկամուտ, դատավարութիւն, հետաքրքրութիւն**։

71. Լուսաւորչի կանթեղը

Կէս գիշերին կանթեղը վառ
կախ է ընկած երկընքից,
Լուսաւորչի կանթեղն անմար
Հայոց մըթնած երկընքից։

Կախ է ընկած առանց պարան
Արագածի կատարին,
ու սեղանից հըսկայական
լոյս է տալի աշխարհին։

Ոչ մարդկային ձեռ կը հասնի
էն ահաւոր բարձունքին,
և ոչ քամին կը հանգցնի,
վիշապ-քամին ահագին։

Երբ պատում է մութ խաւարը
չընաշխարհիկ մեր երկրին,
երբ տիրում է ահն ու վախը
թոյլ, կասկածոտ սըրտերին,—

ով անմեղ է, լիքը սիրով
ու հաւատով անսասան,
ով նայում է վառ յոյսերով
դէպի Հայոց ապագան,

նա կը տեսնի այն մըշտավառ
ջահը կախուած երկընքից.
տես՝ Աստծու աչքը պայծառ
հըսկում է ցած երկընքից։

Յովհաննէս Թումանեան

1. Ազգային այս աւանդութեան մէջ «մշտավառ ջահը» ի՞նչ է ներկայացնում։
2. Միայն ո՞ւմ հոգուն է երեւում այդ ջահը։
3. Ուրիշ ի՞նչ վերնագիր կարելի է դնել։

Չնաշխարհիկ—աշխարհում չեղած, աշխարհիս վրա չը լսած, չը տեսնուած։ **սասանել**—դողալ, երերալ, խախտուել։ **Անսասան**-հաստատ, ամուր, անշարժ։

1. Կանթեղը ինչով է տարբերւում ջահից։
2. Ի՞նչ է նշանակում մշտավառ և անմար։ Ի՞նչ տարբերութիւն կայ նըրանց արմատների մէջ։
3. Լուսաւոր—անլոյս, կանթեղաւոր—անկանթեղ, թագաւոր—..., թեւաւոր—... Շարունակիր այս ձեւով բառերի շարքը. Ի՞նչ նշանակութիւն ունի այստեղ աւոր մասնիկը։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ



Ծնուել է 1869 թւին Լօռւայ Դսեղ գիւղում քահանայի ընտանիքում։ Սկզբնական ուսումը ստացել է իրենց գիւղի և ապա Ջալալօղլու ծխ. դպրոցներում և յետոյ շարունակել է Ներսիսեան դպրոցում։ Արդէն փոքրուց իր ընկերների մէջ յայտնի էր որպէս «բանաստեղծ» և իր ամբողջ կեանքում ոչ մի այլ գործի յարատև կպչել չը կարողացաւ, բացի իր բանաստեղծական աշխատանքից։ Նրա առաջին ոտանաւորներից են «Տունն ու կատուն» և «Անբախտ վաճառականները»։ Սկզբնական շրջանում նա առանձին կարօտով և սիրով երգում էր հայրենի Լօռին։ Նրա պոէմներից նշանաւոր են «Անուշ», «Փարւանա», «Սասունցի Դաւիթ», «Թմկաբերդի առումը»։ Վերջերս շատ է գրում մանուկների համար՝ նիւթը մեծ մասամբ ժողովրդի պատմածներից վերցնելով։ Այսպէս օրինակ՝ Գառնիկ ախպէր, Չարի վերջը, Մի կաթիլ մեղր, Քաջ Նազարը։

72. Աքաղաղը

ա.

Այն օրը զարհուրելի անցքեր անցան Ս. գիւղի գլխով։ Կոտորւեց, թալանւեց ամբողջ գիւղը քրդերի ձեռքով։ Օրը ցերեկով քնեց գիւղը, ընդ միշտ քնեց, միանգամից քնեց. այնպիսի ժամանակ էր։ Վրա հասաւ մռայլ գիշերը. Ձայն չը կայ, լուռ է գիւղը, շուն չի հա-

չում, կատու չի մլաւում, դուռ չի ճռռում, մարդ չի հազում, երեխայ չի ճչում, ոտնաձայն չը կայ։ Խաւար է, ոչինչ չի երեւում, միայն լռութիւն և ամայութիւն, երկա՜ր, երկա՜ր։

Ահա վերջապէս մի ձայն. աքաղաղը կանչեց, մի հաստ աքաղաղ, բարձր, զիլ ձայնով։ Ո՞վ չէր ճանաչում այդ աքաղաղին. դա Մելիքենց աքաղաղն է. մեծ, փետուրները մուգ-կարմիր, պոչը փառայեղ կանաչ. ամենից աւելի գեղեցիկ, ամենից կռւան, ամենից առաջ կանչող աքաղաղը։ Այսօր էլ նա կանչեց ըստ իր սովորականին առաջինը։ Խղճուկ թեւաւորի մի ճիչ էր այն, որ դուրս եկաւ Մելիքենց գոմից, լայնատարած արձագանքներով կրկնւեց «քնած» գիւղի վրա և մեռաւ խաւար հեռաւորութեան մէջ։ Կրկին լռութիւն, որ այս անգամ աւելի ևս ահաւոր դարձաւ, որովհետև այդ մի ձայնին ուրիշները չը յաջորդեցին. մի՞թէ այս գիւղում մի աքաղաղ կայ միայն, մի հատ կենդանի շունչ, այն էլ աքաղա՜ղ... Սարսափելի է։

Ողորմելի թռչունը ինքն էլ վախեցաւ, ինչպէս կարող էր վախենալ մի աքաղաղ։ Նա զգում էր, որ երբէք գիշեր այս ժամին իրերն այնպէս չէին ընթանում աշխարհում։ Նա գիտէր, որ իրանից անմիջապէս յետոյ սովորաբար հարևանենց աքաղաղը պիտի ձայնէր, մի բան, որ նրան սաստիկ կատաղեցնում էր և այդ պատճառով նա երկրորդ անգամ իր հակառակորդի ջիգրու էլ աւելի ուժգին, էլ աւելի բարձր էր կանչում։ Բայց այսօր հակառակորդի ձայնը չը կար։ Աքաղաղն սպասում էր զարմացած։ Լռութիւնը չարագուշակ էր։ Փորձեց գուրգուրել իր ամենից սիրելի ամուսնուն, այն սև հաւին, որ միշտ աջ կողքին էր տեղ բռնում թառի վրա։ Աքաղաղը մեկնեց իր աջ թեւն ու կտուցը, բայց ապշած մնաց, կողքը դատարկ էր. ընկերուհին չը կար. նա վշտացած ու զայրացած դարձաւ դէպի ձախ կողմի ընկերուհին, դարձեալ դատարկութիւն։ Լուռ ու դատարկ էր նրա շուրջը, լուռ էր նաև իր հակառակորդը։

բ.

Ժամեր անցան. կենդանին մոռացաւ կարծես իր միայնութիւնը և պատրաստւեց երկրորդ անգամ կանչելու։ Նա թափահարեց իր թեւերը և կանչեց ուժգին. ձայնը կրկին արձագանքներով կրկնւեց խաւար տարածութեան մէջ և հեռու՜, հեռու՜, միայնակ, անպատասխան։

Աքաղաղը սպասում էր։ Նա գիտէր, որ իր երկրորդ կանչից յե-

տոյ գոմի դուռը ճռռալով կը բացւի, ներս կը գայ հօտաղը քթոցը շալակած, անասունները փնչացնելով ոտքի կը կանգնեն. նրանց կեր տալու ժամն է։ Նա լաւ կանչեց, ուժգին, լի կոկորդով, այնպէս որ կարող էր ամբողջ գիւղը զարթեցնել, և սակայն դուռը չը ճռռաց, հօտաղը չեկաւ, անասունները չը շարժւեցին, գոմը զարմանալի լուռ էր։ Ի՞նչ էր պատահել, թռչնի ուղեղն այդ հասկանալ չէր կարողանում, սակայն նա սկսում էր վախենալ, որ ինչ որ վա՜տ, շատ վատ բան է կատարւել, աշխարհի կա՞րգը խանգարւել է, և թռչունը փոքրացաւ, կծկւեց, տխրեց...

Հասաւ երրորդ անգամ կանչելու ժամանակը, որից յետոյ գիւղը կամաց կամաց պիտի ոտքի ելնէր։ Ահա աքաղաղը կրկին թափ ի թափ տւեց իր թեւերը, բարձրացրեց, ձգեց պարանոցը և կանչեց քանի ուժ ունէր, երկա՜ր, զիլ։ Կանչեց և սպասեց։ Նրանից յետոյ առաջին զարթնողը գիւղում քահանան պիտի լինէր. նա պէտք է դուրս գար դռնից աղօթք մրմնջալով վաղորդեան կիսախաւարի մէջ։ Մեծ երկփեղկանի դռան բացւելու և փակւելու թրխկոցը հասնում էր մինչև Մելիքենց տունը, աքաղաղն էլ էր լսում այդ թրխկոցը, որ նրա համար այնպէս սովորական էր դարձել։ Դրանից քիչ յետոյ լսւում էր գիւղական եկեղեցու կոչնակների ձայնը։ Այդ ձայնից զարթնում էին ամենքը՝ աղօթաւորներն ու աշխատաւորները. ծեր բերանները յօրանջելով աղօթքներ էին մրմնջում, պառաւները խաչակնքում էին երեսները զանգակների ամեն մի ղօղանջիւնի հետ և կիսախաւար փողոցների միջից, ինչպէս ուրւականներ, դիմում էին դէպի Աստծու տունը։ Տների մէջ էլ կեանք և շարժում էր սկսում։

Սակայն այսօր ոչ քահանայի դուռը թրխկաց, ոչ զանգակի ձայնը լսւեց։ Ո՞ւր էր քահանան, ինչո՞ւ էր լուռ կոչնակը, ի՞նչ էր պատահել, այդ էլ չը կարողացաւ հասկանալ աքաղաղը. բայց կրկին երկիւղի բնազդը խօսեց նրա մէջ. այսպէս չէր երբէք գիշեր։ Ողորմելի թռչունը չէր յիշում իր աչքով տեսածները։

գ.

Այս անգամ նա սկսեց կանչել անընդհատ, իրար վրա։ Այն ժամն էր, երբ հովիւը պիտի դուրս քշեր իր հօտը, նրա սրնգի մելամաղձոտ ձայնը մեղմիկ, լալկան ելևէջներով սովորաբար նախ հնչում էր գիւղին մօտիկ, ապա կամաց կամաց իր հօտի հետ միասին հեռանում էր դէպի դաշտերն ու լեռները։ Նրան հետևում էին հօտաղ-տաւա-

բածների խմբական երգերը, գութանների և սայլերի ճռինչը, անասունների բառաչը։ Գիշերային հանգստից յետոյ առաւօտեան կիսախաւարի մէջ գիւղն ամբողջ ասես ձգձգւում, յօրանջում էր ամենօրեայ աշխատանքը վերսկսելու համար։ Աքաղաղը այսօր կանչում էր և սպասում մէջ ընդ մէջ։ Սրինգ չը կար, հովիւ չը կար, հօտ չը կար. հօտաղները այսօր չէին երգում, գութանները չէին շարժւում, սայլերը չէին ճռնչում, լուռ էր ամեն ինչ։

Աքաղաղը այժմ կուզէր ցած իջնել թառից, բայց վախենում էր, ո՞ւր իջնել այդ լռութեան մէջ, այդ սարսափելի ամայութեան մէջ, չէ՞ որ նա էլ կենդանի էր, կեանք էր փնտռում։



Սարսափելի՜ բան էր. ո՞վ էր կենդանի թողել այդ մի շունչը։ Եւ աքաղաղը կրկին կանչում էր ու կանչում. ո՞ւմ պիտի զարթեցնէր։ Շրջապատի քունը ծանր էր, յաւիտենական, և նրա ձայնը անզօր, թոյլ։ Բայց նա կանչում էր իր թառի բարձրութիւնից բուռն թափով, կանչում էր ուժգին քանի կարող էր, գոնէ այդպէս էր թւում նրան։

Մէկ էլ յանկարծ մի ոտնաձայն լսեց գոմում. վերջապէս նա էլ մենակ չէր. մէկը ներս մտաւ։ Աքաղաղն ուժ առաւ, քաջալերւեց, այս անգամ վերջապէս նա թափ տւեց թևերը և խկապէս կանչեց իր լաւ օրերի պէս, կանչեց և ցած թռաւ թառից։ Երկու աչքեր էին

փայլում կիսախաւարի մէջ, պաղ, պսպղուն, սարսափելի աչքեր։ Աքաղաղը տեսաւ։ Հասկացա՞ւ արդեօք, թէ ի՞նչ էին ասում այդ աչքերը։ Գուցէ, որովհետև նա նորից փորձեց թառը բարձրանալ, սակայն իզո՛ւր։ Երկու աչքերը մօտեցան, տաք շունչը փչեց թռչնի վրա, նա հազիւ կարողացաւ վերջին անգամ մի տխուր ճիչ արձակել գայլի բերանում։

Վերջացաւ. Ա․․ գիւղում էլ ոչ մի շունչ չը կար, էլ ոչ ոք չը կար...

Աւետիս Ահարոնեան

ՆԻՒԹ. Նկարագրի՛ր աքաղաղի կանչելը և գիւղի հետզհետէ զարթնելը սովորական ժամանակ։

Կոչնակ — փայտէ տախտակ, որ թակում են եկեղեցի կանչելու համար, զանգակի փոխարէն։
Մելամաղձոտ — տխրութիւն ունեցող, թախծոտ։

73. Յոյս

Թո՛ղ փըչի քամին պաղ՝պաղ երեսիս,
վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,
ո՛րքան որ կուզի թող փըչի Հիւսիս,
յուսով եմ, վաղ-ուշ, գարունը պիտ գայ։

Թուխպը թո՛ղ պատի երկինքը պայծառ,
թանձր մառախուղ երկիր թո՛ղ փակի,
տարերք աշխարհիս խառնուեն իրար,
յուսով եմ վաղ-ուշ արև պիտ ծագի։

Թո՛ղ գայ փորձութիւն, թող գայ հալածանք,
խաւար թո՛ղ դառնայ անաղօտ լոյսը,
սարսափելի չեն հային տառապանք—
միայն... չը հատնի խըղճուկի յոյսը։

Գամառ-Քաթիպա

74. Բաշօն

ա.

Հուրից ու սրից հազիւ ազատուած, իրենց երկրից մեր աշխարհը փախած՝ գաղթականները տխուր ու դժբախտ շարուել, նստել էին շուկայի արևոտ պատի տակ։

Ամենքի հետ միասին Ղզրօն էլ էր նստել, հայեացքը ուղղել էր դէպի քրդերի բերած եզների նախիրը։ Նայում էր անվերջ, անթարթ աչքերով, որոնք թաւ ճերմակ յօնքերի տակից աւելի դաժան, աւելի մռայլ էին երևում։ Կամաց-կամաց նրա աչքերը սկսեցին թացանալ։ Պապի արտասուքները տեսաւ Թումօն, ինքն էլ իր հայեացքը ուղղեց դէպի այն կողմը, ուր պապն էր նայում։ Ի՞նչ կար այնտեղ, ինչո՞ւ էր արտասւում պապը։

Շուկայում կեանքը շարունակւում էր եռ գալ. շատ բան վաճառուեց, գնուեց, վաճառուել էին նաև քրդերի եզները, բացի մէկից, որի համար խիստ մեծ գին էր պահանջում տէրը։ Դա մի բարձր, հաստավիզ, կարմրագոյն եզ էր. գեղեցիկ էր մանաւանդ նրա գլուխը. երկու սուր եղջիւրները աղեղաձև կորացել էին դէպի գլխի վերևի մասը, իսկ լայն ճակատի հէնց կենտրոնում մի մեծ սպիտակ բիծ ունէր, որ մի առանձին շքեղութիւն էր տալիս նրա գլխին։ Ահա այս եզանն էր նայում Ղզրօն և կարծես թէ այդ կենդանին էլ իր մեծ աչքերը ուղղել էր յատկապէս Ղզրօի վրա։ Նայում էին իրար այդ կենդանին և այդ մարդը, նայում էին յամառութեամբ, առանց յոգնելու և ասես թէ լուռ խօսում էին իրար հետ, բաներ էին պատմում և հասկանում իրար։ Յանկարծ փոքրիկ Թումօի դէմքի վրա անսահման բերկրութիւն փայլեց. նա սաստիկ զարմացած ու յուզուած՝ իր նիհար մատը դէպի եզը մեկնեց և բացականչեց.

—Բաշօն, պապէ, մեր Բաշօն...

Եւ առանց իր պապի պատասխանին սպասելու, երեխան թռաւ, եզանը հասաւ, անսահման երջանկութեամբ գրկեց նրա գլուխը և սկսեց իր մանկական շրթունքներով անվերջ, տաք համբոյրներ տալ նրա ճակատին ու դնչին։ Կենդանին գլուխը քաշ էր գցել, դունչը չէր հեռացնում երեխայի կրծքից։ Բայց երեխան թողեց նրան, կրկին ետ եկաւ և կարծելով՝ թէ իր պապը չէ հասկացել բանի էութիւնը, չէ իմացել, որ ինքը գտել է իրենց Բաշօին, բռնեց նրա ուսից, ցնցեց և ձեռքը դէպի եզը մեկնելով՝ յուզուած, շնչակտուր գոչեց.

—Պապէ, ա՜յ պապէ, տե՛ս, մեր Բաշօն է։

—Հա՛, քեզ մատաղ, մեր Բաշօն է.— պատասխանեց Ղզրօն արտասուքից խեղդուելով՝ բայց առանց տեղից վեր կենալու։

բ.

Երեխան պապի պատասխանից քաջալերուած կրկին թռաւ, հասաւ եզանը, նորից գրկեց նրա գլուխը, շոյեց, համբուրեց և վերջը ականջից բռնելով՝ քաշ տուաւ դէպի արտասւող պապը։

Ահագին կենդանին զարմանալի հնազանդութեամբ սկսեց քայլել այդ փոքրիկի ետևից հանդիսաւոր դանդաղութեամբ։ Մինչև այդ ժամանակ այդ բոլորը կատարեալ անտարբերութեամբ դիտող քիւրդը յանկարծ առաջացաւ դէպի «իր» եզը, իսկ այս ու այն կողմից հետաքրքիր բազմութիւնը հաւաքուեց և շրջապատեց եզանը, երեխային ու քրդին։

—Դէն, դէն, ճամփայ տուէք,—ճչում էր Թումօն,—մերն է, թողէք տանեմ, մեր Բաշօն է, մատաղ լինեմ Բաշօին։

Եզը շարունակում էր գնալ. քիւրդը նրանց առաջը փակեց։

—Ի՞նչ ես անում, տղա՛,—ասաւ նա,—թո՛ղ տուր, ո՞ւր ես տանում եզը։

—Մերն է, մեր Բաշօն է, քեզ ի՞նչ, կը տանեմ,—պատասխանեց Թումօն, աշխատելով առաջ գնալ։

—Ձերը չի, մեռնեմ քեզ,—ասաւ քիւրդը քաղցրութեամբ,—իմն է, մատա՛ղ, թո՛ղ տուր, մի տանի։

—Պապէ ջա՛ն, ա՛յ պապէ,—ճչաց երեխան, բարկացած ու լացակամած, բայց առանց թողնելու եզան ականջը,—քիւրդը չի թողնում Բաշօն բերեմ էէ...

Քիւրդը տեսաւ, որ գործը քանի գնում մեծանում է. նա պատճառ ունէր վախենալու. չէ՞ որ այդ եզները այն երկրից էին բերած, որ իր աջակիցների ձեռքով կողոպտել ու մոխրակոյտների էր վերածել և որտեղից փախել, եկել էին նոյնպէս այդ գաղթականները։

Քիւրդը վճռեց խոյս տալ և հեռացնել եզը, ուստի մօտեցաւ, որ կենդանու ականջը դուրս քաշի երեխայի ձեռքից. բայց նա կախուել էր իր բոլոր մանկական ուժով, չէր բաժանւում, ճչում էր։

—Մեր Բաշօն է, չեմ տայ. պապէ՛. ա՛յ պապէ...

Քիւրդը վերջապէս տեսնելով, որ այդ փոքրիկից հեշտութեամբ ազատուելու ճար չը կայ, թափով հրեց Թումօին եզան առաջից։ Երեխան ընկաւ և սկսեց արտասուելով պոռալ. «Բաշօ՜ն Բաշօ՜ն»։ Քիւրդը քշեց եզը։

—Պապէ՛, պապէ՛, քիւրդը մեր Բաշօն տարաւ, մեր Բաշօն տարաւ։

—Թո՛ղ, տղա՛յ, թո՛ղ.—ասաւ Ղզրօն աչքերը սրբելով.– Բաշօն մերը չի, քիւրդինն է, թող տանի, քեզ մեռնեմ. մեր տունն էլ մերը չի, մեր արտն էլ մերը չի, մեր եզն էլ մերը չի. թող տանի, քեզ մեռնեմ, թող տանի...

Աւետիս Ահարոնեան

1. Ղզրօն ի՞նչու է ասում՝ որ «մեր ամեն բանը մերը չի»։
2. Ղզրօն ի՞նչ էր զգում եւ ի՞նչու տեղից չը շարժւեց։

---

1. Բաջալերել, սիրտ տալ, խրախուսել—ի՞նչ տարբերութիւն կայ այս բառերի մէջ։

Նոյնպէս և լալ և արտասուել բառերի մէջ։

2. Ճար չը կայ. ի՞նչպէս կարելի է այլ կերպ ասել։

3. Առաջ-առջեւ, ետ—..., վեր—..., դուրս—..., ներս—...։

75. Հաւլունի թուրը

ա.

Շատ ու շատ դարեր մեզանից առաջ մի թագաւոր կար,
անունն էր Պռօշ, ինքը զօրաւոր, ազնիւ ու արդար։
Կռիւ չէր սիրում ու նստում էր իր Լաթար քաղաքում,
բայց նրա վախը տիրում էր հեռու՜, հեռու տեղերում.
փառասէր չէր նա, թէև կարող էր ամեն բան ուժով,
աշխարհ կը քանդէր, թէ սիրտը ուզէր, Հաւլունի Թրով։

Հաւլունի Թուրը, Հաւլունի Թուրը,
անձեռագործ է Հաւլունի Թուրը.
վերը ամպերում կայծակների հետ
կռուել է, կոփուել Հաւլունի Թուրը,
վերից ամպերից կայծակների հետ
աշխարհ է իջել Հաւլունի Թուրը։

Նրան տիրողը Աշխարհ կը տիրի,
աշխարհ կը տիրի Հաւլունի Թուրը,
Եալբուս սարն էլ որ դէմը ելնի՝
երկու կէս կ՚անի Հաւլունի Թուրը։
Հաւլունի Թուրը, Հաւլունի Թուրը,
բոց ու կայծակ է Հաւլունի Թուրը։

Ոչ-ոք չը գիտէր, թէ քանի տարի Պռօշի տունը
կրում էր իբրև մի անգին աւանդ Հաւլունի Թուրը,
թէ ինչ միջոցով նա ձեռք էր բերած, ինչ մեծ հրաշքով
և թէ Պռօշի մեծ նախնիքներից ո՞ր մէկի ձեռքով։
Գիտէին միայն, որ այսքան սերունդ ու այսքան տարի
այդ զօրութիւնը, այդ ուժը չէին գործադրած չարի։
Պռօշն էլ, ինչպէս իր նախնիքները, աւանդն ստացաւ
հօր մահուան ժամին, իր հօր ձեռքիցը, հօրը խոստացաւ.
«Հա՛յր, քեզ երդւում եմ քո տուած սրով, որ քեզ հետևեմ,
չարը հալածող, բարին հաստատող կեանքումս լինեմ»։
Այդպէս էլ արաւ. քառասուն տարի Պռօշի ձեռքում
Հաւլունի Թուրը կայծակի նման փայլում է, վառւում,

բայց անմեղ արիւն չը թափեց երբէք, ոչ-ոք չորբացաւ,
նրա պատճառով ոչ մէկ մայր կամ կին իզուր չը լացաւ,
ոչ մի թագաւոր, ոչ արդար իշխան չընկաւ իր գահից
և չը զրկւեց ոչ մի ժողովուրդ ազատութիւնից։
Ինչ որ բարի էր՝ պաշտպանում էր նա իր հզօր ձեռով,
ինչ բան որ չար էր՝ ջնջում, կործանում Հալունի Թրով,
և լիանում էր Լաթար քաղաքը ամեն բարիքով,
փռւում շէն, առատ Խաչլըւայ լճի կանաչ ափերով։

Բայց ինչն է հաստատ, յաւիտենական մեր երկնքի տակ...
Պռօշ արքայի մազերը դարձան, եղան սպիտակ.
այն հզօր աջը, որ ամբողջ աշխարհն էր դողացնում,
Հալունի Թուրը ուժիցը վեր էր, էլ չէր վերցնում.
ընկաւ Պռօշը, ընկաւ ուժահատ մահւան մահիճը,
համբըւած էին օրերը, սակայն հանգիստ չէր խիղճը։
Եօթ որդի ունէր, եօթ սարի գլխին եօթ բերդի իշխան,
իրարից վատթար, իրարից ծարաւ իրարու արեան։
«Որի՞ն տամ արդեօք, ոչ-ոք նրանցից արժան չէ սրին.
մահիցս յետոյ արեան հեղեղներ պէտք է որ հոսին.
ոչ, չարի պատճառ նա դեռ չէ եղել և թող չը լինի,
թող անհետանայ երկրիս երեսից Թուրը Հալունի»։

Բ.

Ու հրամայեց Բլէջնու բերդից կանչեն մեծ որդին։
Շտապեց որդին լսելու իր հօր կտակը վերջին։
«Որդի՛, մեռնում եմ, իմ վերջին կամքս յայտնում եմ ես քեզ,
միայն դեռ ես մահիցս առաջ պէտք է կատարես»։
—Հա՛յր, ես պատրաստ եմ քու վերջին կամքը միշտ կատարելու,
տո՛ւր ինձ, թէ կ՚ուզես, Հալունի Թուրը՝ աշխարհ քանդելու։
«Այո՛, քեզ կը տամ Հալունի Թուրը, աշխարհ մի՛ քանդիր,
Հալունի Թուրը տա՛ր ու Խաչլըւայ ծովը շպրտիր։»
Առաւ մեծ որդին Հալունի Թուրը, բայց հօրը խաբեց,
չը նետեց ծովը, այլ հօրից ծածուկ մի տեղ թաքցրեց։
«Որդի՛, ի՞նչ արիր Հալունի Թուրը,
ձգեցի՞ր, ասա՛, Խաչլըւայ ծովը»։
—Այո՛, այո, հա՛յր, Հալունի Թուրը
տարայ, ձգեցի Խաչլըւայ ծովը։

«Երբ դու ձգեցիր Հալունի Թուրը,
տեսա՞ր ինչ եղաւ Խաչլըւայ ծովը»։
—Հա՛յր, ոչինչ չեղաւ Խաչլըւայ ծովը,
բայց ես... ձգել եմ Հալունի Թուրը։
«Ո՛չ, սուտ ես խօսում, սուտ ես դու, գիտեմ,
անարժան որդիս խաբում է հօրը.
գնա՛, բե՛ր շուտով, թէ չէ կանիծեմ,
գլխիդ կը ճաքի Հալունի Թուրը»։

Գնաց դողալով ետ բերաւ որդին Հալունի Թուրը.
իր երկրորդ որդուն շուտ կանչել տւաւ խեղճ ալեորը։
«Որդի՛, մեռնում եմ, իմ վերջին կամքս յայտնում եմ քեզ,
միայն դեռ ևս մահիցս առաջ պէտք է կատարես։»
—Հայր, ես պատրաստ եմ քո վերջին կամքը միշտ կատարելու,
տո՛ւր ինձ, թէ կ՚ուզես, Հալունի Թուրը աշխարհ քանդելու։
«Այո՛, քեզ կը տամ Հալունի Թուրը, աշխարհ մի քանդիր,
Հալունի Թուրը տար ու Խաչլըւայ ծովը շպրտի՛ր»
Առաւ նա նոյնպէս Հալունի Թուրը, բայց հօրը խաբեց,
չը նետեց ծովը, այլ հօրից ծածուկ մի տեղ թաքցրեց։

«Որդի՛, ի՞նչ արիր Հալունի Թուրը,
ձգեցի՞ր, ասա՛, Խաչլըւայ ծովը։»
—Այո՛, այո՛, հա՛յր, Հալունի Թուրը
տարայ, ձգեցի Խաչլըւայ ծովը։
«Երբ դու ձգեցիր Հալունի Թուրը,
տեսա՞ր ինչ եղաւ Խաչլըւայ ծովը»։
—Հա՛յր, ոչինչ չեղաւ Խաչլըւայ ծովը,
բայց ես ձգել եմ Հալունի Թուրը։
—Դու էլ ես, դո՛ւ էլ, սուտ ասում, գիտեմ,
անարժան որդիս խաբում է հօրը,
գնա՛, բե՛ր շուտով, թէ չէ կանիծեմ,
գլխիդ կը ճաքի Հալունի Թուրը»։

Գնաց դողալով որդին ետ բերաւ Հալունի Թուրը.
իր երրորդ որդուն շուտ կանչել տըւաւ խեղճ ալեորը։
Բայց այդ երրորդն էլ, յաջորդ երեքն էլ նոյն բանը արին,
մինչև որ հերթը հասաւ եօթ որդուց ամենից փոքրին։

Եկաւ և փոքրը․ «Որդի՛, դու գիտես ինչեր եմ արած,
բայց տե՛ս, մեռնում եմ եօթ որդկերանցով, բայց անտէրացած.
գոնէ դու լսիր իմ վերջին կամքը, որ յայտնում եմ քեզ,
միայն թէ, որդի՛, մահիցս առաջ պէտք է կատարես»։
—Հա՛յր, ես պատրաստ եմ քո վերջին կամքը միշտ կատարելու։
պատրա՛ստ, թէ կ՚ուզես, իսկոյն Խաչլըւայ ծովը նետուելու։

«Ո՛չ, ո՛չ, չեմ ուզում, որդի՛, Խաչլըւայ ծովը մի՛ ընկնիր։
Հալունի Թուրը կը տամ քեզ, դու տա՛ր ծովը շպրտիր»։
Օրը ուրբաթ էր․ տարաւ նա սուրը ու նետելուն պէս
եկաւ, դողում էր որսորդի ձեռքից փախած քօշի պէս։

«Որդի՛, դողում ես, ասա՛, ի՞նչ արիր
ձգեցի՞ր ծովը Հալունի Թուրը»։

—Հա՛յր, ես սարսում եմ, էլ մի հարցընիր,
էլ ինչեր չարաւ Խաչլըւայ ծովը։
Զէի մօտեցած դեռ ևս ծովին,
արևն ամպի տակ գլուխը ծածկեց,
երկնքից իջաւ սատանի քամին,
խաւար ու մռայլ աշխարհս պատեց։
Մօտեցայ ծովին, մեր սիրուն ծովը
այլ ևս չունէր իր գոյնը նախկին,
ժանտ դևի նման, պղտոր ջրովը
ուզում էր կուլ տայ իր որսը անգին։
Ծովը ձգեցի Հալունի Թուրը,
յանկարծ մի գոռոց ծովի յատակից,
մեծ իրարանցում բարձրացաւ խորը,
ահեղ արձագանք ձայնեց երկնքից։
Ջրերը ելան, լեռնացած անցան,
երկինք էր հասնում ճերմակ փրփուրը,
յանկարծ բացւեցին, մի բերան դարձան
կուլ տըւին իսկոյն Հալունի Թուրը,
Ահեղ փոթորիկ, աղմուկ, որոտում…
որի՞ն նայէի, ծովի՞ն, երկնքի՞ն։
Իմ ոտքերի տակ երկիրն էր դողում,
ես էլ թուլացայ ու ընկայ գետին…
Ծովի խորքերից բիւրաւոր ձայներ
խուլ, խոր ու խառնակ որոտում էին,
կարծես բիւրաւոր քաջքերի գնդեր
ծովի յատակում մարտնչում էին։

«Այո՛, այդպէս է, դու կատարել ես… ա՛ռ իմ օրհնութիւն.
կը մեռնեմ հանգիստ. Լաթար քաղաքս էլ քեզ ժառանգութիւն»։

Գ․

Ահա այն օրից ամենայն ուրբաթ
Խաչլըւայ ծովը եռում է կատղում,
իրար են զարկում ջրեր լեռնացած,
ծովի յատակից ձայներ են լսւում…

Այդ հին կռիւն է կրկին նորոգւում,
բաղխում են իրար քաջքերը անհեղ,
անցնում են դարեր, կռւում են կռւում,
Հալոյնի Թըրին չեն կարող տիրել:

Պռօշը ինքն է սուրը կախարդել,
որ երբ ցամաքի Ծաչըլւայ ջուրը,
պէտք է մի կորիճ ծնւի ոսկեհեր
Աստըծու կամքով առնի այդ Թուրը:

Ձեռքն առնի Թուրը Աստծու կամքով
ու ջնջի չարը երկրի երեսից...
Բայց դարեր-դարեր անցել են արդէն
ինչո՞ւ մի կաթիլ չի պակսում ծովից...

Գէորգ Աստուածատրեան

1. Ինչո՞ւ Պռօշ թագաւորը չը թողեց իր որդիներին Հալոյնի Թուրը: Ինչո՞ւ քաջքերը չեն կարողանում տիրել Հալոյնի Թըրին: Ո՞ւմ ձեռքն է անցնելու Հալոյնի Թուրը: Ո՞րտեղից է Հալոյնի Թուրը եւ ինչի Թուրն է դա:

2. Այս գրուածքը հեքեաթ է Թէ՞ առասպել:

կռել (երկաթ)—ծեծել մուրճով, կռանով:
կոփել—ձև տալ երկաթէ կամ քարէ կտորին, տաշտշել:
Ծալբուս—Կովկասի էլբրուս ձիւնապատ գագաթը:
աւանդ—մէկին պահ տուած բան. հայրերից որդիներից թողած պատւէր կամ խրատ: Ի՞նչ է նշանակում **աւանդութիւն**,
սերունդ—մէկից սերւածներ կամ ծնւածներ, նոյնպէս գրեթէ միաժամանակ ծնւածները:
քոշ—արու այծ, նոխազ:
լիանալ—կշտանալ, լցւել:
սարսել—սաստիկ վախենալ:
ժանտ—դաժան ու չար:
մարտնչել—կռւել, պատերազմել:

1. Տուր հոմանիշներ՝ ջնջել, կախարդել, հալածել, մահին և բերդ բառերի.
2. Համբուրել աջը. ի՞նչ բառ է բաց թողած:
3. Գտի՛ր արմատներն և իմաստը բացատրի՛ր. իրարանցում, անձեռագործ, ոսկեհեր, փառասէր.



ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԱԺԻՆ

1. Մանուկն ու ջուրը

Այդ քու բարձրիկ լեռնէդ իվար
ջուրը կու գայ շէնէդ կ'անցնի:
Թուխ մանուկ մը դուրս է ելեր,
ձեռքն ու երեսն է լըւացեր,
լըւացեր է հա՛ լըւացեր,
դարձեր ջրին հարցմունք ըրեր.
—Ջո՛ւր, դուն այն ո՞ր լեռնէն կու գաս,
պաղո՛ւկ ջրիկ իմ, անուշի՛կ:
—Ես այն լեռնէն ելեր կու գամ,
ուր հինն ու նոր ձիւնն է վրան:
—Ջո՛ւր, դուն այն ո՞ր առուն կ'երթաս,
պաղո՛ւկ ջրիկ իմ, անուշի՛կ:
—Ես այն առուն ելեր կ'երթամ,
ուր փունջն է շատ մանուշակին:

—Ջո՛ւր, դուն այն ո՞ր այգին կ'երթաս,
պաղո՛ւկ ջրիկ իմ, անուշի՛կ։
—Ես այն այգին ելեր կ'երթամ,
ուր տէրը մէջն է այգեպան։

Ժողովրդականից

---

2. Գողը

Գող մը գիշեր ատեն Միկարի տունը կը մտնէ և խեղճին բոլոր չունեցածը կ'առնէ կը տանի։ Հետևեալ օրը կ'իմացուի եղելութիւնը։ Միկարի դրացիները, բարեկամներն ու ազգականները կը փութան իրենց ցաւակցութիւնը յայտնելու խեղճ կողոպտուածին։

—Միկար,—կ'ըսէ մին,—ինչո՞ւ ուշադրութիւն չըրիր ու դուռդ աղէկ չըգոցեցիր։

—Ինչո՞ւ պատուհաններն քիչ մը բարձր շինել չը տուիր,—կը հարցնէ երկրորդ մը,—որպէսզի գողը դիւրութիւն չը գտնէր տունդ մտնելու։

—Եղբայր,—կ'ըսէ ուրիշ մը,—պատերն ալ շատ ցած են, և գողը բնաւ դժւարութիւն չը կրեր այդ պատերէն ներս մտնելու։

—Տարակոյս չը կայ թէ,—կ'աւելցնէ անդիէն բարեկամ մը,—փողոցի դուները եթէ երկաթէ ըլլային, թոյլ չէին տար՝ գողը քեզի կողոպտէ։

—Միկար ալ կը խոստովանի անշուշտ թէ,—վրա կը բերէ ասդիէն ազգական մը,—մեծ սխալ գործած է փայտաշէն տան մը մէջ նստելուն համար։

—Ցաւալի է որ,—կը յարէ դրացի մը,—ասանկ թաղի մէջ տուն շինել տւած է։

—Եթէ գիշերը չը քնանար,—կ'ըսէ անդիէն մէկը,—գողին մըտնելը կ'իմանար։

Վերջապէս ամենն ալ, որ ցաւակցութեան եկած էին, այլ և այլ դիտողութիւններով կերպով մը Միկարը պատասխանատու կը բռնէին այս գողութեան։

Միկար, որ, ինչպէս կ'ըսեն մեր նախնիք, պաղարիւն մէկն էր, կիրքով խօսելը տղայութիւն և քիչ մըն ալ անկրթութիւն կը համարէր, ամենն ալ մտիկ ընելէն յետոյ՝

—Բարեկամներ,—կ'ըսէ,—ասոնց ամենը լաւ. բայց սա իմ տունս մտնող գողը բնաւ յանցանք չունի՞։

Յակոբ Պարոնեան

Փոխադրի՛ր ամբողջ յօդւածը արևելեան բարբառի, առանց որևէ նըշումին բաց թողնելու։

Ատեն—*ժամանակ։*
եղելութիւն —*իրողութիւն։*
փութալ—*շտապել։*
տարակոյս—*կասկած։*
ասդին—*այս կողմը, դէսը.* **անդին**—*այն կողմը, դէնը։*
յարել—*կցել, վրա բերել։*
ասանկ—*այսպէս.* **ատանկ, անանկ**—*այդպէս, այնպէս։*
տղայութիւն—*երեխայութիւն։*

---

3. Գիշեր

Խաղաղ գիշեր է,
գեղեցիկ ու զով,
աշխարհ կը նիրհէ
անուշ երազով։

Ան ինչպէս սիրուն
մեղմ կը նային վար
հանդարտ աստղերուն
աչուկները վառ։

Ինչպէ՜ս անվրդով
խոր է երկինքը,
կը սահի ժպտով
լուսնին մահիկը։

Խաղաղ գիշեր է,
գեղեցիկ ու զով,
աշխարհ կը նիրհէ
անուշ երազով։

Լեւոն Շանթ

4. Արտուտ

Արտուտ թռչունը, որ թերեւս արտ ուտելէն առեր է այս յարմար անունը, իր բոյնը հասկաւոր արտի մէջ դրեր, ձագեր էր հաներ։ Նախատես ձագամայրը միշտ կ՚ապըսպրէր իր ձագերուն, որ միտ դնեն արտին տիրոջը, թէ ի՞նչ կը խօսի, երբ տղուն հետ կու գայ տեսնելու՝ թէ արտին հնձելու ժամանակը հասե՞ր է։

Առաջին անգամ կը լսեն ձագերը և կը պատմեն իրենց մօրը, թէ հայրը տղուն կ՚ըսէր։

«Որդեա՛կ, արտը հասնելու մօտ է, գնա՛, խօսէ մեր դրացիներուն, թող մեզի օգնութեան գան, արտը միասին քաղենք»։

Արտուտը կը պատասխանէ։

«Դեռ անհոգ կեցէք. քանի որ արտին տէրը դրացիներուն օգնութեանը կ՚ըսպասէ, այս արտը չի քաղուիր»։

Երկրորդ անգամ մտիկ կ՚ընեն ձագերը ու կը պատմեն, թէ գիւղացին իր տղուն կ՚ըսէր։

«Դրացիները չեկան. գոնէ գնա՛ բարեկամներ հրաւիրէ, գան մեզի օգնելու, արտը միասին քաղենք»։

Խելացի արտուտը դարձեալ նոյնը կը կրկնէ։

«Հանգիստ եղէք, ձագուկներ, եթէ գործը բարեկամներուն է մնացեր՝ յաւիտեան չի քաղուիր արտը»։

Երրորդ անգամ կը պատմեն ձագերը, թէ արտին տէրը վա՛շ վա՛շ ընելով իր տղուն կ՚ըսէր.

«Որդեա՛կ, առ դու քու մանգաղը և ես իմը, երթանք մեր արտը քաղենք. այլ ևս դրացիներու, բարեկամներու սպասելը ընդունայն է»։

Ուշադիր ձագերը, երբ այս վերջին խօսքը կը պատմեն իրենց մօրը, մայրը կը պատասխանէ։

«Հիմա ստոյգ կը հաւտամ, թէ արտը պիտի քաղուի. պէտք է ձեզ տեղափոխեմ»։

Խրիմեան Հայրիկ

թերեւս—գուցէ, կարելի է։
նախատես—առաջուց մտածող, ենթադրող։
միտ դնել—ուշ դնել. ուշադրութիւն դարձնել։
մտիկ ընել—ականջ դնել։
ընդունայն—զուր, իզուր, աւելորդ։
ստոյգ—ճիշտ, հաստատ, ապահով։

5. Սոխակի վիշտը

Օր մը տեսաւ օտար թռչուն՝
սոխակ կու լար կուց-կուց արիւն.
—Ինչո՞ւ, ըսաւ, սոխա՛կ սիրուն,
ինչո՞ւ կու լաս կուց-կուց արիւն.
ինչո՞ւ այսպէս դուն երերուն,
այդպէս տխուր չոր թփերուն։
Աշխարհ ամեն վառ քու սիրուն,
այդ ճըլվըլուն քու երգերուն.
հապա ինչո՞ւ դուն օրն ի բուն,
այս լուս ու մութ անտառներուն,
այս շատ անուշ զով հովերուն
նստեր կու լաս կուց-կուց արիւն։

—Ի՞նչ կը խօսիս, օտա՛ր թռչուն,
խենդ ու խելառ դուն ցնորուն։
Ձմեռ նստաւ մեր սարերուն,
կտրեց ջրիկ աղբիւրներուն,
կտրեց հոտիկ ծաղկըներուն,
կտրեց ձայնիկն իմ ձագերուն,
ինչպէ՞ս չի լամ կուց-կուց արիւն։

Նորէն ըսաւ օտար թռչուն.
—Հերիք դուն լաս, սոխակ սիրուն,
հերիք դուն լաս կուց-կուց արիւն.
կու գայ նորէն քեզ նոր գարուն,
կ՚ելնէ արև այս վայրերուն,
կը հալի ձիւնն այս սարերուն,
կը բացուի ջուրն աղբիւրներուն,
առջեն ինկած քու ձագերուն
բարև կու տաս ծաղկըներուն։

կուց—երկու ափերը իրար կցած գոգաձև, բուռը։
երերուն—տարակուսանքով, թշւառ, թափառական։
օրն ի բուն—ամբողջ օրը։
ցնորուն—ցնորւածի պէս։

6. Կամքի առաջին փորձը

ա.

—Մամա՛, կ'աղաչեմ, պտի՛կ մը ջուր…

Սաստիկ ձմեռ էր, բո՛ւք, փոթորի՛կ, փողոցները մինչև բերանը լեցուած էին ձիւնով, ու գիւղացիները ստիպուած էին տանիքներէն երթևեկել, որովհետև դուռները վաղուց կորսուած էին ձիւնէ դէզերուն տակ։

Սուրբ Սարգիս շատ զայրացած էր այդ տարին. երկինքը կը հեւար, կը փչար, սարերն ու հովիտները կ'ոռնային, մէկու մը ետևէն կը հայհոյէին։ Կարծես դուրսը ամեն բան իր տեղէն խախտիլ կ'ուզէր։

Ցորեկը գոնէ քիչ մը լոյս կար, բայց ի՜նչ սարսափ էր այն ուրբաթի գիշերը, որ սուրբ Սարգսի տօնին առաւօտը պիտի լուսցնէր։

—Մամա՛, կ'աղաչեմ, պտի՛կ մը ջուր…

—Քչի՛կ մըն ալ համբերէ, ձագո՛ւկս, շատը գնաց քիչը մնաց, հիմա կը լուսնայ, հիմա՛ կը լուսնայ…

Ու չէր լուսնար, որովհետև ձմեռուան տարի գիշերը լուսնալիք չունէր։

Այն օրէն որ պզտիկը որբուկ մնացած էր և այդ դժբախտ պառաւին վերջին հարազատը, մ'ալ աշխարհ ամփոփւեցաւ երկուքին համար ալ երկու սրտերու մէջ. Թոռնիկը փաթթւեցաւ մեծ-մօրը քղանցքներուն իր բոլոր հոգիով, ու պառաւը իր ծերութեան ամբողջ գորովը, քաղցրութեամբ, բարութեամբ շաղուած իր ամբողջ կարօտը կապեց այդ մանկան հաճոյքներուն, խաղերուն ու դիւրափոփոխ քմայքին, կամաւոր խաղալիքը դառնալով անոր կամքին։

Ա՜լ ուրիշ մարդ չըկար տունը։ Քանի մը հաւ ու հաւձագ, աքաղաղի ընտանիք մը, մէյ մըն ալ տանը կատուն, ահա ամբողջ բնակչութիւնը այդ խեղճուկ հիւղակին, ուր անասունէն մինչև շարժուն մարդը տեսակ մը իմացական կապակցում սկսած էր գոյանալ։ Կատուն եթէ տունէն երկար յամեցում մը ունենար կամ դունչը արգիլուած ամանի մը մօտեցնէր, թեթև սրտմտութիւն կ'ունենար մեծմայրը և մէկ երկու թթու խօսքեր կ'ուղղէր անոր, որ կարծես կը հասկնար այդ բառերուն մարդկային նշանակութիւնը, մեղաւորի համակերպութեամբ, կիսատ մլաւիւն մը կու լար ու կ'երթար անկիւն մը կը սալարւէր կը քնանար։ Մենաւորութեան մէջ քարերն ալ լեզու կ'ելլեն ու շունչ անգամ կ'եղբայրանայ քեզի հետ։

Սուրբ Սարգսի բարեկենդանը հասնելուն, մեծ-մայրը պատմեր էր պզտիկին այդ զօրաւոր, կտրիճ Սուրբին պատմութիւնը. նկարագրեր էր անոր ճերմակ հրեղէն ձին ու ձիաւորին պերճ հասակը, սուր երկար նիզակը։ Պատմեր էր թէ ինչպէս փոթորիկէն բռնուած շատ ճամփորդներ յանկարծ տեսեր էին, որ սպիտակ մօրուքով դիւցազն մը իրենց թևէն բռնած, իր նժոյգին գաւակին վրա նստած ու փրկած էր իրենք, թէ ինչպէս շատ շատեր ալ անդարձ կորսուեր էին, որովհետև պահք չէին պահեր, ծոմ չէին բռներ այդ շաբթուն։ Ու դեռ հազար հրաշալիք, հազար հեքեաթ։ Ամեն գիշեր արդէն երբ որ պառկէին, և շատ ալ կանուխ, առջի իրիկունէ կը փչէին իրենց ճրագը, մեծ-մայրը ծոցն առած՝ թոռնկանը ինչե՜ր չէր ըսեր, ի՜նչ անուշ պատմութիւններ չէր պատմեր։

բ.

Նանի ու Թոռնիկ որոշեցին ամբողջ շաբթուան ծոմապահութիւնը, ու կեցան ալ։ Պառաւին համար ասիկա առաջինը չէր. անոր համար լաւ գիտէր վերջի մէկ երկու օրուան դառնութիւնը, ծարաւին չարչարանքը ու թուքին կրակը բերնին մէջ։ Բայց վեց եօթը տարեկան մանկիկը բան չէր գիտեր բոլոր ասոնցմէ։ Առաջին օրերը իրաւ որ ծոցին հացը չէր կարօտցեր. արժող յաղթանակը ան էր որ հացը ծոցը պահէր ու չը փորձւէր. բայց ջուրը շատ տանջած էր։ Գլուխը որ բարձին դնէր, անուշ աղբիւրի մը գլուխը կամ գեղեցիկ առւի մը եզերքը կը տեսնէր ինքզինքը. կը ծռէր խմելու, սակայն ջուրը ճերմակ օձի կը փոխւէր ահ ու կ'աներևութանար կանաչ խոտերուն մէջ, և մանկիկը անմիջապէս կ'արթննար։ Երազը կը պատմէր մամային, որ մութին մէջ փայփայելով իր երեսը՝ կը քաջալերէր, հաւատցնելով թէ սուրբ Սարգիս իր հետ էր, երազին մէջ կը փորձէր ու չէր թողներ որ չար սատանան խաբէ։ Ու մանկիկը հեղ մըն ալ կը քնանար, բայց աչքերը կը գոցէր չէր գոցեր, նոյն երազը, նոյն կաթնաղբիւրը, նոյն ծարաւի խռովքը. քունը չէր գար, աչքը պատուհանին կը մնար, բայց ձիթազօծ թղթէ լուսամուտը չէր ճերմկտեր ու առաւօտը կ'ուշանար։ Միայն փոթորիկը կ'ոռնար ու բուքը կը ծեծէր դռները կամ անտէր պատուհանի մը փեղկերը, պատռտած թուղթի կտորները։

Ու պզտիկը կը վախնար, աչքերը խոշոր-խոշոր կը բանար դուրսի այդ աղմուկին, որովհետև մեծ-մայրիկը կ'ըսէր թէ սուրբ Սարգիսն

է, որ իրենց տանիքին վրա կը հսկէ ու կը սպառնայ անհամբերներուն, որ ջուր չուզեն։

Սուրբ Սարգիս ու իր խոստումները աղէկ, իր բերելիք ընծան ալ շատ շատ աղուոր, բայց սիրտը կ'այրէր, բերանը կը չորնար, շըրթունքներն իրարու կը կպնէին։ Ա՜խ, եթէ մեծ-մայրը քիչ մը բարի ըլլար ու սուրբ Սարգիս ալ քիչ մը բարեսիրտ, և թոյլ տային, որ պուտ մը ջուր բերանը առնէր, լեզուն թրջէր։

—Համբերէ, պզտի՛կս, համբերէ։ Սուրբ Սարգիս հունա դուռն ետև կեցեր լուսնալուն կը հայի, հիմա ներս պիտի գայ, քեզի անուշ անուշ բաներ պիտի բերէ. շատը գնաց, քիչը մնաց։

Մաման ջուրին փոխարէն օրօր մը սկսաւ. այն հի՜ն, շատ հին երգը, որ ժամանակին պզտիկին հօրը պզտիկ օրօրոցին վրա ըսած էր։ Ա՜լ ձայն չելաւ. մանուկը հետզհետէ իր անհանգիստ թարթիչները երկընցած տեղը թողեց, մոռցաւ ջուրը ու հանգստացաւ։ Պառաւը կ'երգէր տակաւին իր զառամած տրտում եղանակը։

Աքաղաղները կը կանչէին, ժամուն տախտակէ զանգակը արշալոյսին աղօթքը կ'ընէր գիւղին վրա ու անոր քունը կը փախցնէր։ Գիշերը վերջին անգամ կը յօրանջէր ու լոյսը սանտրուիլ կը սկսէր խաւարին մէջ։

—Դէ՜ ելիր, պզտի՛կս, ելի՛ր. տե՛ս սուրբ Սարգիսը ինչե՛ր է բերեր քեզի, աղո՛ր աղո՛ր չամիչներ, պաստե՛ղ, քեզի կարմիր ոտից է բերեր. ելի՛ր, անուշի՛կ թոռնիկս, ելիր, որ ժամ երթանք...

Պզտիկը չէր արթննար։

Ռուբէն Զարդարեան

Փոխադրի՛ր արեւելեանի երկու մասերից մէկը։

Աղնձիլ—այրուել, մրկուել։
լուսնալիք չունի—լուսանալու միտք չունի, չի լուսանալու։
շաղուել—շաղախել, թրել։
քմայք—քմահաճոյք, քմահաճութիւն, կապրիզ։
իմացական—մտաւոր, հասկացող, (իրար հասկացող)։
մէյ մըն ալ—մէկ էլ։
յամել—ուշանալ. **յամեցում**—ուշացում։
արտմութիւն—բարկութիւն, զայրոյթ։
համակերպիլ—ենթարկուել, յարմարուել մէկի կամքին։
սալարիլ—ծածկուել, թեւի տակը մտնել, ապաւինել։
քնանալ—քուն մտնել, քնել։
պերճ—հարուստ, զարդարուն, փառայեղ։

կորսուիլ—կորչել։
առաջի իրիկունը—երեկոյեան առաջի մասը. **առջի իրիկուընէ**—երեկոյեան վաղ, մթնածին պէս։
ծոցը առնել—մօտը առնել, մօտը քնացնել։
ասիկա, ասիկ, ասի, աս—այս, էս. նոյն կերպով **ատիկա, անիկա**։
անոր համար—նրա համար, այդ պատճառով։
ինքզինքը—ինքը իրեն։
հեղ—անգամ. **հեղ մըն ալ**—մի անգամ էլ։
խռովք—անհանգստութիւն, յուզում, տանջանք։
ձիթազօծ—ձէթ քսած, իւղ քսած։
ճերմկոտիլ—սպիտակին տալ. սկսել սպիտակել։
աղէկ—լաւ։
հունա՛—հրէն. **հուսա՛, հուտա՛**—հրէս, հրէդ։
հայիլ—նայել։
զառամիլ—բոլորովին ծերանալ։
ոտից—ոտնաման, կօշիկ։

1. Ո՞րն է **բարեկենդանը, բուն բարեկենդանը, պահքը** (պաս), **Մեծ պահքը**։
2. Ի՞նչ ասել է. **տարի գիշեր, բբու խօսք, անտէր պատուհան, լոյսը սանտրուիլ կ'ըսկսէր, բուքին կրակը, կը գոցէր չէր գոցեր**։

7. Մրջիւնին դատաստանը

Մրջիւն մը կար բարակիկ,
մէջքը թելիկ, ոտքը կարճիկ,
չիտեմ խելքին ի՛նչ փչեց,
խիստ բարձրէն քալել ուզեց.
վազեց, վազեց հևալէն,
ելաւ մինչև մինարէն։
Վերէն վար որ նայեցաւ,
«Ծօ, ասոնք ի՛նչ են, ըսաւ,
հա՛, հա՛, ան ձին չէ՞ մի սա,
որ երէկ դաշտը տեսայ.
չըսե՞ս՝ ես կոյր եմ եղեր,
ատանկ մանրիկ ճիճուներ
մէյ-մէկ հսկայ եմ կարծեր»։

Չիտեմ—չըգիտեմ բառի կրճատ ձևը։
քալել—քայլել։
մէյ—մէկ—(փոխանակ՝ մէկ—մէկ) մի—մի։

8. Գայլ ու գառն

Գառնուկին մէկը ամառուան տաքին
կ'երթայ ջուր խմէ առուակէն՝ ցածը.
դուն նայէ՛ գլխուն եկած փորձանքին՝
հոն յանկարծ գայլ մը չելնէ՞ դիմացը։
«Աս ի՛նչ աղուոր որս գտայ»
կ'ըսէ, ալ ինչ երկար մոմոայ,
շիտակ գառնուկին վրայ կը փութայ։
Բայց օրինաւոր ձև տալ ուզելով գործին անօրէն՝
—Աս ի՛նչ լրբութիւն, ի՛նչ յանդգնութիւն,—կը կանչէ վերէն,
որ պիղծ դնչովըդ եկեր ես ջուրըս դուն կը պղտորես.
նայէ ինչ ըրիր. բոլոր ցեխ, աւազ. ինչո՞ր խմեմ ես։
Հա՛յ, դուն անպիտան, կեցիր որ վար գամ
ու ոսկորներդ ջարդեմ, անզգամ։
—Ամա՛ն, աղա՛, ոտքըդ պագնեմ,
մի՛ բարկանար, տես՝ ես ուր եմ,
ձեր մեծութեան կեցած տեղէն
հարիւր քայլ վար ես կը խմեմ,
ինչպէս կրնամ՝ որ պղտորեմ ես ձեր ջուրը։
—Ուրեմն սուտ կը խօսիմ ես. տեսա՞ր կերած ապուրը։
Անկէ ետքը միտքդ կու գա՛յ՝ հերու չէ, մէկալ տարի՝
նորէն հոս էր, աս տեղուանքը, ինչ հայհոյանք ըրիր ինծի.
դուն թէ մոռցեր ես,
դեռ չեմ մոռցեր ես։
—Աղա՛, քեզի մատաղ ըլլամ.
դեռ տարու մը կամ ու չը կամ։
—Դուն թէ չէիր՝ քու ախպարդ էր։
—Ախպար-մախպար չունիմ ես, տէ՛ր։
—Ծօ, աներեւս, ան քու ախպարդ չէ՞ր մի.
ախպարդ չէր, սանահարդ էր կամ խնամի։
և վերջապէս մ'երկընցըներ,
ով ալ ըլլայ ձեզմէ մէկն էր.
դուք ամենքդ ալ թշնամիս էք՝
ոչխար ու շուն, հովիւը նենգ,
ձեռքերնուդ գայ՝ իմ արիւնըս կը խմէք.
ես ալ ոխս քեզմէ հանեմ, որ սիրտըս հովնայ։
—Բայց յանցանքս ի՛նչ է, աղա՛։
—Ջայնդ քաշէ, փո՛ւճ կենդանի,
նստիմ յանցա՛նքդ համրեմ պիտի.
յանցանքդ ա՛ն է, թէ գիտնալ կ'ուզես,
որ սիրտս ուտել-լափել կ'ուզէ քեզ։
Աս ըսաւ ու խեղճ գառնուկը տարաւ
անտառին խորը, պատըռտեց, կերաւ։

Կռիլով Թարգմ. Գաբր. արքեպ. Այվազեան

Փոխադրի՛ր նոյնութեամբ արեւելեան բարբառի, առանց որեւէ կարեւորութիւն տալու յանգին, չափին ու տողերի ձեւին, իբրեւ թէ արձակ լինէր գրուած։

Հոս—*այստեղ.* **հոդ, հոն**—*այդտեղ, այնտեղ։*
դիմաց—*դէմ, հանդէպ։*
աղուոր—*գեղեցիկ, գողտրիկ։*
մոմոալ—*մտածել, միտք անել։*
շիտակ—*ուղիղ։*
պիղծ—*անսուրբ, անմաքուր։*
նայիլ—*կը գործածուի նաև* **տեսնելու** *իմաստով.* **նայէ—տես, նայիմ—տեսնեմ։**
ինչոր—*ինչպէս, (ինչ թաւուր)։*
կենալ—*մնալ, սպասել.* **կեցիր**—*կա՛ց։*
ետքը—*յետոյ.* **անկէ ետքը**—*նրանից յետոյ։*
մէկալ—*մէկել, միւս։*
(մէկուն) **կերած ապուրը**—*(մէկի) ասած կամ արած յանդուգն բանը։*
տեղուանք—*տեղեր։*
տարու—*տարեկան.* **երկու տարու կըլլայ։**
երկնցընել—*երկար անել, երկարացնել.* **մ'երկընցըներ**—*մի՛ երկընցներ։*
նենգ—*խարդախ, խաբեբայ։*
ոխ—*վրէժ, ջիգր։*

---

9. Կօշիկը

ա.

Սեդրակ աղան կօշկակարի մը խանութը կը մտնէ։
—Բարեկամ, զոյգ մը կօշիկ կուզեմ ապսպրել։

—Շատ աղէկ։

—Կօշիկներուն քիթը նեղ ըլլալու չէ։

—Հիմիկուան մոտայէն չէք ուզեր՝ ըսել է։

—Կուզեմ որ ոտքս կօշիկին մէջ ազատ շարժի. նեղ ոտքի աման չեմ ուզեր, կոշտ ունիմ։

—Գլխուս վրա, ձեզի անանկ կօշիկ մը շինեմ, որ թէ մոտայի համաձայն ըլլայ և թէ ձեր ոտքերը չը սեղմէ։

—Եթէ գոհ ընես՝ միշտ քու խանութը կու գամ։

—Վստահ եղէք։

Կօշկակարը Սեդրակ աղային ոտքի չափը կառնէ և կիմացնէ թէ քանի մը օրէն պատրաստ պիտի ըլլան կօշիկները։

Սեդրակ աղան քանի մը օրէն կերթայ կօշկակարին։

—Պատրա՞ստ են կօշիկներս։

—Այո՛, պատրաստ են։

Կօշկակարին աշկերտը Սեդրակ աղային կը ներկայացնէ կօշիկները։

—Եղբա՛յր,—կըսէ Սեդրակ աղան,—ասոնք պզտիկ են։

—Ընդհակառակը՝ մեծ են։

—Ասոնց քիթերը նեղ են։

—Չեմ կարծեր, շատ լայն քիթերը այսօր յարգի չեն. կաղաչեմ անգամ մը ձեր ոտքը անցընէիք սա կօշիկները։

Բ.

Սեդրակ աղան կը նստի։ Կօշկակարին աշակերտը քառակուսի տախտակ մը կը դնէ Սեդրակ աղային ոտքերուն տակը։ Սեդրակ աղան կը ձեռնարկէ նոր կօշիկները հագնելու։ Կօշիկները կապստամբին։

—Ոտքդ ուժով կոխէ,—կըպոռայ կօշկակարը։

—Ոտքի վրա ե՛լ ու այնպէս կոխէ,—կըսէ կօշկակարին օգնականը։

—Ուժով ոտքդ գետին զա՛րկ,—կըխրատէ կօշկակարին աշկերտը։

—Ծօ՛, սա փոշիէն ցանէ քիչ մը կօշիկներուն մէջ, որ Սեդրակ աղային ոտքերը դիւրութեամբ սահին ու մտնեն,—կըհրամայէ կօշկակարը պզտիկ աշկերտին։

Հրամանը կը կատարուի։ Բայց կօշիկները հաստատամիտ են։

—Էօ՛ֆ, քրտնեցայ,—կըսէ Սեդրակ աղան երեսը թթուեցնելով,—քեզի քառասուն անգամ ապսպրեցինք, որ մեծ ըլլան, լայն ըլլան, երկար ըլլան։

—Կերևայ որ ոտքերդ քրտնած են։

—Չէ, ջա՛նս, չէ՛. կօշիկները նեղ են։

—Անգամ մը որ հագնիս՝ կը բացուին։ Լայն ոտքի-ամանները աւելի կը վնասեն կոշտերուն։

—Բայց չե՛մ կրնար հագնիլ։

Կօշկակարը, օգնականով և աշկերտներով, Սեդրակ աղային օգնելու կերթայ։ Երկու հոգի Սեդրակ աղային թևը կը մըտնեն, կօշկակարը Սեդրակ աղային մէկ ոտքը կը բռնէ և կաշխատի կօշիկին մէջ դնելու։ Ամբողջ կօշկակարեան խումբը կաշխատի, կը ճգնի ու կը տքնի։

—Թո՛ղ տուէք ոտքս, վազ անցայ,—կը բողոքէ Սեդրակ աղան։

—Բարկանալու իրաւունք չունիք, Սեդրա՛կ աղա։

—Չունիմ, ախպար, չունիմ, դուք իրաւունք ունիք բարկանալու. Թո՛ղ տուէք ոտքս քաշեմ։

Բայց կօշկակարը ուժով բռնած է Սեդրակ աղային ոտքէն, որուն ինը տասներորդ մասը մտած է կօշիկին մէջ։

—Շատ բծախնդիր էք, Սեդրակ աղա։

Գ.

Սեդրակ աղան կը զգայ, թէ գերի բռնուած է, ուստի անձնատուր կըլլայ կօշկակարին, որ իր խմբովը կը յաջողի վերջապէս կօշիկները անցընել իր յաճախորդին ոտքերուն։

—Տեսա՛ր ինչպէս աղէկ եղաւ։ Ոտքի վրա կայնէ քիչ մը. մինչև
տուն երթաս՝ ո՛չ ցաւ կը մնայ, ո՛չ բան։ Սանկ քալէ նայիմ։
—Ի՞նչպէս քալեմ. կօշտերս սաստիկ կը ցաւին. հանեցէք սրունք։
—Քիչ մը խօսք մտիկ ըրէ, Սեդրակ աղա. մինչև տուն գնաս,
ոտքերդ պիտի վարժուին։

—Քիչ մը լայնկէկ շինէիք չէ՞ր ըլլար։

—Չըլլար, Սեդրակ աղաս, չըլլար, ամէն խանութ անուն ունի,
մենք մեր խանութին պատիւը չենք կրնար կոտրել անանկ մեծ, լայն
ու տձև կօշիկներ կարելով. ամէն մարդ իր գործը գիտէ։

—Աղէկ, աղէկ, ի՞նչ պիտի տանք։

—Ոսկի մը։

Սեդրակ աղան կը վճարէ ու նոր կօշիկներով դուրս կելնէ կօշկակարին խանութէն, կօշտերուն ցաւէն ամէն քայլափոխին հառաչելով, երբեմն ալ արտասուելով։ Կը զգայ վերջապէս, թէ չի պիտի կրնայ շարունակել ճամփան, գըօսարան մը կը մտնէ, բազմոցին վրա կը նստի և կօշիկները հանել կուզէ։ Չը յաջողիր։ Սրճարանին սպա-

սաւորը կը կանչէ և կաղաչէ, որ կօշիկները քաշէ։ Սպասաւորը բոլոր ուժը կը սպառէ, կարելի չըլլար կօշիկները հանել։ Իմաց կը տրուի կօշկակարին, որ օգնականին ընկերակցութեամբը կը հասնի և մեծ դժուարութեամբ կը յաջողի ազատել Սեդրակ աղան իր ոտքերուն ձեռքէն։ Սեդրակ աղան կը հագնի հին կօշիկները ու կը հանգստանայ։

—Բնաւ դիմանալ չը գիտէք, Սեդրակ աղա,—կըսէ կօշկակարը,—ձեւաւոր և ճաշակաւոր բան մը հագնելու համար քիչ մը ակռան սըխմելու է մարդս։ Ինչ որ է ուէք սա կօշիկներն ինծի, վաղը ես անոնք աղուոր կաղապար մը զարնեմ ու ղրկեմ ձեզի։

Յակոբ Պարոնեան

Մասերից մէկը փոխադրիր արեւելեանի։

Ապսպրել—պատուիրել։
վազ անցնիլ—ձեռք վերցնել։
բծախնդիր—շատ մանր ու բարակ բաները փնտռող։
կայնիլ—կենալ, կանգնել։
սանկ—ասանկի կրճատումն է, այս կերպով, այս կողմ, մի քիչ։
սըւոնք—սա-ի յոգնակին՝ ժողովրդական, սրանք։
լայնկէկ—մի քիչ լայն։
ակռայ—ատամ։
սըխմել—սեղմել-ի ժողովրդականացածն է։
ակռան սեղմել—համբերել, տոկալ, դիմանալ։
կաղապար զարնել—կաղապարի դնել։

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

Ծնուել է Ադրիանապոլսում 1848 թւին և իր սկզբնական կրթութիւնը ստացել մայրենի քաղաքում։ Կեանքի մնացած մասը անցկացրեց Կ. Պոլսում, զբաղուելով գլխաւորապէս գրականութեամբ։ Խմբագրում էր մի քանի պարբերական հրատարակութիւններ (Թատրոն, Խիկար) և աշխատակցում էր զանազան թերթերին։ Ունի գրած բազմաթիւ երգիծաբանութիւններ, որոնցից նշանաւոր են Ազգային ջոջեր, Մեծապատիւ մուրացկաններ, Քաղաքավարութեան վնասներ, Պտոյտ մը Պոլսոյ թաղերուն մէջ, Բաղդասար աղբար։ Այդտեղ նա անխնայ և կծու սրամտութեամբ ծաղրում է իր ժամանակակից գործիչների և հասարակութեան թերութիւնները։ Ուժեղներից հալածուած՝ վերջին տարիները չքաւորութեան մէջ էր ապրում՝ զբաղուելով հաշուապահութեամբ զանազան վաճառականների մօտ և մեռաւ 1891 թւին թոքախտից։

10. Թաթուլին գալաճոշը

—Հոգիդ սիրես, կնքահա՛ր,
անուշ ըրէ, հրամմէ՛, կեր։
—Խիստ շատ կերայ, սանահա՛ր,
մինչև սրտերս է հասեր։
—Հոգ չէ, պնակ մ'ալ հրամմէ.
ասիկ չուտելու բան չէ։
—Բայց, սանահա՛ր, գիտցածս,
երեք եղաւ կերածս։
—Թող, մա՛րդ, համրելն ինչ բան է,
բանն ախորժիդ վրան է,
կե՛ր կերածիդ չափ անուշ.
ասոր կ'ըսեն գալաճոշ.
եղն երեսին կը ծփայ,
տես սաթի պէս կը ցոլայ։
Կե՛ր, կնքահա՛ր, մի՛ քաշուիր,
ասանկ բան միշտ չի ճարուիր.
սա սոխն ալ կեր, սա միսն ալ,
սա կտորն ալ, մէկ գդալ.
ձեռքն է օրհնած եփողին.
օրհնած ըլլայ տանտիկնին։
Այս կերպով մեր Թաթուլը Խեչօ ախպոր հարկինք կ'ընէր.
աչք բանալու ատեն չէր տար. երկու խօսքին մէկն էր՝ կեր։
Խեչօն շատոնց արիւն-քրտինք էր մտեր,
բայց ինչ ընէր, պէտք էր՝ պնակ մ'ալ ուտէր։
Բոլոր ուժը մէկ ըրաւ,
ետքի պնակն ալ կերաւ։
—Ապրի՛ս, կանչեց Թաթուլը, աչքդ սիրեմ.
ես բարեկամը ահա ասանկը կը սիրեմ.
կտըրտելով ով նազ կ'ընէ,
իմ էն ատած մարդս ան է,
Պնա՛կ մըն ալ, կնքահա՛ր։

Խե՛ղճ Խեչօ ախպա՛ր.
սա որ լսեց՝ ինչ ընելը չը գիտցաւ,

գդակն ու գօտին առնել-փախչիլը մէկ ըրաւ,
շունչը շիտակ տուն առաւ,
իսկ Թաթուլին տունը ալ ոտք չը դրաւ։

Կոլլով Թարգմ. Գաբր. արքեպ. Այվազեան

գիտցածս—ինչքան ես գիտեմ, իմ հաշվով։
սըտեղ, սատեղ—այստեղ. սըտեղս է հասեր—կոկորդս է հասել։
ծփալ—ջրի երեսին շարժվել, օրորվել։
ճար—դեղ, հնարք, միջոց, ճարել—ձեռք բերել, գտնել։
հարկինք—հացկերույթ, խնջույք. հարկինք ընել—հրամցնել, հրամցնելով պատվել։
ուժը մէկ ընել—ուժերը հավաքել։
ետքը—վերջը. ետքի (պնակ)—վերջին։
աչքդ սիրեմ—ապրես, կեցցես։
շատոնց—վաղուց։

11. Ձմեռ էր, եղաւ գարուն

Ձմեռ էր, եղաւ գարուն, ցամքեցաւ ձիւն սարերուն,
փթթեցան ծառերն ամեն, տերև հագան գոյնզգոյն,
առխակը գիշերն իրուն կը ձայնէ դալար ճիւղերուն։

Ձմեռ էր, եղաւ գարուն. կանչըցաւ երես դաշտերուն,
ծիծառը դրաւ իր բոյն, կ'երթայ ու կու գայ մեղուն,
կը թռչի սարերն իվեր, որ քաղէ հիւթ ծաղկըներուն։

Ձմեռ էր, եղաւ գարուն, փա՜ռք Արարիչ Աստծուն,
մանուկներ սարերն ելան մէջ ծաղկաւէտ խոտերուն,
կը խայտան ու երգ կ'երգեն նման աշխուժ հաւքերուն։

Ըստ Ստեփաննոս

ցամքիլ—չորանալ, ցամաքել։
փթթիլ—ծաղկել։
ձայնել—ձայն տալ, կանչել։
խայտալ—ուրախությունից եռ գալ, ցատկոտել։

12. Խծկոնքի վանքը

ա.

Ցերեկուան տաքը դեռ կոտրած չէր բոլորովին, ու ձին դժուար ու ծանր կը բարձրանար։

Ճամփան պինդ մը փակած էր ձորի ձախ պատին, ու այդ պատին հետ միասին ինքն իր կողքին վրա կը ծուէր չերքէզի սուրին պէս. ու միենոյն ժամանակ քիչ-քիչ վեր կը սողար, միշտ վեր ձորի յատակէն դէպի Խծկոնքի վանքը։

Մինչ ձիաւորը քրտինքը սրբելով ճամփու իւրաքանչիւր կոր տալուն՝ ձիուն վրայէն դէպի առաջ կը ծռէր վանքի գմբէթները նշմարելու յոյսով։

Քսան-քսանըհինգի մէջ երիտասարդ մըն էր ան. աշխուժ արտայայտիչ աչքերով, որոնք կը սահէին հիմա ձորի երկու վայրի պատերն ի վեր, որոնց վրա երկնքի տաք-կապոյտ կտոր մը եկեր իր վրանն էր քաշեր։

Թեթև ոլոր մըն ալ. և հա՛, վերջապէս։ Իր դէմն էր վանքը, հինգ մանրանկար եկեղեցիներ, գրեթէ իրարու կից, իրարու թևի տակ, իրենցմէ ամենէն մեծի շուրջը խռնուած. և ատոնց փոքր ու փոքրիկ գմբէթներու ամբողջ երամը շրջապատող ծառերուն մէջէն վիզերնին վեր երկնցուցած՝ հետաքրքիր նայուածքով եկուորը կը դիտէին։

Կարծես լեռնական հսկայ ուրուր մը իր ձագերուն հետ, որ ձորի ձախ կուրծքին, հոն, դուրս ցցուած ժայռոտ հարթակին վրա դրեր էր իր ամեհի բոյնը ծառերու տրցակին մէջ։

Ու շիտակ այդ ամեհի բոյնը կը մտնէր հիմա ձիաւորը՝ փնտռող նայուածքը իր չորսդին յածելով։

Եկեղեցիներուն ոտքը հին ու ցած պատ մը կ'երկըննար, որուն դռան առջևը հազիւ էր հասած ձին, երբ գզգզուած մազերով երկարահասակ բոբիկ ու գլխաբաց պատանի մը սեմէն դուրս նետուեցաւ։

—Բարև՛, հայր-սուրբը վանքն է։

—Հրամանք ես։

Ու մօտեցաւ առաւ ձիուն սանձը։

բ.

Երիտասարդը ցատկեց թամբէն վար ու մտաւ արագ բակը, որու

մէկ կողմը խումբի աւագ եկեղեցին էր, միւս կողմն ալ մէկ երկու հինկէկ հողէ սենեակներ։

Եւ ճիշդ այդ սենեակներէն մէկու դուռն էր, որ ճռռաց յանկարծ իր ծխնիներուն վրայ, ու սեմի շրջանակին մէջ երեւցաւ պարթեւ հասակով ծերուկ մը, երբեմն սեւ, իսկ հիմա դեղինի ու կանաչի տարբեր աստիճանի բոլոր բաղադրիչ երանգները ներկայացնող կապայ մը վրան ու խոշոր կօշտ, գունաւոր երեսսրբիչը ձեռքը, որով իր մինչեւ կուրծքը հասնող ալեխառն մօրուքը կը չորցնէր։

Կէս-օրուան քնէն նոր ելած ու դեռ բոլորովին չը սթափած ուղեղով՝ կը լուացուէր մեքենաբար, երբ իր միանձնութեան վարժուած ականջը դեռ հեռուէն սմբակներու դոփը լսեց, և ուխտաւորներու հաճելի գաղափարը իր գլուխը վերջնականապէս թարմացուց։

Եւ հիմա գոհ ու բարեացակամ դէմքի արտայայտութիւնով մըն էր, որ իր անուան հարցուիլը լսեց։

—Աստուած օգնական, հա՛յր-սուրբ։

—Աստուած օրհնէ, որդիս։

Երիտասարդը ծռեցաւ, համբուրեց ծերուկի աջը ու գրպանէն մեծկակ նամակ մը հանելով տուաւ անոր։

Նամակը, ըստ երեւոյթին, ախորժելի տպաւորութիւն չըրաւ վարդապետին վրայ։ Աջ ու ձախ դարձուց անգամ մը, դրաւ մօտակայ քարին ու ծանր շարժումով մը հանեց ծոցէն մաշուած ու աղտոտ պատեան մը, որուն մէջէն ահագին ապակիներով հին ձեւի ակնոցը դուրս քաշելով՝ ծանր-բարակ սկսաւ ականջներուն անցընել։

—Ո՞ւրկէ կու գաս հրամանքդ,—հարցուց այդ բարդ ու դժուար աշխատանքի միջոցին։

—Էջմիածնէն, հա՛յր-սուրբ. շատ բարեւներ ունիմ ձեզի։

—Հը՛մ. շնորհակալ եմ. ղրկող, բերող ողջ ըլլին։

Ու դէմքը աւելի խոժոռեցաւ։ Վարժ ձեռքով գրուած տողերը կարդալու քանի մը իզուր ջանքերէն վերջը՝ նամակը մեկնեց երիտասարդին.

—Մէկ հրամանքդ կարդաս, տեսնենք՝ ինչ է գրած. ես ծերացեր եմ, աչքերս աղէկ չեն ջոկեր։

Տղան կարդաց. ընդամենը չորս-հինգ տող էր ու թունդ պաշտօնական դարձուածներով շարադրած։ Ճեմարանի երեք լսարանցիներ քանի մը օր Խծկոնք էին մնալու, և Մայր-Աթոռի վարչութեան անունով կը յանձնարարուէր, որ հայր-սուրբը անոնց ամեն կերպ լաւ հիւրասիրութիւն ցոյց տար։

Ծերուկի դէմքը քիչ մը պարզուեցաւ. չարիքը իր կարծածին չափ մեծ դուրս չեկաւ։

—Ա՞յդ է բոլորը.—հարցուց տարակուսանքով։

—Այո՛, հա՛յր-սուրբ։

—Իսկ ո՞ւր են ընկերներդ։

—Անոնք քանի մը օր ուշ պիտի գան, Կողբի ու Երուանդակերտի վրայով։ Այն կողմերը ես եղեր եմ. ես եկայ Ալէքսանդրապոլի վրայով. վերջը հոսկէ միասին կ'երթանք Անի ու Հառիճ։

—Բայց միտքերնիդ ի՞նչ է.—հարցուց վարդապետը կասկածամտութեամբ։

—Ոչինչ. ա՛յնպէս շրջել անգամ մը։

—Չէ՛, երեւի Էջմիածնէն պաշտօն մը կ'ունենաք, հէ՞.— ժպտեցաւ ծերուկը ձախ աչքը կծկելով։

—Ի՞նչ պաշտօն, հա՛յր-սուրբ. մենք դեռ աշակերտ ենք։ Իսկ Շիրակը շրջիլը, է՛, մեր հայրենիքի հին պատմական կեդրոններէն է. կ'ուզենք ծանօթանանք։

—Հապա՛, իհարկէ, նշանաւոր վանքեր կան. մեր վանքն ալ շատ հին է, ու շատ յայտնի։ Է՜, հիմա ո՞րքան ժամանակ էք մնալու։

—Մինչեւ ընկերներս գան, մինչեւ հանգստանամ քիչ մը։

—Լա՛ւ,—ըրաւ վարդապետը կտրուած ձայնով մը։

Եւ ակընթարթ մը թաւ, ճերմակ ունքերը խաղցնելէն վերջը աւելցուց.

—Միայն, որդիս, այս տարուան արտերը այնքան ալ աղէկ չեն հոս, անասուններն ալ տեսակ մը ինկած են. կաթերնիս ալ քիչ է. այս աչքի առաջ ունեցէք։ Թէեւ, իհարկէ, Աստծու տուածէն ինչ որ ունիմ ձեզմէ չեմ խնայեր։

Գ.

Այս խօսքերուն հետ առաջնորդեց տղան իր խուցին կից ցած տուն մը ու դուռը ետ հրեց։

Փոքրիկ հողայատակ սենեակ մըն էր, ուր փայտէ երկար տախտէն ու փորփրած հասարակ սեղանէ մը զատ ոչինչ չը կար։

—Ահա՛ ալ քեզի ձեր սենեակը. ես հիմա կ'երթամ մնացած պէտք եղած բաները կ'ուղարկեմ։

Երիտասարդը առանց ոչինչ ըսելու հայեացք մը ձգեց իր շուրջը այդ գով, հող հոտող ու քիչ մըն ալ փլփլած խրճիթին մէջ ու իս-

կոյն մօտեցաւ սենեակի միակ պատուհանը բանալու, որու ապակիին կէսին տեղը թուղթ էր փակցուած։

Բայց հազիւ պատուհանը բացած՝ կանգ առաւ յափշտակուած։

Սենեակը նստած էր սեպ ու ամենի ապառաժի շրթունքին ու շիտակ դատարկութեան վրա կը նայէր։ Հանդիպակաց ձորափէն ժայռի ահագին բեկորներ իրենց խոռոչներէն դուրս կը նետուէին յոխորտանքով՝ հարուստ տալու սպառնալիքով մը իրենց մամռոտ գլուխները քիչ մը վար հակած. մինչ այդ դատարկ սպառնալիքին արդէն շատոնց վարժուած, նոյն այդ ժայռերու ոտքին, ցիրցան ծառերու խումբ մը հանդիսատ կ'օրօրէին իրենց վերին ճիւղերը՝ վերադարձող տաւերներու զովութեան մէջ խլրտուն։ Անորժ լռութիւն մը վերն ու շուրջը, որուն մէջէն աւելի թունդ ու աւելի յստակ շեշտերով կ'որոշուէր գետակի միապաղաղ ու ճոռոմ մենախօսութիւնը, որը երբեմն կը սուլէին ծառերը անդիէն, աւելի ձանձրոյթէն քան հեգնելու համար։

—Հը՞, հաւնեցա՞ր.—հարցուց վարդապետը ժպտուն։

—Հիանալի՜ է.— բացականչեց տղան աշխուժ եւ դառնալով իր հիւրընկալին։

—Հը՛մ.—ըրաւ վարդապետը անտարբեր շեշտով մը։—Դէհ, հիմա հանգստացիր քիչ մը, յոգնած կ'ըլլաս. ես ալ անգամ մը ելնեմ վեր արտը. տեսնեմ՝ գիւղացիք ի՞նչ բանի են։ Մարդ որ աչքը վրանին չը պահէ՝ վանքը կը կողոպտեն ծոյլ անպէտքները։

Եւ սեմէն եա դառնալով՝ պոռաց.

—Գրիգո՛ր, տիրացուին իրեղէնները ձիու վրայէն ներս բեր ու ձիուն առջևը դարման նետէ։

Ու իր բարձրագոչ հրամանին արձագանքը ձորի պատերուն մէջ դեռ չը կտրուած՝ մտաւ իր խուցը։

Ասով ալ վերջացաւ «տիրացու»-ի պաշտօնական ընդունելութիւնը։

Լեւոն Շանթ

Մասերից մէկը փոխադրիր արեւելեանի։

Փակչիլ—կպչել։
կոր տալ—կորանալ, ծռել։
մանրանկար—փոքրիկ մանր նկարած պատկեր։
տրցակ—կապոց, խումբ։
յածել—պտտեցնել. **յածիլ**—թափառել, պտտել, ման գալ։
հինկէկ—բաւական հին։

սռնի—այն երկաթը, որի վրա կը դառնան անիւները, դոներն ու փեղկերը։
պարթեւ (հասակ)—բարձր ու խոշոր։
թիկնեղ—լայն թիկունք ունեցող։
երանգ—գոյն։
կապայ—վերակու։
մեծկակ—բաւական մեծ։
ծանր-բարակ—շատ ծանր։
ինկած (մարդ, անասուն)—խեղճացած, ուժը կորցրած։
բեկոր—կտոր։
յոխորտալ—խրոխտալ։
հակիլ—վար ծռել, ցած խոնարհել։
ճոռոմ—շատ և աւելորդ խօսող։
մենախօսութիւն—առանձին, ինքն իրեն խօսելը։
հեգնել—լուրջ ձևի տակ ծաղր անել։
խլրտիլ—կամաց, հազիւ նկատելի շարժել. **խլրտուն**—խլրտած։

13. Արշալոյս

Մութ է գիշերս, ինչպէս սիրտս ալ
և թուխ ալիք մշտափրփուր
Վանայ ծովուն ծիածաւալ
հառաչանքով լի են, տխուր.
Գոց են ամպով աստղեր... և յոյս.
դեռ շատ հեռու է արշալոյս։

Մկրտիչ Պէշիկթաշլեան

14. Ուշացած ճամփորդ

Է՜յ, դուն ճամփորդ, ո՞ւր կ'երթաս.
մութ գիշեր է, ուշ արդէն,
նայէ, քեզի կը կանչէ
վառ ճրագը խրճիթէն։
Վա՜ր դիր բեռդ, էյ ճամփորդ,
մութ գիշեր է, ուշ արդէն։



15. Ծովն ու արեւը

ա.

Անցայ Կամախէն, Երզնկայէն, անցայ Դերջանէն, Կարինէն, մտայ Մուշի սուրբ Կարապետը, և Տարօնի դաշտէն՝ գիշերւան լուսնակով իջայ Դատւան, որ նստած է Վանայ ծովու բերանը։

Ո՛վ ծով մայրենի, ծո՛վ վճիտ հայելի, որ օգոստոսի պայծառ ու անարատ երկնքին պատկերը մէջդ կը ցոլացընես վսեմ ու հիանալի։

Եւ շւարեցայ, շշկռեցայ ու չեմ կրնար որոշել, թէ ո՞րն է երկինքը և ո՞րը ծով։ Երկուքն ալ կապուտագեղ, երկուքին մէջն ալ կը շողշըղան անուշակ լուսնակը և կուսան աստղերը։

Ծո՛վ, զարերով և յաւերժական յիշատակներով լի։

Ծո՛վ, բերկրեալ մօր մը խնդալից աչքերուն նմանակ։

Ծո՛վ, սիրու և երկիւղի, յոյսի ու վշտերու մէջ ծփացող կոյսի մը սրտին օրինակ։

Ծո՛վ, որ այնքան գեղեցիկ և տխուր ես, արծաթավարս գլխովդ, դալկացած դէմքովդ… կը լսեմ ես քու հառաչն ու հեծեծանքդ։

Ծո՛վ, ինչե՞ր կը խօսիս, ինչե՞ր կը ցուցընես, ի՞նչ խնդիրներ կը հանես։ Լռէ։

—Դատւա՛ն, պատառ մը հաց տուր քու հիւրին և ժամ մը հանգիստ՝ խոնջած ուղևորին։

Կը զարմանան զաւառցիք, կը հարցնեն՝ թէ ինչպէս եկանք գիշերով. ճամփան արիւն կը հոտի ու ամեն կողմ վտանգով լի։

—Մելիք, երբ մարդ մը սէր ունենայ, քիչ մըն ալ առողջ մարմին, խանդավառ թևերով կը թռի, կը կոխէ վտանգները, կ'անցնի երկիւղներէ. անոր աչքերուն մէջ աննիւթ լոյս մը ճրագի տեղ կը լուսաւորէ։

բ.

Արշալոյսէն առաջ ելանք, թողինք Դատւանն ու իր բերդն ու ծովածոցը մեծ աղմուկի մէջ. կալերու ժամանակ էր և այս տարի Աստուած բաւական բարիք պարգևած էր դատող մշակին։ Հոն լցւեր էին մրջիւնի կարաւանի պէս Վանայ գաւառներէն այր ու կին, ծեր ու մանկտի, հայ ու քիւրդ։ Նաւերը կողէ կող կը ծփծփային Դատւանի առջև, որոնք թէ մարդ կը հանէին և թէ ցորեն պիտի բեռնէին։

Մեր ետևը բարձրացլուխ ու անտարբեր կիտած էին Գրգուռ ու Նեմրութ լեռները, երեսնին դէպի արևելք, կազմ ու անթարթ, թանգարի մը թիկնապահներուն նման՝ աչքերնին յառած Վարագայ լեռան։ Եւ անձ հովը հանդարտօրէն շարժեցաւ, ոսկեղէն շողեր տեսնըւեցան ալիքներու շղարշ ծալքերէն. երևցան օգոստոսի օգոստափառ արեգական ճառագայթները. հրեղէն վրանը դեղին լոյսով ներկւած՝ զարկին Վարագէն մինչև Մոկաց լեռները, որուն ներքև կը մընային Վանը, Հայոց ձորը, Ռշտունիք և երևոյթը ամբողջ ծովուն՝ իբրև յատակը փռւած վրանին. կապոյտով ու դեղինով ոսկեթել գործած. կակուղ գորգ, որուն վրա դրաւ լոյսը իր ոտները։ Բարձրացաւ արեգակը։

Արդարև, քանի՜ սքանչելի ես, ո՛վ արեգակ, քու լուսով կարթնըման բոյսն ու կանաչը, հաւքն ու գազան, ջուրն ու ցամաքը։ Քեզմով կ'ըսթափին, քեզմով կը փայլին, կը կենդանանան, քեզմով կ'ամով կը գեղգեղեն, կը շարժին, կ'ընթանան, կը թռին, կը ծիճին, քեզմով կը գեղգեղեն, կը շարժին, կ'ընթանան, կը թռին, կը ծիծաղին, կը հասուննան, կը կատարելանան բոլոր արարածները։

Այսքան տպաւորութիւններ մէջս անոր համար, որ ծնած աշխարհիս արևը կը տեսնեմ. և առաւօտն ու արևը խորհրդաւոր նշան են և յոյս կ'ընծայեն վշտակիր սրտերուն, տառապած անձերուն և ժողովուրդներուն, թէ՝ պիտի անցնի խաւարը, փախչի աղջամուղջը,

ծագի կեանքի առաւօտը և կենսատու արեգակը պիտի բերէ, նորոգէ բարութեան օրեր...

Գարեգին եպ. Սրւանձտեան

Փոխադրիր մասերից մէկը արևելեանի։

Վսեմ—*ազնիւ ու բարձր։*
կուսան—*կոյս։*
յաւիտ—*յաւիտեան։*
նմանակ—*նման։*
հեծել—*ցաւի տակ տնքալ.* **հեծեծանք**—*տնքոց ու հեկեկանք։*
խանդ—*ոգևորութիւն.* **խանդավառ**—*ոգևորւած։*
մանկտի—*մանուկներ։*
օգոստափառ—*կայսերական փառք ունեցող, փառայեղ։*
աղջամուղջ—*մութը, խաւարը։*

ԳԱՐԵԳԻՆ եպ. ՍՐՒԱՆՁՏԵԱՆ

Ծնւել է **1840** *թւին Վանում, սովորել է իրենց քաղաքում, ապա Վարագայ վանքում, որտեղ էլ վարդապետ է ձեռնադրւել։ Խրիմեան Հայրիկի աշակերտն էր և նրա հրատարակած «Արծիւ Վասպուրականի» թերթի ամենամօտ աշխատակիցը։ Յետոյ զանազան պաշտօնական գործերով շատ ճանապարհորդեց Հայաստանի զանազան կողմերում։ Այդ միջոցին հաւաքած ազգագրական նիւթերն և իր տպաւորութիւնները, որ գրել է գեղեցիկ, գունեղ արձակ և ոտանաւոր ոճով, լոյս էր ընծայում առանձին գրքոյկներով Թորոս աղբար, Մանանա, Համով-Հոտով, Գրոց-Բրոց։ Նրա գրաւիչ քաղցրութիւն ունի և վառ երևակայութիւն։ Մեռաւ* **1892** *թւին Կ. Պոլսում։*

---

16. Կռունկների սանը

Գետակին վրա, կռունկներու շարքին մէջ,
երբ վայրկեան մը կանգ առին,
ծեր կռունկը իր գլուխը խոնարհեց,
դրաւ կտուցը թևին տակ ու սպասեց,
իր վերջին սև վայրկեանին։

Երբ ընկերներ ա՛լ մեկնիլ ուզեցին՝
ան չը կըցաւ անոնց երթին միանալ,
հազիւ բացաւ աչքը ու դիտեց օդին մէջ
իր հարազատ երամը, որ կ՛երթար
սարերն ի վար կռկռալով։

Փո՛ւճ է այլևս երազելը
գարունները հեռաւոր, գաղջ հոսանքները օդին,
անցքը պաղուկ առւակներէն, երկար վզին
մխրճումները շամբերուն մէջ կանաչ,
փո՛ւճ է այլևս երազելը։

Արդ՝ դալկահար գրկին մէջ
աշնանային ցուրտ իրիկւան,
ամայութեան վրա կը բանայ թևերը յոգնած
ու կը կանչէ չըւողներուն ետևէն
վերջին կոնչը մահու ու կոնչը կարօտի...

Ու կ՛իյնայ, լուռ։ Խիճերուն վրա գետափին
իր գերեզմանը կը շինէ՝
մխելով կտուցը հին քարի մը տակ,
ու քաշ ձգած վիզն իր ճապուկ՝
ալիքներու երգին մէջ կը դողդղայ, կը մեռնի։

Դանիէլ Վարուժան

Երթ—*գնալը, երթալը։* **Անցք**—*անցնելը, վազելը։*
գաղջ—*սառը, պաղ։*
մխրճում—*տարածւելը, ձգւելը։*
շամբ—*եղէգնուտ։*
դալկահար—*դեղնացած։*
ճապուկ—*ճկուն, ծռմուող, ձգձգւող։*

17. Մեղայ, Տէր

ա.

Սարաֆը ուշ եկաւ եկեղեցի այն առտու, կէսին միայն հասաւ ինքը, որ ամէն օր ժամերգութեան ծայրէ ծայր ըսելուն կը պարծենար։

Դուրսը տիրող ցուրտին հակառակ, քրտնաթոր մտաւ ներս, ծանրաշարժ ու պարարտ մարմինին բեռանը տակ շնչասպառած՝ երեսը խաչակնքեց, ծնրադրեց, ֆէսը վար առած, ցոյց տալով իւղոտ ու հերթափ գանկ մը. յետոյ բարձրաձայն հառաչանք մը ելաւ կուրծքին խորէն.

— Մեղա՜յ, Տէր։

Յետոյ թեթեւցած, ոտքի ելաւ ու իր հաստ ձայնը՝ տէրտէրին ձայնին միացաւ ու լուռ եկեղեցին կ'ապշէր, կը խռովէր, ունկնդրելով այս մարդուն։

Ինքը իր տանը մէջ ըլլալ կը թուէր. դասը, գաւիթը, խորանը բոլորովին իրն էին անշուշտ, ինք կ'ըսէր աղօթքը միայնակ քահանային առաջ, բառերը հատիկ հատիկ, ամէն պարբերութեան նշանակութիւնն ու սրբութիւնը շեշտելով։ Պահ մը կը յոգնէր, շունչ առնելու կը ստիպուէր, ու վայրկեան մը վերջը նորէն կը սկսէր, ընդմիջելով քահանային անորոշ մրմունջը և ծուռ ծուռ նայելով անոր երեսը՝ երբ սխալ մը սպրդէր կամ վարանում մը տեսնէր նոր տուն մը սկսելու ատեն։

Վայրկեան մը նորէն կը մասնաւորէր իր աղօթքը, անհամար ծնրադրութիւններով խառնուած, համբուրելով գետնին աղտն ու փոշին ու լալագին և սրտաշարժ ձայնով կը կրկնէր.

— Մեղա՜յ, Տէր։

բ.

Մարտիրոս աղան այսպէս էր ամէն առտու, անպակաս եկեղեցիէն, իր ներկայութեամբը ապահովելով եկեղեցիին բոլոր ծէսն ու արարողութիւններուն կանոնաւորութիւնը, և ոչ մէկուն փախուստի ճամփայ չը ձգելով շարականներէն բառ մը պակաս կարդալու համար։

Քահանան այս աշխարհականին բարեպաշտութենէն կը դողար. քարոզիչն ու թաղական խորհուրդը կ'ակնածէին իրմէ և թաղեցին կը

մեծարէր այս հաւատացեալ աղան որ իր բոլոր դրամին հակառակ՝ աղքատի մը պէս խոնարհ ու աստուածավախ կը թուէր։

Պոլիս իր խանութի մէջ Մարտիրոս աղա մեծազօր մարդ մըն էր։

Հայրենիքէն գրեթէ բոբիկ եկաւ Պոլիս, նիհար ու վատուժ պատանի՝ որ խաներու, քարուկիր սենեակներու խոնաւութեան մէջ ծառայութեամբ հաւաքած հինգ հարիւր ղուրուշով բացաւ իր սարաֆի սեղանը։

Ո՛չ, այս մայրաքաղաքը երկրին չէր նմանէր բնաւ։ Ակնայ տընակներուն երդիքը, գիւղացիներուն շալւարը, կիներուն աղտոտ լաչակը չըտեսաւ հոս. նոր աշխարհ մը նոր գաղափարներ արթնցուց. վայելքի պէտքը՝ դրամի պէտքը ցուցուց։ Իր բարեպաշտութիւնը որ մինչև այն ատեն անշահասէր էր, պահանջող, ուզան բերան դարձաւ։

Մայր եկեղեցիի մէկ անկիւնին մէջ քաշուած, անհատնում աղօթքներու ու շարականներու քաղուածքով ստակ և դարձեալ ստակ ուզեց Աստուծմէ, և իր աշխատութեան փոխարէն առած չնչին գումարները աստուածային պարգևներ կը համարէր և իր աղօթքներուն վարձատրութիւնը։

Այսպէս՝ իր առևտուրը աստուածասիրութեան հետ խառնուած մնաց. այն բոլոր առիթները ուսկից դրամ շահելու կարելիութիւնը նշմարեց, իր օգտին համար Աստծու կողմէ յատկապէս կարգադըրուած նկատեց ու բան մը չըհարցուց ալ իր խղճին։ Աստուած իր ըրածը չէ՞ր գիտեր միթէ։

գ.

Անգամ մը միայն տարակուսեցաւ, վարանում մը զգաց։ Անոր բարեպաշտ մարդու համբաւէն խաբուած, իր մահամերձ բարեկամներէն մէկը մեծ, խիստ մեծ, իր չըտեսածին չափ մեծ գումար մը աւանդ յանձնեց իրեն, մահուընէն վերջը այդ գումարը ազգին ու իր ազգականներուն մէջ բաժնելու խնդիրքով։ Մարտիրոս աղա նախ չը հաւտաց այս անակնկալ վստահութեան, հիւանդին անկողնին քով նստած, սենեակին դուռը գոց. նախ անդիմադրելի մարմաջ մը զգաց այդ գումարը տեսնելով, որ հիւանդը փոքրիկ սնտուկէ մը կը հանէր, յետոյ հիւանդը հոն խեղդելու և ստակներն յափշտակելով փախչելու գաղափար մը ունեցաւ, յիմարի գաղափար մը. բայց այս փորձութեան դիմադրեց։ Ի՞նչ հարկ ադոնց, միթէ Աստուած իր դէմը հանած

չէ՞ր այս հիւանդը, ու Աստծու թողեց, որ իր ուզածին պէս տնօրինէ ամեն ինչ։

Հիւանդը մեռաւ և յուղարկաւորներուն մէջ Մարտիրոս աղա իր արցունքներովը, անկեղծ կսկիծով մը ննջեցեալին ամենէն սրտակից բարեկամը համարուեցաւ։

Յուղարկաւորութեան տեւած բոլոր միջոցին բոլոր ճամփուն երկայնութեամբը այս մեռած մարմինին վրա խօսեցաւ. անոր բարեմասնութիւնները, պարկեշտութիւնը գովեց, անոր կեանքէն մասնաւոր դէպքեր պատմեց և լացաւ, մինչդեռ ուրիշներ դագաղին ընկերանալով հանդերձ՝ իրենց մասնաւոր գործերէն, շուկայէն ու առեւտուրէն կը խօսէին. Մարտիրոս աղա զայրացաւ ու իբրև թէ ինքն ըլլար այս անճահ խօսակցութիւնը ընող, կսկծալի ձայնով մը գոչեց.

—Մեղայ, Տէր։

Դ.

Մարտիրոս աղա անկէ վերջը իր բարերարը նկատեց ննջեցեալը. թող չը տուաւ որ մէկը դէշ ըսէ անոր վրա։ Միթէ այս մեծ հարըստութիւնը անոր չէ՞ր պարտեր. ո՛չ, ապերախտ մարդ չէր։ Յետոյ այդ աւանդը իւրացնելուն համար խորհեցաւ ամիսներով։ Նախ ըսաւ որ իրաւունք չունէր ուրիշին ինչքը գողնալու։ Վերջը ինքն իրեն հարցուց, թէ ինչո՞ւ Աստուած իրեն յանձնել տուաւ այդ աւանդը և ոչ ուրիշի մը, այս հարցումը իր տարակոյսները վանեց։ Աստուած այս առիթը կը ներկայացնէր իրեն հարստանալու համար. և ինքն իբրև խելացի մարդ՝ առիթէն օգուտ կը քաղէր. մինչդեռ անխելք մը այդ բանը չըպիտի մտածէր։ Այսպէս բացատրեց Աստծու կամքը և ճշմարիտ գոհունակութեամբ մը աւելցուց.

—Կամք Տեառն օրհնեալ եղիցի։

Անդին ննջեցեալին ազգականները կարօտութեան, չքաւորութեան մէջ կը մնային. անոր այրին Մարտիրոս աղային կը դիմէր պզտիկ օգնութիւն մը հայցելու համար, իբրև իր ամուսնին սրտակից բարեկամէն։

Մարտիրոս աղա չը զլացաւ այդ օգնութիւնը։ Բայց այս դիմումը իր տարակոյսները նորէն արթնցուց. պահ մը խորհեցաւ, որ ըրածը ճշմարիտ գողութիւն մըն էր. բայց ո՞ր մեղքը թողութիւն չը ստանար, եթէ մարդս մեղայի գայ։ Ու այս յոյսով, սարաֆը թախանձագին ներում մը խնդրեց.

—Մեղայ, Տէր։

Պահ մըն ալ մտածեց որ ազգականներուն դրամը տայ, բայց ազգին դրամը պահէ. ինչ է վերջապէս ազգին դրամը. չէ՞ մի օր ուրիշ մը պիտի ուտէր։

Այս վարանումներով կը պահէր, այսինքն՝ կը գործածէր ստակը, որ իր ճարպիկ ձեռքերուն մէջ արդիւնաբեր կը դառնար, բարեբախտ դէպքերով կը կրկնապատկուէր. այնքան որ այս յաջողութիւնը իր գողութեան արդարացումը կ'ըլլար և իր զղջման ընդունելի եղած ըլլալուն ապացոյց, զղջում մը, որ սովոր էր ան յայտնելու ամեն առթի, խորունկ հաւատքի ձայնով մը.

—Մեղայ, Տէր։

Գրիգոր Զոհրապ

Փոխադրի՛ր արևելեան բարբառի մասերից մէկը։

«Կամք տեառն օրհնեալ եղիցի»—Տիրոջ կամքը օրհնուած լինի։
սառաֆ—դրամափոխ, սեղանաւոր։
պարարտ—գէր։
հերթափ—մազերը թափած։
ծէս—կարգ, սովորութիւն։
շարական—եկեղեցական երգ։
թաղական խորհուրդ—Թաղից ընտրուած ու թաղի գործերը կառավարող ժողով։
ակնածիլ—քաշուել, պատկառել։
մեծարել—յարգել, պատուել։
վատուժ—տկար, թոյլ, ուժից զրկուած։
ուզան—ուզող. **ուզան բերան**—պահանջող, խնդրող։
քաղել—վերստին ասել, վերստին կարդալ. **Սաղմոս քաղել**, շարական քաղել. **քաղուածք**—ընթերցում։
մարմաջ—գրգիռ և հրապոյր. յուզում և ձգտում։
յուղարկաւոր—մեռելի հետ գնացող։
բարեմասնութիւն—առաւելութիւն, շնորհք։
պարկեշտ—համեստ ու իր պարտքը կատարող։
(ըսելով) **հանդերձ**—(ասելու) հետ միասին, թէև (ասում եմ)։
անճահ—անպատշաճ, անվայել, անտեղի։
գէշ—վատ։
ննջեցեալ—հանգուցեալ, մեռել։
ինչք—ստացուածք, հարստութիւն։
վանել—հրել, դուրս անել, ետ քշել, վռնդել։
գլանալ—խնայել ու չտալ։
մեղայի գալ—զղջալ։

18. Գիշերապահը

Գիշեր է. տմնկ, տմնկ. հսկայ ժամացոյց։
Հանգիստ է չորս դին, կը ննջեն բոլոր.
միայն ինքն է որ՝ հանգոյցէ հանգոյց
փողոցներ կ՚անցնի լուռ քայլամոլոր։

Պաղ հովը կու գայ, կը զարնէ ճակտին,
ուր հին-հին յուշեր յանկարծ կը յածին,
ինչպէս երկընքի քօղէն՝ ալ անդին
մոռցըւած աստղեր մերթ վառ կ՚առկայծին։

Ու միտքն ակամայ թափով մ՚ինքնաբեր
կը թռչի հեռուն՝ տունը հայրենի.
Է՜, կեանքն ուրիշ էր, սրտներն ալ տարբեր
այն լեռներուն մէջ վեհ ու ամեհի։

Ու պարզ կը յիշէ… Գիշեր է խորին.
իրենք քոյր-եղբայր լարումով անհուն
լուիկ պաշարած ալեհեր հանին
կ՚ունկընդրէին անոր վէպերն հմայուն։

Եւ հանին ինքն ալ ներշնչուած արդէն՝
Մհերի ուժը կը պատմէ տղոց,
երբ յանկարծ բուքը տնակի երդէն
այլանդակ ձայնով կը հանէ հոգոց։

Անեղ օռնումով կարծես կը խօսի,
կը սուլէ բառեր բիրտ ու չը լսւած,
բա՜ռ, որ դժոխքի խորքէն կը հոսի…
Ու խաչ կը հանէ հանին երկիւղած։

Իսկ տղաքը լուռ կը նայէն իրար
ու ամեն մէկը կը խորհի ինքնին,
որ նոր Մհեր մը դառնայ անպատճառ,
երբ ինքն ալ հասնի անոր տարիքին։

Եւ ահա՛… տմնկ, տմնկ, խորհո՜ղ ժամացոյց։

Հանգիստ է չորս դին, կը ննջեն բոլոր.
միայն ինքն է որ՝ հանգոյցէ հանգոյց
փողոցներ կ՚անցնի լուռ քայլամոլոր։

Լեւոն Շանթ

Հանգոյց *(փողոցի)—հատուող փողոցների անկիւնը։*
յուշ *—յիշողութիւն։*
ինքնաբեր—*ինքն իրեն եկող, ակամայ։*
հանի—*նան, տատ։*
հմայուն—*հմայող, դիւթող, հրապուրող։*
երդ—*երդիք։*
բիրտ—*խուլ ու կոպիտ։*
խորհիլ—*մտածել։*

---

19. Աբիսողոմ աղայի Պոլիս մտնելը

ա.

Հազար ութ հարիւր եօթանասուն… չեմ յիշեր քանիին, սեպտեմբերի իրիկուն մը երկար և ընդարձակ թիկնոցի մը մէջ փաթըթուած միջահասակ և գիրուկ մարդ մը՝ որ Տրապիզոնի շոգենաւէն նոր ելած էր, Ղալաթիոյ նաւամատոյցին վրա կայնած՝ նաւակէ մը իր սնտուկները հանել կ՚աշխատէր։

Կը տեսնէք որչափ պարզութեամբ սկսայ։ Պատմութիւնս հետաքրքրական ընելու ջանքով և անկից քանի մը հարիւր օրինակ աւելի ծախելու համար չըսի, թէ նոյն օրը սաստիկ հով մը կար, թէ տեղատարափ անձրև կու գար, թէ խառն բազմութիւն մը հետաքըրքրութեամբ դէպի Ղալաթիոյ հրապարակը կը վազէր, թէ ոստիկանութիւնը աղջիկ մը ձերբակալած էր. խօսքեր, որով վիպասանները կը սկսին իրենց վէպերը։ Ես ալ կրնայի ըսել այս ամենը, բայց չըսի, որովհետև նոյն օրը ո՛չ հով կար, ո՛չ անձրև, ոչ խուռն բազմութիւն և ոչ ալ ձերբակալուած աղջիկ մը։

Այս ճամփորդը օժտուած էր զոյգ մը խոշոր և սև աչերով, զոյգ մը հաստ, սև և երկար յօնքերով, զոյգ մը մեծականջներով և զոյգ մը քիթեր… չէ՛, չէ՛, մէկ քիթով, թէև զոյգ մը քիթերու տեղ կրնար ծառայել. անոր մեծութիւնը սխալեցուց ինծի։

Ունէր այնպիսի նայուածք մը՝ որուն եթէ թատրոնի վարիչ մը
հանդիպելու ըլլար պիտի հարցնէր. «Ի՞նչ ամսական կ'ուզես թատ-
րոնիս մէջ ապուշի դեր կատարելու համար»։

Սնտուկները և անկողինը, քուրջի մը մէջ ներփակուած էր. նա-
ւակէն հանելուն պէս ճամփորդը քաշեց քսակը և նաւավարին իրա-
ւունքը վճարելով՝ բեռնակիր մը կանչեց։ Հինգ բեռնակիրներ ներ-
կայացան իրեն։ Տարակոյս չըկայ որ եթէ հինգը կանչէր՝ քսան և
հինգ պիտի ունենար իր առջև մայրաքաղաքիս սովորութեանը հա-
մեմատ։

—Ո՞ր կողմ պիտի երթաք, աղա,—հարցուց բեռնակիրներէն
մին՝ մէկ ոտքը սնտուկներէն մէկուն վրա կոխելով։

—Բերա, Ծաղկի փողոց, թիւ 2 պիտի երթամ — պատասխանեց

խոշոր մարդը։

—Շատ աղէկ, հասկցայ, Բերա, Ծաղկի փողոց… պատուական
փողոց մըն է,—ըսաւ հարցումն ընող բեռնակիրը և սնտուկ մը շալ-
կելով սկսաւ երթալ։

—Ծաղկի փողոցը ես ալ գիտեմ,—ըսաւ երկրորդ բեռնակիրը և
սնտուկին մէկն ալ ինք առնելուն պէս՝ Բերայի ճամփան բռնեց։

—Ես ամեն օր կերթամ Ծաղկի փողոցը,—ըսաւ երրորդը և մար-
դուն անկողինը վերցնելը, կռնակին վրա առնելը ու վազելը մէկ ը-
րաւ։

Այս բոլորը այնքան արագ կատարուեցաւ, որ մարդը շուարած
սկսաւ չորս կողմը նայել՝ տեսնելու համար բեռնակիրները, որ բազ-
մութեան մէջ անյայտ եղած էին։

—Ի՞նչ խայտառակութիւն է ասս,—պոռաց վերջապէս ոտները
գետինը զարնելով,—ու՞ր տարին անկողինս և սնտուկներս, առոնք
գետինը զարնելով,—ու՞ր տարին անկողինս և սնտուկներս խառնելու, ի՞նչ
ի՞նչ իրաւունք ունին իմ անկողնիս և սնտուկներուս խառնելու, ի՞նչ
աներես մարդիկ են եղեր այս տեղի մարդիկը. ի՞նչ որ կը տեսնեն՝
կ'առնեն կը տանին։

—Ծաղկի փողոցը ՚մենք ալ գիտենք, աղա, մեզի ալ բան մը
տուր որ տանինք,—ըսին միւս երկու բեռնակիրները։

—Ծաղկի փողոցն ալ գետնին տակն անցնի, դուք ալ, —պա-
տասխանեց մարդը որուն այտերը նեղութենէ կարմրիլ սկսած էին։

Բ.

Երկու բեռնակիրները խնդալով հեռացան. և ճամփորդն ալ իր

սնտուկներուն ետևէն երթալու կը պատրաստուէր, երբ բարձրահա-
սակ, թխադէմ, փոքր աչերով մարդ մը՝ ուսերը տնկած, ձեռները
շփելով և բռնազբօսիկ ժպիտով մը մօտեցաւ անոր և քաղաքավարա-
կան ձևով մը ձեռները բռնելով հարցուց.

—Դո՞ւք էք Աբխողոմ աղա, ե՞րբ եկաք, ո՞ր շոգենաւով եկաք,
ի՞նչպէս էք, ձեր եղբայրն ի՞նչպէս է, ազգային գործերն ի՞նչպէս են
Տրապիզոն, հացին գինը քանի՞ է հոն, անձրև եկա՞ւ այս օրերս ձեր
քաղաքը…։ Վա՜յ, Աբխողոմ աղա, վա՜յ…

—Ես եմ Աբխողոմ աղան, հիմա եկայ, տաճկի շոգենաւով եկայ,
շատ աղէկ եմ, եղբայրս ալ աղէկ է, ազգային գործերն ալ աղէկ են
Տրապիզոն, հացին գինը մէկ դահեկան է, անձրև չեկաւ այս օրերս
մեր քաղաքը,—պատասխանեց թիկնոցաւորը՝ առանց ճանաչելու
դէմի անձը։

—Ներեցէք, թողութիւն ըրէք, որ չըկրցայ մինչև շոգենաւ գալ
ձեզ դիմաւորելու համար։ Ինծի գրուած էր Տրապիզոնէն, որ այս
շաբթու անպատճառ հոս պիտի գաք…

—Ես տանիկ բաներու չեմ նայիր։

—Արդարև մայրաքաղաքս ինքզինքը բախտաւոր համարելու է
ձեզի պէս պատուական ազգային մը, շնորհալի երիտասարդ մը, ող-
ջամիտ մէկը…

—Սնտուկներս…

—Ազնիւ սիրտ մը, վեհանձն հոգի մը…

—Բեռնակիրները…

—Հայրենասէր անձ մը, ազգասէր…

—Բայց սնտուկներս…

—Ուսեալ, կրթեալ, դաստիարակեալ…

—Սնտուկներս առին տարին…

—Ազնուասիրտ, ազնուախոհ, ազնուադէմ մէկը իր մէջ ունենալուն

համար։

—Սնտուկներուս մէջ տանիկ բաներ չըկան,—պատասխանեց Ա-
բխողոմ աղան քալել սկսելով բեռնակիրները գտնելու համար։

—Թէև դուք ինծի չէք ճանչնար, բայց ես ձեր գերդաստանը
խիստ լաւ կըճանչնամ. ձեր լուսահոգի հայրը իմ լրագրիս բաժանորդ
էր։ Շատ բարի մարդ էր, աղքատներուն ողորմութիւն կու տար, աղ-
քատ աղջիկներ կը կարգէր և իրեն դիմողներուն բարութիւն կ'ընէր։
Ասանկ ողորմած մարդիկը շատ ապրելու են, բայց ի՞նչ օգուտ. ան-

գութ մահը միշտ բարիները կ՚առնէ և թող կու տայ չարերը, որ ազգին չարութիւն ընեն։ Կ՚աղաչեմ, ըսէք ինծի, քանի՞ տարեկան էք։

—Քառասուն։

—Վաճառական էք, կարծեմ։

—Այո. եթէ անցագիր պիտի շինել տաք՝ հարկ չը կայ, վասնզի հատ մը ունիմ։

—Չէ, վաղուան թերթիս մէջ պիտի գրեմ, որ առջի օրը Տրապիզոնէն մայրաքաղաքս եկաւ մեծապատիւ Աբիսողոմ աղան՝ երևելի վաճառականը, որ իր լեզուագիտութեամբ և վաճառականական հմտութեամբը ծանօթ է մեր ազգայիններուն։ Տաճկերէն գիտէք կարծեմ։

—Ո՛չ։

—Ֆրանսերէն։—Ո՛չ։

—Անգլիերէ՞ն։—Ո՛չ։

—Գերմաներէ՞ն։—Ո՛չ։

—Վնաս չունի, ես լեզուագէտ պիտի ըսեմ ձեզի համար և ձեր վրայօք գովեստով պիտի խօսիմ։

—Ամէն Պոլիս եկողներուն անունները ձեր թերթին մէջ կը գրէ՞ք։

—Գրեթէ ամենն ալ, եթէ ձեզի պէս պատուաւոր ազգայիններ ըլլան։

—Պոլսէն գացողնե՞րն ալ կը գրէք։

—Գրեթէ կը գրենք, եթէ պատուաւոր ազգայիններ ըլլան։

—Շատ լաւ, իմ անունս ալ գրեցէք, ես ալ պատուաւոր ազգային մըն եմ։ Մեր քաղաքին մէջ արտերու, եզներու, կովերու և ագարակներու տէր եմ։ Ասոնք ալ գրէ,—ըսաւ այնպիսի դէմքով մը, որ կը յայտնէր թէ մեծ շահ մը ունէր այս խօսքերուն հրատարակութեանը մէջ։

—Հոգ մի ընէք. խղճի և արդարութեան պարտք մը կատարելու համար՝ անոնք ալ կը գրեմ։

—Երկու երեք հատ սպասաւոր ալ ունիմ, անոնք ալ լրագրիդ մէկ կողմը կրնա՞ս անցընել։

—Ինչո՞ւ չէ։

—Ոսկիէ ժամացոյց և շղթայ ալ ունիմ, բայց շոգենաւին մէջ չը գողցնելուն համար վրաս չառի. անոնք ալ գրել պէտք է,—հարցուց Աբիսողոմ աղան, որ բոլորովին մոռցած էր անտունները։

—Ատոնք գրելու հարկ չը կայ։

—Շատ լաւ, բայց միւս ըսածներս լրագրիդ մէջ ամենէն առաջ դիր, որ ամենքը կարդան։

—Այնպէս ընելու միտք ունիմ։ Ձեր հասցէն տուէք, որ տեղական թղթատարով ղրկեմ լրագիրը։

—Բերա, Ծաղկի փողոց, թիւ 2։

Գ.

—Շատ աղէկ,—ըսաւ խմբագիրը և գրպանէն թուղթ մը հանելով բաժանորդներուն ցուցակին մէջ անցուց Աբիսողոմ աղան։—Վաղը իրիկուն անպատճառ կը ղրկեմ լրագիրը ընկալագրով։

—Ընկալագրո՞վ... տեղական թղթատարով պիտի ղրկէ՞ք հապա... Ընկալագիրն ո՞վ է, տունս գիտէ՞...

—Ընկալագիրը թուղթ մըն է, որուն մէջ կը գրեմ. «Ընկալայ մեծապատիւ Աբիսողոմ աղայէն... լրագրիս տարեկան բաժանորդագինը մէկ ու կէս ոսկի» և այդ թուղթը ձեզի կը յանձնեմ, որով տարի մը իրաւունք կունենաք իմ լրագիրս ընդունելու։

—Տարի մը շարունակ պիտի գրէ՞ք իմ անունս։

—Չէ, բայց դուք բաժանորդ պիտի ըլլաք իմ լրագրիս, մէկ ու կէս ոսկի վճարելով ինծի։

—Մէկ ու կէս ոսկի՜... շատ է. երեք քառորդ ոսկի չ՞ը բաւեր։

—Խմբագիրները բաժանորդագնի վրա սակարկութիւն չեն ըներ։

—Շատ լաւ. ղրկեցէք ձեր լրագիրը և այն թուղթը, բան մը կընենք։

—Սակայն չը կարծէք թէ ես բաժանորդ գրելու նպատակով ձեզի տեսնելու եկայ։ Քաւ լիցի, այդ պզտիկութիւնը չեմ ընդունիր, բարեկամական պարտք մը կատարելու համար եկայ ձեզի տեսնելու։

—Յայտնի բան է։

—Բնաւ ձեր մտքէն չանցընէք, թէ այս մարդը մէկ ու կէս ոսկի փրցնելու համար ինծի տեսնելու եկաւ։

—Չեմ անցըներ։

—Վասնզի կան խել մը մուրացկան խմբագիրներ, որոնք Պոլիս եկողները կողոպտելու համար անոնց քովը կերթան և բաժանորդ կը գրեն. ես այդ բանը չեմ կարող ընել, վասնզի բնութեանս մէջ չը կայ... Ես իբրև պատուաւոր մարդ կուզեմ ապրիլ...

—Հասկցայ, իբրեւ պատուաւոր մարդ կուզէք ապրիլ...

—Ինծի հետ ձեր այս ունեցած տեսակցութիւնն ալ ուրիշի մի զրուցէք, վասնզի տեսակ մը բախտախնդիր, թշուառական անձեր կան, որոնք բանդագուշական կենսագրութիւններ կը գրեն եւ իմ անձնականութիւնս կը խծբծեն։

—Կը հասկնամ, անձնականութիւնդ կը խծբծեն։

—Օրինակի համար սա պարագային մէջ յանցանք մը ունիմ ես. ձեզ դիմաւորելու եկայ եւ խոստացայ ձեր անունը լրագրիս մէջ հրատարակեմ. դուք ալ իբրեւ ողջամիտ ազգային մը բաժանորդ գրուեցաք։ Կաղաչեմ, ըսէք, ձեր կոկորդը սխմեցի որ ինծի բաժանորդ գրուիք։

—Ամենեւին։

—Ատրճանակ ցուցի։

—Բնաւ երբէք։

—Դանակ քաշեցի։

—Ոչ. բայց ուրիշ տեղեր ատրճանակ կամ դանակ ցուցնելով բաժանորդ կը գրեն։

—Ատ ըսել չեմ ուզեր. ըսել կուզեմ, որ դուք ձեր յօժար կամքով բաժանորդ գրուեցաք։

—Տարակոյս չը կայ։ Այդ թշուառականները իրաւունք չունին քու անձնականութիւնդ խծբծելու։

—Շնորհակալ եմ ձեզմէ. մնաք բարով Աբիսողոմ աղա, օր մը մեր խմբագրատունը հրամմեցէք սուրճ մը խմելու։

Աբիսողոմ աղան եւ խմբագիրը բաժնուեցան իրարմէ Բերայի քառուղիին առջեւ, ուր հասած էին խօսելով.

Աբիսողոմ աղան առանձին մնալով սկսաւ ճամփան շարունակել ինքնիրեն հետեւեալ խորհրդածութիւններն ընելով։

«Ես ինքզինքս չէի կարծեր այնչափ մեծ մարդ, որչափ որ կը կարծէ այս խմբագիրը. բայց հարկաւ ան ինծմէ աղէկ գիտէ իմ որչափ մեծ ըլլալս, վասնզի խմբագիր մըն է եւ ուսումնական է։ Վաղը լրագրի մէջ իմ անունս տեսնողները անշուշտ իրար պիտի անցնին եւ հետաքրքրութիւն պիտի ունենան ինծի հետ տեսնուելու. վաղը պէտք է որ կիրակի օրուան հագուստներս հագնիմ եւ ոսկիէ ժամացոյցս ու շղթաս ալ դնեմ. սպասաւորներս ալ հետս բերելու էի, ո՞վ գիտէր... Ամեն մարդ պիտի իմանայ վաղը, որ մեծ մարդ մը եկած է Կ. Պոլիս ազնուախոհ, ազնուասիրտ, լեզուագէտ, ուսումնական, դաստիարակեալ, կրթեալ մէկը, եւ իւրաքանչիւր կնիկ պիտի ըսէ իր էրկանը...

«Մեր աղջիկը սա Աբիսողոմ աղային տանք»։ Էրիկն ալ պիտի պատասխանէ կնկանը. «Նայինք՝ Աբիսողոմ աղան մեր աղջիկ առնել կուզէ՞...» Այս պատասխանին վրա էրկան եւ կնկան մէջ վէճ մը պիտի ծագի եւ իրարու գլուխ պիտի պատռեն. որո՞ւ հոգ...»

Աղիւս բեռցուած էշերու կարաւանէն էշ մը բաղխելով Աբիսողոմ աղային դէմ՝ ընդմիջեց անոր խորհրդածութիւնները, ուր ընկղմած ըլլալով ուշադրութիւն չէր ըներ առջեւէն եկող էշերուն, որով լի է միշտ Բերայի Մեծ փողոցը։

—Մէկդի կեցիր,—ըսաւ իշավար պարսիկը Աբիսողոմ աղային, արդարացնել ուզելով իր էշը։

—Ատ խօսքը առաջ ըսելու էիր, որ զգուշանայի,—պատասխանեց Աբիսողոմ աղան եւ ճամփան շարունակեց։

Յակոբ Պարոնեան

Մասերից մեկը փոխադրիր արեւելահայի։

Տեղատարափ—տեղ ու տարափ, սաստիկ անձրեւ։
ձերբակալել—բռնել, բանտարկել։
Քուրջ—հին շորի կտոր։
Ներփակ—մէջը փաթթած, մէջը դրած։
բանագրօսիկ—կեղծ ու ակամայ, շինծու։
դահեկան—ղուրուշ. թուրքական դրամ մօտ 8 կոպէկ արժէքով։
ողջամիտ—առողջ դատողութեան տէր։
վեհանձն—ազնիւ ու ներողամիտ. ազնուական։
վասն զի (հին լեզուով)—որովհետեւ։
ագարակ—բրնձի, բամբակի եւ այլ օգտաւէտ բոյսերի մարգագետին։
հրատարակել—յայտարարել, հրապարակել, տպագրել։
Քաւ լիցի (հին լեզուով)—Աստուած չանի. բնաւ, երբէք։
խել մը—բաւական, մի քանի։
բանդագուշել—անբնական ու հնարովի բաներ երեւակայել, ասել։
խծբծել—քաշքշել, սուտ ու մուտ մեղադրել, բամբասել։
պարագայ—դէպք։
Քառուղի—չորս ճամփի գլուխ։
ընդմիջել—կտրել, ընդհատել։

---

1. Հանիր արմատները ու բացատրիր բառերը՝ նաւամատոյց, բեռնակիր,

թխադեմ, թիկնոցաբնակ, ողջամիտ, վեհանձն, ազնւախոհ, ազնւասիրտ, ազնւադեմ, լրագիր, լեզւագետ, ընկալագիր, խմբագիր, իշավար։

2. *Ի՞նչ ըսել է՝* լուսահոգի, *(աղջիկը)* կարգեց, բաժանորդ, թղթատար, բախտախնդիր, խորհրդածութիւն, սակարկութիւն։

3. *Ուրիշ ինչպէս կասենք՝* աղջիկը կարգեց, միտք ունիմ, իրար անցան, ձեռ վրայօք գովեստով խօսեցաւ։

---

20. Բաչիի թաղումը

Ո՛չ փող զարկինք, ո՛չ արձագանք լեռնասոյզ
սարէ ի սար չարաշըշուկ տարին լուր.
ու չերգեցինք ողբի երգեր սրտայոյզ,
երբ պատանուն բացինք մայլ փոսին դուռ։

Գիշերական մունջ սաւերներ շուրջն էին,
երբ հրացանի կոթով հողը փորեցինք,
դողդոջ լուսնեակ լոկ կը շողար մեր գլխին,
սուգ էր պատեր դաշտը, բլուր ու երկինք։

Պէտք չէր դագաղ և ոչ ճերմակ պատանքներ,
որով գոցւէր ազատորդի քաջորդին.
ան յետ մարտին կարծես յոգնած կը հանգչէր
ու վերարկուն կարմիր բաւ էր իր անձին։

Անձայն ու կարճ «Ննջեցելոց» մը զրուցեց
քաջ տէրտէրը՝ զինւոր հայոց ու Աստծու,
գովեց մահը ու քաջութիւնն իր օրհնեց,
Թոյլ չը տըւաւ հառաչ ու ճիչ հանելու։

Բայց երբ գլուխը բարձին դրինք հողաշէն՝
տեսանք գեղը ճակտին ու վէրքը պայծառ.
«Ո՛վ պատանեակ, ամենքս ըսինք մէկ բերան,
հայրենիքիդ համար մեռար, դուն շատ ապրեցար»։

Մէյ մ'ալ քամին յանկարծ փչեց ցըրտաշունչ
լուսնին շողերն եկաւ գոցեց մէկ մութ ամպ
ու մեր սարերն ինչ ուրւական անմռունչ
սև-սև ու ցից կը դիտէին ապշութեամբ։

Ու մենք ցուրտ-ցուրտ հող լեցուցինք իր վրան
խաչ մը դրինք, ինչպէս մօրմէն խնդրեց ինք,
ո՛չ մէկ ուրիշ արձանագիր, ո՛չ տապան,
իր փառքին հետ ինքը մենակ թողեցինք։

Մկրտիչ Պէշիկթաշլեան

Գոցել—*ծածկել։*
յետ մարտին—*մարտից, կռւից յետոյ։*
«Ննջեցելոց»—*թաղման ժամանակ արտասանւող աղօթք է։*
գեղ—*գեղեցկութիւն։*
ինչ ուրւական—*ուրւականի պէս, ինչպէս ուրւական։*
արձանագիր—*մակագրութիւն կրող տնկւած քար՝ մի բան յիշեցնելու համար։*
տապան—*արկղ, ապա քարէ դագաղ և առհասարակ գերեզմանաքար։*

---

1. *Գտիր արմատներն և բացատրիր բառերը*—լեռնասոյզ, չարաշուկ, սրտայոյզ, հողաշէն, ցրտաշունչ։

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Ծնւել է Կ. Պոլսում 1829 թւին, իր ուսումը ստացել է Վենետկի Մուրադեան վարժարանում հայր Ղեւոնդ Ալիշանի մօտ և այնուհետև վերադառնալով իր հայրենիքը պարապում էր ուսուցչութեամբ։ Վախճանւեց 1868-թւին։

Իր ժամանակակից երիտասարդների պէս՝ յափշտակւելով նոր հիմնւած հայկական թատրոնով՝ նա աշխատում էր գրել թատերական գրւածքներ, նիւթերը պատմութիւնից առնելով, բայց աշխարհաբառ լեզւով։ (Արշակ Բ.)։ Այդ ողբերգութիւնները մեծ աջողութիւն ունէին և ազգասիրական ոգի էին արծարծում հանդիսականների մէջ։ Նոյն ոգով գրւած են և նրա ոտանաւորները, որոնցից մի մասը գրաբառ է։ Նրա ամենատարածւած բանաստեղծութիւններն են՝ Ո՞վ ինչ անուշ, Ի բիւր ծայնից, Դու զո՞վ խնդրես, Ոչ փող զարկինք, Մութ է գիշերս։ Արեւմտահայ Նոր գրականութեան տաղանդաւոր հիմնադիրներից մեկն է։

Ց ա ն կ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱԺԻՆ

*1. Հայ ուխտաւոր—Յովհ. Թումանեանի, կրճատւած . . . 3
2. Ծաղիկի հեքեաթը—Յովհ. Թումանեանի, կրճատւած, «Հասկեր»-ից 4
3. Արագած—Աւ. Ահարոնեանի, հատւած «Դէպի Անի» գրւածքից . 9
*4. Է՛յ ջան-հայրենիք—Աւ. Իսահակեանի՝ «Վէրքեր և երգեր»-ից . 10
5. Արաքը—Աւ. Ահարոնեանի, հատւած «Արաքը» պատմ. փոփոխ. 11
*6. Ալին ու Արաքը—Աք. Խնկոյեանի, «Հասկեր»-ից . . 16
*7. Արաքսի արտասուքը—Գամառ-Քաթիպայի, կրճատ. և փոփոխ. . 17
8. Քէֆ անողին քէֆ չի պակսիլ—Յովհ. Թումանեանի . . 19
*9. Ախ, տւէք ինձ—Յովհ. Յովհաննիսեանի, «Բանաստեղծութ». կրճատ. 26
*10. Ուսումի—Ստ. Լիսիցեանի, «Հասկեր»-ից . . . 28
11. Տէր Թօդիկի գդրօցը—Րաֆֆիի «Կայծեր»-ից, սեղմւած . 38
12. Ափսոս իմ մանուկ օրերին—Խաչ. Աբովեանի, «Երկեր»-ից, կրճ. 45
*13. Փողոցի տղան—Ադա Նեգրի, թարգմ. Յ. Յակոբեանի, կրճատ. . 48
14. Մանուկների բարեկամը—Ստ. Լիսիցեանի . . . 49
*15. Գեղջուկի մտորմունքը—Կոլցովի, թարգմ. Յովհ. Թումանեանի . 52
16. Ջեռնածու Աբէլը—Գեորգ Բաշինջաղեանի, «Էսքիզներ»-ից կրճատ. և փոփոխ. 53
*17. Զով գիշեր—Լեւոն Մանւէլեանի, կրճատ. . . . 59
18. Կծանը—Լեոնիդ Անդրեեւի, փոխ. Ս. Լ.—«Հասկեր»-ից, կրճատ 64
*19. Ուռի—Աքաբէկ Խնկոյեանի, «Հասկեր»-ից . . . 65
20. Ընկերը—Աւ. Իսահակեանի, «Բարեսիրտ շունը» կրճատ. . 66
21. Մուրացկանը—Ի. Տուրգենեւի 70
*22. Երկու սև ամպ—Յովհ. Թումանեանի . . . 71
23. Ուշացած ճամփորդ—Աւ. Դ. Դեմիրճեանի, «Աշուղ»-ից կրճատ. . 72
*24. Ջինը—Ադա Նեգրի, թարգմ. Յակոբ Յակոբեանի . . 75
25. Մայրն ու որդին—Զապէլ Ասատուրի, փոխադր. արևմտահայերէնից, կրճատւած 75
*26. Մայրիկիս—Աւ. Իսահակեանի, «Երգեր և վէրքեր»-ից . . 78
27. Կարի մեքենայի գիւտը 79
*28. Կոյրերի կարծիքը—Յովհ. Թումանեանի, «Հասկեր»-ից . . 84
29. Երկու կոյր—Աւ. Ահարոնեանի, քաղ. «Երկու կոյրեր»-ից, կրճատ. 85
*30. Աշուղ.—Յովհ. Յովհաննիսեանի, «Բանաստեղծութիւններ»-ից կրճատ. 88
31. Շուշէնի նւագը—Ստ. Լիսիցեանի 88
32. Երգի հրապոյրը—Աւ. Իսահակեանի, «Հասկեր»-ից, կրճատ. . 92
*33. Արծիւն ու արտուտը—Յովհ. Յովհաննիսեանի, . . . 95
34. Արտուտը—Շիրվանզադէի, քաղ. «Արտիստ» վէպից կրճատ. . 95
*35. Գարուն—Վահան Տէրեանի, կրճատ. 103
36. Բարդու կատարին—Ստ. Լիսիցեանի, ... 103
*37. Կաքաւի ողբը—Յովհ. Թումանեանի, ըստ ժողովրդ. «Հասկեր»-ից 105
38. Թո՛րթար—Րաֆֆիի, քաղ. «Ջրաբերդ»-ից, կրճատւած . . 106
*39. Ծաղիկների երգը—Յովհ. Թումանեանի, «Հասկեր»-ից . . 110
40. Ուրւականներ—Շուշ. Տէր Նիկողոսեանի, «Հասկեր»ից, կրճատ. 112
*41. Այս գիշեր—Դ. Դեմիրճեանի, «Նոր Հոսանք»ից, կրճատ. . 115
42. Սևանայ լիճը—Գեորգ Բաշինջաղեանի, քաղ. «Նկարչի կեանքից» կրճ. 116
43. Սևանայ ծովի ձկները—Պերճ Պռօշեանի, քաղ. «Յունօն»ից, փոփոխ. 118
*44. Ալիքներ—Շուշանիկ Կուրղինեանի, «Արշալոյսի ղօղանջները»ից, կրճ. 120
45. Ծովի վրա—Վրթ. Փափազեանի, կրճատ . . . 120
*46. Փոթորիկ—Թումաս Հուդ, թարգմ. Յովհ. Թումանեանի . . 126
47. Անջատում—Շիրվանզադէի, քաղւած «Գործակատարի յիշատակարան»ից, կրճատ. 127
*48. Հրաժեշտ—Ալ. Ծատուրեանի։ «Աղբիւր»-ից փոփոխ. . . 130
49. Դէպի տուն—Ստ. Լիսիցեանի 131
*50. Ես իմ աշխարհի գարունը կուզեմ—Հ. Հայրապետեանի, «Հասկեր»-ից 135
51. Մեծ նանը—Պերճ Պռօշեանի, քաղ. «Կուածաղիկ»-ից, փոփոխ. 135
*52. Դաշտի զանգակ ծաղիկներ—Ա. Տոլստոյի, թարգմ. Աք. Խնկոյեանի, «Հասկեր»-ից 139
53. Տատիս սպին—Շիրվանզադէի, քաղ. «Իմ կեանքից» յօդւածից («Հասկեր»), կրճատ, ... 139
*54. Բրուտի շունը—Ջաւախեցի, «Հասկեր»-ից . . 142
55. Անտառի մանուկը—Ստ. Տէր Աւետիքեանի, քաղ. «Անտառի Գիւտը» պատմւածքից, կրճատ. . . . 143
*56. Փայտհատն ու մահը—Աք, Խնկոյեանի, «Հասկեր»-ից . . 150
57. Գաբօ բիձու չերամապահութիւնը—Յովհ. Թումանեանի . . 151
58. Գութանի երգը—Յովհ. Թումանեանի . . . 153
59. Շաշ Պետին ու գիժ Ուհանը—Յար. Ք. Ճուղուրեանի, քաղւած «Մոռացւած Աշխարհից», փոփոխ. . . . 154
*60. Խոտհունձ—ռուս. փոխ. Աք. Խնկոյեանի, «Հասկեր»-ից . 160
61. Այգին—Արշակ Շահնազարեանի, «Աղբիւր»-ից, կրճատ. . 161
*62. Մայր հողի ուժը—ռուս. թարգմ., Յովհ. Թումանեանի . . 164
63. Ոզկոյզը—Կրումմախերի, «Հասկեր»-ից . . . 168
*64. Ռոստեանի և Աւթանդիլի մրցութիւնը—Շոթա Ռուսթաւելիի, թարգ. Սարգսի, «Կռունկ»-ից, փոփոխ. . . . 169
65. Անապատում—Մելիքի, «Աղբիւր»-ից փոփոխ. . . 177
66. Երևանեան դաշտի շուքը—Խաչ. Աբովեանի, քաղւած «Վէրք Հայաստանի» վէպից, փոփոխ. 181
*67. Գորտն ու ագռաւը—Աք. Խնկոյեանի, «Հասկեր»-ից . . 182
68. Քեօրօղլին և Բոլի բէգը—Ղազարոս Աղայեանի, քաղւած նոյնանուն վիպասանութիւնից, կրճատ. . . . 183
*69. Քաջ կիւիւը—Յովհ. Թումանեանի, ժողովրդականից. «Հասկեր»-ից 191
70. Մի փոքրիկ թագաւորութիւն—Ա.—Դօ, քաղ. «Ցուցեր Տաճկահայաստանի ճանապարհորդութիւնից» գրւածքից («Նոր Հոսանք»), կրճատ. 194

*71. Լուսաւորչի կանթեղը—Յովհ. Թումանեանի . . . 200
72. Աքաղաղը—Ալ. Ահարոնեանի, քաղւած, «Պատկերներ» ժողովածուից կրճատ. 201
*73. Յոյս—Գամառ Քաթիպայի 205
74. Բաշօն—Ալ. Ահարոնեանի, քաղ. «Պատկերներ» ժողովածուից, կրճ. 206
*75. Հալւոնի թուրը—Գէորգ Աստուածատրեանի, «Աղբիւր»ից, կրճատւած և փոփոխւած 209

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԱԺԻՆ

*1. Մանուկն ու ջուրը—ժողովրդականից 215
2. Գողը—Յակոբ Պարոնեանի, քաղւած «Ծիծաղ»ից, կրճատ. . 216
*3. Գիշեր—Լեւոն Շանթի 217
4. Արտոյտ—առակ Խրիմեան Հայրիկի, հատւած . . . 218
*5. Սոխակի վիշտը—ժողովրդականից . . . 219
6. Կամքի առաջին փորձը—Ռուբէն Զարդարեանի, «Պուտ մը ջուր» պատկերից, կրճատ. 220
*7. Մրջիւնին դատաստանը—Հ. Գ. Հիւսմիւզի, կրճատ . . 223
*8. Գայլ ու գառն—Կոփյովի, թարգմ. Գաբր. արքեպ. Այվազեանի . 224
9. Կօշիկը—Յակ. Պարոնեանի, հատւած «Քաղաքավարութեան վնասներ»-ից կրճատւած 225
*10. Թաթուլին գալաճօշը—Կոփյավի, թարգմ. Գաբ. արքեպ. Այվազեանի, փոփոխ. 229
*11. Ձմեռ էր, եղաւ գարուն—թոս Ստեփաննոսի . . . 230
12. Ածկոնքի վանքը—Լեւոն Շանթի 231
*13. Արշալոյս—Մկրտիչ Պէշիկթաշլեանի, հատւած . . . 235
*14. Ուշացած ճամփորդ 235
15. Ծովն ու արևը—Գարեգին եպ. Սրուանձտեանի, «Համով հոտով»-ից, քաղւած 236
*16. Կռունկին մահը—Դանիէլ Վարուժան . . . 239
17. Մեղայ, Տէր—Գրիգոր Զոհրապի, կրճատ. . . . 240
*18. Գիշերապահը—Լեւոն Շանթի 244
19. Աքսորում աղայի Կ. Պոլիս մտնելը—Յակոբ Պարոնեանի, հատւած «Մեծապատիւ մուրացկաններ»ից, կրճատ. . . . 246
*20. Քաջին թաղումը—Մկրտիչ Պէշիկթաշլեանի, փոփոխ. . . 252

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Գամառ Քաթիպա 18
2. Յովհաննէս Յովհաննիսեան . 27
3. Խաչատուր Աբովեան 47
4. Աւետիք Իսահակեան 70
5. Աւետիս Ահարոնեան 87
6. Շիրվանզադէ 102
7. Րաֆֆի 109
8. Վրթանէս Փափազեան 125
9. Ալեքսանդր Ծատուրեան . . . 131
10. Պերճ Պռօշեան 138
11. Աթաբէկ Խնկոյեան 151
12. Յարութիւն Ք. Ճուղուրեան . . 160
13. Ղազարոս Աղայեան 190
14. Յովհաննէս Թումանեան . . . 201
15. Յակոբ Պարոնեան 228
16, Գարեգին եպ. Սրուանձտեանց . . 238
17. Մկրտիչ Պէշիկթաշլեան 253

ՊԵՏ ԿԵՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀԱՍՌ-ՅՈՒ ССР
И. им. А. Мясникяна

3794

ИПБ
1915 г.

Арм.
4-821 2

ԳԻՆՆ Է 85 ԿՈՊ.

6

ԼՈՒՍԱԲԵՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ	30 կ.
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ	45 կ.
ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ	55 կ.
ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ	65 կ.
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ	85 կ.

Դիմել՝ Тифлисъ, Бебутовская, 25, Ст. Лисиціану կամ պահեստին.—Тифлисъ, книжный магазинъ „Гиръ“ («Գիր»)

2013

3694

ՀՀ Ազգային գրադարան
NL0062020

4-821a